6338

4619. 4619
3648b
4619

6338

ԼՈՒՍԱԲԵՐ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ
ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ և Լ. ՇԱՆԹ

նուրոյն եւ փոխադրած յօդուածների, ինչպէս եւ մեր նկարների արտատպութեան իրաւունքը վերապահուած է

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑ, 7.
1909

Լ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1. Գիւղի ժամը

Տա՜ն-դօ, տա՜ն-դօ… Նազլո՜ւ, վե՛ր կաց,
արևն արդէն մայր է մըտնում.
տե՛ս, Խաթունն էլ գործը պըրծած
փողոցումն է, ժամ է շտապում։
Ժամը տւի՛ն՝ տա՜ն-դօ, տա՜ն-դօ.
Տէ՛ր, փառքըդ շա՜տ. տա՜ն-դօ, տա՜ն դօ…

Շուտով Նախիրն հանդից կը գայ.
գընանք որ շուտ էլի յետ գանք,
կովը կըթենք, թը՛ռ-թը՛ռ կաթ տայ,
կովը կըթենք, մեր ցաւն հոգանք։

Ա՛խ, Նազլու ջան, չես իմանում՝
էգուց էլի աղան կը գայ.

Նըրա սիրտը միշտ անկըշտում,
էլ ամպի պէս պիտի գոռայ.

«Շուտով, Գրիգոր, փողերը բեր.
Է՞լ չը կայ. կովըդ հանի...»
Ա՜խ, Նազլու ջան, այն ինչ բան էր,
մոտդ է հերու... Տէր, դու փըրկի։

Հայրիկդ արդէն գընացել է,
որ փող ճարի. երբ պիտի գայ,
տեսնենք մէկը խըղճացել է...
Ա՜խ, սև օրը Տէրն էլ չը տայ։



Շուտով, Նազլու, գընանք ժամը,
աղօթք անենք. քո ձայնն Աստուած
շուտ կը լըսի, այս անգամը
մեզ չի թողնի անկով, անհաց...

Բարի մարդիկ միշտ կը լինեն,
հայրիկդ հետը փող կը բերի,
փողը կը տանք չար աղային,
որ մեր հորթուկն էլ չը խըլի...

Տա՛ն-դօ, տա՛ն-դօ... Նազլու, գընա՛նք.
արեն արդէն մայր է մըտնում,
էգուց տեսնենք, որ վեր կենանք,
ինչ նոր արև է մեզ ծագում...
Ժամը ասին՝ տա՛ն-դօ, տա՛ն-դօ.
Տէր, փառքըդ շա՛տ. տա՛ն-դօ, տա՛ն-դօ...

1) Էտ ինչ փող է որ աղան պահանջում է։
2) Ուրիշ ո՞վ է գիւղացուց փող պահանջում եւ ինչո՞ւ։
3) Բարի մարդիկ փողը նմ՞ր են տալու հայրիկին։

2. Մի չաքար ծառի վրա

ա.

Երևակայեցէք, մի ամբողջ շաբաթ բնակւեցի ես մի թթենու վրա։ Այդ ժամանակ, որքան յիշում եմ, պէտք է 13—14 տարեկան լինէի։ Անազին ադամ և մի ամբողջ շաբաթ ծառի վրա...

Ձեմ յիշում ինչ մի ծանր յանցանք էի գործել, և գուշակելով որ երբ հայրս գար՝ անշուշտ խիստ պատժելու էր ինձ, մտածեցի խուսափեմ։ Մեր բակում, ճիշտ փողոցի դռան առաջ, կար մի կիսաչոր բարձր թթենի, որ իր բարձրութեան վրա բազկաթոռի նման մի բան էր կազմել։

Բարձրացայ այնտեղ, հետս առայ մի ներքնակ, մի բարձ, պարզեցի նրանց ճիւղերի վրա, յարմարեցրի, յետոյ ծածուկ իջնելով մի առ մի վեր հանեցի մի աման լիքը ջուր, հաց, պանիր և տեղաւորւեցի վերևում։

Հայրս կէսօրին տուն եկաւ, որոնում էր ինձ որ պատժի, բայց երբ նրան ցոյց ասին ծառը և վրան թառած այլանդակ թռչունին, չը կարողացաւ ծիծաղը զսպի։

—Լա՛ւ,—կանչեց նա ինձ,—մնացի՛ այդտեղ տեսնենք՝ ո՞վ կը ըղձայ վերջը։

Ու մնացի։

Ոնչարժնատած մեխւել էի մի տեղ ժամերով, էլ երևակայեցէք՝ ինչ տանջանք պիտի լինէր. էն էլ մի այնպիսի պատանու համար, որ սովոր էր շարժուն կեանքի, սիրում էր վազվզի, թռչկոտի, մտնի ամեն տեղ, ելնի փողոց, տանիքների վրա մագլցի...

Այո, իրաւունք ունէր հայրս. չէր անցել երկու ժամ, որ արդէն զղջում էի խենթութեանս վրա։ Սակայն յամառել էի, չէի կարւում իջնեմ, պատիժս կրեմ, գոնէ ներողութիւն խնդրեմ ու ազատւեմ...

Ուրեմն պէտք էր մի բանով զբաղւէի։ Մի քիչ ճիւղեր կտրտեցի, թափեցի ցած, տերևները թքոտում կպցնում էի բուռիս և թրխկացնում, յետոյ դիտեցի շրջակայքը, ծառի վրա իջնող թռչունները, շուռ եկայ այս կողմ, այն կողմ, մտածեցի քնեմ... բայց անտանելի էր. կողերս էլ ցաւում էին, տեղս էլ սկսում էր անհանգիստ թւալ...

Ջանացի իջնեմ ծածուկ, մի քիչ վազվզեմ, շարժեմ ոտներս,

բայց հայրս բաց լուսամուտում նստած, դէմքը ուղիղ իմ կողմը՝ կարդում էր։ Ո՜հ, տանջանք էր, որ երևակայել չէք կարող։

—Կարդամ...—ծագեց յանկարծ մտքումս—չէ՞ որ ահա՛ հայրիկը կարողանում է այդքան երկար մի տեղում նստել ու անշարժ կարդալ։ Գուցէ ես էլ կարողանամ։ Ա՜խ, ձեռքիս մի հետաքրքիր գիրք լինէր...

Երեկոյեան հէնց որ հայրս գործով տնից դուրս գնաց, իսկոյն ցած սահեցի։

Ամենից առաջ քիչ վազվզեցի, եղբայրներիս ու քոյրերիս նեղացրի, բարկացրի, յետոյ ճաշից ինչ որ մնացել էր կերայ, մտայ անկողինս ու քնեցի։

բ.

Միւս առաւօտ հայրս թէև շուտ զարթնել, անշուշտ տեսել էր ինձ անկողնիս մէջ, սակայն անխօս դուրս էր գնացել։

Զարթնելուս պէս շտապեցի, որ ելնեմ ծառիս վրայ, քանի դեռ չէր վերադարձել։

Սակայն նախ քան բարձրանալս, մտայ հօրս գրադարանը և ընտրեցի մի գիրք, մի մեծ գիրք։ Առաջին երեսից մի քանի տող կարդալով՝ տեսայ որ աշխարհաբառ պատմութիւն էր։ Առայ ու դուրս...

Մանր տառերով տպուած այդ գիրքը՝ դուրս եկաւ որ պարզ լեզուով գրած մի շատ հետաքրքիր բան էր։

«Սօս ու Վարդիթեր», կարդացի կողի վրա։ Մեր յայտնի հայ գրող Պռօշեանի գրած մի վէպն էր։ Գիւղական կեանքի մանրամասն նկարագիր, պարզ, մեր խօսած լեզուն, հետաքրքրական... Ամենայն յափշտակութեամբ սկսեցի կարդալ ու կարդալ։

Կարդացի երկար. շատ երեսներ. չը գիտէի քանի ժամ էր անցել, երբ հայրս տուն եկաւ. ներս մտաւ թէ չէ՝ կանգնեց ու աչքերը գըցեց վրաս։ Կռացայ, մեր ակնարկները միմեանց հանդիպեցին։

—Ի՞նչ ես անում այդտեղ.—հարցրեց նա զարմացած։

—Կարդում եմ, հայրի՛կ։

—Կարդո՞ւմ ես. դասե՞րդ ես սովորում։

—Ո՛չ. ուրիշ գիրք է։

—Ո՞րտեղից է։

—Քո գրադարանից։

—Ի՞նչ բան է։

—«Սօս ու Վարդիթեր»։

—Ա՛յ. ինքդ ընտրեցիր։

—Այո։

—Եւ հասկանո՞ւմ ես։

—Բոլորը։

Մի քիչ լռեց, նայեց ինձ, յետոյ ժպտաց. քայլեց դէպի ներս տանելով.

—Այդպէս գիրք կարդալ ցածում էլ կարող էիր... բայց, ոչինչ, կարդա...

Եւ երբ ուզում էր ներս մտնի դարձաւ ու աւելացրեց.

—Իսկ երբ կը պրծնես՝ ես քեզ ուրիշը կը տամ՝ նոյնքան և գուցէ աւելի հետաքրքիր...

գ.

Մի շաբաթւայ ծառի վրա ապրելս այնքան օգուտ տւաւ ինձ, որքան չէր տւել ամառւայ ամբողջ արձակուրդը, երբ ես չարութիւնից չարութիւն, խաղից խաղ՝ սպանում էի ժամանակս, մնում էի տգէտ և կարծում էի թէ տանից այն էլ՝ դպրոցը շատ է ծանրաբեռնում գլուխս։ Եւ եթէ պիտի ուսում ստանայի, զարգանայի, դպրոցն էլ բաւական էր։

Սխալւած էի։

Այն օրւանից, երբ առաջին անգամ ինքնաբերաբար կարդալ ըսկսեցի, երբ եօթը օր ծառի վրա թառած, իրար ետևից երեք-չորս գիրք կարդացի, այն օրւանից ես բոլորովին այլ կերպ սկսեցի նայել կարդալու վրա։

Սկսեցի մտածել, մտածել սովորեցի և ինձ թւում էր թէ անցկացրած տարիներս շատ յիմար կեանք էի վարել։

Ծառի վրա շատ բան պարզւեց ինձ համար և երբ իջայ այլևս այն պատանին չէի, որ խաղում վազում էր աննպատակ, մտածում էր միմիայն ուտելու, խմելու և զւարճութեան մասին և որ իր մէկը միւսից աւելի անհամ չարութիւններով զզւեցնում էր շրջապատողներին և նոյն իսկ իրեն։

դ.

Մի օր կէսօրին իջել էի, խոհանոց մտել։ Քաղցել էի. մինչև հօրս վերադարձը կարծում էի թէ մի բան կուտեմ և կը հանեմ տեղս ել-

նելու, երբ յանկարծ փողոցի դուռը բացուեց և ես խռհանոցից, հայրս դռնից՝ դէմ ու դէմ եկանք։

Շուարեցի. բնազդաբար փախայ, առաջին հանդիպած դռնից ներս ընկայ ու ետևից փակեցի։

Հայրս երևի վճռել էր բռնի ինձ, մօտեցաւ դռանը և հրեց։

—Բա՛ց,—ասաւ նա։

Ձայն չը հանեցի. ամօթից, վախից, շուարմունքից պապանձուել էի։

—Ա՛, դու չե՞ս բաց անում,—կանչեց հայրս.—լաւ ուրեմն, այժմ ես դրսից կը կողպեմ քեզ այդտեղ, և տեսնենք՝ ինչպէ՞ս կապրես այսուհետև։

Ու սկսեց գործադրել ասածը։ Լսեցի փակի ձայնը, յետոյ բանալիքի դառնալը։

—Հայրի՛կ,—կանչեցի ներսից։

—Ի՞նչ կայ.—կանգ առաւ նա։

—Իզուր ես փակում, ես դուրս կը գամ։

—Դո՞ւրս կը գաս։

—Այո՛։

—Պատժից չե՞ս վախենում։

—Ո՛չ, դու ինձ այլ եւս չես պատժի։

—Չե՞մ պատժի. ինչո՞ւ։

Որովհետև ես զղջացել եմ արած յիմարութեանս վրա և ներողութիւն եմ խնդրում։

—Այդպէ՞ս…

Դուռը բաց արաւ. ես էլ բացի և յայտնուեցի շէմքի վրա։ Նայեց երեսիս առանց շարժուելու, նայեց երկար, յետոյ մի քայլ ետ քաշուեց և ասաւ.

—Ուրեմն…

—Ներէ՛, հայրիկ, այսուհետև էլ ինձ չես տեսնի ո՛չ յիմար, ո՛չ էլ փոքրոգի…

—Այդպէ՞ս,—ասաւ նա ժպտուն—իրա՞ւ է։

—Իրաւ է։

—Հաւատո՞ւմ եմ… Գիրքդ պրծե՞լ ես։

—Ո՛չ դեռ։

—Քեզ համար մի նոր գիրք եմ [բերել. երբ ձեռքինդ վերջացրնես՝ նա՛ կարդա… իսկ առայժմ՝ գնա լուացւի և ճաշի…

Հայրս քայլեց դէպի պարտէզ։

—Լսի՛,—ձայնեց նա ինձ բակի մէջ տեղից—երբ կարդալ ուզենաս՝ գրադարան մտի և դուռը ետևիցդ փակի, որ քեզ չը խանգարեն…

—

Այսպէս էր ահա, որ ծառ ելայ երեխայ և այնտեղից իջայ՝ պատանի։

1) Մարդ իր ամբողջ ուսումը դպրոցումն է ստանում։ Ուրիշ ինչ միջոց կայ ուսումը լրացնելու։

2) Ազատ ընթերցանութիւնը ինչով է տարբերւում դաս սովորելուց։

3. Այգում

Ես ճոխ այգումն եմ, գոհ է իմ հոգին։
Մեզմ խոխոջում են անհոգ առուներ.
ինձ նըկարում է նրանց ապակին
ծառերի շարքեր՝ պըտղով ծանրաբեռ։

Կարմրըրին տալով ծիրանն է փայլում
կանաչ սաղարթի թարմ հովանու տակ,
ճաքճըքած նուռը արիւն է կաթում
ճօճուելով ճիւղքին հովից ներդաշնակ։

Փշատ, դեղձ ու տանձ իմ շուրջը բոլոր.
այստեղ սերկևիլ խոնարհած երկիր,
այնտեղ ամաչկոտ ժպտում է խնձոր,
մի թուշը ոսկի, միւսը մարմիր։

Այս միջոցին այգում ուրիշ ինչ պտուղներ են հասած լինում, որ այստեղ չեն յիշւած։

4. Դաթուան եւ Պետրիկեան

ա.

Ի՞նչպէս, դուք չէ՞ք ճանաչում մեր հարևան Դաթուային, նրան, որ այնպէս բերանը բաց չի անի, որ տասը սուտ չը շարի։ Նրա սուտերի պոչը հասնում է, Է-Է, մինչև Բաղդադ։ Նրա հասը [աշխարհիս

երեսին միայն իմերէլ Պետրիկելան թէ լինի... Սրա մասին էլ բան չէք լսել: Զարմանում եմ: Որ այդպէս է, դէ լսեցէք, ձեզ պատմեմ, թէ ինչու Դաթուան չի անցնում Սուրամի սարից դէնը, իսկ Պետրիկելան՝ Սուրամի սարից դէսը:

Մէկ օր Դաթուան մի մեծ պարկ է վերցնում, մէջը մամուռ լցնում, ճխտում, երեսին էլ մի քիչ բուրդ աւելացնում, շալակում, գնում Իմերէթ ծախելու: Սուրամի սարը բարձրանում է թէ չէ,—էն որ Իմերէթը Քարթլուց բաժանում է,—պարկը գետին է գցում, ինքն էլ նստում է մի քարի, թէ մի քիչ հանգստանամ և մէկ աչք գցի սիրուն Իմերէթի վրա: Մէկ էլ տեսնի՝ այն կողմից բարձրանում է Պետրիկելան, նոյնպէս մի մեծ պարկ շալակին:

—Բարև, ախպէր,—ձայն է տալիս Դաթուան:

—Աստծու բարին,—պատասխանում է Պետրիկելան:

—Էս ո՞րտեղից և ո՞ւր:

—Իմերէթից եմ գալիս. ընկուզ եմ տանում Քարթլի ծախելու: Իսկ դու ո՞րտեղից ես գալիս, Բարեկամ:

—Ես, ախպէր ջան, Քարթլուց եմ գալիս, բուրդ եմ տանում Իմերէթ ծախելու: Արի, մի բան ասեմ քեզ, գուցէ հաւանես: Բարեկամ, իզուր տեղ աւելի հեռու գնալուց ինչ պիտի դուրս գայ. տրեխներս պիտի մաշենք, աւելի հօ ոչինչ: Արի մեր ապրանքը էստեղ փոխենք. իմ բուրդը քեզ, քո ընկուզը ինձ, դու իմ բուրդը տար Իմերէթ ծախի, ես էլ քո ընկուզը կը տանեմ Քարթլի կը ծախեմ: Էլ մեր տներից չենք հեռանայ:

—Շատ լաւ ես ասում, ախպէրութիւնը վկայ: Ի հարկէ, ի հար-

կէ, աւելի լաւ է՝ էլի մեր տները վերադառնանք. գիւղէ գիւղ թափառելուց ինչ շահ ունենք: Ահա քեզ իմ ընկուզը, դու էլ քո բուրդը ինձ տուր:

Այդպէս էլ արին: Դաթուան շալակեց ընկուզի պարկը, շտապով ետ է գալիս ու մտածում է. «Այ թէ խաբեցի, հա՛: Պա՛, ինչ ծանր պարկ էլ է, տօ»:

Պետրիկելան էլ շալակեց բրդի պարկը ու նրանից շտապ սարից իջնում է ու մտածում. «Թող գնա՛ ու ընկուզով կշտանայ. ա՛յ թէ միամիտն է, տօ»:

Միմեանց աչքից հեռացան թէ չէ, Դաթուան ցած դրեց պարկը, բերանը բաց արեց, ձեռքը մէկ լաւ մէջը խրեց, տակից մի բուռը ընկուզ ուզեց հանի՝ փուճ կճեպ:

—Փիէ:

Դու մի ասա, մենակ վերևանց է եղել չը կոտրած ընկուզ, տակը ողջ կճեպ:

Պետրիկելան էլ մէկ ծառի ետևը անցաւ, պարկի բերանի թելը քանդեց, մէկ լա՛ւ բաց արեց, մէկ էլ՝ բրդի տակից կանաչ մամուռը տեսաւ:

—Վա՛, փիէ: Այ քեզ բա՛ն:

Էլ ինչ պիտի անէին: Դաթուան կճեպները դարդակեց, գրպանները լցրեց չը կոտրած ընկուզով, պարկը ուսին գցեց ու գնաց տուն: Պետրիկելան էլ մամուռը դուրս թափեց, բուրդը փաթաթեց պարկի մէջ, կռան տակ դրեց ու գլուխը քորելով տուն գնաց: Էլի լաւ էր, որ Դաթուան ճանապարհին գործ ունէր. գրպանից ընկուզները հանում էր բերանն էր գցում, չըրխկ հա չըրխկ, կոտրատում, բայց որ բոլորն էլ ճիճւոտ էին ու փուճ:

Բ.

Անցաւ բաւական ժամանակ: Մէկ սուրբի ուխտին նրանք նորից իրար հան-

դիպեցին։ Դաթուան բարևեց Պետրիկելային ու ասաւ․

—Հը, բուրդս լա՞ւ էր։

—Բաս ընկուզս ինչով էր պակաս,—պատասխանեց Պետրիկելան։

—Ես այնպէս էի կարծում, թէ միայն ես եմ աչքաբաց․ բանից դուրս է գալիս, մեր տղայ, դու էլ ինձնից պակաս շնորհքով չես եղել։

—Այ տնաշէն, այդ շնորհքը որ բաժանում էին, կարծում էիր թէ մենակ դու էիր այնտեղ։

—Դէհ, որ այդպէս է, արի ախպէրանանք։

—Աչքիս վրա։

—Գիտես ինչ․ արի՛ միասին մի տեղ ծառայ կանգնենք։

Շատ ման եկան, թէ քիչ, Աստուած գիտէ․ վերջը եկան մէկ պառաւ կնոջ մօտ․ իմացել էին որ այդտեղ երկու ծառայ է հարկաւոր։

Պառաւն ասաւ նրանց․

—Ես մի կով ունեմ ու էս տունը, որ տեսնում էք․ Ձեզանից մէկդ պէտք է կովիս մտիկ տայ, միւսը տունս հաւաքի։ Ամեն առաւօտ կովս պէտք է դաշտը քշէք, արածեցնէք և հետն էլ սրինգ, թառ ու դահիրա ածէք, որովհետև իմ կովը պար գալ գիտի։ Իսկ տունս մաքրողը պէտք է ամեն քունջ ու պուճախ աւելի ու աղբը ուրիշի բակն ածի։ Եթէ ասածիս համաձայն էք, հո մնացէք, ծառայեցէք։

—Համաձայն ենք, ինչ կայ որ չը կարողանանք,—պատասխանեցին միասին Դաթուան ու Պետրիկելան։

Հիմա տեսնէք թէ բանից ինչ դուրս եկաւ։

Միւս օրը Պետրիկելան տանը մնաց, իսկ Դաթուան հացը վերցրեց, նոյնպէս սրինգը, թառն ու դահիրան ու կովը քշեց հանդը։

Պետրիկելան էլ տունը հաւաքել սկսեց։ Բակն աւլեց, էլ ոչ մի տեղ մէկ չոփ չը թողեց, աղբը հաւաքեց ու սկսեց հարևանների բակերը թափել։ Հարևանները էս որ տեսան վրա ընկան ու էնքան ծեծեցին, էնքան թակեցին, որ ողջ տեղ չթողին։

Վայ էն հալին, ինչ հալով տուն վերադարձաւ Պետրիկելան ու ընկաւ գոմում տախտի վրա։

Իսկ Դաթուան ամբողջ օրը ճշմարիտ որ սրինգ ու թառով անց կացրեց։ Կովը հասարակ կով չէր եղել։ Հէնց որ հանդը հասան, էս կովը խոտ էր պոկում, տրտինգ տալիս ու վազում, էլ մի բոպէ դադար չէր առնում։ Դաթուան շունչը կտրած մինչև երեկոյ ետևից վազվզում էր, ճաշելու ժամանակ էլ չէր գտել։ Յոգնած, ուժից ընկած, քաղցած իրիկնադէմին տուն վերադարձաւ։ Գոմի շէմքին ոտը դրաւ

թէ, չէ, Պետրիկելային տախտի վրա տեսաւ ու հարցրեց․

—Էտ, ինչ է եղել, այ ախպէր, հիւանդ հո չե՞ս։

—Ի՞նչ հիւանդ, ինչ ես ասում։

—Բաս ինչու ես անժամանակ պառկել, ձգւել։ Տուն հաւաքելը հո զոռ չարե՞ց։

—Տուն հաւաքելն ես ասում... Ի՞նչ օր եմ անց կացրել, ինչ օր... Գոմն ու բակը աւլեցի, աղբը տարայ հարևանների բակերը թափթփեցի, տանտէրերը՝ ինձ տեսան թէ չէ, իրար ձեռքից սկսեցին խլել, սա է ասում՝ մեր տունը համեցէք, նա է ասում՝ չէ, մեր տունը։ Է՛լ պատիւ, էլ ուրախութիւն։ Էնքան կախէթի գինի խմեցրին, որ ոտի վրա կանգնելու ուժ չի մնացել։ Դու ինչպէս ես, ժամանակդ ինչպէս անց կացրիր, ինչ ես դէս ու դէն ընկնում։ Մէկ կով արածեցնելը ինչ դժւար բան էր, որ էդքան յոգնել ես։

—Կով սրան կասեն, հա՜... Դահիրան ածեցի, սրինգը փչեցի, իմ կովն էլ մէկ «լեկուրի» է պարում, մէկ պարում... Անթիւ անհամար մարդ ու կնիկ գլխներիս հաւաքւեց, և նրանք էլ սկսեցին միասին պար գալ։ Մէկ ուրախութիւն էր ո՜ր...

—Դէհ որ էդպէս է, Դաթուա ջան, կովի հետ վաղը ես կերթամ, իսկ դու տանը մնայ, հարևանների պատիւը վայելի․—շտապով ձայն տւաւ Պետրիկելան։

—Քո խօսքը լինի․ դրա համար մրժէ որ քեզ նեղացնեմ,—պատասխանեց Դաթուան, հացը կծելով և ագահութեամբ ծամելով։

Միւս օրը Պետրիկելան գնաց կովի հետ, Դաթուան մնաց տանը։ Էլ ինչ ասել կուզի, ուրախութեան համը տեսան։ Դաթուային երեկւանից աւելի պատիւ տւին հարևանները, էնպէս որ հազիւ հազ ոտները թրևելով գոմը հասաւ ու տախտի վրա գլորւեց։ Պետրիկելան էլ էնքան պար ածեց կովին ու ժողովուրդին, էնքան ուրախացաւ, որ գոմի շէմքին հասաւ թէ չէ՝ գետնին նստեց, էլ ուժ չունէր տախտին հասնելու։

Գ,

Էտ գիշեր նրանք խորհուրդ արին ու ասին․ «Պէտք է մի կերպ էստեղից գլուխներս ազատենք, թէ չէ կամ ծեծից կը մեռնենք կամ վազվզելուց, քաղցը հո կայ ու կայ»։

Վճռեցին փախչեն, կովն էլ հետները, բայց բանն էն է, որ պառաւը ինքն էր իր ձեռքով դրսից գոմի դուռը կողպում, արի ու փախի։

—Գիտես ինչ Դաթուա,—ասաւ Պետրիկելան։ —Էս կովը մորթենք,

ու միսը պարկի մէջ լցնենք, յետոյ մեզանից մէկը թող միւսի ուսին կանգնի, երդիկով կտուրը բարձրանայ ու այնտեղից պարանը կախի։ Դեռ պարկը կը կապենք, կտուրը կը հանենք, յետոյ պարանը երկրորդ անգամ կիջեցնենք ու մնացողը կը բարձրանայ։

— Էտ շատ լաւ ասիր — հաւանեց Դաթուանը։ — Ես աւելի ուժով եմ. միսն էլ կը քաշեմ, քեզ էլ հեշտութեամբ կը բարձրացնեմ։

Կովը մորթեցին ու պարկը լցրին։ Պետրիկելան կռացաւ, Դաթուան կանգնեց նրա ուսերի վրա, և երդիկով կտուրը բարձրացաւ և էնտեղից պարանը կախ արաւ։ Պետրիկելան պարկի միջից մի քանի մեծ-մեծ կտոր միս հանեց, ինքը մէջը մտաւ ու փափսաց.

— Միսը վեր քաշի՛, մի՛սը, ու պարկը նորից իջեցրու։

Դաթուան պարկը վեր քաշեց, շտապով բերանը կապեց, շալակեց ու փախաւ։

Բաւական տեղ էտպէս վազ տւաւ, յոգնեց ու կամեցաւ հանգստանալ. պարկը մէջքից ետ արեց ու գետնին գլորեց։

— Կամաց, տօ անաքանդ, կողքս ցաւեցրի՛ր, — գոռաց Պետրիկելան ու գլուխը դուրս հանեց պարկի միջից։

— Ինքդ ես անաքանդ, մէջքս կոտրեցիր. մարդ էտքան էլ ծանր կը լինի՞։

Պետրիկելան պարկից դուրս եկաւ արիւնոտած երեսով ու չուխայով։ Լուսանում էր։ Դաթուան նայեց նրան ու սկսեց ծիծաղու թուլանալ։ Պետրիկելան էլ չը համբերեց, սկսեց նոյնպէս ծիծաղել։

Չը գիտեմ՝ քանի ժամ էին նրանք էտպէս ծիծաղում։ Գիտեմ միայն, որ էն է ու էն՝ Դաթուան և Պետրիկելան իրարից բաժանւեցին։

Հիմա հասկացա՞ք թէ ինչու Դաթուան չի անցնում Սուրամի սարից դէնը, իսկ Պետրիկելան Սուրամի սարից դէսը։

Բայց ասեմ՝ բաժանւելուց առաջ նրանք ինչ արին։

Կորեցին կաղնու մի մեծ ճիւղ, հաստ շամփուր շինեցին ու կովի միսը խորովեցին։

Բայց Դաթուան երկինք երկիր հաւատացնում է, իբր թէ շամ-

փուրի վրա էլ միսը տրաինդ էր տալիս․ ոչ ինքն է կերել, ոչ էլ Պետրիկելան։

— Գնացէք, հարցրէք Պետրիկելայից, թէ ինձ չէք հաւատում։

Արի ու մի հաւատայ Դաթուային, երբ նրա վկան Պետրիկելան է։

5. Գինի.

Աստւած խնայեց խեղճ ու նաչարին,
լաւ հաց ու գինով առատ է տարին։
Հասել են արդէն մրրգեր մեղրածոր.
կանաչ թփերը բռնած դաշտ ու ձոր՝
հասել է ամրան միջօրեայ տապին
բիւր շարաններով խաղողը ճիթ-ճիթ.
քաղում են նրան աւակի ափին,
հրնձանից անուշ մաճառը շիթ-շիթ
կարասն է լցւում ուրախ քըրքիչով,
և փըրփըրալով դեռահաս գինին
հանգստանում է միայն թակիչով.
նորից խաղալով հասնում է բերնին
և յուզւած, գըժւած խոր գետնի գըրկում՝
իր ընտրրերկրեայ խուլ երգն է երգում։
Վերջացաւ թէ չէ անկըրակ եփը,
ըսկըսւեց իսկոյն գիւղացու քէֆը.
գըլում է ձայնը զուռնա-դըհոլի,
բացւում է ծայրը հարսանիքների։

Խաղողից ուրիշ ի՞նչ են պատրաստում և ինչպե՞ս։

6. Փոքրիկ նաւաստին

ա.

Սիմօնը, մի կարճահասակ, նիհար տղայ, նաւաստի էր մտել Ամերիկա մեկնող նաւը։

Մենակ էր եկել, ոչ ոք նրան ճամփայ չէր գցում. որբ էր։

Հագցրին կապոյտ շապիկ, կաշւէ անդրավարտիկ, սև գլխարկ կարմիր ժապաւէնով և բրդէ գուլպաներ։

Շատ սիրուն էր նա այդ զգեստով, իր մեծ մեծ, մի փոքր տրտում, կապոյտ աչքերով և գունատ դէմքով։

Նաւը հեռացաւ ափից, ցամաքը էլ չէր երևում. առջևից, ետևից, աջից ու ձախից միայն ջուր էր ու ջուր։ Անսահման, անծայր ու-ժեղ, բարկացկոտ ու շարունակ օրօրուող։

Տասներկու տարեկան տղան առաջին անգամն էր այդպիսի ծով տեսնում, շփոթւած էր ու անհանգիստ։

Մի գիշեր, երբ փոքրիկ նաւաստին անուշ քնած էր, մի սաստիկ ձայն զարթեցրեց բոլոր ծառայողներին։

—Էհէյ, էհէյ։ Տախտակամած։ Դէպի առագաստները, ա-ռա-գաստ-նե-րը։

Նաւաստիները խկոյն տեղներից վեր ցատկեցին, կարծես ուզում էին կռւի մտնեն փոթորկի հետ, որը աւելի ու աւելի սաստկանում էր։ Մինչև անգամ ամենից մատաղահասները պէտք է պատրաստ լինէին։ Ամենքին սպասում էր ծանր, լարւած աշխատանք։ Ու-ժերը լարել պէտք էր։

—Օղի տւէք,—հրամայեց սպան։ Եւ բոլոր ծառայողները հեր-թով մօտենում էին, նախ հասակաւորները, ապա աւելի ջահէլները, իսկ վերջը նոյն իսկ փոքրիկները, դարդակում էին մի մի գաւաթ, որը խկոյն լցւում էր ետևից եկողի համար։

Միայն Սիմօնն էր որ չէր մօտենում։ Նրան էլ կանչեցին ու բաժանողը գաւաթը առաջարկեց։

—Ներեցէք, պարոն... ես չեմ խմի—արտասանեց նա գրեթէման-կական ձայնով։

—Էդ էլ ինչ է, անխելք,—կանչեց աւագ նաւաստին ու ինքը դատարկեց նրա բաժինը։

Տախտակամածից իջնելիս սպան բռնեց Սիմօնի օձիքից և

ետևից բրդելով բերաւ նաւապետի առջև։

—Պարոն նաւապետ, ահա այն յիմար տղան, որը չէր ուզում օղի խմի։

—Անունդ ինչ է.—հարցրեց նաւապետը։

—Սիմօն։

—Պէտք է սովորես օղի խմելը, եթէ ուզում ես իսկական նա-ւաստի դառնաս։

—Ներողութիւն, պարոն նաւապետ, թոյլ տւէք որ չը խմեմ։

Նաւապետը բարկացաւ. էս մի պստաւ տղան ինչպէս էր համար-ձակւում իր հրամանին հակառակել։

—Պատժել սրան,—կանչեց նա։

Պահակի պաշտօնը կատարող նաւաստին չարախնդութեամբ ոլո-րեց պարանը, ուժեղ ձեռքով մի երկու անգամ պտտացրեց օդի մէջ և հասցրեց Սիմօնի մէջքին։

Ամեն մի զարկին արտասուքները թափւում էին Սիմօնի մեծ-մեծ, կապոյտ աչքերից։

—Հիմա կը խմե՞ս,—հեգնում էր նաւապետը։

—Շնորհ արէք, պարոն, թոյլ տւէք չը խմեմ։

—Ախ իշի գլուխ, ես քեզ յամառութիւն ցոյց կը տամ, բարձ-րացի մեծ կայմի վրա. գիշերը այնտեղ կը մնաս։

Խեղճ տղան աչքերը դարձրեց դէպի բարձր կայմի ծայրը, բայց հնազանդւեց և մագլցեց վեր պարանէ սանդուխքով։

բ.

Սարսափելի գիշեր էր. նաւը օրօրւելիս, կայմի ծայրը ամենից սաստիկ էր ճօճւում ու թեքւում մինչև ջուրը. ալիքներն ու քամին միացրել էին իրենց վայրագ ճիգերը, որ պոկեն սիւնին կպած այդ փոք-րիկ էակին։

Առաւօտեան վաղ, նաւապետը տախտակամածի վրա դուրս գալիս յիշեց փոքրիկ ըմբոստին։

—Հէյ, դու, փոքրիկ,—կանչեց նա։

Լռութիւն։

—Իջի՛ր, չե՞ս լսում։

Ոչ մի պատասխան։

Մի նաւաստի արագ վեր մագլցեց ելարանով և գտաւ նրան կի-սամեռ։ Տղան վախենալով որ նաւը թեքւելիս ինքը ծովը չընկնի,

ամբողջ ուժով ու երկու թևով գրկել էր կայմը այնպէս ամուր, որ հազիւ հազ փայտից պոկեցին նրա սառած ձեռները։ Նաւաստին նրան իջեցրեց տախտակամածը և ծառայողներից մի քանիսը տրորում էին նրա մարմինը, մինչև որ ուշքի եկաւ։

Երբ կարողացաւ նստել, նաւապետը մի մեծ բաժակ օղի ածեց.

—Դէհ, հիմա խմի, տեսնեմ։

—Ներեցէք, պարոն, թոյլ տուէք չը խմեմ։

—Ես հակառակութիւն չեմ սիրում։ Մինչև չը խմես, ուտելու բան չես ստանայ։

—Մի նեղանաք, պարոն նաւապետ, բայց ես չեմ կարող. ուզում էք ասեմ՝ ինչու չեմ կարող։

—Ասա տեսնեմ՝ ինչ ես ասելու.—հեգնեց նաւապետը։

—Ժամանակով մենք շատ բախտաւոր էինք, լաւ էինք ապրում, բայց հայրս սկսեց հարբել, և այլևս այնքան չէր վաստակում, որ կարողանար տունը պահի։ Պարտքի տակ ընկանք։ Ծախեցին մեր տունը, մեր բոլոր ունեցած չունեցածը։ Այդ ամենը այնպէս ազդեց իմ խեղճ մայրիկիս վրա, որ հիւանդացաւ։ Մեռնելուց առաջ էր, որ մօտ կանչեց ինձ ու ասաւ. «Սիմօն, դու գիտես թէ հարբեցողութիւնը ինչ դարձրեց քո բարի հօրը։ Երդւի՛ ինձ, որդի, որ երբէք, երբէք օղի չես դնի բերանդ։» Ոհ, պարոն նաւապետ, միթէ կուզենայիք, որ մեռնող մօրս տուած երդումս դրժէի։ Չեմ կարող, պարոն նաւապետ, չեմ ուզում։

Նաւապետի աչքերին արցունք երևաց։ Զգացւած գրկեց փոքրիկին և ասաւ.

—Ո՛չ, ո՛չ, հրաշալի տղայ, պահի երդումդ և եթէ մէկը քեզ ստիպի խմելու, եկ ինձ մօտ։ Իսկ իբրև փոխարէն քո զուր կրած պատժի, ահա ա՛ռ այս հարիւր ֆրանկանոցը և արա ինչ ուզում ես։

Յետոյ դիմելով շուրջը կանգնած հին նաւաստիներին, ատամների արանքով արտասանեց.

—Աչքի լոյսի պէս պահպանեցէք էս տղին, էյ դուք, ծովի հրէշներ. սրանից մարդ դուրս կը գայ։

---

1) Ի՞նչ վիճակի մէջ է լինում հարբած մարդը։
2) Հարբեցողությունը ի՞նչ վնասներ է տալիս. եւ ու՞մ։

7. Նաւավար

—Էյ, նաւավա՛ր, ի՞նչ ես անում,
ու՞ր ես նըստում դու նաւակ.
սև ամպեր են, տե՛ս, բարձրանում
դէպի երկինք կապուտակ։

Հորիզոնն էլ մութով պատած՝
հեռւում ամպն է որոտում.
նայի՛, ծովն էլ կամաց-կամաց
պարզ երեսն է կընճռոտում։

«Է՜հ, աղա՛ ջան, դարդ մի՛ արա,
ծովափին եմ ես ծընւել.
մեծացել եմ ծովի վըրա,
ծովի բերքովն եմ սընւել։

Մանուկ օրից շատ եմ տեսել
և՛ փոթորիկ, և՛ աղէտ.
ծովն է ինձ միշտ օրօր ասել.
նոր չեմ ծանօթ ծովի հետ։

Հայր ունէի, ծովում կորաւ
որսի ելած մութ գիշեր.
եղբայրներիս ծովը տարաւ,
ձըկնորս էին անվեհեր։

Կեանքը լաւ է... բայց ինչ արած...
համ էլ մահից ինչ փախչեմ.
ծովն է տալիս մեզ կեանք ու հաց,
ծովի տակն էլ կը հանգչեմ...»

---

1) Միայն ծովի վրա աշխատողն է վտանգների ենթակա։ Ուրիշ ի՞նչ արհեստավորներ գիտես, որոնց կյանքը միշտ մեծ վտանգի տակ է։
2) Դրանք ինչ պիտի պատասխանեին քեզ, եթե նույն եղանակով ուզենայիր նրանց զգուշացնես։

8. Գիժ Մարէ

ա.

Վազում են երեխաները գիժ պառաւի ետևից, ծովի ափով, քարեր են շպրտում նրա վրա և կանչում ետևից. «Հո՛ւ, հո՛ւ, գիժ Մարէ»։ Իսկ նա հայհոյում է, բռունցքներով սպառնում։

Խեղճ ցնորւած պառաւ։

Երկու երիտասարդ ձկնորսներ ուռկանն են փռել ծովի աւազին։ Նայում է նրանց խեղճ պառաւը երկչոտ, աղերսող հայեացքով, կարծես, պաշտպանութիւն է խնդրում նրանցից այդ անսիրտ երեխաների դէմ։

Նրանցից փոքրը ծաղրանքով նայեց պառաւին ու պոռաց.

—Ինչ է, գիժ Մարէ, բանդ բուրդ է երևում։ Էլ ինչ ես նայում դէս ու դէն։ Վեր առ խնոցիդ, հեծի և թռի անցի ծովի էն կողմը... Հո՛ւ, հո՛ւ գիժ Մարէ...

Եւ պառաւը քրտինքի մէջ լողալով հևհև նորից վազեց առաջ։

Թշւառ մենակ պառա՜ւ։ Մի ժամանակ նա բախտաւոր էր. առաջին հարսնացուն ամբողջ գիւղում։ Եւ մարդու էր գնացել շատ աջող։ Ունեցել էր մի որդի, մի մինուճար որդի։ Գուրգուրում, օրօրում էր որդուն, օրօրոցի երգեր էր երգում, կերակրում էր նրան, սիրում էր, երես էր տալիս իր աչքի լոյսին, իր Պօղոսին։ Տղան հազիւ էր մեծացել, ծովի ալիքները կլանեցին տարան հօրը, երաշտը երաշտի ետևից, սովը սովի ետևից, ունեցած չունեցածը բոլորը գնաց, հալւեց ձիւնի պէս։ Բախտի աչքը դրանով էլ չը կշտացաւ։ Ծովի անդունդը պառաւից խլեց նրա մինուճար որդուն էլ։

Խենթացաւ, գժւեց պառաւը վշտից։ Գալիս է ամեն օր ծովի ափը, նայում է հեռուն և կանչում. «Պօղո՜ս, Պօղո՜ս»...

բ.

Ահա դարձեալ հալածում են նրան երեխաները աւազոտ ափով։ Բայց այնտեղ, ծովի մօտ թոկ է հիւսում յաղթանդամ Անտօնը։

—Կորէք այստեղից,—բարկացաւ նա յանկարծ.—ամօթ ասած բանը դուք չը գիտէք։ Կորէք ասում եմ, թէ՞ չէ, բոլորիդ էլ կը բռնեմ, մէկ-մէկ ծովը կը նետեմ։

Երեխաները վախեցած դէս ու դէն ցրւեցին։

Զարմացած նայում է պառաւը իր խելագար աչքերով։

Անտօնը վեր կացաւ նստարանի վրայից և քաղցրութեամբ մեկնեց նրան մի կտոր սև հաց.

—Նստի՛, մայրիկ, գիտեմ՝ քաղցած ես։ Առ, կեր, ուժերդ հաւաքի։

Պառաւը նստեց, մէկ անգամից հանգստացաւ և երջանիկ աչքերով նայում էր երիտասարդին. կարծես՝ խելքն ու գիտակցութիւնը ետ էր դարձել։

Չէ՞ որ նա լսել էր դարձեալ «մայրիկ» խօսքը։ Նրա առջև պատկերացաւ իր սիրելի զաւակը, իր գեղեցիկ, իր աչքի լոյս Պօղոսը։ Ահա Պօղոսը գրկում է նրան, իր մայրիկին, մնաս բարով է ասում, պիտի գնայ լայնատարած ծովը, և այնպէս փաղաքշանքով ասում է. «Մնաս բարով, մայրիկ...»

Եւ տարւած իր յուշերով, ժպտուն ու երջանիկ, վեր կացաւ պառաւը, մօտ եկաւ Անտօնին, իր չորացած շրթունքներովը համբուրեց նրա ճակատը ու շփոթւած թոթովեց. «Երթա՜ս բարով, Պօղոս. Աստւած քեզ օրհնի, զաւակս...»

---

9. Սասունցի Դաւիթը ու Կոզբադին

ա.

Համբաւը հասաւ Մըսրայ Մելիքին.
—Հապա՛ չես ասի՝ Դաւիթը կըրկին
հօր վանքը շինել, իշխան է դառել,
դու եօթը տարւան խարջը չես առել։
Մելիք գայրացաւ.
—Գընացէ՛ք, ասաւ,
Բադին, Կոզբադին,
Սիւդին, Չարխադին,
Սասմայ քար ու հող տակն ու վեր արէք,
իմ եօթը տարւան խարաջը բերէք։
Քառսուն կոյս աղջիկ բերէք արմաղան,
քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան,
իմ տանն ու դըռան աղախին դառնան։

Ու Կոզբադին առաւ զօրքեր.
—Գըլխիս վըրա, ասաւ, իմ տէր.
գընամ հիմի քանդեմ Սասուն,
կանայք բերեմ քառասուն-քառասուն,
քառասուն բեռնով դեղին ոսկի,
տեղը ջընջեմ Հայոց ազգի։
Ասաւ, Մըսրայ աղջիկ ու կին
պար բռնեցին ու երգեցին.
—Մեր Կոզբադին գընաց Սասուն,
կանայք բերի քառասուն-քառասուն,
քառասուն բեռնով ոսկի բերի,
մեր ճակատին շարան շարի,
կարմիր կովեր բերի կըթան՝
գարնան շինենք եղ ու չորթան։
Ջա՛ն Կոզբադին, քաջ Կոզբադին,
Սասմայ Դաւթին զարկեց գետին։
Ու Կոզբադին փըքւած, ուռած,
—Շնորհակալ եմ, քոյրե՛ր, գոռաց,
մինչև գալըս դեռ համբերէք,
էն ժամանակ պիտի պարէք...

բ.

Էսպէս երգով,
զոռով-զօրքով
գոռ Կոզբադին մըտաւ Սասուն.
Օհան լըսեց՝ կապւեց լեզուն։
Աղ ու հացով,
լաց ու թացով
առաջն ելաւ,
խընդիրք արաւ.
—Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.
վարդ աղջիկներ, կանայք Սասման,
դառը դաղած դեղին ոսկին,
միայն գըթա մեր խեղճ ազգին,
մի՛ կոտորի՛, մի՛ տար մահու,

վերև՝ Աստւած, ներքևը՝ դու...
Ասաւ, բերաւ շարան-շարան
վարդ աղջիկներ, կանայք Սասման։
Ու Կոզբադին կանգնեց, ջոկեց,
մարագն արաւ, դուռը փակեց,
քառասուն կոյս աղջիկ, սիրուն, արմաղան,
քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին աղախին դառնան։
Դէզ-դէզ կիտեց դեղին ոսկին.
սև սուգ կալաւ Հայոց ազգին։

գ.

Հէ՜յ, ո՞ւր ես, Դաւի՛թ, Հայոց պահապան,
քարը պատըռւի, դո՛ւրս արի մէյդան։
Քանդած հօր վանքը որ շինեց նորից,
ցած իջաւ Դաւիթ Մարութայ սարից,
տեսաւ՝ Կոզբադին իրենց տան միջին
չափում է ոսկին թեղած առաջին։
Սիւդին, Զարխադին պարկերն են բըռնել,
Ջէնով Օհանն էլ շըլինքը ծըռել,
կանգնել է հեռու, ձեռները ծոցին։
Տեսաւ, աչքերը արնով լըցւեցին։
—Վե՛ր կաց, Կոզբադին, հեռո՛ւ կանգնի դու,
իմ հօր ոսկին է, ես եմ չափելու։
Կոզբադին ասաւ.—Է՜յ, Ջէնով Օհան,
կըտաս, տո՛ւր խարջը էս օխտը տարւան,
թէ չէ՝ կը գընամ, արևըս վըկայ,
Մըսրայ Մելիքին կը պատմեմ, կը գայ,
ձեր Սասմայ երկիր քար ու քանդ կանի,
տեղը կը վարի, բոստան կը ցանի։
—Կորէ՛ք, անզգամ դուք Մըսրայ շըներ,
բա չէ՞ք իմացել դուք Սասմայ ծըռեր...
Մեռա՞ծ էք կարծում դուք մեզ, թէ՞ շըւաք,
կուզէք մեր երկիր դընէք խարջի տակ...

Բարկացաւ Դաւիթ, չափը շըպըրտեց,
տըւաւ Կոզբադնի գըլուխը ջարդեց,
չափի փըշրանքը պատն անցաւ, գընաց,
մինչև օրս էլ դեռ գընում է թըռած։
Ու եկան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարհքից փախան գընացին

Դ.

Էսպէս ջարդուած, արիւնլըւայ
փախան, ընկան հողը Մըսրայ
Բադին, Կոզբադին,
Սիւդին, Զարխադին։
Մըսրայ կանայք հեռուից տեսան,
հեռուից տեսան, ուրախացան
ու ծափ տըւին կըտերներին.
— Եկա՜ն, եկա՜ն, բերի՜ն, բերի՜ն...

Մեր Կոզբադին գնաց Սասուն,
կանայք բերաւ քառսուն-քառսուն,
կարմիր կովեր բերաւ կըթան՝
գարնան շինենք եղ ու չոր թան...
Հէնց մօտեցան, նըկատեցին,
ծափ ու խընդում ընդհատեցին,
քըրքըջացին
ու կանչեցին.
—Է՜յ, Կոզբադին մեծաբերան,
էտ ո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըգաս փախած,
հաստ գըլուխըդ կիսից ճըղած։
Էն դու՞ չասիր՝ գընամ Սասուն,
կանայք բերեմ քառսուն-քառսուն,
քառսուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր աւեր անեմ։
Գացիր Սասուն քանց գէլ գազան,
ետ ես գալի քանց շուն վազան...
Ու Կոզբադին խիստ բարկացաւ.
—Սո՛ւս կացէք դուք, լըրբեր, ասաւ.
ձեր մարդիկն էք տեսել դուք դեռ,
դուք չէք տեսել Սասմայ ծըռեր։
Սասմայ ծըռեր լերան-լերան,
նետեր ունեն մի-մի գերան.
Սասմայ երկիր քար ու կապան,
դըժար սարեր, ձոր ու ծապան.
Նըրանց խոտեր, ինչպէս կեռ թուր,
զօրք ջարդեցին երեք հարիւր...
Ասաւ ու էլ չառաւ դադար,
վըռազ-վըռազ, գըլխապատառ
վազեց իրեն թագաւորին։
Խընդաց թագւորն իր աթոռին։
—Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կոզբադին.
արժէ՝ կախեմ ես քո ճըտին
մեր արծիւի մեծ նըշանը,
պարգև քո մեծ յաղթութեանը։

Ո՞ւր են, հապա առաջըս բեր
Սասմայ ոսկին ու աղջիկներ։
Ասաւ Մելիք, ու Կոզբադին
գըլուխ տըւաւ մինչև գետին.
—Ապրա՛ծ կենաս, մեծ թագաւոր,
զոռով փախայ ես ձիաւոր,
ո՞նց բերէի Սամսայ ոսկին։
Մի խենթ ծընւեց Հայոց ազգին,
ոչ ահ գիտի, ոչ տէր ու մեծ
գըլուխս էսպէս տըւաւ, ջարդեց.
«Չեմ տայ, ասաւ, իմ հօր ոսկին,
չեմ տայ կանայքն իմ հայ ազգին,
Սասմայ երկիր ձեզ տեղ չը կայ...
Քո թագաւոր, ասաւ, թո՛ղ գայ,
թող գայ՝ ինձ հետ կըռիւ անի,
թէ ղոչաղ է՝ զոռով տանի»։
Կատաղեց, փըրփրեց Մըսրայ թագաւոր.
—Կանչեցէ՛ք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
հազար հազար մարդ անբեխ, անմօրուք,
հազար հազար մարդ բեխը նոր ծըլած,
հազար հազար մարդ նոր թախտից ելած,
հազար հազար մարդ թուխ միրուքաւոր,
հասար հազար մարդ սիպտակ ալևոր,
հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,
հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն...
Կանչեցէ՛ք, թող գան, հագնեն զէնք, զըրա՛հ,
կըռիւ տի գընամ ես Դաւթի վըրա,
Սասունն աւերեմ,
հեղեղեմ բերեմ։

---

10. Ճնճղուկ

Որսից վերադառնալիս՝ անց էի կենում մի պարտէզի միջով։ Շունս վազում էր իմ առջևից։

Նա յանկարծ իր քայլերը փոքրացրեց և սկսեց կամաց ու զգուշ առաջ գնալ, կարծես որսի հոտ էր առել։

Ես նայեցի ու փոքր ինչ հեռուն ճամփի վրա տեսայ մի փոքրիկ ճնճղուկ, որի կտուցի շուրջը դեղին էր դեռ, իսկ գլուխը աղւամազով ծածկւած։ Նա ընկել էր բնից ու անշարժ պառկել էր, միայնակ ու անօգնական, փռած հազիւ դուրս եկած փոքրիկ թևերը։

Երբ շունս ծանրաքայլ մօտենում էր նրան, յանկարծ մօտակայ ծառի վրայից մի մեծ, սև կրծքով ճնճղուկ, քարի պէս ցած նետւեց, ընկաւ ուղղակի շանս առաջը և յուսահատ ու սաստիկ ճըճըւոցով միերկու անգամ թռաւ դէպի շան դունչը։

Նա յարձակւում էր, որ փրկի, պահպանի ձագին... Բայց իր փոքրիկ մարմինը դողում էր երկիւղից։ Նրա ծըւծըւոցը կատաղի էր, նա ուժից ընկնում էր. նա զոհւում էր։

Ինչպիսի ահագին հրէշ պէտի. երևար նրա աչքին շունը, բայց և այնպէս նա նստած ճիւղի վրա մնալ չը կարողացաւ բարձր ու անվտանգ ճիւղին...

Նրա կամքը աւելի ուժեղ էր, քան իր ուժերը։

Շունս կանգ առաւ. ետ քաշւեց... Երևի նա էլ ճանաչեց այդ ուժը։

Ես շտապեցի շւարած շանս ետ կանչելու. և հեռացայ՝ զգալով մէջս մի յարգանք դէպի այդ փոքրիկ թռչունը։

Այո, մի ծիծաղէք։ Ես յարգում էի այդ փոքրիկ հերոս թռչունը, նրա սիրոյ ուժգնութիւնը։

Սէրը, մտածում էի ես, մահից ու մահւան երկիւղից աւելի զօրեղ է։ Միայն սիրով է պահպանւում ու շարժւում կեանքը։

---

11. Սարերի արքան

Հսկայ թևերը լայն-լայն տարածած,
հըզօր արծիւը ուղղեց իր թըռիչք
դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
դէպի անսահման, ամպամած երկինք։
Երկար սաւառնեց նա խիտ ամպերում.
քանի ուժ ունէր զօրեղ թևերում
և վերջիվերջոյ յոգնած, վաստակած
նա նըստեց հըսկայ մի լեռան գըլխին,
որը սուր ու սեպ մինչ երկինք հասած
սարսափ էր ազդում վերև նայողին։
Նայեց արծիւը անվախ, անվրդով

և շուրջը գոռոզ հայեացք գցելով,
նա արքայական իր ձայնովն ահեղ
որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
մենակ ու ազատ այս լեռան վրա,
որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
իմ գահն է անհուն այս երկնակամար,
որոտ ու ամպեր՝ ոտքիս պատւանդան.
ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
ո՞վ կարայ հասնի գահիս բարձրութեան։»

Ի՞նչու ենք արծիվն թագաւոր ասում. ուրիշ ի՞նչ կենդանի նոյն պատիվն ունի։

12. Գերի Արծիւը

ա.

Մեր բանտն էին բերել մի վիրաւոր արծիւ։ Բոլոր բանտարկեալներս շրջապատեցինք նրան։ Չէր կարողանում թռչել. աջ թևը կախ էր ընկած գետնին, մէկ ոտն էլ վնասուել էր։ Թռչունը կատաղի հայեացք էր ածում շուրջը, դիտում էր հետաքրքիր ամբոխը և բաց էր անում իր կեռ քիթը, միշտ պատրաստ թանկ ծախելու իր կեանքը։

Երբ բոլորն էլ նայելուց կշտացան ու սկսեցին ցրուել, նա կաղալով, մի ոտի վրա ոստոստելով և առողջ թևը թափ տալով, քաշուեց բանտի բակի ամենահեռաւոր ծայրը և այնտեղ կուչ եկաւ անկիւնում։

Այդտեղ նա ապրեց մօտ երեք ամիս և այդ ամբողջ ժամանակը դուրս չեկաւ իր անկիւնից։

Սկզբում յաճախ էին գալիս նրան նայելու և գրգռում էին շանը

նրա դէմ։ Շունը գազազած վրա էր ընկնում, բայց վախենում էր շատ մօտենալ։ Արծիւը հպարտ ու վայրագ, վիրաւորուած արքայի պէս, կծկուած իր անկիւնում, դիտում էր հետաքրքիր այցելուներին։

Սկզբում նա ուտել էլ չէր ուզում, մի քանի օր բան չառաւ բերանը. վերջը ուտում էր, բայց ո՛չ մեր ձեռքից ո՛չ էլ մեր ներկայութեանը։ Երբ տեսնում էր մօտը մարդ չը կայ և համոզւում էր, որ մենակ է, մի քանի քայլ հեռանում էր իր անկիւնից և կաղալով անցնում էր պարսպի տակով, այսպէս մի քսան քայլի չափ, յետոյ դառնում էր ետ, նորից էր գնում, նորից ետ գալիս, կարծես ըզբօսնելիս լինէր։ Բայց հէնց որ հեռուից նկատում էր մէկին, իսկոյն կաղալով ու ոստոստելով, շտապում էր իր տեղը և գլուխը ետ գցած, կտուցը լայն բաց արած, պատրաստւում էր կռուի։ Ոչ մեր քաղցր խօսքերը, ոչ մեր փաղաքշանքները չէին մեղմացնում նրա սիրտը։

Մենակ ու չարացած սպասում էր նա մահւան, ոչոքի չը հաւատալով և ոչ ոքի հետ չը հաշտուելով։

բ.

Չը գիտեմ ինչպէս, մի օր էլ յանկարծ բանտարկեալների մէջ միտք ծագեց, թէ հարկաւոր է նրան բաց թողնել։

—Թէ սատկելու է, թող բանտում չը սատկի,—ասում էին մի քանիսը։

—Ի հարկէ, ազատ սովոր, անկախ թռչուն է, բանտին չի ընտելանայ,—պնդում էին միւսները։

—Մեզ նման չի,—աւելացրեց մէկը։

—Բա՛ն ասիր. սա հօ թռչուն է, իսկ մենք մարդ։

—Արծիւը, ախպէ՛ր, անտառների թագաւորն է։

Ճաշից յետոյ, երբ աշխատանքի գնալու զանգակը տւին՝ բանտարկեալներս արծւին առանք միասին։ Նրան գրկողը պինդ սեղմել էր կտուցը, որովհետև սաստիկ դիմադրում էր և ուզում էր գլուխը ազատի։ Հասանք մի բարձր տեղ. ամենքս էլ հետաքրքրութեամբ կամենում էինք տեսնենք թէ ուր պիտի գնայ արծիւը։ Զարմանալի բան. բոլորս էլ մի բանով բաւական էին, կարծես մենք էինք ազատութիւն ստանում...

—Սրան տես է. անպիտանին բարութիւն ենք անում, դեռ կծում

էլ է,—ասում էր նրան տանող բանտարկեալը գրեթէ սիրով սեղմելով թուչունին։

—Դէ՛, բա՛ց թող.—կանչեց մէկը։

—Ազատութիւն տուր, իսկական ազատութի՛ւն.—աւելացրեց մի ուրիշը։

Արծւին բանողը նրան գցեց մեր բարձրութիւնից ցած, դէպի մեր ոտքերի տակ տարածւող դաշտավայրը։

Աշնան վերջերն էր, օրը ցուրտ և մառախլապատ։ Քամին սուլում էր մերկ դաշտերի վրա և խշխշում էր դեղնած ու չորացած, փշոտ ու վայրի խոտերի մէջ։ Արծիւը սլացաւ ուղիղ, թափ տալով հիւանդ թեւը և կարծես շտապելով որ մեզնից հեռանայ ուր որ էլ լինի։ Բանտարկեալները հետաքրքրութեամբ հետեւում էին թէ ինչպէս սեւին էր տալիս նրա գլուխը չորացած խոտերի ֆօնի վրա։

—Մեռիկ է,—մտածկոտ արտասանեց մէկը։

—Ո՞նց է փախչում.—աւելացրեց միւսը։

—Իսկի ետ էլ չի նայում։

—Զլինի դու կարծում էիր, նորից ետ պիտի գայ ու շնորհակալութիւն յայտնի,—ծաղրեց մի ուրիշը։

—Հապա՛, սրան ասում են ազատութիւն...

—Ազատութիւնը լաւ բան է։

—Էլ չի երեւում...

—Ինչ էք կանգնել։ Մա՛րշ.—կանչեցին մեզ ուղեկցող պահապան զինւորները, և բոլորս լուռ քարշ եկաւ դէպի մեր տաժանակիր աշխատանքը։

1) Արծիւը ինչով բանտարկեալներին այսպէս հետաքրքրել էր ու յարգանք ազդել։

2) Ի՞նչ բան է տաժանակիր աշխատանքը։

13. Արծիւ

Իմ ծնւած օրից ասաւ ինձ Աստւած.
«Աշխարհքի մարդկանց չը լինես ծառայ»։
Եւ ահա՛ աշխարհ ողջ թողի մարդկանց,
ազատութիւնը ես միայն առայ։

14. Այպարանի գոմէշը

ա.

Զանգը ուեին։ Աշակերտները անասելի աղմուկով վազեցին դէպի դասարանները, ճչալով, խփելով, հրելով, քաշքշքելով։ Մի մեծ խումբ էլ խռնւեցին ջրի տակառի շուրջը, ձեռքէ ձեռք խլելով բաժակները։

Յանկարծ նկատեցի մեր դասարանցի Օհանեանի կլոր տափակ դէմքը, լցրի մի ամբողջ բաժակ սառը ջուր ու, շը՜րփ, նրա երեսին։ Մինչև նրա ուշքի գալը, փախայ դասարան։

Նրա վրէժխնդրութիւնից չէր, որ փախչում էի. ինչ պիտի անէր ողորմելին. շնորք ունէր ո՞ր... Գլուխը կորցրած, մոլորւած մէկն էր, միշտ վախվխելով, ամենքից քաշւելով՝ ման էր գալիս շարունակ բակի պատերի տակ, աշխատելով ոչ ոքի աչքին չընկնի...

Ես շտապում էի, որովհետև այդ դասին մեզ հետ առաջին անգամ պիտի պարապէր պատմութեան նոր ուսուցիչը։

Երբ Օհանեանը կամացուկ դասարան մտաւ մազերն ու բլուզը ամբողջովին թրջւած և ուզում էր աննկատելի կերպով անցնի իր տեղը, ամեն կողմից սկսեցինք կանչել.

—Ո՜ւ, ո՜ւ, Նուրի Նուրին եկել է, աջրա հուրին եկել է։

Աշակերտներից մէկը ետևից հասաւ, ու մի ամուր ապտակ շըրըխկացրեց նրա բարձր ու լայն վզակոթին, միւսը կաւճոտ թաթը դրոշմեց նրա կռնակին, երրորդը թանաքոտած ջնջոցը ձեռքին՝ վազեց նրա թաց երեսը սրբելու... Շշկլւած, անխօս, դէս ու դէն ընկնելով՝ նա շտապեց դէպի իր տեղը ետևի նստարաններից մէկի վրա. բայց շարքերի միջից անցնելիս այս ու այն կողմից նրան սկսեցին բրդել, իսկ մէկը ոտքը դէմ տւաւ, ու նա իր հաստ մարմնով ծանր փռւեց կեղտոտ յատակին...

Հէնց այդ ընդհանուր հռհռոցի րոպէին ներս մտաւ նոր ուսուցիչը։

Օհանեանը վեր կացաւ, կաղէ-կաղ, շորերը թափ տալով՝ հասաւ իր տեղը, իմ կողքին, և դողդողալով մնաց կանգնած։ Երբ ուսուցիչը ամբիոն բարձրանալով՝ գլխով արաւ որ նստենք, Օհանեանը վերջինն էր, որ նստեց։

բ.

Ցուցակը բաց անելով, ուսուցիչը սկսեց մէկ մէկ կարդալ բոլորիս անունները և մեզ հետ ծանօթանալ։ Չը գիտեմ ինչու արամա-

դրութիւնս շատ լաւ էր։ Ես չէի կարողանում ծիծաղս զսպել։ Նրա սուր, սեպաձև մօրուքը, տըմբտըմբացող երկար-երկար բեխերը, բարակ ու կեռ քթին շարունակ ցնցւող ոսկէ պենսնէն, ապակիների տակից ճպճպացող արագաշարժ աչքերը ամենը, ամենը ինձ շատ ծիծաղացնում էին։

—Մըկըկըկը,—շշնչացի ես ընկերոջս ականջին,—մըկըկըկը՜։

Ընկերս փռթկաց. մի հինգ րոպէից արդէն ամբողջ դասարանը քթի տակ կրկնում էր՝ մըկըկըկը՜։ Հակառակի պէս նրա գլխի մազերի մի խուրձն էլ այնպէս էր վեր ցցուել, որ բոլորովին այծի պոզի էր նման...

Նա իմ անունս տուաւ և սկսեց հարցնել թէ առաջ որտեղ եմ սովորել։

—Մեր քաղաքի ծխական դպրոցում,—յանդուգն պատասխանեցի ես՝ աշխատելով գլուխս ու կզակս այծի պէս թափահարել։

Բոլորը հազիւ հազ էին ծիծաղները պահում։

Ահա ուսուցիչը հասաւ ցուցակով վերջին աշակերտի անուանը։

—Օհանեան Վազէ,—կարդաց նա յանկարծ։ Ցուցակում սխալմամբ «Վաչէի» տեղ տպած էր «Վազէ»։

—Վազէ, վազէ,—շտապով ետևից թելադրեցի ես Օհանեանին։ Նա էլ գժի պէս տեղից վեր թռաւ ու մի քանի քայլ առաջ վազեց։ Նրան կանգնեցրեց ամբողջ դասարանի միահամուռ փռթկոցը։

Տեղն ու տեղը սառած մնաց ու խղճալի կերպով դէս ու դէն էր նայում։

—Որտեղացի՞ ես.—հարցրեց ուսուցիչը։

—Ապարանի գոմէշ է,—պատասխանեց այն ծայրից մէկը։

—Դմբօ ծառայ Յիսուս Քրիստոսի,—կանչեց մէկ ուրիշը։

—Լօքի՜,—ուզում էի աւելացնեմ ես՝ յիշելով Օհանեանի երրորդ մականունը, բայց իսկոյն գլուխս խոնարհեցի և աշխատեցի թաք կենամ առջևս նստած ընկերոջս ետևը, որովհետև նկատեցի՝ ինչպէս ուսուցիչը յանկարծ տեղից բարձրացաւ, դէմքը խոժոռեց, մի այնպիսի խիստ հայեացք նետեց դասարանի վրա, որ իսկոյն ամենքս մնջւեցինք։

—Դու երկրորդ տարեցի՞ ես, տղա՛ս,—հարցրեց նա այնպիսի քաղցրութեամբ, որ դեռ երբէք ոչ մէկ ուսուցչի բերանից չէր լսել Օհանեանը։

Օհանեանը առաջւայ պէս քար կտրած՝ մէջտեղ կանգնած էր. նա աչքերը չռել էր ուսուցչի դէմքին՝ կարծես աղերսելիս լինէր որ իրնայի, թողնի իրեն՝ գնայ նստի տեղը։

—Երկրորդ տարեցի՞ ես, տղա՛ս,— կրկնեց ուսուցիչը աւելի քընքշութեամբ։

—Հրամելես,— վերջապէս դուրս թռաւ Օհանեանի կրծքից գիւղական գռեհիկ արտասանութեամբ։

—Ոչինչ,—շարունակեց նոյն մեղմութեամբ ուսուցիչը,—երևի մի բան քեզ խանգարել է անցեալ տարի։ Այս տարի լաւ կը սովորենք ու յաջորդ դասարանը կանցնենք, այնպէս չէ՞, Վազէ։

—Վազէ չէ, պարոն. Վաչէ է. ցուցակում սխալ է տպած։ Ոչ մի ուսուցչի դասը չի պատրաստում, բան չը գիտի,—նկատեցի ես իմ տեղից և ուզում էի աւելին էլ ասեմ, որ մինչև անգամ գրքեր էլ չի առնում, բայց ուսուցչի խիստ հայեացքը ինձ կանգնեցրեց...։

գ.

Յունուարի սկզբին էր. նախկին ուսուցիչը ծանր հիւանդացել էր և նրա տեղ հրաւիրել էին նորը։

Մեր անցած ու սովորածից մի քանի բան հարցնելուց յետոյ, ուսուցիչը սկսեց նոր դասը պատմել։

Նա պատմում էր սկզբում անվստահ ձայնով՝ կարծես մեզնից քաշուելով, բայց յետոյ պենսնէն հանեց, աչքերը սրբեց, ճակատը շփեց, ու յանկարծ սկսեց խօսել մի ուրիշ, բոլորովին փոխուած ձայնով, հետզհետէ աւելի ու աւելի ոգևորուելով։

Մի տաքութիւն անցաւ ամբողջ դասարանով։

Մենք իրար երես նայեցինք ու ակամայ ամբողջ հոգով կպանք նրա ձայնին։

Բառերը այնպէս պա՛րզ էին և հասկանալի, պատկերները այնպէս վա՛ռ, գեղեցիկ ու գրաւիչ։

Կարծես, մեր աչքի առջև ամեն ինչ կատարուելիս լինէր։ Ե՛ւ Արտաշէսի ծծմօր ձեռքով ազատուելը, և՛ հովիւների վրաններում թաք կենալը, և՛ Մարաց պալատում ընդունուելը, արքայազուն մանուկների հետ մեծանալը։ Ահա դայեակ Սմբատ Բագրատունին կանգնած է Մարաց թագաւորի առջև, էլ ոչ մի ուրիշ պարգև չի ուզում իր յաղթութիւնների համար, միայն թէ թագաւորը զօրք տայ, որ իր սիրելի սան Արտաշէսին կարողանայ հայրական գահի վրա նստեցնի։

Ահա խնամախօսներ է ուղարկում Արտաշէսը Ալանաց թագաւորի մօտ գեղեցիկ Սաթենիկին ուզելու։

«Որտեղից պիտի տայ Արտաշէսը հազար հազարներ և բիւր բիւրեր Ալանաց աղջկայ համար»։

Աշակերտներից մէկը կամացուկ անցաւ ետևի նստարանից առաջինը և կծկւեց ընկերոջ կողքին։ Մի երկու րոպէից նոյնը արաւ մէկ ուրիշը, երրորդը, և կարճ ժամանակամիջոցում գրեթէ ամբողջ դասարանը անաղմուկ տեղափոխւել էր առաջին նստարանները, ուսուցչին աւելի մօտիկ։

Օհաննեանն էլ փորձեց վեր կենալ, առաջ անցնի, բայց անհամարձակ դէս ու դէն նայեց և շփոթւած կրկին տեղն իջաւ։ Ահագին գլուխը կրթնած կոշտ ձեռքին, նա աչքը չէր հեռացնում ուսուցչի դէմքից։

Զանգը տւին.

—Վա՜յ, էսպէս շո՞ւտ,—լսւեց ետևից մէկի բարձր բացականչութիւնը։

Ես ետ նայեցի՝ Օհաննեանն էր. նա կանգնած էր, ամբողջովին կարմրած. մինչև անգամ նրա լօշ-լօշ ականջները կաս կարմիր էին դարձել։

Ճանապարհ գցեցինք մեր նոր ուսուցչին, մեր մէջ վճռելով որ նա լինելու է մեր սիրելին։

Դ.

Յաջորդ դասից առաջ մենք խումբ խումբ բաժանւած՝ պատըշգամբում եռանդով պատմում էինք իրար նոր ուսուցչի տւած դասը։ Ամէն մէկս անպատճառ ուզում էր ամենից լաւ պատասխանի։ Օհաննեանն էր միայն, որ ինչպէս միշտ մենակ ման էր գալիս, տխուր և գլուխը քաշ գցած։ Ոչ ոք նրան մօտ չը կանչեց, ոչ ոք նրան չը հարցրեց՝ դասը գիտի թէ՞ ոչ... Ի՞նչ նրա գդում գլխի բանն էր դաս սովորելը։

Երկրորդ տարին էր, ինչ եկել մտել էր մեր դպրոցը, և հէնց առաջին օրւանից բոլորիս ծաղրի առարկան էր դարձել։ Նրա գիւղական տրեխները, նրա կարճ չուխան, փորից վեր կապւած բարակ կաշւէ գօտին, կարմիր արխալուխը ամենքիս անվերջ կատակների առիթ էր տալիս։ Բայց և յետոյ, երբ վերջապէս շորերը փոխեց ու բլուզ հագաւ, այն ժամանակ էլ, հէնց որ բերանը բաց էր անում և իր գռեհիկ լեզւով սկսում էր խօսել կամ դաս պատմել, ամէն կողմից սրախօսութիւնների տարափ էր գլխին թափւում, և նա իսկոյն լռում

էր և վախեցած դէս ու դէն նայում։ Նրա խոշոր, անշնորհք մարմինն էլ պակաս չէր ծիծաղեցնում մեզ և շուտով «Ապարանի գոմէշ» պատւաւոր անունը հաստատ կպաւ նրա ճակատին։ Ոչ մի դաս չէր պատասխանում, և բոլոր ուսուցիչները նրան ծոյլ, բթամիտ, նոյն իսկ ապուշ էին համարում և այլ ևս ամիսներով չէին հարցնում...

Ե.

Հայոց պատմութեան դասը սկսւեց։ Այս անգամ դասարանում այնպիսի լռութիւն էր, կարծես սրբութիւն էր կատարւում։

Երանի ո՞ւմը պիտի հարցնի. ամեն մէկս ուզում էր որ ինքը լինի այդ երջանիկը։

—Օհաննեա՛ն,—յանկարծ լսւեց ուսուցչի ձայնը։

Քիչ մնաց բարկութիւնից վեր թռչէի։ Հիմա էդ անշնորհքը պիտի վեր կենայ, մի կէս ժամ լուռ կանգնի, ոտքից ոտք փոխելով, կմկմայ, դասը անհամացնի։

Օհաննեանը կանգնեց, բոլոր աշակերտները նրա կողմը դարձան, կարծես ասելով. «Ասա՛, չը գիտեմ, ու տեղդ նստի՛»։

Երբէք նրան այդպէս գունատ չէի տեսել. կարծես կախաղան պիտի հանէին։

—Դէհ, Օհաննեան, ինձ մօտ արի, տղաս, ու պատմի՛։

Հարբածի նման մօտեցաւ Օհաննեանը ամբիոնին։ Ամբողջ մարմնով դողում էր, ձեռներով ջղաձգօրէն տրորում էր բլուզի փէշերը, շրթունքները անձայն շարժւում էին։

—Նա չը գիտի,—բացականչեցի վերջապէս ես։

—Վաչէն այսօր դասը գիտի՛,—ասաւ ուսուցիչը այնպիսի հաստատ համոզմունքով, որ մենք զարմացած նայեցինք իրար։

Օհաննեանը գլուխը թափ տւաւ թէ՝ այո՛, գիտեմ։

—Դէհ, Սանատրուկի բոլոր զաւակներին Երւանդը կոտորեց. ազատւեց միայն Արտաշէսը...,—ծայր տւաւ ինքը ուսուցիչը։

—Ա... ազատւեց մի...այն Արտաշէսը,—կրկնեց Օհաննեանը։

—Այո՛, միայն Արտաշէսը,—սիրտ էր տալիս ուսուցիչը։

Ես անհամբեր սպասում էի թէ յետոյ ինչ կըլինի։

—Նր...րան փախցրեց ծծմէրը։

—Ծծմայրը. ճիշտ է։

—Փախցրեց ու մտաւ չոբանների չադըրները։

—Ճիշտ է, ճիշտ է։

—Թաք կացաւ չորանների, հհ… հովիւների մօտ,—ուղղեց ինքն իրեն Օհանեանը։—Եւ մր…տածում էր. «էս… ինչպէս… պիտի… երեխին… մեծացնեմ… Արի, մարդ… ղրկեմ Սմբատ Բ…ագրատունու մօտ։ Թող… գայ… երեխին… տէրու… թիւն ա…-նի։

Ամենքս ժպտացինք։ Գրիգոր Մէջլումեանը, որին «Կոտրած գդալ» էինք ասում, առաջին նստարանից շուռ եկաւ իմ կողմը՝ չը լինի թէ ես եմ դասամիջոցին նրան պատմել։ Բայց ես էլ զարմացած էի։

—Այո՛, այո՛, այդպէս էր մտածում ծծմայրը,—խրախուսում էր ուսուցիչը։

Օհանեանը անհուն շնորհակալութեամբ լի հայեացքը ուղղեց նրան, խոր հոգոց հանեց, կարծես մի ծանր բեռ ընկաւ ուսերից, ու աւելի ազատ շունչ քաշելով, արդէն համարձակ շարունակեց իր պատմութիւնը։

Լսում էի ու ինքս իմ ականջներիս չէի հաւատում… Մի՞թէ «Դմբօ ծառայ Յիսուս Քրիստոսին» է պատմողը, «Ապարանի գոմէշը»…

Նա պատմում էր՝ մեզ վրա ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով, դիմելով միայն ուսուցչին, զանազան մանրամասնութիւններ աւելացնելով իրենից, զարդարելով, ծաղկեցնելով ուսուցչի պատմածը։ Նոյն իսկ նրա գիւղական դարձւածքները համով էին դուրս գալիս, և ոչ ոքի մտքով չէր անցնում ծիծաղի նրա գործածած թուրքերէն բառերի վրա։ Եւ այնպէս հետաքրքրական ձևով էր խօսում, որ բոլորս սիրով ականջ էինք դնում, կարծես նոր բան պատմելիս լինէր։ Ուսուցիչն էլ ամենայն ուշադրութեամբ լսում էր, գլխով բաւականութիւն յայտնելով, երբեմն օգնելով և յիշեցնելով։

—Ապրես, շա՛տ լաւ է,—բացականչեց վերջապէս նա, ձեռքը տղի ուսին դնելով, և ուղղեց նրա քրտնած ճակատին թափւած մազերը։—Հիմա դու գնա՛ նստի, թող ուրիշը շարունակի։

Ամենքս պարզ նկատեցինք որ ուսուցիչը նշանակեց հինգ։

Նախանձեցի Վաչէին և բոլորովին մոռացայ նրա նստելու ժամանակ բռունցքս տակը դնեմ, որ յանկարծ վեր թռչի, ինչպէս գրեթէ միշտ անում էի։ Նախանձեցի, բայց և ակամայ սկսեցի յարգել։ Կողքից աչքիս ծայրով նայեցի նրան. դէմքը երջանկութիւնից փայլում էր…

Դասը վերջացաւ։ Վաչէն դիմեց դէպի դուռը, զգուշութեամբ և շտապով, մեզ չը նայելով, կարծես ներողութիւն խնդրելով որ այսօր այդպէս պատահեց։ Յանկարծ փոքրիկ Սահակեանը, որ յայտնի էր իր

ճարպկութեամբ, վեր թռաւ, ցատկեց նրա ուսին ու բարձր կանչեց.

—Կեցցէ Օհանեան, հինգ։

Սահակեանին ոտքերից բռնած, ժպտալով, դուրս վազեց Օհանեանը դասարանից։

Մեծ դասամիջոցն էր. Վաչէն առաջին անգամ գերի խաղաց մեզ հետ։…

գ.

Յաջորդ դասին ուսուցիչը պատմելիս կարծես միայն նրա հետ էր խօսում. ես այդ շատ լաւ զգում էի։ Վաչէն լսում էր քաղցր հրճւանքով և հիացմունքով։ Եւ յետոյ միշտ, երբ միւս աշակերտները չէին կարողանում պատասխանեն, նա էր մատը բարձրացնում, նոյն իսկ երբեմն առաջին աշակերտի փոխարէն…

Մի օր էլ ես ստիպւած նրանից մի բան հարցրի և խնդրեցի որ պատմի…

Եւ ահա մէկ ամիս էլ չանցած մի խումբ աշակերտներ հայոց պատմութեան դասից առաջ միշտ շրջապատում էինք նրան. միևնոյն բանը տասն անգամ մեզ կրկնում էր։

Մէկ անգամ էլ մտնում եմ դասարան, տեսնեմ՝ առել է թւաբանութեան գիրքս ու դասն է սովորում։ Զը խլեցի ձեռքից։

Բարեկամացանք։ Խոստովանեց որ հայրը փող չի ուղարկում դասագրքեր առնելու և որ ապրում է ծանօթ մի հացթուխի խանութում։

Այդ օրից միշտ իմ գրքերս էի տալիս։ Հէնց որ մի որև է առարկայի ուսուցիչը ներս էր մտնում, վեր էի կենում ու տեղիցս կանչում.

—Պարոն, Օհանեանին հարցրէք. այսօր նա դասը գիտի։

Եւ ճշմարիտ որ գիտէր։

Հրա՜շք էր։

Գարունը եկել էր, անձրևները գալիս էին, հա գալիս։ Հաւաքւել էինք դասարանում, դուռը փակել և պար բռնել։ Մէկը ամբիոնի տախտակին խփելով՝ թմբուկ էր ածում, միւսներս պարում։ Միայն Վաչէն էր որ մի անկիւնում առանձնացած՝ աշխարհագրութեան դասն էր սովորում։

—Վաչէին, Վաչէին, մէջ բերէք Վաչէին,—կանչեց պարողներից մէկը։

Բոլորս վրա թափւեցինք, սկսեցինք քաշքշել. գիրքս նրա ձեռքից վայր ընկաւ, պատռւեց։

—Ապարանի գոմեշ, էյ գոմեշ, պար արի. գոմշախաղդ ցոյց տուր,—կանչեց յանկարծ «Կոտրած գդալ» Գրիգորը։

Օհաննեսը կատաղեց և մէկ այնպիսի քացի տուաւ Գրիգորին, որ Գրիգորը ետ ետ գնաց, դիպաւ դռանը, դուռը բացւեց, ապակին փշրւեց, Գրիգորն էլ ձգւեց պատշգամբի վրա։

Ուղիղ է, այդ օրը Օհաննեսը պատժւեց, բայց այնուհետև էլ ոչոք չը համարձակւեց նրան «Ապարանի գոմեշ» կանչել։

1) Ի՞նչն էր պատճառը, որ Օհաննեսը սկզբում այդպէս խեղճ էր ու անընդունակ։ Եւ իսկապէս անընդունա՞կ էր ու պաշտպանւելու ուժ չունէ՞ր։

2) Ուսուցիչը ի՞նչ արաւ, որ նրան փոխեց։ Ուսուցչի վարմունքը պատահմո՞ւնք էր։

15. Աշունը սարերում

Աշունն էլ եկաւ։ Ու մեր աշխարհում
սարին ու դաշտին այլ կեանք է եռում։

Խուզելով գառան, ոչխարի բուրդը
քոչել է բինէն թողնելով եուրտը։

Լեռներից զըւարթ, գէրացած հօտեր
ձըմեռւան համար իջել են դաշտեր։

Եուրտերը դատարկ, սևին են տալիս,
աղբիւր ու ծաղիկ ողբում են լալիս։

Մենակ խաղում է, թըռչկոտում պախրան,
սարեր ու ձորեր մընացին նըրան։

Արծիւն էլ տըխուր նըստած ժայռերին՝
որս է փընտըռում իր սոված փորին։

16. Բոբը

ա.

Բոբը այն շների ազնիւ ցեղիցն էր, որոնց հայրենիքը Նիւֆաունդլենդ կղզին է։ Այդ շների գլուխը լայն է, պոչը թաւ, մազերը երկար. մատների արանքները պատած են թաղանթով, այդ պատճառով էլ հրաշալի լող են տալիս։

Բոբը ծնւել էր մի անգլիական նաւի վրա, որ Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափի մօտ խարիսխ էր գցել։

Բոբը երբեմն օրերով լող էր տալիս. և առանձին հաճութեամբ սուզւում ու հանում էր ջրի տակից զանազան իրեր, որ գցում էին ջրի մէջ իր տէրը կամ ուրիշները։ Մանաւանդ շատ էր ուրախանում, երբ իր տէրը, մի երիտասարդ նաւաստի, առաջարկում էր նրան գնան միասին լող տալու։ Այն ժամանակ նա թաւալւում էր ջրի մէջ, ափից հեռանում էր, կրկին վերադառնում, սուզւում էր անցնում տիրոջ տակով և հազար ու մի կատակներ էր անում։ Բոբը շատ էր սիրում իր տիրոջը, որ մի շիտակ ու բարի մարդ էր։

Քանի՜ քանի նաւահանգիստներ այցելած էին նրանք միասին ովկիանոսի այս և այն կողմերում, քանի՜ անգամ Բոբը պահապան էր նըստել իր տիրոջ կողքին, երբ նա նաւահանգստի պանդոկներից մէկում հարբելուց յետոյ ընկնում էր փողոցի մի անկիւնը ու քնում. ոչ ոք չէր

համարձակւում քնած նաւաստուն մօտենայ ու կողոպտի, քանի նրա կողքին գլուխը թաթերի վրա դրած հսկում էր հաւատարիմ շունը։ Իսկ երբ մի բանից վշտացած նաւաստին մտնում էր խուցը և ընկնում իր չոր տախտի վրա, Բոբը գալիս պըպըզում էր մօտը և մի այնպիսի քնքուշ հայեացքով նայում էր տիրոջ աչքերին, որ նաւաստին ակամայ մեկնում էր ձեռքը, փայփայում նրան։ Եւ շունը լիզում էր այդ ձեռքը և մեղմ քսւում, մինչև որ տէրը մոռանում էր իր վիշտը, իր բարկութիւնը և խուցից դուրս գալիս, առաջւայ պէս բարի, ժպտուն երեսով։

Այսպէս տևեց, մինչև որ նաւապետը փոխւեց։ Նոր նաւապետը կտրական կերպով արգելեց նաւաստուն, որ շանը իր հետ վերցնի։

Բայց երբ նաւը խարիսխը քաշեց և բոլոր առագաստները պարզած սկսեց դուրս գալ դէպի ովկիանոս, Բոբը գցեց իրեն ծովը և լողալով հետևեց նաւին։ Ոչ նաւաստիների աղաչանքը, ոչ էլ տիրոջ արցունքները չը կարողացան շարժել քարասիրտ նաւապետի խիղճը։ Մի ամբողջ օր Բոբը կռւում էր ալիքների հետ և հետևում էր նաւին, որի վրա բոլորը, բացի նաւապետից, հիացած էին այդ հրաշալի կենդանու տիրասիրութեան և դիմացկունութեան վրա։ Վերջապէս շունը ուժից ընկնելով՝ կողքի վրա պառկեց և մի անշարժ դիակի պէս տարուբերւում էր ալիքների երեսին։ Այդ ժամանակ միայն նաւապետի գութը շարժւեց և թոյլ տւաւ որ հանեն շանը ջրից։

բ.

Մի գիշեր, երբ նաւը մօտենում էր Անգլիայի ափերին, սարսափելի փոթորիկ բարձրացաւ և նաւը փշրեց։ Բոլոր ճամփորդները և ծառայողները խեղդւեցին։ Բոբը իսկոյն և եթ ջուրն ընկաւ, հրաւիրելով իր տիրոջն էլ հետևելու իր օրինակին։ Նրանք լողում էին դէպի ափը, որ հազիւ էր նշմարւում։ Այսպէս մօտ երեք վերստ լող տալով մարդն ու շունը հասան մի քանի ժայռերի, որոնք դուրս էին ցցւած ջրի միջից և ուժասպառ ընկան։ Բայց այդ քարերը չէին կարող իբրև հաստատ ապաստան ծառայեն, որովհետև մօտ էր մակընթացութեան ժամանակը, ժայռերը ծածկւելու էին և ալիքները խեղճերին կրկին պիտի քաշէին դէպի ծովը։

Նաւաստին փորձում էր գոռայ, կանչել, բայց բացի ալեկոծ ծո-

վից ոչ ոք ձայն չէր տալիս նրա կանչին։ Բոբը պառկել էր և փաղաքշանքով նայում էր տիրոջը, կարծես ասել էր ուզում։ «Ինչո՞ւ ես յուսահատւում. դու գիտես, որ ես լաւ եմ լող տալիս, միթէ ես քո ազատութեանդ համար ոչինչ չեմ կարող անել»։

Տէրը կարդաց իր շան մեծ աչքերի մէջ նրա միտքը և սիրտ առաւ։ Գրպանից հանեց մի բանալի, դրեց շան բերանը և ցոյց տալով ափը՝ ասաւ. «Լող տո՛ւր»։ Բոբը նետւեց ջուրը, հասաւ ափը և հաչելով սկսեց օգնութեան կանչել։ Բայց ալիքները նրա ձայնը խլացնում էին։ Այն ժամանակ Բոբը աւելի առաջ վազեց և իր ոռնոցով զարթեցրեց մօտիկ ագարակում ապրող մարդկանց։ Նրանցից մի քանիսը դուրս թռան. Բոբը արտասւալից աչքերով մօտեցաւ և լիզեց նրանց ձեռքերը։ Յետոյ պառկեց նրանց ոտքերի տակ և կրկին ողբալի ձայնով ոռնաց։

Տեսնելով բանալին՝ կալւածատէրը հասկացաւ, որ իր տանից ոչ հեռու մէկը օգնութիւն է կանչում։ Բոբը իսկոյն վեր կացաւ գետնից և արագ վազեց դէպի ծովափը։

Մարդիկ հետևեցին նրան, վերցնելով հետները մի երկար պարան։ Ծովափին Բոբը կանգնեց ու բարձր ոռնաց, կարծես ուզում էր յայտնի իր խեղդւող տիրոջը, թէ գալիս են օգնելու։ Տիրոջ յուսահատ աղաղակը պատասխանեց հաւատարիմ ընկերոջ անհանգիստ ոռնոցին։

Մինչդեռ մարդիկ դատում էին, ինչպէս օգնեն խեղդւողին, Բոբը բռնեց պարանի ծայրից և նետւեց ծովը։ Մարդիկ ապշեցին շան հնարագիտութեան վրա. սկսեցին բաց թողնել պարանը, պահելով միւս ծայրը իրենց ձեռքում։ Բոբը մէկ սուզւում, մէկ նորից երեւում էր ջրի երեսին, բայց տիրոջ աղիողորմ ձայնը նրան նոր ուժ էր տալիս և ստիպում էր դիմադրել ամեն արգելքների։ Եւ վերջապէս հասաւ ճիշտ ժամանակին. եթէ մի քիչ էլ ուշանար, արդէն ուշ կը լինէր։ Խեղդւողի ուժը սպառւում էր, իսկ մակընթացութիւնը արդէն սկսել էր ծածկել ժայռի գագաթը։

Նաւաստին բռնեց պարանը, կապեց իր մէջքին և իմաց տւաւ գիւղացիներին որ քաշեն։ Նաւաստին հազիւ հազ էր կարողանում լող տայ թուլացած ձեռքերով։ Բոբը նրա կողքից չէր հեռանում և իր հաչոցով սիրտ էր տալիս թուլացող ընկերոջը։ Այսպէս քառորդ ժամ ալիքների դէմ կռւելուց յետոյ տէրն ու շունը վերջապէս հասան ափը։ Շունը ուժից ընկած անզգայ ընկաւ գետին. շատ կարելի է, ուշաթափւեց ուրախութիւնից, որ իր տիրոջն ազատել է։ Նրանց

երկուսին էլ տեղափոխեցին ագարակը, այնտեղից էլ Լոնդոն հիւան-
դանոցը։ Բայց տէրը երկար չապրեց ու մեռաւ։

Գ.

Երբ Բոբը հասկացաւ որ որբացել է ու իր տէրը էլ չը կայ, ողբ-
որմ ոռնաց և դուրս եկաւ հիւանդանոցի բակից. ինքն էլ չը գիտէր
ուր գնայ... Տխուր սրտով շրջում էր ամբողջ օրը մեծ քաղաքի փո-
ղոցներում, աշխատելով խոյս տալ բազմութիւնից։ Վշտից քաղց էլ
չէր զգում։ Այդ գիշերը նա անցկացրեց փողոցի սալայատակի վրա։

Երկու օր և երկու գիշեր Բոբը ապրում էր այդպէս փողոցում
և ոչինչ չէր կերել. սոված պառկում էր, սոված վեր կենում։

Միայն երրորդ օրը էլ չը դիմացաւ. այնքան թուլացել էր, որ հա-
զիւ էր կարողանում տեղից վեր կենալ։ Թէև սաստիկ սոված
էր, այնուամենայնիւ երեսը շուռ էր տալիս ամեն տեսակ նեխւած
ուտելեղէնից, որ ընկած էր փողոցի առուների մէջ։ Նա քայլում էր
և նայում, որոնում էր մէկին, որ ուտելու մի բան տար...

Կամացուկ մօտեցաւ մի տան դռան և կանգնեց. նայում էր
ներս ու դուրս անցողներին և համբերութեամբ սպասում էր, բայց ոչ
մի ողորմած ձեռքը չը գտնւեց, որ նրան չոր հացի մի կտոր գցէր,
կամ նոյն իսկ մի անպէտք ոսկոր։ Ոչոք։ Բոբը հեռացաւ և կանգնեց
մի խանութի առջև նոյն լուռ խնդիրքը աչքերում։ Այնտեղ հանդի-
պեց աւելի մեծ անաջողութեան. ուղղակի փայտով խփեցին ու
վռնդեցին։ Սա ինչ տեսակ բան էր. ինքը խնդրում է, իսկ նրանք
վռնդում են։ Մի՞թէ քաղցից չը մեռնելու համար պէտք է ստիպւի
գողութիւն անելու։

Ո՛չ, նա այդտեղը չը հասաւ. հետևեալ օրը նրան գտան փողո-
ցում անզգայ և ուղարկեցին «Շների ապաստարանը»։ Ո՞ւր էր առաջ-
ւայ Բոբը, հիմա չէր էլ կարելի ճանաչել։ Կուրծքն ու փորը ծածկ-
ւել էին ցեխի հաստ շերտով, որը մարմնի շարժումներից տեղ-տեղ
ճաքճքել էր և թեփի նման դառել։ Իսկ թաթերին կարծես ցեխից
կօշիկներ էին հագցրել։

Դ.

Նրան ազատողը կենդանիներին հովանաւորող ընկերութեան ան-
դամներից մէկն էր։

Այդ ընկերութեան բարեգործական բազմաթիւ հաստատութիւն-

ներից մէկն է՝ «Ապաստարան սոված և հիւանդ շների համար»։ Հիմ-
նարկութեան օրից ապաստարանում տեղ են գտել տասնեակ հազա-
րաւոր շներ, որոնք ազատւել են թափառական կեանքից և հաստատ
մահից։ Ամեն տարի ապաստարանում երեք հազարից աւելի շուն է
ընդունւում բժշկւելու և կերակրւելու համար։ Նրանց կէսից աւելին
ետ են վերցնում նախկին տէրերը, որոնք կորցրել էին, իսկ մնացած-
ներին մի որոշ ժամանակ պահում են, մինչև որ գտնւեն նոր տէ-
րեր։ Ամեն մարդ կարող է մտնի ապաստարանը ջոկի իր համար մի
որևէ շուն, ու տանի, եթէ շունը երկու շաբաթ արդէն մնացել է
այնտեղ և նախկին տիրոջը գտնելու յոյսն էլ բոլորովին կորած է։

Երբ Բոբը մի լաւ կերակրւեց ու կազդուրւեց, սկսեց ձանձրա-
նալ անգործութիւնից, ոռնալ ու հաչել։ Այդ ժամանակն էր,
որ եկաւ մի բարձրահասակ մարդ և պահանջեց իր համար մի մեծ,
խելօք, ուժեղ և առողջ շուն։

—Այդպիսի մի շուն ունենք.—պատասխանեց ապաստարանի վե-
րակացուն, որը այդ գործին հմուտ և շուն սիրող մի մարդ էր։ Կան-
չեցին Բոբին, որը պարոնին շատ դուր եկաւ։

—Ի՞նչպէս է սրա անունը։

—Անունը Բոբ է.—պատասխանեց վերակացուն։

—Դո՞ւք էք սրան այդ անունը տւել։

—Այո, ես եմ այդ անունը տւել և համոզւած եմ, որ իսկական
անունն էլ հէնց այդ է։ Նա միշտ փաղաքշանքով է նայում և պոչը
շարժում է, երբ Բոբ ենք կանչում։

Եւ այսպէս Բոբին վերցրին ապաստարանից։

Ե.

Բոբը այս անգամ ընկաւ մի քաղաքապահի ձեռքը, որը իր հեր-
թին գիշերները հսկում էր փողոցում։ Նոր տէրը, գիշերւայ մենա-
կութեան մէջ ընկեր ունենալու համար, շունն էլ իր հետն էր առ-
նում։ Մէկ անգամ խաւարի միջից լսեց մի ճիչ, օգնութեան մի
կանչ. Բոբը մի ակնթարթում տեղից վեր ցատկեց ու առաջ սլացաւ։
Քաղաքապահը հազիւ էր նրան նշմարում մթի մէջ։ Բայց ահա լսեց
մի այլ ճիչ. այս անգամ մէկ ուրիշն էր կանչում։ Քաղաքապահը
մօտ վազելով տեսաւ, որ Բոբը իր սուր ատամներով բռնել է մի
մարդու ոտից, իսկ միւսը՝ սարսափահար դեռ շարունակում էր կան-
չել օգնութեան։

Բանից երևաց որ մի չարագործ էր, յարձակւել էր անցորդի վրա և կամեցել էր նրան կողոպտի որ շունը վրա էր հասել։

Քաղաքապահը ազատեց չարագործին Բոբի ատամներից ու քաշ տւաւ Թաղի ոստիկանատունը։ Այդտեղ խսկոյն արձանագրութիւն կազմեցին, իսկ յաջորդ օրը լրագիրների մէջ տպագրւեց խելացի շան քաջ վարմունքը։

Ոստիկանապետի կարգադրութեամբ Բոբին ընդունեցին ոստիկանական շների շարքը, հասարակական գործիչ պատրաստելու համար, Բոբը սրտով կպաւ իր նոր ծառայութեանը։

Մի քանի օրից յետոյ Բոբը ջրից հանեց մի երեխայ, որ ընկել էր Թէյմզ գետը։ Յետոյ ազատեց մի կին, որ վշտից ուզում էր գետում խեղդւի։ Բոբը սկսեց երևալ հրդեհներին և այնտեղ էլ ցոյց էր տալիս իր քաջութիւնն և անձնազոհութիւնը, փրկելով բոցերից փոքրիկ երեխաներին, դուրս քաշելով ախոռներից ձիերին...

Եթէ ցանկանայինք թւել Բոբի անձնւիրութեան բոլոր գործերը, դեռ շատ բան պիտի պատմէինք։ Նրա անունը հռչակւեց։ Մի յայտնի նկարիչ նկարեց նրա պատկերը, որը և տպւեց թերթերում։ Բոբին ներկայացրին Թագուհուն։ Առաջնակարգ ընտանիքներ պատիւ էին համարում Բոբին իրենց տունն ընդունելը։ Նրան ընտրեցին «Մարդասիրական ընկերութեան» անդամ։ Բոբը պարգև ստացաւ մի արծաթէ մեդալ՝ մարդկանց փրկելու համար, յետոյ էլ պատւաւոր ոսկէ մեդալ։

Շունը սակայն չէր պարծենում այդ պատւանշաններով, այլ ամեն օր անում էր նոր և նոր անձնազոհութիւններ։ Բոբը առաջինն էր երևում այնտեղ, որտեղ վտանգ էր լինում։ Ոստիկանական բոլոր ծառայողները ճանաչում, սիրում և յարգում էին այդ վեհանձն կենդանուն։ Ամեն տեղ ծախում էին հովհարներ Բոբի պատկերով, նոյն իսկ քաղցրաւենիների տուփերի վրա տպում էին այդ ազնիւ շան գլուխը։

---

1) Ինչու մեզ մոտ կենդանիներին հովանավորող ընկերություններ չը կան։

2) Ունենք հիմնարկություններ հիվանդ մարդկանց համար, սոված մարդկանց համար։

3) Ոստիկանության պաշտոնն ի՞նչ է։ Շները էլ ի՞նչ ծառայություն կարող են անել ոստիկանությանը։

17. Փոթորիկ

Շուտ պահւում են ծովածոցում
նաւ ու նաւակ, նաւաստիք.
շրփոթ, աղմուկ, իրարանցում,
մօտենում է փոթորիկ։

Որոտում են ամպերն ահա,
շանթեր սրփռում վերևից.
կուտակւում են ծովի վրա
լեռներ՝ պղտոր ջրերից։

Ծովն ալեկոծ, երկինք խաւար,
հողմն է սուլում չորս բոլոր.
աղմըկում են գըկած իրար
երկու տարերք ահաւոր։

---

18. Էշը մեզանում

ա.

Մեզանում մեծ ու փոքր համոզւած են, որ էշի պէս յիմար արարած չը կայ աշխարհումս։ Իրաւ, կանգնի էշի դիմացը, մի լաւ նայի նրա քիթ ու մռութին, գդումի պէս կախ ընկած կարկաժ գլխին, լատան-լատան ականջներին, խոշոր ու թմրած աչքերին, տգեղ կերպարանքին ու շարժւածքին, և կը տեսնես, որ էշ անունը շատ է սազ գալիս նրան։

Շուռ տուր աչքերդ նաև միւս էշերի վրա, սև լինին, թէ մոխրագոյն, մեծ լինեն թէ փոքր, գիւղում լինեն ապրելիս թէ քաղաքում, դարձեալ նոյն յիմար, նոյն թմրած, նոյն կեանքից ձանձրացած էշերն են։ Բայց ինչու է այդպէս, գուցէ հարցընէք ինձ, երևի Աստւած դրանց էլ թմրած է ստեղծել։

Ամենևին։

Մեզանում իշուկը, քանի որ մէջքին փալան չի դրւել ու կողքերին ճիպոտ չի դիպել, մի շատ ուրախ ու կայտառ կենդանի է։ Նա մարդկանցից չի քաշւում, ում ասես մօտենում է, հոտոտում, ականջ-

ները խլըշում, լոք-լոք անում, աջ ու ձախ թռչկոտում, կապկութիւններ անում, մի խօսքով նա շատ գրաւիչ է…

Բայց մեր իշուկի տարին դեռ չը լրացած, տեսնում ես՝ խեղճի մէջքին մի ծանր փալան դրին, փորքաշով պինդ կապկպեցին ու մի քանի փութ ծանրութիւն բեռնեցին գիւղ կամ քաղաք տանելու։ Խեղճ իշուկի ուժը չի պատում այդ բեռանը, նա ճրկըռ-ճրկըռ է անում, մէջքից երկտակւում է, ոտքերը դողդողում են, ուզում է ճխլւի բեռի տակ, մէկ էլ յանկարծ տիրոջ ճիպոտը այնպէս է շրըմփում գաւակին, որ զարմանքից թէ սարսափից երկու գազ առաջ է թռչում։ Էլ կը համարձակւի՞ մեր իշուկը տեղը կանգնի կամ ճրկռի, ճիպոտը միշտ ճըմճմում է ետևից, ինչքան ուզում է թող մէջքը կոտրւի, ո՞վ է նրան հարցնողը…

բ.

Գնում է տնքալով մեր իշուկը, քրտինքը ջրի պէս վազում է վըրայից, բերանը փրփուր է կապում. տեսնում է քթի տակին գլխները բարձրացրած փափուկ ու գիլ-գիլ խոտեր, բանջարներ, ախորժակը բացւում է, գլուխը ծռում է դէպի բոյսը, բերանը լայն բաց անում ու հէնց որ ուզում է, հա՜փ, կծի, տիրոջ դագանակը, թըր՜խկ, դիպչում է չոր գլխին, աչքերը կրակ են անում ու դատարկ ծնօտները իրար չըխչըխկում…

Գալիս է մի առու, գլգըլում, քըչքըչում է ջուրը, մեր իշուկը տաքից խաշւում է, պապակւում է լեզուն, ուզում է վրա ընկնի մի լաւ խմի, բայց դեռ մտքիցը չի անցել տիրոջ դագանակի զօրութիւնը դեռ ևս մրմնջում է խփած տեղը, այս անգամ թողնում է, անցնում։ Գալիս է երկրորդ առուն, երրորդը, մէկը միւսից աւելի պարզ, աւելի վճիտ. ծարաւը աւելի ևս տանջում է. ճար չը կայ, որ մեռնի՝ պիտի խմի այս անգամ. և ահա վիզը երկարացնում է, գլուխը կախում կամաց ու դեռ խեղճը հազիւ շրթունքները ջրի երեսին չը դիպցրած, շըր՜մը, էլի դագանակը հասնում է դնչին…

Վերջապէս հասնում է մեր իշուկը տուն՝ բոլորովին թուլացած, բոլորովին յուսահատ. բեռը վեր են առնում մէջքից, մի քիչ դարման կամ չոր խոտ թափում առաջը, որ ուտի։ Ագահութեամբ մի-երկու բերան հախռում է կերից ու ետ կանգնում խռոված երեխի պէս. դարմանը խոնաւ կամ փոշոտ է լինում, խոտը ժանգալներով, կածուկներով լիքը, այնպէս որ ուտելիս տաշում է բերանը։ Մի երկու ժամից նրան ջուր են տալիս. նոյն ագահութեամբ խմում, լցնում է դատարկ փորը, այժմ ախորժակը աւելի ևս բացւում է, բայց էլի նոյն կերն է առաջին, ուզի չուզի՝ պիտի ուտի…

Փորի հոգսը վերջացնում է թէ չէ, այժմ նրան անհանգիստ են անում մի կողմից իշաճանճերը, միւս կողմից ականջներում հաւաքւած լուերը, փորին ու ոտներին կպած տիզերն ու ցեխի փշուրտանքը, փալանի հարած տեղերը. մի խօսքով նրա ամբողջ մարմինը քոր է գալիս. ինչ անի, լեզու չունի, որ իր դրութիւնը մարդկանց հասկացնի, ձեռներ չունի, որ ինքն իրեն քորի. շա՜տ շատ ատամներով կարողանում է միայն առջևի ոտներն ու գաւակը ղըփի և գուզով պոչը տատանելով ճանճերին փախցնի. բայց փո՞րը, մէ՞ջքը։ Զզռում է մի քանի անգամ, բայց չէ, տէրը դաշնը չի բերում. ճարահատեալ չոքում է, թըրմփ, ընկնում է կողքի վրա, ոտները օդի մէջ բարձրացնում, պարան-պարան գալիս ու թաւալ տալիս։ Վա՜յ նրան եթէ տէրը այդպիսի դրութեան մէջ տեսաւ, դարձեալ անիծած դագանակը փշրւում է գլխին… Բայց շատ անգամ էլ պատահում է, որ մեր մոխրաթաւալը տեղից բարձրանալիս, ա՜յ քեզ բան, փալանը շուռ է գալիս, ընկնում փորի տակը, փորքաշը կտրւում է մէջքի սեռը, ամբողջ ժամերով նա անշարժ մնում է այդպէս և անիծում իր թաւալ տալու ժամը։

գ.

Բոլորում է իշուկի չարչարանքի երեք տարին, այժմ նրա հետ հանաք անել չի լինի։ Նա թողել է իր առաջւայ խնդիկ-խնդիկ անելը, թռչկոտելը, ուրախ,ուրախ զռզռալը, լաւ քէֆի ժամանակ շան, կատւին ու չար երեխաներին մի-մի աքացի խփելը. այժմ ճիպոտից էլ չի վախենում, ինչքան ուզում ես հասցրու, նրա համար ողջ մէկ է. կեր ու խումի մէջ էլ նազ ու սազ չը կայ, ինչ որ տալիս են, ինչքան բեռնում են, ուր որ տանում են, նա անտրտունջ հպատակւում է. մի խօսքով նա դարձել է կատարեալ էշ…

Եւ ահա մենք այդ էշին տեսնում ենք ինչպէս գլուխը քաշ, տընքալով, չորս հինգ փութ մէջքին, ոտները գետնին քսքսելով, գիւղը կամ քաղաքն է մտնում։ Նրան է որ մենք տեսնում ենք մեր հրապարակներում անձրևի, ցեխի կամ ձիւնի մէջ, փայտի, փշի, քարի, հողի, ածուխի կամ մրգեղէնի բեռան տակ, սոված, ծարաւ, ուր վեցեօթը ժամ շարունակ մնում է ականջները կախ կանգնած. մեծ ու

փոքր արհամարհանքով նայում են նրան, թօշ-թօշ ասում ու անցնում...

Մի՛ բան որ էշի կեանքում տարիների ընթացքում փոխւում է՝ դա միմիայն ծեծի եղանակն է։ Նրա կաշին դագանակի հարւածների տակ այնպէս թմրում անզգայ է դառնում, որ էլ թակը նրան չի ներգործում. հնարագէտ տէրը այժմ բզած փայտ է բանեցնում, որ դրդղրդալով ծակում է խեղճի կաշին և աչքերից ջուր թափել տալիս։ Վա՜յ նրան, որ մի քիչ դանդաղ գնաց. ու հազար վա՜յ, եթէ պառաւ էշը ցեխի մէջ մնայ կամ սառոյցի վրա գնալիս սահի ընկնի ու չը կարենայ տեղից շարժւի, էլ ոտ, քիթ, բերան, գլուխ, ողջ տեղ չի մնայ, ջարդուփշուր կը լինի։ Նա ամենայն ուրախութեամբ իր շունչը կը փչէր ընկած տեղը, եթէ մարդիկ պոչից, ոտից, գլխից բռնած՝ ծեծելով չը բարձրացնէին ու բզբզելով էլի առաջ չը քշէին...

Մեզանում այսպիսի դառն օրերի մէջ է անցկացնում էշը իր կեանքը և տասը-տասնըհինգ տարին դեռ չը հասած, մի օր էլ բեռան տակ ընկնում է, ոտները մի քանի անգամ դետին խփում ու յաւիտեան աչքերը փակում։

Խեղճ անասունին սատկելուց յետոյ էլ հանգիստ չի տալիս տէրը. աքցանով հանում է սմբակներից մեխերն ու պայտը, կաշին մաշկում է տրեխների համար, իսկ դիակը՝ մի թոկ կապելով, քաշ է տալիս դէպի ձորը... Այնտեղ է միայն որ մեր էշը ազատւում է իր փալանից ու տիրոջ դագանակից...

Ուրեմն ինչն է էշին անտարբեր, թմրած ու տխմար դարձնողը։

19. Աշնան տերևներ

Աշնան ըսկըզբին մի բարակ քամի
սարից եկաւ, դաշտերը իջաւ,
վըսսաց, փըսփըսաց մի բան ամենքին
ու անցաւ գնաց անտառը մըտաւ։

Խոտը չորացաւ, հողը ցամաքեց,
այստեղ ու այնտեղ բացւեցին ճեղքեր.
անտառը դողաց, ու վախից իսկոյն
դեղին գոյն առան կանաչ տերևներ։

Աշունը ի՞նչ էր փսփսում ամենքին։

20. Ձմեռւայ դէմ

ա.

Աշունը մօտենում էր իր վախճանին։

Այդ առաջին աշունն էր, որին հանդիպում էինք մենք հօրս մահից յետոյ, երբ պարտատէրերը ծախել-ծախծխել էին մեր բոլոր տունն ու տեղը և մենք տեղափոխւել էինք քեռուս տունը։

Դաշտերը ստանում էին տխուր ու գունաթափ կերպարանք. կանաչ մարգագետինները օր օրի դեղնում էին։ Անխիղճ փչում էր սառը քամին և թափում էր մերկ ծառերից մնացած տերևները։

Երկընքի խոժոռ ու մոխրագոյն դէմքի վրա գլորւում էին մթին ամպերի ահագին բեկորներ և արգելում արևի թոյլ ճառագայթները։ Խիստ տխուր եղանակով լսւում էր կռունկների խուլ կանչը, որոնք բարձր եթերի միջով, եռանկիւնի շարքերով, դիմում էին դէպի օտար աշխարհ։ Ծիծեռնակներ ամենևին չէին երևում. նրանք վաղուց էին գաղթել։

Միայն մըջիւնները խիստ եռանդով կրում էին դէպի իրենց ամբարները ընդեղէնների զանազան տեսակներ։ Ամեն արարած պատրաստւում էր ընդունելու ձմեռը՝ այդ անախորժ հիւրը։

Այդ օրերը սակաւ հոգսեր չը պատճառեցին մօրս։ Ձմեռը, աղքատների թշնամին, մեզ պատժելու համար էր գալիս։

բ.

Մայրս իր հօր տունը փոխադրւելուց մի-քանի օր յետոյ հրաժարւեց կերակուր ընդունի նրանց սեղանից և ապրում էր անկախ աշխատանքով։ Նա շուտով հաշտւեց իր նոր վիճակի հետ՝ չը կամենալով ծանրութիւն պատճառել իր եղբայրներին, որոնց համար շատ էլ հաճելի չէր իրենց գերդաստանի վրա ընդունած նոր բեռը։ Մայրս աղքատութիւն շատ էր կրած, բայց երբէք իր տան չքաւորութիւնը օտարին յայտնած չէր, թէ ինչպէս է ապրում, կամ ինչ միջոցներով է պահում իր երեխաներին։ Նա շատ հպարտ կին էր ու բոլոր յոյսը դրել էր իր աշխատող ձեռքերի և Աստծու վրա։

Մեր գիւղում գովասանւած էր մօրս կարելու ու ձևելու վարպետութիւնը, բայց շատ քիչ էին վարձատրում նրա աշխատանքը։ Նա գիշեր ցերեկ հանգստութիւն չունէր. ասեղը, ճախարակն ու թէշին անդադար գործում էին, բայց ինչ...

Աստուած շատ անգամ թոյլ է տալիս, որ դժբախտութիւնը տանջի մարդուն մինչև վերջին ծայր, կարծես արարածների համբերութիւնը փորձելու համար։ Մօրս համբերութիւնը երկաթի ամրութիւն ունէր· բայց երկաթն էլ է փշրւում...

Ես երբէք չեմ կարող մոռանալ մօրս արտասուալի աչքերը, երբ առաջին անգամ ինձ և երկու քոյրերիս իր հետ տանելով, տարաւ մեզ դաշտը, հնձած արտերից թափուած հասկերը հաւաքելու։ Սա մուրացկանութեան առաջին քայլն է, որին ենթարկւում է պատուաւոր աղքատը։

Մենք մի ժամանակ արտեր ունէինք, հունձք ունէինք, և մեր հունձքը հաւաքելուց յետոյ խուրձերից ընկած հասկերը թողնում էինք Աստծու աղքատներին և երկնքի թռչուններին։ Բոլորը կորցրինք, և այժմ ստիպուած էինք ուրիշի արտերից հասկաքաղ անելու...

գ·

Արտերի կարճ խուզած տափարակի վրա, մախաթների նման վեր ցցուած ձողերի սուր ծայրերը ծակծկում էին իմ ու քոյրերիս բոլորովին մերկ ոտները։ Բայց մենք ցաւ չէինք զգում։ Մենք շատ ուրախ էինք և մեծ եռանդով կպանք գործին։ Փոքրիկ քոյրերս իրենց մանրիկ ձեռքերով հաւաքում էին ընկած հասկերը և ինձ վրա ծիծաղում, որովհետև ես ծոյլ էի։ Նրանք փունջեր էին կապում հասկերից և մրցում էին, թէ որը շատ կը հաւաքի։ Խեղճ երեխաներ, կարծես, զգում էին, թէ ձմեռը քաղցած կը մնան, եթէ այժմ պաշար չը պատրաստեն։ Մայրս նայում էր նրանց վրա և լաց էր լինում...

Իրիկունը մեզանից ամեն մէկը իր հաւաքածը կապեց շալակին, դարձանք տուն։ Քոյրերս իրենց բեռներով մի առանձին հպարտութեամբ հանդիպեցին քեռուս երեխաներին, իբրև անխոնջ մշակներ, որ դառնում էին դաշտից։

Այսպէս ամեն օր վաղ-առաւօտեան գնում էինք դաշտը հասկաքաղ անելու և երեկոյեան վերադառնում էինք։ Մեր խրճիթի դռան առջև կազմւեց մի փոքրիկ դէզ հաւաքած հասկերից։ Այնուհետև ըսկսեցինք մեր կալը կասել։ Բայց նա այնքան մեծ չէր, որ հարկաւոր լինէր կամով կասելու։ Մայրս սկսեց ինքը մանրել հասկերը մի հաստ փայտով, որը այնքան ծանր էր, որ նա դժւարութեամբ կարողանում էր բարձրացնել։

Երբ յարդը քամուն տւինք ու մաքուր ցորենը հաւաքեցինք թաղարների մէջ, մեր ձմեռուայ հացի պաշարը արդէն պատրաստ էր։

դ·

Դեռ մնում էր վառելիքը։ Մեր խարխուլ բնակարանի համար պէտք էր բաւական տաքութիւն, մանաւանդ որ ձմեռը այս կողմերում սաստիկ է լինում։ Մայրս այնքան զբաղուած էր, որ ամենևին ժամանակ չունէր հոգ տանելու վառելիքի մասին· այդ պատճառով այդ հոգսը մնաց իմ և քոյրերիս վրա։

Մայրս իր ձեռքով երեք փոքրիկ կթոց հիւսեց մէկը ինձ համար, երկուսը քոյրերիս։ Տեսնելու բան էր, թէ ինչ ուրախութեամբ այդ կթոցները առնում էինք մեր ուսը և ամեն օր գնում էինք դաշտը։ Հաւաքում էինք քակորներ, ծառերից թափուած տերևներ, փուշ ու մացառ, և բերում էինք ձմեռը մեր խրճիթը տաքացնելու համար։

Ա՜խ, որքա՜ն լաւ բան է եղել աշխատութիւնը։ Ես այնուհետև միշտ յարգանքով էի նայում այն քակորների կոյտին, որ ինքս էի հաւաքել· և բարկանում էի, թէ ինչո՞ւ խնայողութեամբ չէին գործ ածում, թէև մօրս խնայողութիւնը հասնում էր ժլատութեան։

1) Ինչո՞ւ համար է աշխատությունը լաւ բան։
2) Դու էլ օգնո՞ւմ ես ծնողներիդ· ինչո՞վ։

21. Երազ

Ես լսեցի մի անուշ ձայն,
իմ ծերացած մօր մօտ էր·
փայլեց նրշոյլ ուրախութեան...
Բայց ափսո՜ս որ երազ էր։

Կարկաջահոս աղբիւրն այնտեղ
թաւալում էր մարգարիտ,
նա յըստակ էր, որպէս բիւրեղ...
Այն երա՜զ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տըխուր, մայրենի,
յիշեց մանկութեան օրեր·
մօրըս համբոյրն ես ըզգացի...
Ա՜խ, ափսո՜ս որ երազ էր։

Կրծքին սեղմեց կարօտագին,
աչքըս սըրբեց՝ շատ թաց էր·
արցունքներըս գլոր էին...
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

22. Կոյրերի վարժարանը

ա.

Կո՛յր. հասկանո՞ւմ ես այդ բառի բոլոր իմաստը։ Հապա մտածի՛ մի քիչ։ Ո՛չ երկինք տեսնես, ո՛չ արև, ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ մի բան աշխարհիս երեսին. յաւիտեա՜ն խաւար, ինչպէս գերեզմանում։ Փորձի՛, փակի՛ աչքերդ և երևակայի՛, որ այդպէս պիտի մնաս ընդմիշտ. սոսկալի՜, զարհուրելի բան. քեզ պիտի թւայ թէ այդ դժբախտութեանը դիմանալ չես կարող, կա՛մ խելքդ կը թռցնես, կա՛մ կը մեռնես...

Եւ սակայն երբ մտնում ես առաջին անգամ կոյրերի վարժարանը դասամիջոցին, լսում ես նրանց ջութակ ածելը, սրինգ նւագելը, բարձր-բարձր խօսքն ու ծիծաղը սանդուղքների վրա, միջանցքներում ու ննջարանում ազատ համարձակ ման գալը, մտքովդ էլ չի անցնի, թէ դրանք թշւառ էակներ են։

Նրանց մէջ կան տասնըվեց, տասնըութ տարեկան պատանիներ, ուրախ ու զօրեղ, կարծես բոլորովին հաշտւած իրենց վիճակին. միայն նրանց դէմքի արտայայտութիւնն է լուրջ ու հպարտ, իսկոյն տեսնում ես, որ շատ չարչարանք, շատ վիշտ կրած պիտի լինեն մինչև իրենց դառն անբախտութեան հետ հաշտւելը։ Պատահում են և ուրիշ դէմքեր. գունատ, խոնարհ, հեզ ու տխրամած, ջերմ արտասուքի հետքերը երեսին...

Ո՛հ, լաւ մտածի՛. կան, որ զրկւել են աչքի լոյսից մի քանի օրում. ուրիշները տանջւել են ամբողջ տարիներ, շատերը կուրացել են սարսափելի վիրահատութեան պատճառով. վերջապէս կան և այնպէսները, որ կոյր են ծնւել... ծնւել են անլոյս գիշերւայ մէջ, մտել են աշխարհ իբրև մի գերեզման և չը գիտեն՝ ինչ ասել է մարդու պատկեր։

Երևակայի՛, դրանք որքա՜ն հոգեկան ցաւ պիտի քաշած լինեն իրենց ու ականների մէջ եղած այդ տարբերութիւնից։ «Ինչո՞ւ է այս տարբերութիւնը,—հարցնում են նրանք,—եթէ մեզ վրա ոչ մի մեղք չի ծանրացած»։

Երբ մարդ յիշում է այդ յաւիտեան փակւած աչքերը, այդ անհայեացք անշարժ բիբերը և յետոյ նայում է իր շրջապատողներին, ուղղակի անհնարին է թւում որ մենք բոլորս, որ աչք ունենք, բախտաւոր ու երջանիկ չը լինենք։ Եւ չը մոռանաս, որ այդ բախտից զըր-

կւածների թիւը շատ մեծ է. օրինակ, միայն Իտալիայում քսանըվեց հազար կոյր կայ. քսանըվեց հազար մարդ արևի լոյս չի տեսնում... միայն մի Իտալիայում։

բ.

Բայց բարի բնութիւնը գալիս է օգնութեան։ Կոյրերի միւս ըզգայարանները անհամեմատ աւելի են զարգանում քան մերն է. և զարգանում են այն պատճառով, որ փոխարինում են տեսողութիւնը ու աւելի ստէպ են գործածւում։ Այսպէս՝ առաւօտեան, երբ կոյրն ուզում է իմանայ՝ արև կա՞յ թէ չէ, ձեռքը պարզում է պատուհանից դուրս արեգակի ջերմութիւնը փորձելու։ Կոյրը մարդու ձայնին ականջ դնելով գաղափար է կազմում նրա հասակի բարձրութեան մասին։ Մենք մէկի հոգու վրա կարծիք կազմելու համար, նայում ենք նրա աչքերին. կոյրերը նայում են նրա ձայնին և երկար յիշում են այդ ձայնը։

Կոյրերը շօշափելով կարողանում են զանազանել ներկւած կերպասը չը ներկւածից։ Փողոցով անց կենալիս հոտառութեամբ ճանաչում են խանութները, մինչև անգամ այնպիսի խանութներ, ուր մենք ոչ մի առանձին հոտ չենք առնում։ Հոլ գցելիս նրա բըզզոցին ականջ դնելով՝ իմանում են թէ որտեղ ընկաւ, և վերցնում են առանց սխալւելու։ Կոն են խաղում (կէգլի), պարան են ցատկում, քարերից տներ են շինում, մանուշակ են քաղում, կարծես տեսնելիս լինեն, գոյնզգոյն յարդերից կողով ու խսիր են հիւսում, ա՜յն աստիճան զարգացած է նրանց շօշափելիքը։

Շօշափելիքը նրանց տեսանելիքն է. նրանց ամենամեծ զւարճութիւնն է շօշափելով իմանալ իրերի ձևը։ Տեսնելու բան է, թէ ինչ ուրախութեամբ յարձակւում են երկրաչափական ձևերի վրա, տների տարազների վրա, զանազան գործիքների վրա և ինչ մեծ հաճոյքով պտոյտ են բերում ու շօշափում այդ բոլորը տեսնելու համար, թէ ինչպէս են շինւած. նրանք ասում են՝ տեսնելու...

գ.

Կոյրերը սովորում են և գրել-կարդալ։ Յատուկ նրանց համար տպւած գրքեր կան ուռուցիկ տառերով. նրանք այդ տառերի վրա մատները ման ածելով որոշում և արտասանում են բառերը։ Սահուն կարդում են և շատ են կարմրում մի բան սխալ կարդալիս։

Գրում են առանց թանաքի, հաստ ու կոպիտ թղթի վրա մի բարակ երկաթով, որ հետքեր է թողնում թղթի մէջ. և հակառակ կողմը դուրս են գալիս ուռուցիկ տառեր, որոնց վրա մատները ման ածելով կարողանում են կարդալ։

Այսպէս գրում են շարադրութիւններ, նամակներ, թւաբանական խնդիրներ են վճռում։ Հաշիւները մտքով կատարում են վերին աստիճանի արագ ու թեթև, որովհետև նրանց միտքը չի ցրւում։ Զափազանց սիրում են լսել ուրիշների ընթերցումը։ Եւ արժէ ականջ դնել նրանց դատողութիւններին մի կարդացած կտորի վրա, մանաւանդ եթէ նիւթը պատմական է։

Շատ են սիրում իրենց ուսուցիչներին, ճանաչում են քայլելու եղանակից, նկատում են նրա հոգու տրամադրութիւնը, առողջ է թէ հիւանդ։ Սիրում են, որ ուսուցիչը գովելիս կամ քաջալերելիս շոյի շօշափի իրենց ձեռքերը, և իրենք էլ շնորհակալութիւն յայտնելիս բռնում են ուսուցչի ձեռքը, սեղմում ու կամում։

Դասամիջոցներին միշտ միասին են հաւաքւում, իրար սաստիկ կապւած են։ Օրինակ չը կայ, որ կոյրը սիրի մէկին ու յետոյ ատի. բարեկամութիւնը նրանց սփոփանքն է։ Նրանք վերին աստիճանի արդարամիտ են, պարզ ու ճիշտ որոշում են չարն ու բարին։ Եւ մի որև է վսեմ գործի պատմութիւնը ոչ ոքի այնպէս չի ոգևորում, որչափ նրանց։

Դ.

Ջերմ սիրահար են երաժշտութեան։ Երաժշտութիւնը նրանց բերկրանքն է, կեանքն է։

Մինչև անգամ փոքրիկ երեխաները պատրաստ են մի քանի ժամ անշարժ կանգնեն նւագածութիւն լսելու։ Նւագելը հեշտ են սովորում, և նւագում են եռանդով։ Եթէ վարժապետը մէկին ասի՝ թէ ածելու շնորհք չունի, սաստիկ կը տխրի, բայց և այնպէս կը շարունակի ուսանելը մեծ ջանքով։

Մարդ պէտք է տեսնի կոյրի նւագելը, կոյրի դաշնամուր ածելը։ Գլուխը բարձր բռնած, ժպիտը շրթունքին, երեսը վառ. խեղճը յուզմունքից դողդողում է, հիացած է ու ականջ է դնում ակկորդներին, որոնք փռւում են նրան շրջապատող խաւարի մէջ։ Մարդ պէտք է տեսնի, հասկանալու համար թէ երաժշտութիւնը ինչ սքանչելի, աստւածային սփոփանք է։

Կոյրը երջանիկ է, ցնծում ու բերկրում է հրճւանքից, երբ վարժապետը ասում է նրան՝ «Դու արւեստագէտ ես»։ Երաժշտութեան մէջ առաջինը, առաջին ջութակահարը, առաջին դաշնակահարը նրանց մէջ թագաւոր է. նրանից պատկառում են, պաշտում են նրան։ Մի թիւրիմացութիւն պատահի թէ չէ՝ նրանից են խորհուրդ հարցնում. ընկերները կռուեն թէ չէ՝ նա է հաշտարար հանդիսանում. նա հայր է դառնում այն փոքրերին, որոնց երաժշտութեան դաս է տալիս։ Քնելուց առաջ գնում են նրա մօտ բարի գիշեր ասելու։

Կոյրերի խօսակցութեան սիրելի նիւթը երաժշտութիւնն է։ Գիշերները անկողնում պառկած, դասերից և օրւայ աշխատանքից իսպառ յոգնած, նրանք դարձեալ մեղմ զրոյց են անում իրար հետ երաժշտագէտների, օպերաների, նւագարանների ու նւագախմբերի՝ օրկեստրների մասին։ Նրանց համար ամենամեծ պատիժը երաժշտութեան դասից զրկելն է։ Այդ զրկանքը նրանց համար այն աստիճան ծանր է, որ այդ տեսակ պատիժ իսկի չեն էլ տալիս։

Կոյրի համար երաժշտութիւնը նոյն է, ինչ որ լոյսը մեզ համար։

Ե.

Լո՜յս...

Ծանր տեսարան է, երբ նրանք անշարժ նստած են պատուհանների առջև, իբրև թէ զւարճանում են, իբրև թէ նայում են ընդարձակ դաշտավայրին, կապուտակ լեռներին, որոնցմով մենք զմայլւում ենք... Մարդու սիրտը ճնշւում է, կարծես ինքդ էլ կուրանում ես, մտաբերելով որ այդ մանուկները ոչինչ չեն տեսնում և երբէք էլ ոչինչ տեսնելու չեն այս բոլոր անհուն գեղեցկութիւնից։

Իծնէ կոյրերը այնքան էլ թշուառ չեն. նրանք չեն ճանաչել տես-գերքը, բնութիւնը, լոյսը. այդ բոլորի մասին գաղափար չունեն, երևակայութեան մէջ պատկերներ չը կան, նրանք չունեն ողբալու բան։ Բայց նրանք, որ նոր են կուրացել, նրանք դեռ յիշում են ամեն բան և հասկանում են իրենց կորուստը։ Ո՜վ գիտի՝ ինչ են զգում, երբ հետզհետէ թանկագին պատկերները նսեմանում են նրանց հոգու մէջ և երբ սիրելի դէմքերը ասես մեռնում են նրանց համար։

Տղաներից մէկը մի օր բացականչեց.

—Ա՜խ, եթէ մի րոպէ աչքս բացուէր, գոնէ մի րոպէ մօրս երեսը տեսնէի...էլ չեմ յիշում իր դէմքը։

Երբ ծնողները այցելութեան են գալիս, կոյր մանուկները ձեռքով շօշափում են նրանց դէմքը, որ դիմագծերը լաւ պահեն իրենց մտքում։

Այցելուներից շատերը արտասուելով են հեռանում վարժարանից. մինչև անգամ բիրտ մարդիկ այդ միջոցին զգում են, որ արժանի չեն ամեն օր երկինքը, արևը և ուրիշ մարդկանց տեսնելու երջանկութեան... Այդ անբախտներին տեսնելիս՝ զգում ես, որ սիրով կը տայիր քո տեսողութեան մի մասը, միայն թէ կարող լինէիր գոնէ մի ճառագայթ պարգևես այդ պատանիներին, որոնց համար ոչ արև կայ, ոչ էլ անձկալի մօր պատկերը...

23. Ամպերի քարւանը

Տես, հեռուից ահա՜ շարան ու շարան,
տը՛նկ, հա տընկ, եկաւ քարւանն ամպերի,
ու սար ու քարւան իրարով դիպան.
—Բարո՛վ ձեզ, սարեր, տէրեր աշխարհի։
«Այ, բարով, բարով.
էս ո՞ր ծովերով»
—Պոնտից ենք գալիս մենք շարւէ շարան,
գնում ենք անցնենք հարթերը Կասպեան,
Դէպի Հիմալայ...

*

Այսպէս մի կարճ իջևան
գալիս է հիւր ամեն օր
ամպերի ձիգ քարաւան
և ճամփայ է ընկնում նոր։
Ու գնում են լողալով
հորիզոններն հեռաւոր,
արևելեան աստղերին,
որպէս կարօտ ուխտաւոր։

Պատահմո՞ւնք է, որ ամպերը գալիս են Պոնտից (Սև ծովից) ու գնում են Հիմալայ։ Ամպերը ինչո՞ւ են քշում։

---

24. Երկաթուղին

ա.

Ու, ու, ու... Ձորերում սուլում էր երկաթուղին։

Նոր էր մտել նա մեր ձորերը։

—Ա՜յ, ձէնդ կտրուի.—կանչեց էն կողմից որսկան Օսէփը։

—Ա՜յ տղայ, ինչի՞ ես էտպէս ասում, ինչ մի վատ բան է երկաթուղին,—մէջ մտան մի քանի գիւղացի։

—Վնաս չի բա ինչ է, եկաւ ձորերումը ծըղրտաց, էլ պախրա

չը մնաց, կխտար չը մնաց, ձէնիցը խրտնեցին, փախան կորան։

—Գախրէն ու կխտարը չէ որ, հաւատա՛, ես էլ կորչեմ,— խօսք առաւ մի հովիւ, որ դագանակին յենուած կանգնել էր։—Գնում եմ քարի գլխին կանգնում եմ, ձորերին մտիկ եմ անում, որ էն քարափները քանդելիս տեսնում եմ, սրտիս ծէրը մղկտում է, ոնց որ թէ մարդի երեխէն թշնամու ձեռին քըքրելիս լինեն ու մարդ կարենայ ոչ թէ օգնի…

— Չէ՛, շատ բան կը փչանայ,—նրա հետ էլ հառաչեցին մի քանիսը։

Ու սկսեց վէճը երկաթուղու վրա, թէ երկաթուղին օգուտ էր բերելու թէ վնաս։

բ.

Էտ վէճի ժամանակ երկաթուղու գծի վրա աշխատող օտարականներից մէն ձորիցը դուրս եկաւ ու մօտեցաւ մեզ․

—Բարի իրիկուն ձեզ։

—Աստծու բարին, վարպետ։

—Ինձ մի չափ ալիւր է հարկաւոր, ձեզանից ո՞վ ալիւր կը ծախի,—դիմեց օտարականը ամենքիս։

—Ո՞րտեղից ես, վարպետ,—հարցրեց Ուհաննէս բիձէն։

—Օսմանլուի հողից եմ։

—Ուհաննէս բիձա, մի հարցրու՝ տես որ քաղաքիցն է,—խնդրեց մի գիւղացի։

—Քո քաղաքի անունն ինչ է, բարեկամ,—կրկին հարցրեց Ուհաննէս բիձէն։

—Սըւազ։

—Սըւա՜զ,—երկարացնելով ու խորհրդաւոր կրկնեց Ուհաննէս բիձէն։

—Ի՞նչ ասաւ, Ուհաննէս բիձա։

—Սըւազ…

—Պա՜հ, քո տունը չը քանդւի…—ծափ տւին ու ծիծաղեցին մի քանի գիւղացի։

—Ընտեղից էստեղ քա՞նի ամսւայ ճանապարհ է,—շարունակում էր իր հարց ու փորձը Ուհաննէս բիձէն։

—Երեք ամսւայ։

—Պա հօ…—միաբերան զարմացան ամենքը։

—Համեցէք, զարիբ ախպէր, նստի, հաց բերեն․ հաց անուշ արա։

—Չէ, շնորհակալ եմ, վռազ եմ․ ձեզանից ով ալիւր կը ծախի, մի չափ ալիւր տայ՝ գնամ։

—Աղջի, մի չափ ալիւր դուրս բերէք,—դռնից ձէն տւաւ Ուհաննէս բիձէն.—գլուխ-գլուխ լցրէք։

Հարսներից մինը մի չափ ալիւր դուրս բերաւ, ուզեց դատարկի մարդու տոպրակի մէջը, բայց նա թող չարաւ։

—Ի՞նչ արժէ…

—Ածա, դեռ ածա տոպրակիդ մէջը։

—Չէ, առաջ մի գինն իմանանք։

—Դեռ ածա, յետոյ կիմանաս․ թէ որ թանդ լինի դարդակելը հեշտ է։

Վարպետը իր տոպրակը բաց արաւ, հարսն ալիւրը մէջը դատարկեց ու գնաց։

—Դէ հիմի ի՞նչ տամ,—հարցրեց ծոցից քսակը հանելով։

—Ոչինչ, վարպետ, ոչինչ չի հարկաւոր, քեզ փէշքէշ, մեր աշխարհքումը զարիբից հացի փող չեն առնի, էտ տեսակ ադաթ չը կայ…—ասաւ Ուհաննէս բիձէն ու շարունակեց իր չիբուխը ծխելը։

Վարպետը մի քիչ շփոթւեց, չեմ ու չում արաւ ու գնաց։

գ.

Նրա գնալուց յետոյ մի կարճատև լռութիւն տիրեց, ապա թէ խօսեց մի գիւղացի։

—Էն օրը մինն էլ եկել է թէ՝ մածուն եմ ուզում։ Հարսները մածուն դրին առաջին․ կերաւ պրծաւ, հիմի վեր է կացել թէ՝ ինչ արժէ…

Ասում եմ՝ ի՞նչը…

Թէ՝ մածունը…

Ասի՝ ա՛յ մարդ, գլխիցս քաշւի, էտպէս բաներ մի խօսի, թէ չէ ոչխարի եղած կաթն էլ կը ցամաքի…

—Ա՛յ տղայ, բա ի՞նչպէս անենք… Էն լա՛ւ է, որ ով գայ ձրի ուտի ու տանի՞… Էս վրա քանիսն են գալի, գիտես թէ չէ… Էն օրը մէկին էլ ես եմ մի խան ալիւր չափել տւել… Էտ ո՞ւր կերթայ…—մէջ ընկաւ Ուհաննէս բիձու փոքր ախպէրը․

—Որ գայ մին էլ տուր…—գլուխը վեր քաշելով հանդարտ խօսեց Ուհաննէս բիձէն։

—Օջաղըդ չէն կենայ,—վրռչացին մի քանի ծերեր։

—Աչքս լուս էլի։ Սըւաղից սկսած ով գայ՝ չափի տուր. կասեն ես նրանց համար եմ աշխատել... Ով գալիս է՝ բարով, հազար բարի. բան է ուզում՝ փողը բերի տանի...

Ու սկսեցին վիճել։ Ուհաննես բիձէն էլ տաքացաւ, աղմուկը մեծացաւ։

Մ՚ւ մ՚ւ մ՚ւ... Զորերում սուլում էր երկաթուղին։

Նոր էր մտել նա մեր ձորերը։

1) Մեծ ախպէրը ինչո՞ւ չի ուզում փող ստանալ. փոքր ախպէրը ինչու չի ուզում ձրի տալ։

2) Վերջը-վերջը ո՞ւմ ասածն է լինելու. ինչո՞ւ։

3) Էս վէճի մէջ երկաթուղին ինչ գործ ունի։

25. Կկուն ու աքլարը

—Զընաշխարհիկ
իմ աքլարիկ,
ձայնըդ գլ՚լ-գլ՚լ,
ոսկի ծիլ-ծիլ,
երգերիդ մէջ
բիւր ելևէջ։
—Կըկու քուրիկ,
հուրիկ, բուրիկ,
քո ձայնն էլ է
լաւ գեղգեղում,
ծոր է տալիս
ու մըղմըղում։
Երգ եմ լըսել
ես շատ ու քիչ,
բայց չեմ տեսել
քեզ պէս երգիչ։
—Ոսկեփետուր
Աստւածատուր,
կուզեմ
լըսեմ
ձայնդ անսպառ
միշտ անդադար,
թէկուզ մի դար։
—Պուճպուճուրիկ
մի պուտ ջրիկ,
կըկու քուրիկ,
երգւում եմ ես,
որ լըռում ես
էս չափ, պուճո՛ւր,
ըսպասելով
իմ աչքերը
դառնում են ջուր։
Ո՞րտեղից է
քեզ էտպէս ձայն,
մաքուր, քնքուշ
ու զըրնգըրնգան։
Դուք էտպէս էք
ամբողջ ցեղով.
մի բուռ բան էք
թէև տեղով,
բայց ձեր երգը
խիստ աջողակ,
չունի, չունի
ոչ մի սոխակ։
—Գոհ եմ քեզնից,
ջիւան աքլար.
խըղճով ասենք,
դու միալար
լաւ ես երգում
դըրախտահաւից,
թռչուններին
լաւի լաւից։
Ողջ աշխարհը
խօսքիս վըկայ,
քեզ պէս երգիչ
չը կայ, չըկայ։
Էստեղ ծիտը,
ծիտիկ-միտիկ,
ասաւ՝ «Հլա
սըրանց մըտիկ.
ինչ լաւ գիտեն
իրար եղել.
ասս թողին
պակաս տեղ էլ։
Է լաւ, հերիք
իրար գովէք.
աշխարհ գիտի՝
թէ դուք ով էք»։

26. Խորթ եղբայրս

ա.

Փոքր էի, հազիւ տասներեք տարեկան, բայց լաւ յիշում եմ, որ այն երեկոյ հայրս զայրացած տուն վերադարձաւ այգուց։ Փոքրիկ հօրթին պարանից քաշ տալով եռևից և կանաչ, թարմ, խոտի մի կոյտ թևի տակ՝ նա բակը մտաւ խորհրդաւոր լռութեամբ։ Ես նկատեցի որ նրա մորթէ փափախը կախւած էր ծոծրակի վրա՝ բաց թողնելով խիստ կնճռոտ ճակատը. շալէ չուխայի և արխալուղի թևերը սովորականից աւելի վեր էին քաշւած, ասել էր՝ թէ նա այգում խոտ հնձելուց յետոյ՝ մոռացել էր ցած բերել, և որ ամենից աւելի գլխաւորն էր ու նշանակալիցը, կեռ ծայրով իր ձեռնափայտը հօրթի պարանի հետ միատեղ՝ շատ սպառնական ձևով էր պահել աջ ձեռքում։

Հայրս խոտը ցած դրաւ, մօտեցաւ սրահի թմբին ու նստեց, փայտն ու գլխարկը դնելով կողքին։ Մայրս կովկիթն էր լւանում, սպասելով կովերին, կթելու համար։ Ես աչք չէի հեռացնում հօրիցս. նա անհանգիստ էր և մի քանի անգամ ճակատը շփեց ու դարձաւ մեծ քրոջս.

—Ա՛ղջի, Թորոսը այս առաւօտ կովերը ո՞ր կողմով դաշտ տարաւ. այգու կողմո՞վ, թէ՞ Նախրի ճամփով։

—Չը գիտեմ, հա՛յրիկ. առաւօտը երբ քաղհանի էինք գնում, նա մեզանից առաջ քշեց գիւղից դուրս եկաւ, նրան չը հասանք։

—Այգու կողմից, ի հարկէ. նա միշտ այն կողմից է տանում,— բացականչեցի ես, հէնց այնպէս, առանց մտածելու, թէ իմ ասածը որև է բանի կարող էր ծառայել։

—Նա՛ է, ուրիշ ո՞վ կարող է լինել, նզովվի՛ց արմատ, միշտ նա,— մռմռաց հայրս ու լռեց։

Թորոսը իմ խորթ եղբայրն էր, հօրս առաջին ամուսնութիւնից մնացած միակ տղան։ Ես և քոյրերս մեր ամենափոքր հասակից տեսել էինք նրան միշտ լռակեաց, մռայլ, մտածկոտ ու յամառ։ Նա չէր սիրել մեզ և մենք չէինք սիրել նրան։ Նա արդէն տասնըեօթ-տասնըութ տարեկան էր այժմ, բայց դարձեալ թախծոտ ու լռակեաց, դարձեալ անմասն ընտանեկան կեանքին, դարձեալ առանց սիրոյ ու մենաւոր։ Ինչու չէինք սիրում նրան, ես չը գիտեմ. նա մեզ երբէք վատ բան չէր արել. գուցէ հէնց այն պատճառով, որ նա միշտ լուռ էր և նրա այդ լռութեան տակ կարծես խորին արհամարհանք կար դէպի մեզ։ Հայրս չէր սիրում նրան, որովհետև նա յամառ էր ու միշտ մռայլ և երբէք մարդու երեսին ուղիղ չէր նայի։ «Կախ-գլուխ տղայ է, մանկութիւնից այդպէս էր», ասում էր նա առանձին ցաւով, աւելացնելով որ «կախ-գլուխ» մարդիկ միշտ կասկածելի են։

Եւ մենք բոլորս առանց այդ նկատելու կամաց-կամաց նրա դահիճներն էինք դարձել։ Բոլոր մեր ծածուկ յանցանքների ու սխալների համար պատասխանատուն ու մեղաւորը միշտ նա էր։ Եթէ աման էր կոտրուած, անպատճառ Թորոսն էր կոտրել. մածունի կամ կաթի սերը, թարմ կարագը՝ անպատճառ նա՛ էր գողացել, ինչպէս և այգում կամ բոստանում հասած առաջին պտուղը։ Մենք արդէն վաղուց դադրել էինք նկատելուց թէ որքան անարդար, որքան անողորմ ենք, և մեզ բոլորովին բնական էր թւում վերջ ի վերջոյ որ Թորոսը մեր մեղքերը քաւի։ Չի բողոքում, միշտ լուռ է, թող կրի ուրեմն։

Բարեբախտաբար մեզ բոլորիս և Թորոսի համար, հայրս թէև խիստ էր, բայց վերին աստիճանի գթոտ. նրա բոլոր դժգոհութիւնն ու զայրոյթը վերջանում էր սովորական անէծքով կամ մօրս առաջ անվերջ գանգատներով։

Թորոսն ամբողջ օրը դաշտումն էր լինում, մեր տաւարի ետևից։

Երբ երեկոյեան տուն էր գալիս և հայրս սկսում էր նրան յանդիմանել որև է յանցանքի համար, նա առանց նայելու մօտենում էր հացի տաշտին, մի հաց վերցնում փաթաթում դնում թևի տակ և լռութեամբ դուրս գալիս, թողնելով որ հայրս շարունակի իր անէծքը, գանգատն ու տրտունջները։

Բ.

Կովերը դաշտից վերադարձան։ Թորոսն էլ նրանց ետևից ներս մտաւ դռնից, ինչպէս միշտ, գլուխը քաշ, դէմքն արևառ, յոգնած ու մռայլ։ Կովերը ներս քշեց գոմը, թողնելով բակում նրանց, որոնք պիտի կթւէին։ Ծալա ձեռնափայտը դրաւ մի անկիւն, նստեց իր սովորական տեղը, սրահի մի հատիկ աստիճանի վրա, և սկսեց տրեխների միջից թափ տալ աւազի հատիկները և գուլպաների վրայից հանել մանր ու մեծ փշերը։

Մայրս կովերն էր կթում, քոյրերս օգնում էին նրան։

—Թորոս,—յանկարծ լսւեց հօրս ձայնը.

—Հը, եղաւ պատասխանը։

—Զո՛ռ ու ցաւ, հրամմէ էլ չի կարողանում ասի։ Այս առաւօտ տաւարը ո՞ր կողմով տարար դաշտ։

Հօրս ձայնը դողդողում էր, նա վրդովմունքից ասի խեղդւում էր. ես նրան երբէք այդ աստիճան բարկացած չէի տեսել. վախեցայ ու կծկւեցի։

Թորոսի փոյթը չէր. նա լուռ էր։

—Լեզուդ պապանձի՛, խօսի էէ. այգին մտե՞լ ես։

Թորոսը շարունակում էր լռութեամբ թափ տալ տրեխները։

—Սարգիս,—դարձաւ ինձ հայրս,—գնա այն իմ բերած խոտը քանդի, մէջը բան կայ, բեր այստեղ։

Ես մօտեցայ, խոտը բաց արի և միջից դուրս հանեցի խաղողի որթի մի մեծ ճիւղ, վրան մի քանի կիսահաս ողկոյզներ։ Ձեռքս առայ և քարացայ տեղումս... ես էի կոտրել. կոտրել էի ու լռել. ողկոյզը քաշքըշել էի, ճիւղը կոտրւել էր և ես թողել փախել էի։

Յանցանքը կրկնակի էր. նախ կոտրւած էր այդ հազւագիւտ որթը, որ հօրս առանձին խնամքի առարկան էր, որովհետև հեռու տեղից էր բերել տւել և շուտ հասնող, մեծ, դեղին ողկոյզներ ունէր և նրանից պատրաստւած գինին հանում էր Աստւածածնի տօնի պատարագին, երբ խաղող են օրհնում. և երկրորդ՝ որ աւելի էականն էր և

աններելին, որթը կոտրողը կերել էր և խաղողը, մինչդեռ Աստուածածնի տօնը դեռ հեռու էր, խաղողն օրհնուած չէր, հետևապէս՝ պաս էր։ Պասակերութիւնը հօրս աչքում մեծագոյն յանցանքն էր, որ մի մարդ կարող էր գործել։

Թորոսը աչքի տակով նայեց իմ ձեռքի ճիւղին, նայեց ինձ ու գլուխը քաշ գցեց, լռեց։ Ես էլ քարացել էի իմ տեղում և գլուխս վեր բարձրացնել չէի համարձակւում․ իմ դատաստանն էր կատարւում և ոչ Թորոսի։

—Ասա,—շարունակեց հայրս աւելի և աւելի տաքացած,—Աստուած նզովի քեզ, ո՞վ է տեսել, որ հայ քրիստոնեան Աստուածածնից երկու շաբաթ առաջ խաղող ուտի․ հարամ է, չէ․ նայի, ինչ ես արել, թող ձեռքդ կոտրուէր դրա փոխարէն։

Ես դողում էի ամբողջ մարմնով և խաղողի ոստը ձեռքիս մէջ ցնցւում էր։ Հօրս իւրաքանչիւր խօսքը, նրա ամեն մի անէծքը նետի պէս սիրտս էր մխւում ու արիւնոտում․ ես մեխուած էի իմ տեղում և ինձ թւում էր, թէ փախչելու անկարող եմ, որ այդ ճիւղն էլ կպել է ձեռքիս և ուր գնամ, ինձ հետ է լինելու։ Քաջութիւն չունէի ասելու, թէ ես եմ կտրել և ոչ Թորոսը․ բայց այնպէս կուզէի որ մէկն ու մէկը վեր կենար ու ասէր։ Զայրանում էի նաև այդ անօրինակ Թորոսի դէմ, որ բերանը բաց չէր անում ասելու թէ ինքը չի արել, թէ այգին չի մտել։

Լուռ էր անիրաւը, և ես դողում էի զարհուրելի տանջանքի մէջ։ Մայրս մէջ մտաւ․

—Ի՞նչ ես այդքան տաքացել, տնաշէնի մարդ, դէ բան է, պատահել է, գուցէ Թորոսը չի, գող է մտել․ խօ գիտես, քաղցած գէլերի պէս չոլերն ընկած աւերմունք են անում։

—Խելքիդ ինչ ասեմ, ախր կնիկ ես էլ․ գողը մի ճութ խաղողի համար այգի չի մտնի, բոլոր թմբերը պէտք է ոտի տակ տար, մարիկ-մարիկ փնտռէր գտնելու համար․ տանու գող է, քեզ ասում եմ․ ա՛յ, այս նզովածն է, որ լշկել է։ Չէ, թո՛ղ ասի որ ինքը չի․ տեսնո՞ւմ ես, կարկամել է, Աստուած վերցնի սրան։

—Ա՛յ որդի,—Թորոսին դարձաւ մայրս կամացուկ,—ինչի՞ ես կողքդ դէմ տուել․ տեսնում ես, հէրդ թնդւել է, դէ մի ձայն տուր, ասա որ դու չես, ասա՝ գողերն են արել, խօմ բերանդ չի ցաւի, մի խօսք ասա էլի։

Թորոսը տրեխներից պրծաւ և մէկ էլ ինձ նայեց աչքի տակով․

ճ, այդ հայեացքը, որքան վիշտ և որքան արհամարհանք կար նրա մէջ․ ես քիչ մնաց հալւեմ, կամ գետինն անցնեմ ոչնչանամ․ Նա կարծես շատ լաւ գիտէր որ ես եմ արել, և ուրախ էր, որ մի զարմանալի դիպւածով հայրս իմ ձեռքն էր դրել յանցանքիս սարսափելի նշանը, այս դժոխային ոստը, որ վառում, փոթոթում էր իմ մատները։

գ․

Ես նայում էի միայն նրան, այդ հպարտ ու յամառ Թորոսին, նրա թուխ ու թախծոտ աչքերին, որոնց տակ թաքնուած մտքերը երբէք չէի հասկացել, իրար սղմած շրթունքներին, որոնք այնքան կամք էին արտայայտում, նրա արևառ ու խոհուն դէմքին, այդ սևացած, ճաքճքած ձեռներին․ նրա մաշուած թիկունքին, և այդ բոլորը, բոլորը ինձ թւում էր նոր, կարծես առաջին անգամն էի տեսնում նրան, և այդ ամբողջ արտաքինը վկայում էր շիտակութիւն, կամք, աշխատանք ու տանջանք․ կիզիչ արևի տակ, փշերի ու քարերի միջից որքան էր վազվզել խեղճ տղան, օրեր, շաբաթներ, ամիսներ ու տարիներ, և դրա հետ միասին քանի-քանի անգամ ենթարկւել ճիշտ այսպիսի դառնութիւնների մեր երեսից։ Եւ մի ահագին տխրութիւն սև ժայռի պէս նստեց սրտիս․ շրթունքներս դողդղացին, ուզում էի ճչալ, լալ, գլխիս խփել… բայց էլի շրթունքներս կծեցի, երբ տեսայ, որ Թորոսը պատրաստւում է դուրս գնալ։ Փոթորիկը դրանով կը վերջանար, միշտ այդպէս էր լինում։

Ահա նա վեր կացաւ և առանց նոյն իսկ իր սովորական հացը վերցնելու տաշտից, շարժւեց դէպի դուռը․ նա պիտի անցնէր հօրս առաջից, որ լուռ հետևում էր նրա շարժումներին։ Հօրս հայեացքի մէջ կայծակ էր փայլատակում․ նա գունատ էր, շունչը քթածակերից դուրս էր գալիս փնչացնելով, իսկ ձեռնափայտը դողում էր ձեռքի մէջ։ Նա երբէք այդպէս սարսափելի, այդպէս անողորմ տեսք չէր ունեցել։

«Մի՞թէ խփելու է Թորոսին», մտածում էի ես․ «այդ անկարելի էր․ նա այնպէս բարի՜ է»․ և ինձ թւում էր, եթէ նրան խփի՝ ես կը մեռնեմ, չը գիտեմ ինչի՞ց, բայց անպատճառ կը ճչամ ու կը մեռնեմ, երևի կը խեղդւեմ։

Էլ ոչինչ չէի տեսնում, ոչինչ չը կար գլխումս, բացի այն փայտից, այն դեղնաւուն հոնի փայտից… Եւ ես տեսայ… որ նա բարձ-

բացաւ, այն զարհուրելի փայտը, բարձրացաւ հօրս գլխից վեր, ճօճ-ւեց օդի մէջ…

—Հա՜յրիկ, հա՜յրիկ… մի՛, մի՛… Բառերը խեղդւեցին իմ կոկորդում. նետւեցի հօրս ու Թորոսի մէջ, բայց անօգուտ, ես շատ էի փոքր և անզօր. ձեռնափայտն ահագին թափով իջաւ եղբօրս թիկունքին, բարձրացաւ, մէկ էլ իջաւ նոյնպէս թափով, նոյնպէս անողորմ։

Թորոսը չը շարժւեց, կանգնած մնաց իր տեղում, դարձեալ լուռ, առանց բողոքի. նայեց հօրս, ապա աջ ձեռքով շօշափեց թիկունքի ցաւած տեղը ու երկու կաթիլ արցունք կախւեցին նրա մռայլ, մթագնած աչքերից, իջան, իջան և այտերի վրա քարացան մնացին։

Սոսկումի պէս մի բան, մութ ու ճնշող՝ իջաւ մեր տան վրա, որ աւելի ահաւոր էր դառնում Թորոսի լուռ արցունքով։

Օ՜, այդ երկու կաթիլ արցունքը. նրանք իջան իմ սրտի վրա, քանդեցին աւերեցին կուրծքս և խորտակեցին ինձ։ Հայրս կանգնած էր դողդղալով, նայում էր ոտների առաջ, կարծես չը գիտէր թէ ինչ պատահեց։ Եւ բեռը, ահագին բեռը ճնշում էր իմ կուրծքը, խեղդում էր ինձ, կուրծքս ուռել էր և ճչացի.

—Ե՛ս եմ, հա՜յրիկ, ես եմ կոտրել, ես եմ գողացել, Թորոսը մեղք չունի, միշտ ես եմ։ Ների՛. ների՛, Թորոս ախպէր, իմ խեղճ ախպէր։

Բոլորը քարացան. կարծես երկինքը յանկարծ փուլ եկաւ. մայրս շւարած՝ կովկիթը ձեռքից բաց թողեց, որ ընկաւ կոտրւեց և կաթը հոսեց բակում. քոյրս հորթը թողեց, որ կրկին վազեց դէպի մայրը. հայրս գլուխը բարձրացրեց, ինձ նայեց չռած ու ապշած աչքերով ու ետ-ետ գնաց, կարծես ես թունաւոր օձ լինէի. ապա ճակատը բռնեց մնաց կանգնած։ Քիչ յետոյ լուռ մօտեցաւ Թորոսին ու ձեռքը դրաւ նրա թիկունքին.

—Ձեռքս կոտրւէր, որդի,—ասաւ հեկեկալով։—Սարգի՛ս, Սարգի՛ս… Թո՛ղ Աստւած քեզ… դու իմ հոգին կորցրիր… Թող Աստւած քեզ… ինչ ասեմ… Ու շարունակել չը կարողացաւ, չուզեց անիծել, արցունքը թափւեց աչքերից հեղեղի պէս։

—Էլ չեմ անի, հա՜յրիկ… էլ չեմ անի, երբէք…

Թորոսը թևով սրբեց աչքերը, նստեց թմբի վրայ, գլուխը ձեռների մէջ առաւ և մնաց լուռ։

Այն գիշեր հայրս երկար ժամանակ չէր քնում. անքուն էի և ես. այրւում էի և էլի երկար-երկար լաց եղայ։

Ինչու խորթ եղբայրը դարձել էր լռակյաց ու առանձնացած։

27. Սասունցի Դաւթի կռիւը Մըսրայ Մելիքի հետ

ա.

Անթիւ, անհամար զօրքեր հաւաքեց,
եկաւ Սասմայ դաշտ՝ բանակը զարկեց
ու ծանր նըստեց Մըսրայ թագաւոր։
Էնքան ահագին բազմութիւնն էն օր
Բաթմանայ Ջըրին եկաւ ու չոքեց.
ով եկաւ, խըմեց, գետը ցամաքեց,
Սասմայ քաղաքում մնացին ծարաւ։
Ձէնով Օհանին զարմանքը տարաւ։
Քուրքը ուսն առաւ, սարը բարձրացաւ,
սարը բարձրացաւ, տեսաւ, ինչ տեսաւ.
ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
ասես՝ էն գիշեր ձըմեռը եկել՝
ըսպիտակ ձիւնով պատել էր Սասուն։
Լեղին ջուր կըտրեց, կապ ընկաւ լեզուն,
հարա՜յ կանչելով՝ փախաւ, տուն ընկաւ.
—Վա՜յ, փախէք, եկաւ…հա՜յ, հարա՜յ, եկաւ…
—Ի՞նչը, հօրեղբա՛յր, ինչը, ինչն եկաւ…
—Ցաւն ու կրակը Դաւթի պինչն եկաւ.
Մըսրայ թագաւոր ելել է, եկել,
եկել մեր դաշտին բանակ է զարկել,
Թիւ կայ աստղերին, թիւ չը կայ զօրքին…
Վա՜յ մեր արևին, վա՜յ մեր աշխարհքին…
Էկ ոսկի տանենք, աղջիկներ տանենք,
չոքենք առաջին, պաղատանք անենք,
գուցէ թէ գըթայ
մեզ սըրի չը տայ…
—Դու կաց, հօրեղբա՛յր, դու դարդ մի՛ անի.
գնա քո օդում դու հանգիստ քընի.
հիմի ես կելնեմ, Սասմայ դաշտ կերթամ,
Մըսրայ Մելիքին պատասխան կը տամ։

Բ.

Հագաւ Դաւիթ զէնքն ու զրահ,
կապեց գօտին, Թուր-Կայծակին,
խաչն էլ իր յաղթ բազկի վրայ,
ելաւ, հեծաւ Առիւծ հոր ձին։
Հոր ձին հեծաւ ու մտրակեց,
սարի գլխից էսպէս կանչեց.
—Ով քնած էք՝ արթուն կացէք,
ով արթուն էք՝ ելէք, կեցէք,
ով կեցել էք՝ զէնք կապեցէք,
զէ՛նք էք կապել՝ ձի թամբեցէք,
ձի էք թամբել՝ ելէք, հեծէք.
յետոյ չասէք՝ թէ մենք քընած,
Դաւիթ գող-գող եկաւ, գընաց...
Էսպէս կանչեց, ապտանդակեց,
ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Մըսրայ զօրքի մէջ տեղ զարկեց,
շողացնելով Թուր-Կայծակին։
Ջարդեց, փըշրեց մինչև կէսօր.
կէսօր արիւնն ելաւ հեղեղ,
քըշեց, տարաւ հազարաւոր
մարդ ու դիակ ողջ միատեղ։

Կար զօրքի մէջ մի ալևոր,
աշխարհք տեսած ու բանագէտ.
—Տըղէրք, ասաւ, ճամփայ ուէք,
գընամ խօսեմ ես Դաւթի հետ։
Գընաց՝ կանգնեց Դաւթի առաջ,
էսպէս խօսեց էն ծերունին.
—Դալար կենա՛, կուռըդ, ո՛վ քաջ,
սուրըդ կըտրուկ միշտ քո ձեռին։
Մի ծերունու խօսքին մըտիկ,
տե՛ս, քո խելքը ինչ է կըտրում։
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
հէ՞ր ես սըրանց դու կոտորում։

Ամեն մինը մի մօր որդի,
ամեն մինը մի տան ճըրագ,
որդի ու կին թողել էնտեղ
աչքը ճամփին, խեղճ ու կըրակ։
Թագաւորը զոռով-թըրով
հաւաքել է, էստեղ բերել.



խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել։
Թագաւորն է քո թըշնամին,
կըռիւ ունես, իր հետ արա,
հէ՞ր ես քաշում Թուր-Կայծակին
էս անճարակ խալխի վրա։

—Լավ ես ասում դու, ծերունի՛,
ասաւ Դաւիթն ալևորին,
բայց Թագաւորն ո՞ւր է հիմի,
որ սև կապեմ նըրա օրին։
—Մեծ վըրանում քընած է նա,
էն, որ միջից ծուխը կելնի.
էն ծուխն էլ հօ ծուխ չէ որ կայ,
գոլորշին է իր բերանի։
Ասին. դէպի մեծ վըրանը
ասպանդակեց Դաւիթն իր ձին,
քըշեց, գընաց ու դըռանը
գոռաց կանգնած արաբներին։
—Ո՞ւր է, ասաւ, ի՞նչ է կորել,
դուրս կանչեցէք, գայ ասպարէզ,
թէ մահ չունի՝ մահ եմ բերել,
գերող չունի՝ գերողն եմ ես...
—Մելիքն, ասին, քուն է մըտել,
եօթը օրով պէտք է քընի,
երեք օրն է դեռ անցկացել,
չորս օր էլ կայ, քունը առնի։
—Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
խալխին լըցրել ծովն արիւնի,
ինքը մըտել վըրանի մէջ՝
եօթը օրով հանգիստ քընի՞...
Քընել-մընել չեմ հասկանում,
վե՛ր կացրէք շուտ, դուրս գայ մէյդան,
էնպէս նըրան ես քընացնեմ,
որ չը զարթնի էլ յաւիտեան։

Գ.

Զարթնեց Մելիք։ Գլուխն ահեղ
վեր բարձրացրեց մըռընչալով,
ուզեց փըչել, որ թըռցընի
հըրակայ Դաւթին մի փըչելով։
Տեսաւ, տեղից ժաժ չի գալի,
զարմանքն ու ահ պատեց հոգին։

Արնոտ աչքերն ըսպառնալի
յառեց խոժոռ Դաւթի աչքին։
Նայեց թէ չէ, զգաց՝ իր մէջ
տասը գոմշի ուժ պակասեց։
Պառկած տեղից վըրա նստեց
ու ժպտալով հետը խօսեց.
—Բարո՛վ, Դաւի՛թ, յոգնած ես դեռ.
սեղան նըստենք խօսենք կարգին,
յետոյ դարձեալ կըռիւ կանենք,
եթէ կըռիւ կուզես կըրկին...
—Չէ՛, չեմ նըստի ես քո հացին,
դու ուրմարդի, վախկոտ ու նենգ.
շո՛ւտ, զէնքըդ առ, հեծի քո ձին,
դո՛ւրս եկ մէյդան, կըռիւ անենք։
—Կըռիւ, անենք, ասաւ Մելիք,
իմն է միայն զարկն առաջին։
—Քոնն է, զարկի՛, կանչեց Դաւիթ
գընաց, կեցաւ դաշտի միջին։

Ելաւ, կանգնեց Մըսրայ Մելիք,
իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
քըշեց, գընաց Դիարբէքիր
ու էնտեղից եկաւ կըրկին։
Երեք հազար լիդր էր քաշում
հըսկայական իր մըկունդը.
եկաւ, զարկեց. կորաւ փոշում
ու երերաց երկրի գունդը։
Երկիր քանդւեց կամ ժաժք եղաւ
ասին մարդիկ շատ աշխարհքում։
—Չէ՛, չէ՛, ասին, արնի ծարաւ
հըսկաներն են իրար զարկում։
—Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
ասաւ Մելիք իրեն զօրքին։
—Կենդանի եմ, ամպի տակից
գոռաց Դաւիթ Մըսրայ Մելքին։
—Հա՛յ-հա՛յ մօտիկ տեղից եկայ,

տես, ո՛րտեղից հիմի կը գամ։
Ու վերկացաւ, կանգնեց հսկան,
իր ձին հեծաւ երկրորդ անգամ։
Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
ու բաց թողեց ձին Հալաբից․
բուք վերկացաւ, տեղ ու տարափ,
արար աշխարհ դողաց թափից։
Եկաւ, զարկեց․ զարկի ձէնից
մոտիկ մարդիկ ողջ խըլըցան։
—Գընա՛ց Դաւիթ Սասմայ տանից,
գուժեց գոռոզ Մըսրայ արքան։
— Կենդանի՛ եմ, կանչեց Դաւիթ,
մին էլ արի՛ հերթն ինձ հասաւ։
—Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկայ,
կանչեց Մելիք ու վերկացաւ։

Երրորդ անգամ հեծաւ իր ձին,
գընաց մինչև հողը Մըսրայ,
ու էնտեղից, գուրզը ձեռին
քըշեց, եկաւ Դաւթի վըրա։
Եկաւ, զարկեց բոլոր ուժով,
ծանըր զարկով հըսկայական․
փոշին ելաւ Սասմայ դաշտից,
բըռնեց երեսն արեգական։
Երեք գիշեր ու երեք օր
փոշին կանգնեց ամպի նըման,
երեք գիշեր ու երեք օր
բոթը տըւին Դաւթի մահւան։
Երբ որ անցաւ երեք օրը,
էն ամպի պէս կանգնած փոշում
կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը,
Գըրգուռ սարը մէգ-մըշուշում։

—Մելի՛ք, ասաւ, ո՞ւմն է հերթը։
Սարսափ կալաւ գոռ Մելիքին,
մահւան դողը ընկաւ սիրտը

ու տապ արաւ գոռոզ հողին։
Գընաց, խորունկ մի հոր փորեց,
իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
վըրէն քաշեց քառսուն կաշի
ու քառասուն ջաղացի քար։
Մըռնչալով ելաւ տեղից
էն Առիւծի առիւծ որդին,
իր ձին հեծաւ ու փոթորկեց,
խաղաց, շողաց Թուր-Կայծակին։
Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառաւ մայրը ջադու․
— Դաւի՛թ, մազըս ա՛ռ ոտիդ տակ,
էտ մի զարկը ինձ բաշխի դու։
Երկրորդ անգամ թուրը քաշեց․
էս անգամ էլ եկաւ քուրը․
—Դաւի՛թ, եթէ կուզես, կանչեց,
իմ սըրտին զա՛րկ երկրորդ թուրը…



Վերջին զարկի ժամը հասաւ,
ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
— Էս մի զարկն ու Աստուած, ասաւ,
էլ մարդ չը գայ, պէտք է որ տամ։
Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
թըռաւ, ցոլաց Դաւթի հուր ձին,
ձին փոթորկեց, փայլատակեց
ու ցած իջաւ Թուր-Կայծակին։
Անցաւ քառսուն գոմշի կաշին,
անցաւ քառսուն քարերը ցած,
միջից կըտրեց ժանտ հրէշին,
եօթը գազ էլ գետնը գընաց։
— Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,
գոռաց Մելիք հորի տակից։
Դաւիթ լըսեց, շատ զարմացաւ
իրեն զարկից, Թուր-Կայծակից...
— Մելի՛ք, ասաւ, թա՛փ տուր մի քեզ։
Ու թափ տըւաւ Մելիքն իրեն,
միջից եղաւ ճիշտ երկու կէս,
մէկն ընկաւ դէմն ու միւսը դէն։

Էս որ տեսաւ Մըսրայ բանակ,
Ջուր կըտրըւեց ահ ու վախից։
Դաւիթ կանչեց.— Մի՛ վախենաք,
ակա՛նջ արէք հալա դեռ ինձ։
Դուք ըռանչպար մարդիկ, ասաւ,
զուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
հազար ու մի կըրակ ու ցաւ,
հազար ու մի հոգսեր ունէք։
Ի՞նչ էք առել նետ ու աղեղ,
եկել թափել օտար դաշտեր.
չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
մենք էլ ունենք մանուկ ու ծեր...
Ձանձրացե՞լ էք խաղաղ ու հաշտ
հողագործի օր ու կեանքից,
թէ՞ զըզւել էք ձեր հանդ ու դաշտ,

ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...
Դարձէք եկած ճանապարհով
ձեր հայրենի հողը Մըսրայ.
բայց թէ մին էլ զէնք ու զօռով
վեր էք կացել դուք մեզ վըրայ,
հորում լինեն քառսուն գազ խոր
թէ ջաղացի քարի տակին,
կելնեն ձեր դէմ, ինչպէս այսօր,
Սասմայ Դաւիթ, Թուր-Կայծակին։

28. Հայերենի առաջին ուսուցիչը

ա.

Խաղաղ լուսնեակ գիշեր էր. Արարատեան լայնատարած դաշտը խոր նիրհի մէջ պապանձւել էր. նոյն իսկ Վաղարշապատի, արքայական քաղաքի պահապան զինւորները դադարել էին իրար ձայն տալուց և լուռ արձանացել էին աստիճանաւոր պարիսպներին ու բարձրագագաթ բուրգերին։

Քնած էր պալատը, քնած էր և կաթողիկոսարանը։

Միայն կաթողիկոսարանի խցերից մէկում, արմունկները քարէ սեղանին յենած, գլուխը երկու ձեռքով ամուր պահած, արթուն էր կաթողիկոսի մտերիմ Մեսրոպ վարդապետը։ Ճակատը այրւում էր, հայեացքը անթարթ բեեռւած էր պատի մի կէտին, շրթունքները պինդ սեղմած. երկար մօրուքը թափւել էր առջևը դրած մագաղաթին, որի վրա գրեր էին գծւած։ Հոգևորականը կարծես չէր շնչում, երբեմն միայն կուրծքը ծանր-ծանր վեր էր բարձրանում, և զսպւած հառաչի պէս մի բան դուրս էր թռչում նրա լքւած հոգու խորքից։

Երկու տարի՛. երկու տարի աշակերտներին դաս տալուց յետոյ, անընդհատ տքնելուց յետոյ, վերջապէս համոզւել էր, որ զուր էին իր բոլոր ջանքերը. Դանիէլ Ասորու գրերով իր մայրենի բառերը չեն գրւի, ասորերէն և յունարէն գրքերը հայերէն չեն թարգմանւի։

Իսկ ո՛րչափ ոգևորւած էր ձեռնամուխ եղել նա այդ մեծ գործին։ Այն ժամանակ երազում էր թէ սուրբ գրքերը կը թարգմանւեն մայրենի լեզւով և Մեծ Վարդապետի քարոզած սէրն ու գութը ազատ ու խոր կը թափանցի ժողովրդի սիրտը. Զո՜ւր երազնե՜ր։

Ահա այնտեղ, կաթողիկոսարանի լայն սրահներում հիմա ննջում են յուսախաբ պատանիները, որ վաղը գալու են՝ կանգնեն իր դռանը ու ասեն.

—Վարդապետ, ինչո՞ւ զարթեցրիր մեր հոգին. ինչո՞ւ յոյս տւիր հայերէն գիր ու հայերէն Սուրբ գիրքը ունենալու:

Ի՞նչ պիտի պատասխանէր:

Կսկծից Մեսրոպի սիրտը հեծեծում էր:

Լուսնեակի պայծառ շողքը նեղ լուսամուտի արանքով ընկել էր նրա գլխին, արծաթազօծելով անժամանակ սպիտակած մազերը: Ակամայ դէմքը դարձրեց դէպի լուսամուտը, յետոյ բարձրացաւ ցածլիկ աթոռից ու դանդաղ քայլերով, ստւերի նման, մօտեցաւ լուսամուտին: Ու նայեց դուրս:

Նրա առջև կանգնած էր Մասիսը իր անվեհեր գեղեցկութեամբ, խրոխտ փայլով, ազատ գագաթը համարձակ վեր ուղղած: Նա կարծես իր հետ էր քաշում խցի վհատած մենաւորին դէպի վեր, դէպի անսահման երկինքը:

Երկար նայում էր Մեսրոպը այդ հպարտ լեռան, ապա ծունկ իջաւ լուսամուտի առջև, ու լուռ աղօթում էր:

Երբ ոտքի ելաւ, արդէն վճռել էր. վաղը նա գնալու է Միջագետք, այնտեղից էլ, թէ պէտք եղաւ, և յունաց քաղաքները, բայց հայերէն տառերը պիտի գտնի անպատճառ:

Բ.

Անցաւ մի քանի տարի: Սահակ կաթողիկոսը շտապում էր Վաղարշապատի պալատը: Մեսրոպից սուրհանդակ էր եկել, և լուր բերել որ գրերը գտել է և շտապ գալիս է Վաղարշապատ:

Եկեղեցիների կոչնակները տեղ-տեղ խփում էին, հրապարակներում և փողոցներում բերնէ բերան էր անցնում ուրախալի լուրը: Թագաւոր, կաթողիկոս, իշխաններ ու հոգևորականներ բոլորը իրար էին անցել, գնում էին Մեսրոպին ընդառաջ:

Ժողովուրդն էլ վազում էր քաղաքից դուրս, դէպի Ռահ գետը տանող ճամփան. այնտեղով էր գալու անվհատ մարդը, բերելով իր գտած գանձը:

Այդ բազմութեան մէջ սակայն ամենից աւելի յուզւում էին Մեսրոպի նախկին աշակերտները. նրանք վազում էին յուսով ու վախով, հազիւ իրար հետ հատ հատ խօսքեր փոխանակելով, մտախոհ,

անհանգիստ, երկիւղը սրտներում: Երանի թէ այս էլ մի ինքնախաբէութիւն չը լինի, կարդացւում էր նրանց բոլորի յուզւած դէմքերին:

Ձայները հետզհետէ մօտենում էին. ուսուցիչը արդէն քաղաքի գլխաւոր դարպասն էր մտել և դիմում էր դէպի կաթողիկոսարան:

Որպէս փոխւել էր ու ծերացել: Մօրուքը բոլորովին ճերմակել էր, ճակատի խորշոմները խորացել, բայց աչքերը փայլում էին անսովոր բոցով, ամբողջ կերպարանքը աւելի բարձրահասակ էր դարձել. իսկ շարժումները վստահ ու եռանդուն: Ի՜նչ գեղեցիկ էր:

Իր հետ տարած աշակերտները հետևում էին նրան:

Եւ ամբողջ բազմութիւնը դիմեց կաթողիկոսարանի դահլիճը, ուր Մեսրոպը Թագաւորի ու կաթողիկոսի առաջ մանրամասն պատմում էր ու նկարագրում իր երկար թափառումները, իր կրած տառապանքները, իր գործ դրած ջանքերը և թէ ինչպէս հայերէն և օտար հընչիւնների երկար համեմատութեամբ, յամառ ու լարւած աշխատանքով վերջապէս ջոկել էր ու դասաւորել հայերէնի հնչիւնները և ամէն մէկին համապատասխան տառ գտել կամ չունեցողների համար տառեր հնարել:

Գ.

Շաբաթ անցաւ: Մեսրոպը առաւօտ երեկոյ հաւաքում էր նախկին աշակերտներին ու նոր գրերը սովորեցնում: Շատերը պարսկերէն ու ասորերէն, մի քանիսն էլ յունարէն տառերը արդէն գիտէին և հեշտ էին հայերէն նոր գրերը սովորում:

Եւ ահա մի օր վերջապէս նրանք թարգմանեցին ու իրենց մագաղաթների վրա գրեցին աւետարանի մի ամբողջ երես հայերէն լեզւով ու հայերէն տառերով:

Հրաշքը կատարւել էր: Պատանիները զարմացած և հիացած էին: Անսահման երջանիկ էր և ինքը Մեսրոպը:

Յուզմունքից այդ գիշեր նա իսկի քնել չէր կարողացել: Եւ արդէն ոգևորւած ծրագրում էր, թէ ինչպէս ձեռնարկեն Սուրբ Գրքի կանոնաւոր թարգմանութեանը:

Լուսաբացին մօտ էր, երբ յանկարծ լսեց իր խցի դռան առջև մի շշուկ: Գնաց դուռը բաց արաւ. Նրա առջև, քարէ աստիճանների վրա կանգնած էր իր աշակերտներից մէկը:

—Կորի՛ւն, դո՞ւ ես: Ի՞նչ ես ուզում այս ժամին:

Պատանին պատասխանելու փոխարէն ծունկ խոնարհեց ու սառը

քարերի վրա տարածված աշխատում էր համբուրել ուսուցչի քղանցքը ու շշնջում էր.

—Ո՛հ, սո՛ւրբ մարդ. անմա՛հ, յաւիտեա՛ն է քո գործը...

Եւ ուսուցիչը զգացուած, աչքերը արտասուքով լեցուն. անհուն հրճւանքով, հպարտ պարզեց իր ձեռքերը աշակերտի խոնարհած գլխի վրա ջերմ օրհնութեամբ:

Առաւօտեան առաջին շողերը խաղում էին նրա ոգեւորուած գունատ դէմքին:

Լուսանում էր...

Ի՞նչու է Մեսրոպի գործը անմահ։ Ի՞նչ աւելացաւ հայերին գրերի գիւտով։

---

29. Անգրագէտ

Երբէք մէկին չեմ նախանձում
ես աշխարհի երեսին,
միայն, գրագէտ դուք պարոններ,
նախանձում եմ ձեր բախտին:
Ա՜խ, գթացէք, խեղճ գեղջուկիս,
ու ինձ գրել սովորցրէք.
տուէք մի թերթ ըսպիտակ թուղթ
մի փետուրէ գրիչ տուէք,
որ ձեզ յայտնեմ՝ ինչ ցնորքներ
ինչ մտքեր կան իմ գլխում,
մի ողջ աշխարհ ես ձեզ ցոյց տամ
այդ աննման պատկերում:
Այժմ անհետ չքանում են
այդ մտքերն ու երազներ.
ես անգրագէտ, ես անուս եմ...
սովորցրէք, պարոններ:

Ազնիւ գործ է, թէ մարդ գրել
իր խօսքերը կարենայ,
բոլորն՝ ինչ որ մտածում է,
բոլորն՝ ինչ որ հոգուց գայ,
գրչով պատմի այն ամէնը,
ինչ դիզուել է իր սրտում,
ճշմարտութիւն միշտ քարոզի,
բարի գործի մեծութիւն:
Ա՜յ, դու սագ իմ ձերմակթեւիկ,
քեզ տուել եմ կերակուր,
քեզ սիրել եմ, փոխարէնը
թեւիցդ ինձ մի գրիչ տո՛ւր:
Սիրո՛ւն դու սագ, տո՛ւր, խընդրում եմ
ինձ թըռչելու զոյգ թեւեր...
ես անգրագէտ, ես անուս եմ.
սովորցրէք, պարոններ:

1) Մարդիկ մի՞շտ են թղթի վրա գրել եւ միշտ մեր հիմիկւայ գրիչներո՞վ։ Հապա։
2) Տղան էտ սագի տուած թեւով ո՞ւր է ուզում թռչի։

---

30. Ղարա-խանում

ա.

Աշնան սկիզբն էր. արդէն բոլոր քոչւորները իջել էին սարերից գիւղը, որ ամառը գրեթէ դատարկ էր մնացել:

Կէսօրից շատ անց էր: Յանկարծ գիւղի ծայրին շները կատաղաբար հաչեցին ու մի քանի րոպէից բոլոր տների կտուրներից հարիւրաւոր շներ ձայնակցեցին նրանց: Ի՞նչ պիտի պատահած լինէր:

Գիւղը մի նոր մարդ էր եկել, այն էլ կին, եւ շրերը հագին գլուխը բաց կին: Ոչոք առհասարակ չէր մտնում այդ հեռաւոր, խուլ անկիւնը. հազարից մէկ թէ որեւ է պաշտօնեայ երեւար: Ողջ գիւղը դուրս թափւեց. թուրք տղաները խկոյն պաշարեցին սայլը, որի մէջ խրերի վրա նստած էր տարօրինակ կինը, ու աղաղակում էին.

—Ղարա-խանո՛ւմ, Ղարա-խանո՛ւմ:

Առաջին անգամ էին տեսնում մի քաղաքացի կին. իրենց մայ-

բերը մօտ էին գալիս պայծառ չթէ շորերով կամ ցնցոտիներով ու գլուխը ծածկում։

Եկած կինը հարցրեց՝ ու՞ր է տանուտէրը։ Սայլը կանգ առաւ ծռուած, անպատուհան, երդիկին կոտրած կարաս տնկած մի տան առջև։ «Ա՞յս է տանուտէրի տունը»,—զարմացաւ կինը։ Օտար գիւղացի սայլապանը բացատրեց թէ՝ «էստեղի Թուրքերը բոլորն էլ էսպիսի տներում են ապրում, խանում… Ոչ մարդավարի տուն-տեղ ունեն, ոչ էլ ուտել-խմել գիտեն։»

Աւելի զարմացաւ Ղարա-խանումը, երբ իմացաւ, որ ամբողջ գիւղում ոչ հաց կայ, ոչ ձու, կաթն էլ հազիւ թէ ճարուի։ Ամէն ինչ պէտք է մօլլայից փոխ առնէր… Բայց Թուրքերն էլ պակաս չը զարմացան, երբ յայտնեց որ Ղարա-խանումը եկել է դպրոց բանալու։

Ի՞նչներին է պէտք դպրոցը։ Եւ էլ ի՞նչ պիտի սովորեցնի կինարմատը։ Մազը երկար, խելքը կարճ։ Թուրքական դպրոցներում սովորեցնում էին մօլլաները։

Գիւղացիք խումբ-խումբ հաւաքւում էին, աղմկում, վերջապէս եկան մօլլայի մօտ ու խորհուրդ հարցրին․

— Ձեռին թուղթ ունի,—յայտնեց ցաւակցելով մօլլան։—Բաց է անում՝ բաց անի։ Միայն թէ ոչ ոք պարտական չէ որդուն նրա մօտ տալու։ Ով ուզում է՝ կը տայ, ով չէ՝ հօ չէ… Էն էլ է գրած, որ պիտի սովորեցնի մենակ աղջիկներին։

Բ․

Ղարա-խանումը մէկ-մէկ մտաւ բոլոր տները։ Քանի աւելի էր ծանօթանում նա գիւղացիների կեանքին, այնքան աւելի էր ապշում։ Մի՞թէ կարող են բանական արարածները այդ տեսակ ապրել։ Տներ չէին, այլ խոնաւ գետնափորեր, պատերը մեծ մասամբ անծեփ, ամէն ծակ ու ծուկից քամին փչում էր․ թոնրի պէս մի բան փորւած էր յատակի մէջ, ծուխը լցնում էր ամբողջ ներսը։ Բակում ոչ մի առանձին շինութիւն․ անասուններն էլ բնակւում էին միևնոյն գետնափորում, մարդկանց հետ միասին։ Աղբը, թրիքը հէնց դռան առջև կիտած։ Ոչ մի ծառ, ոչ մի բոյս․ շուրջը կատարեալ ամայութիւն։ Տան մէջ մի երկու գզգզւած, ցեխոտւած կապերտ, կեղտոտ ներքնակներ, աւելի կեղտոտ, բուրդը դուրս ցցւած վերմակներ։ Միայն հասակաւոր տղամարդիկ էլի բան ման հագին ունէին, իսկ

կանայք ու երեխաները շրջում էին բոբիկ և գրեթէ մերկ։ Այդ տարի մանաւանդ երաշտից հացի պակասութիւն էր, և ուր էլ մտնում էր Ղարա-խանումը, սոված մանուկների լացն ու աղաչանքները սիրտը կտոր կտոր էին անում։ Ինչ ուտելեղէն որ բերել էր իր հետ, բոլորը նոյն օրն և եթ բաժանեց։ Ամէն տան մէջ գտնում էր մէկ երկու հիւանդ։

Այդ գիշեր Ղարա-խանումը չը կարողացաւ բոլորովին աչքը խփել․ թւում էր թէ դեռ ևս լսում է լացի ձայներ, աղաղակներ, հառաչներ…

Գ․

Ղարա-խանումին տւին մի ետ ընկած, պարապ տնակ։ Տասնեակ վերստ հեռուից մշակներ ապսպրեց և կարողացաւ մի կերպ պատերի ծակոտիները ծեփել տալ, կտուրը ամրացնել, երդիկը կալնել, մի պատի մէջ երկու պատուհան բաց անել, յատակը հաւասարացնել ու խսիրով ծածկել։ Սենեակի մի կողմը, որ վարագոյրով էր բաժանւած, պիտի խանումի ննջարանը լինէր, միւս մասը՝ դասարան։

Սկզբում աշակերտ գրւեցին միայն երկու աղջիկ, որոնց բերել էին մայրերը բոլորովին մերկ։ Ղարա-խանումը հանգցրեց նրանց և կուշտ կերակրեց․ ամբողջ գիւղը իրար անցաւ։ Մէկ անգամից ընդունւեցին երեսունի չափ աղջիկներ, աւելի տեղ չը կար… Մայրերը բերում էին ծծի երեխաներին ու պահանջում էին որ նրանց էլ ընդունի… Նրանց բան հասկացնել անկարելի էր լինում։

Թուրք տղաներն էլ գայրանում էին․ նրանցից միմիայն Ահմեդը կարողացաւ տեղաւորւել դպրոցում, այն էլ նրա համար, որ յանձն առաւ սենեակը մաքրի, ջուր բերի ու ծառայի պաշտօն կատարի։ Բայց հէնց առաջին օրը Ահմեդը գողացաւ Ղարա-խանումից մի մկրատ․ Վարժուհին ձևացրեց թէ գլխի չի ընկնում ու ասաւ․

— Ահմեդ, իմ մկրատը չը կայ․ անշուշտ մի վատ մարդ է եկել ու տարել։ Եթէ մի ժամանակ իմանաս թէ ով է այդ վատ մարդը, խնդրեմ ինձ ոչինչ չասես․ ես այդ տեսակ մարդոց երեսը տեսնել չեմ ուզում։

— Ես չէի, Ղարա-խանում,—պատասխանեց Ահմեդը․—ես կը հսկեմ, որ բռնեմ այդ վատ մարդուն։

— Հսկի՛, Ահմեդ, հսկի՛։

Ահմեդը շարունակում էր իր գողութիւնը։ Մէկ անգամ էլ տեղն

ու տեղը բռնեց, գողացած իրերը ձեռքին, բայց այս անգամ Ղարա-խանումը էլ ոչ մի խոսք չասաւ, ուղղակի աչքերին նայեց ու մօտից անցաւ։

Ահմեդը քարացած մնաց. յետոյ գողացած իրերը ձեռքից վայր գցեց ու դուրս գնաց։

Մի քանի օր չէր կարողանում Ղարա-խանումի աչքերին նայել. այնուհետև տանից էլ ոչինչ չէր կորչում։

Դ.

Պառաւները յաճախ գալիս էին դպրոց տաքանալու և նայելու թէ ինչ են անում իրենց աղջիկները։ Երեխաները գրում—կարդում էին, կարում ու գործում։

—Որտեղից ես եկել, Ղարա-խանում,—հարցրեց մի օր մի նրանցից մինը։

—Հեռուից, տատի։

—Ի՞նչն է քեզ մեզ մօտ բերել, էս անտէր-անտիրական աշխարհը։ Աղքատ ու սոված մարդիկ ձեր երկրումն էլ անպակաս կը լինեն...

—Եկել եմ ձեզ մօտ նրա համար, որ ուրիշ աղքատներին օգնողներ կան, իսկ ձեզ ոչ ոք չի օգնում,—պատասխանեց Ղարա-խանումը։

Բայց տատին բան չը հասկացաւ։

— Չե՞ս հասկանում, տատի։

—Ոչ, Ալլահը վկայ, չեմ հասկանում.

— Լաւ, բացատրեմ քեզ... Ես մի ծով դարդ ունէի։ Երկու աչքի լոյս երեխաներ ունէի, երկուսին էլ Աստուած առաւ...

—Ո՛հ,—մղկտաց պառաւը.—իմ երեխաներիցն էլ շատերին Աստուած առել է...

—Այո... Աչքիս էլ բան չէր երևում։ Մտածում էի՝ էլ ինչու ապրեմ էս աշխարհի երեսին, էլ ինչացու եմ. աւելի լաւ է՝ ինքս էլ մեռնեմ։ Բայց յետոյ, երբ եկայ էստեղ, տեսայ՝ որ դեռ մարդկանց հարկաւոր եմ։

Բայց տատին այնուամենայնիւ բան չը հասկացաւ։

Ե.

Դպրոցի շինութիւնը շատ վատ էր, ու Ղարա-խանումը յաջորդ ամառը վարպետներ բերել տուաւ ու սկսեց նոր տուն շինել, աւելի

բարձր, ընդարձակ, լայն-լայն պատուհաններով և աղիւսէ ծխնելոյզով—տանիքը կղմինտրից էր, տան մօտ էին բոլոր հարկաւոր շինութիւնները. բակը շրջապատած էր բարձր պարիսպով, իսկ բակից դուրս մի ընդարձակ տեղ չափարով կապած, ապագայ բոստանի համար։

—Շատ փող ունի Ղարա-խանումը,—ասում էին գիւղացիք, նայելով այդ շինութեանը։

Մի քիչ յետոյ Ղարա-խանումը գնեց երկու կով, այծեր, ոչխարներ, հաւ, հնդկահաւ, սագ, բադ և մի բարակ առու անցկացրեց գետից մինչև բոստանը։

Յաջորդ գարնանը աշակերտուհիները նրա հետ բանում էին բոստանում։ Գետինն էին փորում, մարգեր ձևում, ցանում, տնկում, ջրում, քաղհան անում... Այդ գիւղում ոչ մի բոստան չը կար, ու թուրք կանայք չը գիտէին՝ ինչ բան է կարտոֆիլը, կաղամբը, բադրիջանը, բազուկը. շատ-շատ երբեմն ձեռները ընկնում էր մի-մի սոխ կամ վարունգ։

—Փոքրերը որ սովորեն, յետոյ իրենց համար էլ բոստաններ կը շինեն,—մտածում էր Ղարա-խանումը։

Զ.

Ամբողջ գիւղը հետաքրքրութեամբ հետևում էր Ղարա-խանումի աշխատութիւններին։ Երբ պատրաստւում էին սարերը քոչելու, վարժուհին հազիւ հազ համոզեց մի երկու աղքատ ընտանիքներ, իր մօտ թողնեն իրենց աղջիկներին. և ամբողջ ամառը, շոքին նրանց հետ աշխատում էր բակում և բոստանում։

Գիւղում մնացել էին մի քանի տղամարդ, որոնք ցորենը մի կերպ հնձեցին, կալսեցին, յետոյ նրանք էլ հեռացան սարերը։ Միայն կատուները մնացին տներում։

Աշնանամուտին, երբ գիւղը նորից կենդանացաւ, բոլորն էլ զարմանքով տեսան որ վարժուհին ամեն ինչ ունի. մի քանի տասնեակ հաւ, հնդկահաւ, սագ, բադ, գառներ, հորթուկ, տան առջև ծաղկոց. բաղեղը բարձրացել էր դպրոցի պատով, գրեթէ պատուհաններից վեր, իսկ բոստանը լի էր ամեն բարիքով։

Ղարա-խանումը զուարթ և ուրախ էր, կարծես աւելի ջահելացել էր։ Օգնական աղջիկների ընտանիքները բաժին ստացան նրա բակի ու բոստանի լիութիւնից։

Դպրոց մտնել ցանկացողների թիւը շատացաւ։ Մի ուսուցչուհի ևս եկաւ քաղաքից։ Այս անգամ տղաներն էլ ընդունեցին։ Իսկ երբ

եկաւ ամառը, արդէն գիւղացիներից աւելի շատերը չուղեցին իրենց երեխաներին տանել սարը ու թողին Ղարա-խանումի մօտ։ Դպրոցը կապալով առել էր մի քանի օրավար հող, վարել ու ցանել ցորեն, գարի ու կորեկ։

է.

Անցան տարիներ։ Դպրոցի շուրջը տնկած պտղատու ծառերը մեծացան. տունը այժմ մի այգու մէջ էր։ Բոստանը կրկնակի ընդարձակուել էր։ Գիւղի այս և այն ծայրում երևացել էին աւելի լաւ շինուած տնակներ, պատուհաններով և ծխնելոյզներով, կղմինտրով ծածկըուած. ծառերը հովանաւորում էին նրանց բակերը և տների կողքին կանաչին էին տալիս բոստանները։ Առուն մեծացրած էր և ուրախ վազում էր փողոցներով...

Ամառուայ ամիսներին գիւղը այլ ևս չէր ամայանում և բոստաններում ու արտերում իրար կողքին երևում էին աշխատող կանայք ու տղամարդիկ, առողջադէմ և աւելի լաւ հագնուած։

Դրանք մեծ մասամբ Ղարա-խանումի նախկին օգնականներն էին։

1) Միայն մեր թո՞ւրք գիւղերն են այսպէս խեղճ։ Ի՞նչն է այդ խեղճութեան պատճառը։

2) Ղարա-խանումը ինչ միջոցով է ուզում կռուի այդ խեղճութեան դէմ։ Նա ինչո՞վ էր ազդում գիւղացիների վրա։

31. Ջրահեղձը

Ներս վազեցին մանուկները
ու կանչում են հօրն շտապ.
—Ա՛պի, ա՛պի, եկ, մեր Թոռը
մեռել հանեց գետի ափ։
—Սուտ էք ասում,
շա՛ն լակոտներ,
գոռաց հայրը ահաբեկ.
բսպասեցէք դուք հալա դեռ,
մեռելն յետոյ կը տեսնէք։

Դիւան կը գայ,
պատասխան տուր.
ցաւի միջում կը մընամ.
հընար չը կայ, բէր, ա՛յ կընիկ,
շորերըս տուր, մի գընամ։
—Ո՞ւր է մեռելն։—Ա՛յ, ա՛պի, ա՛յ։
Ծիշտ որ գետի եզերքին,
Թաց Թոռի մօտ, գետնի վըրա
տարածուած է մի մարմին։

Զարհուրելի դիակն ուռել,
կապըտել է այլանդակ։
Արդեօք տանջուած մի թշուառ էր
հանգիստ գըտած ջըրի տակ.
մի գետակուր ձըկնորս էր այն,
թէ՞ գինեմոլ մի ջահել,
թէ՞ անըզգուշ վաճառական
հարամու էր պատահել...

Ըն՞չ՛ն է պէտք. աչք ածելով
ըշտապում է գիւղացին,
ուխտ բըռնած, ետ քարշ տալով,
ջուրն է տանում խեղդուածին։
Ու թիակով գետի եզրից
ջուրը հըրեց նա նըրան
ու դիակը գընաց՝ նորից
փընտրելի խաչ ու գերեզման։

Մեռելն երկար ջըրի միջին
ցած է իջնում ճօճելով,
աչքով ճամփեց մեր գիւղացին
ու տուն դարձաւ կանչելով.
—Դէսը կորէք, այ լակոտներ,
եկէք, բան տամ ձեզ, տանեմ.
ամա թէ որ ձէն էք հանել,
հոգիներըդ կը հանեմ։

Գիշերն ուժգին
բուք վեր կացաւ,
գետն եռնում է, որոտում...
Մարխը արդէն այրուեց, հանգաւ
լուռ ու ծըխոտ խըրճիթում։
Ողջ քընած են։ Անքուն պառկած
միտք է անում գիւղացին...
Բուքն ոռնում է... մին էլ յանկարծ
լուսամուտը բախեցին...

—Ո՞վ ես։—Ներս թող,
այ տանտէր, ներս...
—Ա՛յ, ներս ու քեզ չոռ ու ցաւ.
ի՞նչ ես շըրջում Կայէնի պէս,
ո՞ր սատանէն քեզ բերաւ։
Ի՞նչ անեմ քեզ, սաս, հիմի,
տեղըս նեղ է, տունը մութ։

Ու ծոյլ ձեռքով, տըրտընջալով
բաց է անում լուսամուտ։

Ցոլում է լոյսն ամպի տակից.
ահա՛ կանգնած... մի մերկ մարդ.
ջուր է հոսում նըրա միրքից,
բաց են աչքերն ու անթարթ։
Կախ են ընկած բազուկները,
ողջ կարկամած սոսկալի,
ուռած մարմնին քաղցանգները
կըպած՝ սևին են տալի...

Ահից մարեց՝ ճանաչելով
իր մերկ հիւրին նա յանկարծ.
փեղկը խփեց։ Ու դողալով
—Այ դու ճաքես, քըրթմընջաց։
Ամբոխուեցին մըտքերը մութ.
մինչև լոյսը նա դողում,
մինչև լոյսը լուսամուտ
բախում էին ու բախում...

Ամբոխն ահեղ զրոյց ունի,
թէ այս դէպքից գիւղացին
սպասում է ամեն տարի
միշտ նոյն օրը խեղդուածին.
Խառնւում է օրն առաւօտից,
գիշեր գալի բուք ու մութ,
ու խեղդուածը ամբողջ գիշեր
բախում դուռն ու լուսամուտ։

32. Ձմեռ

Ձիւնը եկել, դիզուել էր, սար ու ձոր բռնել։

Պարզկայ գիշերը էնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս հազար տեղից տրաք-տրաքում, ճռճռում, ճըքճըքում էր ու մարդու մարմինը սարսռացնում, ձէն տալիս։

Ամեն մէկ ծառի ճիւղքից, ամեն մէկ տան գլխից հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձիւնի քուլայ կախ էր եղել ու բիզ-բիզ իրար վրա սառել։ Հէնց գիտես՝ սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահուան դուռն ընկել. շունչն էր մնացել՝ որ տայ ու աշխարհքիս բարով մնայ ասի։

Թռչուն, գազան, անասուն, սողուն, ո՛րը փետացել էստեղ էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բունը մտել, ձէնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։

Գետերի, առուների երեսները սառոյցը մէկ գազ եկել հաստացել, իրար վրա դիզուել, էնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ տուել, որ մօտներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձէնն էր լսում, որ սառցի տակին տխուր-տրտում քըլքըլում էր ու էլ ետ էստեղ էնտեղ կամաց ձէնը կտրում, պապանձում, սառչում։

Արեգակը էս առաւօտ, որ գլուխը քնի տեղիցը ու աղօթարանիցը վեր բարձրացրեց ու աչքը աշխարհքի վրա գցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին էնպէս էր պէծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձիւնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հէնց իմանաս՝ ադամանդ, յակինթ, զմրուխտ ու հազար տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին ու դօշին փռած։

Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին էնպէս էր հրապարակ բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձիւնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամփորդի քիթն ու պռունգը կպցնում, ճաքեցնում, երեսը պատռում, գլխին դէմքին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր գցում, խեղդում կամ ձիւնի մէջ թաղում շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացրած ճամփից խռկում, սար ու չոլ գցում, խեղդում կամ քարէքար տալիս։

33. Պարզկայ գիշեր

Պարզկայ գիշեր…
Աստղերն երկընքում լուռ պըսպըղում են,
լուսնի շողերը դիպել են սարի
ձիւնոտ կողերին, կողերը ցոլում,
պէծին են տալի։

Քամին ցրտաշունչ
Թևերը փռած փնչում է, թռչում,
երկիրը սառած ճաքում-ճաքճըքում,
ձեան հատիկներով քարափի կուրծքը
ծեծում ու ծեծկում…

Անծայր ճանապարհ.
առաջ եմ գնում. ո՞ւր. ես չը գիտեմ.
սառո՛յց ու ձմեռ.
առաջ եմ գնում անյոյս, անընկեր,
քամի ու գիշեր։

34. Գիքորը

ա.

Գիւղացի Համբօի տունը կռիւ էր ընկել։

Համբօն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տայ, որ մարդ դառնայ, աշխատանք անի։ Կինը չէր համաձայնում։

— Չեմ ուզում, իմ մատաղ երեխին էն կրակ աշխարհքը մի գցի, չեմ ուզում,— լալիս էր կինը։

Բայց Համբօն չը լսեց։

Մի խաղաղ, գեղեցիկ առաւօտ էր. մի տխուր առաւօտ։ Տանեցիք

ու հարևանները եկան մինչև գիւղի ծայրը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփայ դրին։

Քոյրը, Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալօն մօր գրկից ձայն էր տալիս՝ «Գիքո՛ր, էտ ո՞ւր ես գնում, հէ՜ Գիքո՛ր»։

Գիքորը շուտ շուտ ետ էր նայում։ Տեսնում էր՝ դեռ գիւղի ծայրին կանգնած են նրանք ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը։ Դարձեալ հօր կողքով վազում կամ առաջն էր ընկնում։ Մին էլ ետ նայեց. գիւղը ծածկուել էր բլուրի ետև։

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում։

—Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,—որդուն կանչելով գնում էր Համբօն, շալակին մի խուրջին, մէջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա ծխախոտ։

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, միանգամ էլ երևաց գիւղը հեռո՜ւ մշուշում։

—Ա՛յ, տղի, մեր տունն էն է, հա՛,—ցոյց տուաւ Գիքորը՝ մատը մեկնելով դէպի գիւղը, թէև տունը իսկի չէր երևում, ու անցան։

Բ.

Առաջին իրիկունը հիւր ընկան մի գիւղում։ Տանտէրը Համբօի հին ծանօթն էր։

Դեղին սամաւարը թշշում էր տախտի ծէրին։ Մի ջահել աղջիկ շըրխկացնելով բաժակները լուանում ու թէյ էր շինում։ Նա մի կարմիր սիրուն շոր ունէր հագին։ Գիքորն էնտեղ մտքումը դրաւ, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանիի համար մի էնտեսակ շոր ուղարկի։

Միւս օրը քաղաք մտան, իջան բազար։

—Բիձա, էտ երեխին ծառայ ես տալի՞ս,—խանութի ներսից հարցրեց մի վաճառական։

—Հրամանք ես,—ասաւ Համբօն ու Գիքորին էն կողմը հրեց։

—Բեր ինձ տուր, ես կը բռնեմ,—առաջարկեց վաճառականը։

Նրան ասում էին բազազ Արտեմ։

—Հինգ տարի դեռ փող չեմ տայ,—ասաւ բազազը պայման կապելիս։—Թէ դրուստը կուզես, դեռ դու պէտք է տաս, որ քո որդին բան է սովրելու։ Ախար իսկի բան չը գիտի…

—Որտեղից գիտենայ, խաղէյին ջան,—պատասխանեց Համբօն,—որ գիտենար, էլ ո՞ւր կը բերէի։ Ես էլ բերել եմ, որ բան սովրի…

—Կը սովրի, ամեն բան կը սովրի։

—Իմ դարդն էն է, աղա ջան, որ մարդ դառնայ, լեզու սովրի, գրել-կարդալ սովրի, նստել-վերկենալ սովրի, մարդ ճանաչի, որ աշխարհքումս ինձ նման խեղճ ու զուրկ չը մնայ…

Բազազը Համբօին միամտացրեց ու դուրս գնաց բարձր—բարձր հրամայելով՝—«Չայ բերէք, հաց բերէք սրանց համար…»

Գ.

Ու հայր ու որդի նստած էին բազազ Արտեմի խոհանոցում։

—Դէ, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղայ ես դուրս գալի… Հէնց պէտք է անես, որ… ես ինչ գիտեմ…ո՜վ Տէր Աստուած…—մռնչաց Համբօն ու չիբուխը լցրեց։

—Վախտ ու անվախտ դէս դէն չընկնես, ձեռդ ընկած փողը քոռ ու փուչ չանես. հազար ու մի պակասութիւն ունենք։ Քեզ էլ լաւ պահի, գիշերները բաց չըլինես, մրսես ոչ…

—Հացի կտորտանքն ու քարթուն կը տան, կերակուրի թերմացքը կը տան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն. բան չը կայ, կարգն էտ է… Օրեր են, կը մթնեն, անց կը կենան…

Շարունակում էր հայրն իր խրատը, բայց Գիքորը հօրը թինկը տուած քնել էր արդէն։

Էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ յոգնել էր բոլորովին։

Մրգով լիքը խանութները, դէզերի նման դարսած գոյնզգոյն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բարձած աւանակները, թաբախները գլխներին կինտօները… էս ամենի գոռոցն ու գնգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնուած դժժում էր նրա գլխում։ Եւ նա յոգնել էր ու հօրը թինկը տուած քնել։

Դ.

Խանութում Գիքորին ապրանք կը տային մուշտարիների հետ տանելու, չիթ կը ծալէր, խանութը կը սրբէր, իսկ պարապ ժամանակը յաճախորդ կը կանչէր։

Եւ ահա Գիքորը հաց է տանում խանութը։ Կերակրամանը ձեռքին, մաշուած ու դժգոյն մեծ մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով։ Նայեց ներքև։ Քարւանսարաների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Կուրը, ոլորւում, պտտւում ու ճըռշըլելով խեղդւում, խուլ թշշում կամուրջի տակին։

Ափից մոտիկ պտըտում էր մի կանաչ նավակ։ Երկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկան էր ձգում, մյուսը նավն էր կառավարում։

«Ա՛յ հիմի կը հանի», ասաց Գի՛քորն ու կանգնած նայում էր ձկներին։ Ուռկանը դատարկ դուրս եկավ։

—Էս մինն իմ բախտիցը,—ասաց Գիքորը ուռկանը ձգելիս։ Գիքորի բախտը դատարկ դուրս եկավ։

—Էս մինն էլ մեր Ջաննի բախտիցը։

Էս էլ դատարկ դուրս եկավ։

—Էս մինն էլ Գալօի բախտիցը։

Գալօն էլ էր անբախտ։

—Էս մինն էլ բաս...

Բայց էտ ժամանակ մոտիկ քարվանսարայի դռանը աղմուկ բարձրացավ։ Մի պարսիկ կապիկ էր պար ածում երգելով։

Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին չորս կողմից։ Գիքորն էլ վազեց։ Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնել, առաջ անցնել, չը կարողացավ։ Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնի թե ինչ է կատարվում մեջտեղը։

—Ինչ ես ներս խծկվում, տո լածիրակ, գնա քու բանին,—ասաց մի կինտո ու զարկեց Գիքորի գլխին։

Գիքորը յանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութ։

ե.

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցում։ Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խազեյինի ապտակների տեղերը, երբ շվշվացնելով ներս մտավ Վասօն, բազազի աշկերտը։ Գիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ ու մասխարա դեմքին լրջություն տալով սպառնալի հարցրեց.

—Կլուբո՛ւմն ուշացար, տո արջի քոթոթ, թե գուբերնատորի՞ մոտ վռազ գործ ունեիր...

Գիքորը լուռ էր։

—Չե՞ս իմանում, տո՛, ո՞րտեղ էիր է, որ էսօր ինձ քաղցած սպանեցիր։ Որ մեռնեի՝ յետո՞յ...

Էսպես խոսելով կամաց կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու յանկարծ զարկեց Գիքորի գլխին։ Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին։ Վասօն պատրաստվում էր մի ուրիշ ձևի հարված էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խազեյինի ձայնը։ Գալիս էր։

—Արա տես հիմի՝ քեզ ինչ է անում,—սպառնաց Վասօն։

«Հիմի ինձ կը սպանեն», անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ։

Խազեյինը արդեն բավական ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չը տան, որ իմանայ թե ինչ բան է քաղցածությունը։

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ։

Վասօն հաց էր ուտում։ Գիքորը վերմակի տակից երբեմն գզոյշ ծիկրակում, թաքուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում։ Նա էն օրը հաց չէր դրել բերանը. ծեծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում։

—Հ՞ը, ո՞նց է, սոված քունըդ չի՞ տանում. հա՛, էտպէս...—նկատեց չարաճճի Վասօն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին։—Դե, առ, տեղի տակին թաքուն կեր, խազեյինը չիմանայ։

Գիքորը յափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտածում։ Մտածում իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ազատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուտում. մտածում էր էն երեկոների վրա, երբ հէրն ու մէրը կռւում էին իրեն քաղաք բերելու համար... և մայրը լաց էր լինում, չէր ուզում...

—Ա՜խ, նանի ջան, ինչ լավ էր սիրտդ իմացել,—հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիր ուտում ականջը սրած, թէ խազեյինը հօ չի գալի...

Իսկ առավօտը կանգնած էր խանութի դռանը ու կանչում.

—Է՛ստի համեցէք, էստի համեցէք...

զ.

Ձմեռը եկավ։ Սառն աղմուկով, ձիւնախառն բուքը թռչում էր քաղաքի վրայով։ Փողոցներում սուլում, սուլում, հոսան է անում։ Վզզալով մտնում է անկիւնները, աղքատի ու ակլորի է ման գալիս, պանդուխտ ու անտէր երեխայ է որոնում։

Ահա գտավ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած՝ ձայն էր տալիս նա.

—Է՛ստի համեցէք, էստի համեցէք...

—Հրէ՜սս...—չարախինդ սուլելով ցուրտը անհերևոյթ թռի նման, զարկեց անցաւ ոսկորները, ու Գիքորը դողաց։

Առանց էն էլ նա շատ էր մաշւած, էտքանն էլ հերիք էր նրան։ Ու անկողին ընկաւ։

Հիւանդ պառկած էր Գիքորը խոհանոցում։ Բազազ Արտեմի մայրը, պառաւ դէդին օրը մի քանի անգամ ներս էր մտնում իրեն իրեն խօսելով։

—Ի՞նչ կուզես, որդի Գիքոր։

—Ջո՜ւր...

Դէդին ջուր էր տալի։ Հիւանդը դողդոջուն ձեռներով բռնում, ագահ խմում էր ու կրկին ուզում։

—Էս սիրտս հովացնում չի, դէդի... ես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում... դէդի... ես մեր տունն եմ գնում.., ես իմ նանին եմ ուզում...

Բազազ Արտեմը ցաւի մէջ էր ընկել։ Նա դէս դէն ընկաւ, նրանց կողմերից մարդ գտաւ, ապսպրեց, որ Համբօն գայ, իսկ Գիքորին տարաւ քաղաքային հիւանդանոց։

Էստեղ շատ հիւանդներ կային շարքերով պառկած։ Տխուր տնքում էին ու իրար նայում անզօր հայեացքներով։

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում։

Էստեղ գտաւ նրան հայրը։

—Էտ ի՞նչ ես եղել, Գիքոր ջան,—մղկտալով վրա ընկաւ Համբօն։

Գիքորը տաքութեան մէջ չիմացաւ հօր գալը։

—Գիքոր ջան, բա եկել եմ է, Գիքոր ջան... ես քո ապին եմ է...

Հիւանդը ոչինչ չը հասկացաւ։ Նա զառանցում էր ու զառանցանքների մէջ կանչում էր.—«Միկի՜չ, Ջանի, ապի՜, նանի՜...»

—Էստեղ եմ, Գիքոր ջան, նանը զարկել է, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՞ս... Միկիչն ու Ջանին հրէն կտրը կանգնած քեզ

ճամփայ են պահում։ Ի՞նչ ես ասում. դէ խօսա է, Գիքոր ջան...

—Է՛ստի համեցէք, է՛ստի համեցէք,—բացականչեց հիւանդը. զառնազան անկապ, կցկտուր խօսքեր ասաւ ու ծիծաղում էր տաքութեան մէջ։

է.

Մի երկու օրից յետոյ Համբօն գնում էր իրենց գիւղը։

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր։ Կռան տակին տանում էր նրա շորերը, որ մայրը լաց լինի վրէն։ Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտան։ Էն էլ, երևի քրոջ Ջանիի համար էր հաւաքել ու պահել...

Գնում էր Համբօն ու մտածում։ Շատ ժամանակ չէր անցել, որ էտ միևնոյն ճամփով քաղաք եկաւ իր Գիքորի հետ։ Ահա էստեղ էր, որ նա ասաւ.—Ապի, ոտներս ցաւում են...

Եւ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...

Ահա էնտեղ էր, որ ասաւ.—Ապի, ծարաւ եմ...

Ահա էն աղբիւրն էր, որ ջուր խմեցին...

Ամենը, ամե՜նը կան, մենակ նա չը կայ...

Միւս օրը, երբ Համբօն անցնում էր լեռները՝ հեռւո՜ւմ երևաց իրենց գիւղը։ Գիւղից դուրս կանգնած սպասում էին նանը, Ջանին, Միկիչը, Մօսին, իսկ փոքրիկ Գալօն մօր գրկից կանչում էր.

—Արի՜, արի՜, հէ՜ Գիքոր...

---

35. Կոխ

ա.

Զմռան մի գիշեր կար մի հարսանիք,
հրրճւում էր անզուսպ ամբողջ գիւղի.
գիւղն էին իջել հովիւ պատանիք
աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։
Ու պարից յետոյ լայն հրրապարակ
բաց արին մէջ տեղն արձակ գլխատան,
զուռնաչին փչեց կոխի եղանակ,
ահել ու ջահել իրարով անցան։
Հարա՛յ են տալի՝ «Քաշի՜ հա, քաշի՜...»
Ու դուրս քաշեցին զոռով երկուսին.
մինը մեր Սարօն, իսկ միւսը Մօսին։

Ողջ գիւղը կանգնեց պարսպի նման,
Ջոկուեց, բաժանուեց երկու բանակի,
ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
կանգնեց թիկունքին տղերանց մէկի։
Գոռում են, գոչում երկու բանակից.
—Սրտապինդ կացէք, մի՛ վախէք, տղէրք։
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
նայում են կանգնած հարսն ու աղջկերը։
Ու տաքանում են տղերքը սաստիկ,

փէշերը հաւաք խըրում են գօտին,
գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
իրար են հասնում թափով մոլեգին…
Ազատ կայ սակայն էն մութ ձորերում,
ու միշտ հընազանդ հընոց ադաթին,
ամբոխի առջև իգիթն իր օրում
գետին չի զարկի ընկեր իգիթին։
Ու իրար բռնած Սարօն ու Մօսին
քաշում են, ընկնում խոզապարկուկի,

ընկնում են գետին, ելնում միասին,
դըժուար է իրրև յաղթել մէկ մէկի։
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
կատակի տալով թողած էր իրեն,
ուժ արաւ Սարօն, ծընկեց կատաղի,
գետնեց ընկերին ու չոքեց վըրէն։
Ամբոխը թափուեց հարա հըրոցով,
վեր թըռցրեց ջահել փահլևաններին,
և ուրախութեան աղմուկ-գոռոցով
յաղթողին փեսի թախտի մօտ բերին։
Ցընծութեան ձայնից, ծափերի զարկից
շարժւում են դողում պատեր ու օճորք,
և նորեկ հարսի փարդի քամակից
նայում են կանգնած հարսն ու աղջկերք։

Բ․

Վերկացաւ Մօսին. իրեն կըտրատում,
—Թող գա՛յ, գոռում է, որ բըռնենք նորից,
թէ չէ նամարդը, արևս եմ երդւում,
էլ չի պըրծնելու երբէք իմ ձեռից.
վէր չի գցել ինձ… ինձ խաբել է նա…
մէյդան բաց արէք, թող մին էլ մէջ գայ…»
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում,
թունալի ծաղրով կանչում են, գոռում.
—Զելաւ, էտ չելաւ,
վէր չի գըցել դեռ.
Մօսին թօլ ելաւ,
խոզապարկուկ էր…
Հա՛, հա՛, հա՛, տըղէրք,
շատ էլ լաւ կանի,
մէջքը թա՛փ տըւէք,
թող մին էլ բըռնի։
Հա՛, հա՛, հա՛, տըղերք,
մէջքը թա՛փ տըւէք…

Ու աղմըկալի հարսանքի տանից
դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
արիւն է կաթում սեւակնած սըրտից,
գընում է ըշտապ, քայլերը մոլոր։
—Ամօթ քեզ, Մօսի, թուք ու նախատինք,
[illegible] քեզ նըման գոված իգիթին.
մի անուանդ յիշիր, մի բոյիդ մըտիկ.
դեռ քո թիկունքը չէր տեսել գետին։
Ի՞նչպէս վէր ընկար դու սարի նըման,
երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...
Դու... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
նըրանից յետոյ երեսս կանանց..,
Եկած էր էս բանն իսկի քո գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
դէ մեռի էլի, գետինը մըտի,
տանը վէր ընկի, ելիկ պըտըտի»...
Ու էն հարսանքից թըշնամի դարձան
ախպէր տըղերքը էս դէպքի համար.
ընկեր, բարեկամ գընացին, եկան,
կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար։

---

36. Բարեկենդան

ա.

Սրանից քառասուն-յիսուն տարի առաջ բարեկենդանի շաբաթը Աշտարակի փողոցներովը անց կենալ չէր լինի։ Ամեն տեղ ուրախութիւն, ամեն տեղ սէր ու խնճոյք, ամեն բարձր կտեր սեղան փռել բաց անելը սովորական բան էր. էլ երիտասարդ ու միրքաւոր չէիր ջոկի, բոլորը միասին ջահելացել էին՝ կայտառացել. պապիս պէս պատուելի իշխանները կալերումը լախտի էին խաղում ու հաստ կտաւէ դոտկից ոլորած լախտը էնպէս էին փռացնում ու իրար մէջքի կըպցնում։ Տէրտէրն էլ վերարկուն ծալած մի կողմը դրած՝ կապայի փէշերը կոկիկ հաւաքած՝ գոտիկը խրած՝ էնպէս էր ծուլ ծուլ լինում խաղագծի բոլորտիքը, որ կասես թէ սա իրեն կեանքումը միշտ ըմբըշամարտ է եղել. միայն լախտը որ մէջքախառն ուսագլխին հասնում էր, զգում էր որ էսպէս բան իր օրումը չի տեսել։

—Դէ, օրհնած, մի քիչ էլ կարգիս խնայեցէք, կամաց տւէք, է.— ասում էր մեր տէր-հայրը ու էլ ետ թաչկոտում գծի չորս կողմը՝ աշխատելով լախտը խլի բռնողի ձեռքիցը։

—Ոչինչ, տէրտէր ջան, բարեկենդան օրեր է, խելքներս կորել է,— պատասխանում էին մեր իշխանները ու իրենց խաղի հետ ընկնում։

Էսպէս իրարանցում, էսպէս հարայ-հրոց թէ ուրիշ ժամանակ լինէր, ամենքը կը կարծէին թէ գիւղը կոխեցին, աւար տւին, մօտակայ գիւղերից անգամ գուցէ օգնութիւն գային. բայց հիմա ամբողջ Արագածոտն գաւառն է էսպէս, ինչ պէտք է արած։

—Դէ, հերիք ջարդւեցինք ծեծւելով, լաւ ալիւր աղցան եղանք. մի քիչ էլ վէգ խաղանք, ով տարւի՝ մինի տեղակ երկու դաւ գինի բերի։

Եւ սկսում էին այնուհետեւ մեր մազով-մօրուքով իշխանները վէգը ձեռների մէջ պտտացնել ու գծի մէջ շարած ընկոյզներին աչքել։

—Ա՜յ գիտի, էրնէկ էր էն օրը, որ մենք ջահել էինք. միտս է գալիս, ես էի ամենից լաւ խաղացողը.—պարծենում էր ամեն մէկը։

բ.

Մին էլ տեսար, երկար պոզաւոր թաղիքէ գտակը գլուխը անցկացրած, ոչխարի կըզգուած մորթին բուրդը դէպի դուրս մէջքին կապած, երեսն ալիւրոտ մի տղայ, մի ահագին աթարոց ձեռքին սւտալով եկաւ խոր գլուխ տւաւ մեր իշխաններին։

—Հ՜ը, ինչ մարդ ես, ո՞վ ես, ո՞ր աշխարհքի քամին է քեզ պտտել, մեր գեղը գցել.—հարցնում է մի ծերունի, իբրեւ թէ ոչինչ չը գիտի։

—Իմ տէրը, քաջերի քաջը, Փարբի գիւղի խանը իր մեծամեծներով, իր ծառաներով, հինգ հարիւր մարդով գալիս է ձեր սեղանը շէն անելու։ Նրա հրամանն է, որ ողջ գեղով, իշխաններով դուրս գաք իր առաջը։

—Մեր գլխի, մեր աչքի վրա տեղ ունի ձեր խանը. մենք վաղուց նրա համար տեղ ենք պատրաստել տանուտէրի կտերը։ Ա՜յ, ժողովուրդ, էլ ինչ ենք ուշանում. գնանք էլի, հիմի կը գայ մեր խանը։

Բազմութիւնը գնում է խանին դիմաւորելու. տէրտէրն ու իշխաններն էլ գնում են տանուտէրի կտուրը, դափ ու զուռնէն էլ իրենց պռչիցը կպած՝ ուր որ գնում են՝ հետներն են տանում. գնում են կտուրը, նստում են քէֆի, որ խանը գայ նրանց սեղանի վրա գտնի։

Ուռած ուռած բազմել է փարբեցի Եղիզարը էշի վրա՝ պոչը ձեռքին բռնած՝ երեսը դէպի ետ, մի երկար ճիպոտ էլ միւս ձեռքին՝ իբրև չիբուխ գնչին դէմ արած։ Գլխին դրած է մի գզգզած պարսիկ խանի երկար գդակ, վրան հին փալասներ փաթաթած, երեսին քսած է օճորքի մուր, վիզն է գցած զանազան ոսկորների կտորներից մի շարան. հագած ունի պատառոտուն, ծլանքները հազար տեղից քարշ ընկած մի պարսկի արխալուխ. կուրծքը բաց է, նոյնպէս մրով սևացրած, կողքիցն էլ կախած մի երկար փայտէ սուր։

Երկու երիտասարդ նմանապէս այլանդակ հագուստներով քաշում են էշի սանձը. ուրիշ երկուսն էլ քամակիցը մի-մի մեծ գաւազանի ծայրերը արած՝ բզում են էշին։ Դափ ու զուռնէն առջևիցն ածելով քաշում է այդ հանդէսը դէպի տանուտէրի կտուրը, իսկ խուռն ամբոխը միշտ «եալլա՛» է կանչում։

Գ.

Եւ ահա խանը էշի վրա նստած՝ մտաւ տանուտէրի բակը։

—Զո՛ւ, չո՛ւ, չօշ, չօշ, գնա՛, ա՛յ սատկած էշ, ինչ ես նազ անում, էս պատիւը խանինն է, քոնը հօ չի.—ասում են բզողները ու խեղճ էշին վեր հատում ու ստիպում, որ տանուտէրի սանդուխներիցը բարձրանայ։

Բայց ճա՞ր կայ, կարո՞ղ է խեղճ էշը։

—Դէ՛, վէզի՛ր, նազի՛ր, առաջ եկէք.—հրամայում է ընդհանուր կառավարիչը.—ինչ էք սպասում, բարձրացրէք խանի մոխրաթաւալին։

Ծիծաղ որ էստեղ տես. ամեն կողմից վեր են կալնում անլեզու անասունին, վրան բազմած խանի հետ միասին, իրենց ուսերքին և ելնում սանդուխներովը։ «Եալլա՛» գոռում է բազմութիւնը, իսկ վերևից ալիւրը շաղ են տալիս խանի ու էշի գլխին։ Փոշին ողջ բակը բռնում է, բոլորը ալիւրոտւում են, ում երեսին կամ գլխին էլ որ քիչ է թափւում, ինքն իր ընկերի մէջքից վերցնում քսում է իր երեսը։ Իսկ մեր խանի համար էլ մի՛ հարցնի, երևակայի՛ մրի ու ալիւրի մէջ կոլոլած մի գունդ միս։

—Գլո՛ւխ, գլուխ տուէք, իշխաններ, մեր ողորմած խանին.—կարգադրում է ընդհանուր կառավարիչը։

Վեր են կենում բոլորը սեղանի վրայից և իրենց տեղը կանգնած՝ խոնարհ գլուխ են իջեցնում։ Վա՜յ նրան, ով մի փոքր ուշ գլուխը

կռացնի, աչքով է անում խանը իր կառավարչին և բարակ ճիպոտը կպչում է այդ յանդուգնի մէջքին։

—Ֆալախա.—հրամայում է խանը.—քաշեցէք տանուտէրին մէջտեղ։

Տասը-քսան այլանդակ հագնուած երիտասարդներ մօտենում են տանուտէրին, պառկացնում ու ոտները ֆալախի մէջ ոլորում։

—Հարցրո՛ւ դրան.—հրամայում է խանը իր նազիրին.—դա քանի՞ գլխանի էր, որ մեր հրամանը չը կատարեց, մեզ շան տեղ չը գցեց, մեր առաջը չեկաւ։

—Թողութիւն կանես, խանն ապրած կենայ.—խնդրում է տանուտէրը պառկած տեղից.—ես քո մեծութեան համար պատրաստութիւն էի տեսնում էստեղ իմ իշխանների հետ. տեսնո՞ւմ ես հրամանոցդ համար սեղանը բաց է արած, վարդի օշարակը գաւաթումը լիքը, որսը ձողի ծէրին կախ արած, որ հրամայես թէ չէ՝ խորովենք անուշ անես. քո ընծադ էլ լաւ մտիկ արա՝ ոտները կապած գառը էստեղ պատրաստ, երբ որ ուզես՝ փլաւի գլխին առաջ բերենք։

—Ապրես, տանուտէր, կեցցես. բա՛ց թողէք դրան։

Առնում է իսկոյն մեր տանուտէրը գաւաթով լիքը քացախը և խոնարհութեամբ մատուցանում խանին։

Շատ լաւ էլ գիտի բարձրապատիւ խանը, որ օշարակ կոչւածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թունդ քացախ, բայց ոչինչ դէմք ցոյց չը տալով՝ առնում է ձեռքը և մօտեցնում բերանին։

—Օխա՜յ, ինչ լաւ էր շինած, սիրտս հովացաւ, շատ ծարաւ էի։

—Ա՛յ տղերք, որսը մօտ բերէք.—հրամայում է տանուտէրը։

Վերցնում են երիտասարդները ձողի ծայրին կապած սպանւած ագռաւը և առաջ բերում։

—Թիկնապա՛հ.—հրամայում է խանը.—վեր կալ էս կաքաւը, երբ որ մեր երկիրը կերթանք, փլաւի գլխին տապակած առաջս կը բերես։

Մօտ են բերում ոտները կապած, մի փայտէ ափսէի մէջ դրած, սև կատուն և համեցէք անում խանին։

—Ա՛յ, անպիտաննե՛ր, ձեր գառը կատու դառաւ. շուտ, կապոտեցէք բոլոր իշխաններին, ծեծի տակ փթացնեմ, մինչև խելքները գլուխները գայ, էլ ետ կատուն ոչխար շինեն. հրամայում է խանը։

Բայց նրա այս հրամանն էլ չի կատարւում, որովհետև իսկոյն միւս կողմից առաջ են բերում մի մեծ ու պարարտ որձ ոչխար և գիւղի կողմից ընծայում խանին։

դ.

—Շատ շնորհակալ եմ Աշտարակ գիւղի մեծ ու պստիկից. իրենց պատիւը իմ աչքի, իմ գլխի վրա: Բայց էստեղ կայ մի Խեչանենց Խեչան, նրա համար ինձ լուր է հասել, որ շատ վատ մարդ է, որ օրական նրա տանը հինգ աղքատ կշտանալու տեղակ՝ տասն է կըշտանում. դրան ես պիտի պատժեմ: Ո՞ւր է էտ մարդը, տանուտէր:

Մօտ է գալիս այնուհետև Խեչանի ընծան՝ մի լիտր թունդ արաղ:

—Էս արաղը ղրկել է, խանն ապրած կենայ, քո մեծութեան համար Խէչանը, որ անուշ անես. ինքն էլ հրէս:

—Գլո՛ւխ տուր, երեք հետ գլուխ տուր խանին, Խէչա՛ն աղա.—ձայն է տալիս Թիկնապահը. և խեղճ Խէչանը կատարում է իր պարտքը:

—Զօքի՛,—հրամայում է խանը արհամարհական հայեացքով, գլուխը բարձր բռնած, աչքերը դէպի երկինք դարձրած, երկար փայտէ չիբուխը դնչին:

Նազիրը քաշում է Խէչանի կռնիցը չոքացնում էշի առաջին: Բաւականին միջոց լռութիւնից յետոյ՝ խանը խօսել է բարեհաճում.

—Ե՞ս միտք ունէի, Խէչա՛ն աղա, քեզ շատ խիստ պատժեմ, բայց քո ընծան աչքերս կապեց. վե՛ր կաց, արի՛ ձեռս պաչի՛ ու ազատ ես:

Ծերունի Խէչանը այդ էլ կատարեց:

Այնուհետև մի քանի իշխանների, որոնցից մի-մի պարգև պոկելու յոյս ունէր, խանը փալախա է դնել տալիս, մինչև անգամ մի քանի ճիպոտ էլ խփել է տալիս, ի հարկէ, շատ կամաց ևստանում ոբից գինի, ոբից բրինձ, միւսից իւղ, երրորդից ձու, հաւ և այլն և դրանով ներում նրանց, բայց միշտ ձեռքը համբուրել տալուց յետոյ:

—Մնացէ՛ք բարով.—վերջապէս ասում է խանը և ուզում է ետ դառնայ իր հանդիսականներով, բայց ի՞նչ կարելի է:

Մինչև հիմա արածները կատակ էր, հիմի սկսւում է ուղիղ հիւրասիրութիւնը: Խանի հետ բոլոր եկող փարբեցիքը պիտի վայելեն աշտարակցու սեղանիցը, պիտի խմեն՝ երկու գիւղին միաբանութիւն և յարատևութիւն ցանկանալով, ապա թէ նոր նոյն կերպով, «եալլա» կանչելով, էշին բարձրացրած՝ ճանապարհ ընկնեն դէպի մի ուրիշ մերձակայ գիւղ:

~~~~~~~~

Իսկ ձեր կողմերը ինչ խաղեր ու սովորութիւններ կան բարեկենդանին:

37. Ջիրիդ

«Ջիրի՛դ է, ջիրիդ», ամբոխը ճըչաց:
Յանկարծ Աւագի ջիրիդը ճօճաց,
դըհոլը դըմբաց, հեծւորներն անցան,
կազմեցին միմեանց հակառակ շըրջան:
Զինւած ձողերի սուր նիզակներով
հէնց բաժանւեցին երկու բանակի,
բարձրացրեց փոշի ձին սըմբակներով,
գըլուխներ պատեց գարկը նիզակի:
Եռում է հանդէսն ահեղ ջիրիդի,
հասնում են արագ, զարկում մէկ-մէկի:
Ձեռներին բըռնած թաւիշ-թաշկինակ,
դիտում են հեռւից և հայրս ու աղջիկ՝
խոկոյն տալիս են նըրան մըրցանակ,
ով որ նըշանին նետում է ճարպիկ:
Շատերը յաղթւած մէկ-մէկ հեռացան.
մենակ Աւագը ջիրիդը ձեռքին՝
ինչպէս յաղթութեան վիթխարի արձան,
հասնում էր, զարկում փախչողի մէջքին:

---

38. Ահմադը

ա.

Ես իմ մանկութեան գարունները անց եմ կացրել մեր սարերում: Շատ էի սիրում իմ տատոնց տունը ու միշտ այնտեղ էի լինում: Իմ քեռիներից ամենից փոքրը, Ահմադը, հովիւ էր:

Նա ինձ տանում էր, ման էր ածում գառների մէջ, հետը հանդից հաղարճի կարմիր ճիւղեր էր բերում ինձ համար, իսկ իրիկուները հանում էր իր սրինգը ու ածում:

Ու սատղալի, լուսնեակ գիշերները, ահագին խարոյկի շուրջը բոլորած, ծափ էին տալի, խնդում էին իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ ես թիթեռի նման թրթռում, պար էի գալի նրանց շրջանի մէջ:
~~~~~~~~

Ահմադը Թուրքի անուն է, դրա համար էլ երբ մենք խողի միս էինք ուտում, միշտ տանեցիք հանաք էին անում, ծաղրում, ծիծաղում էին Ահմադի վրա, թէ՝ Ահմադը հայացաւ, Ահմադը հայացաւ…

Ի հարկէ, անունը լոկը կասէր Թուրք է. բայց հէնց ներս մըտնէր, տեսնէր թէ Ահմադը ինչպէս է ժաժ գալի տանը, հերիք էր, իսկոյն կիմանար, որ նա տան սիրելի տղան է։

Ում կամենում էր տուն էր բերում, պատւում, ճամփու դնում։ Աղքատը ողորմութիւն ուզէր թէ հարևանը հացփոխ, իր ձեռով տաշտից վերցնում էր, տալի։ Տան աղջիկներին ու փոքրերին հրամայում էր, ծեծում էր, սիրում էր, ինչպէս և միւս քեռիներս։ Անասունների համար հոգին տալիս էր։ Մինը հիւանդանալիս գրեթէ ինքն էլ հետը էր հիւանդանում, էնքան էր սիրում։ Ինքն էլ էնպէս սիրելի էր ամենքին։ Ահմադը հիւանդանում էր թէ չէ, մեր ուրախութիւնն էլ հետը կտրում էր։ Ու ամբողջ օրը տատս ու պապս չորս կողմը պտըտւում էին, ինչ որ լաւ բան էին գտնում, շուրջն էին հաւաքում, խնդրում էին, թէ էլ ուրիշ ինչ կուզի սիրտը։

բ.

Մի առաւօտ էլ վեր կացայ, տեսնեմ՝ բոլոր տանեցիք տխուր են։ Իմ տատը արտասւելով քթքթում էր, ման էր գալի անկիւններում ու ինքը չէր իմանում թէ ինչ էր անում։ Հարսներն ու աղջկերքը լուռ, տխուր ներս ու դուրս էին անում։ Վրանի դռան կողքին նըստած խօսում էր իմ պապը, իսկ մի քիչ հեռու գլխակոր նստած էին քեռիներս։

—Աստուած լինի քո օգնականը, բալա ջան, խօսում էր պապս։ Չոր քարին գնալիս՝ չոր քարն էլ կանաչի քեզ համար։ Պակաս օրդ խնդութիւնով անց կենայ… Դէ վեր կաց, օրն անց է կենում, ճամփէդ երկար։ Վեր կաց, բալա ջան, Աստուած բարի ճամփայ տայ, ոտդ ոչ դիպչի քարի…

Ահմադը չուխի փէշով աչքերը սրբեց, վեր կացաւ, եկաւ մօտեցաւ իմ պապին։ Պապս գրկեց, համբուրեց Ահմադին ու աչքերը լըցւեցին արտասուքով։

—Քո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան, մեր աղ ու հացն էլ քեզ հալալ լինի, քո մօր կաթնի պէս։ Մեզ մօտից գնես ու՝ թէ աջողութիւն ունենաս՝ իմացրու, որ մենք էլ ուրախանանք. թէ

պակասութիւն ունենաս՝ իմացրու, որ կարեհաս լինենք։ Դէ գնա, քեզ մատաղ, Աստուած բարի ճամփայ տայ։

Ապա թէ տատս գրկեց, համբուրեց Ահմադին, յետոյ մնացածները լաց լինելով ձեռն առան։ Ապուշ կտրած փոքրերիս էլ Ահմադը համբուրեց և մի երկու կով, հորթ, գոմէշ, ձագ, մի կորըկան ոչխար, մի բարձած էշ առաջն արած, մի երկու շուն էլ ետևը գցած, ճանապարհ ընկաւ։

Միւս քեռիներս ուղեկցում էին Ահմադին։

—Աստուած բարի ճամփայ տայ, Ահմադ ջան, գնաս բարով, բալա ջան.—ձեռքը ճակատին դրած ետևից ձայն էր տալի պապս։

գ.

Ահմադը անցաւ սարի միւս կողմը, միւս քեռիներս վերադարձան։ Բայց ինչու էին լաց լինում մեր տանը, քեռի Ահմադը ուր գնաց, մտածում էի ես։

—Ահմադը ուր գնաց, նանի,—հարցրի իմ տատին։

—Իրենց տունը գնաց,—պատասխանեց տատս։

—Իրենց տունը որն է…

—Ուրիշ տեղ է։

—Ահմադը ով էր որ…

—Ահմադը Թուրք էր, մեր ծառան էր։ Էհ, քանի տարի է մեր տանն էր… Հիմի իրա իրաւունքն առաւ ու գնաց…

—Բա էլ չի գալու։

—Չէ, բալա ջան, գնաց…

---

39. Արտաւազդ

Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին,
զարկեցէք, կռանը, շղթայքն ամրանան,
անիծեալ արքայի կապանքն ամրանան.
զարկեցէք, դարբիններ, կռանը սալին։

Անհարկու ամպերը եկան ժողւեցան,
ծեր Մասեաց ճակատին սև քող փաթթեցին,
գոռում է փոթորիկ գազանի նման,
հառաչում, սուլում է կատաղած քամին։

Զարկեցէք կռանը. խորունկ քարայրից
ահա՛ չար հողմի հետ հասնում են ձայներ...
ցոլում է փայլակը՝ արքայի աչքից
դէպի վեր թռչում են բարկութեան կայծեր:

Ուզում է նա դուրս գայ վրէժխնդիր հոգով,
իր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
բայց ամուր են նրա ծանր շղթաներ:



Մթերում գամփռներ կրծում են կապանք,
կրծում են անդադար կապանքն արքայի,
Արտաւազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
և դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի...

Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին,
զարկեցէք, կռանը շղթայքն ամրանան,
անիծեալ արքայի կապանքն ամրանան.
զարկեցէք դարբիններ, կռանը սալին:

40. Հսկայ փեթակը

ա.

Լոյսը բացւում է. փողոցներն ու հրապարակները մութի մէջ են դեռ. ամեն կողմ լուռ ու դատարկ: Բոլոր դռները փակ, պատուհանների վարագոյրներն իջեցրած, կամ փեղկերը դրած, բայց նրանց ապակիների վրա արդէն խաղում է արշալոյսի զւարթ կարմիրը:

Ահա՛ և արևը հեռու սարերի ծայրին: Տների կտուրները ոսկի են հագնում, ստւերները քիչ-քիչ սահում են ցած պատերի վրայով և հետզհետէ փախչում ապաստանում նեղ ու փոքրիկ փողոցները. արևը ողողում է հրապարակներն ու շէնքերը:

Եւ մէկը միւսի ետևից քնկոտ աչքերի նման բացւում են լուսամուտները, որտեղից առաւօտեան թարմ ու զով օդը խուժում է ներս սենեակները: Ահա՛, մի դուռ ճռռում է էստեղ, ճռռում է մի ուրիշը էնտեղ, ճռռում է մի երրորդը. և փողոցի դռներից ու դարպասի անցքերից դուրս են նետւում ծառաներն ու սպասուհիները հաց ու օրւայ պաշար բերելու: Կաթնավաճառ կանայք կաթի ամանները թևերին անցնում են դռնէ դուռ: Մինչ բանւորները գործարան են շտապում, աշկերտները խանութ և արհեստաւորները դէպի իրենց կիսատ շէնքերն ու գործը: Իսկ մօտակայ գիւղացիք շարան-շարան ձիերի ու ճռճռան սայլերի վրա բարձած՝ դէպի շուկայ ու առուծախի հրապարակներն են տանում իրենց բարիքը, ամեն տեսակ կանաչի, հաւեղէն, պտուղ, կաթնեղէն, փայտ, ածուխ:

Մէկը միւսի ետևից վառարանները սկսում են ծխել իրենց առաւօտեան չիբուխը. ծուխը բարակ թելերով բարձրանում է ծխնելոյզներից խառնւում միւսներին ու բարակ քօղի նման տարածւում քաղաքի վրա: Կը նշանակի կեանքը սկսել է և տներում:

բ.

Եւ ամեն կողմ սկսում է ժրաջան աշխատանքը, էստեղ լուռ, էնտեղ աղմուկով: Աշխատանոցներում կռում են, թակում, սղոցում, կտրում, գործում ու հիւսում. և ձև ու պաշտօն է ստանում երկաթն ու պղինձը, ցինկն ու արճիճը, քարն ու փայտը: Իջնում են բարձրանում, բանում են, շարժւում անհամար ձեռներ. դառնում են, հա, դառնում, շրնչում ու փռնչում հազար գործիք ու մեքենայ:

Լցւում են դպրոցները, լցւում են գրասենեակները, դատարանները, քաղաքային տունը, պոստն ու պետական պաշտօնատեղիները։ Սկսւում է գործն ու ելումուտը նոտարների մօտ, վաճառատներում, մթերանոցներում, ամեն խանութի մէջ, ամեն կրպակի առաջ։

Անթիւ գրիչներ շարժում են առնում, գրում են հա գրում անհամար նամակներ, յօդւած ու լրագիր, դատական գործեր, վարչական կարգադրութիւններ ու հաշիւներ, անվերջ հաշիւներ, թէ անհատական, թէ հանրային։

Ամենքը արագ գնում են գալիս խուռն փողոցներով. արհեստաւոր ու վաճառական, նամակաբեր ու ցրւիչ, պաշտօնեայ ու ոստիկան, բանւոր ու աշակերտ, ծառայ ու աղախին, ամենքը մի գործ ունեն, ամենքը մի հոգ, մի զբաղում։

Ու ամբողջ քաղաքը կարծես մի հսկայական փեթակ լինի, ուր ամենքը վազվզում են իրենց պէտքերի համար, ուր ամենքը աշխատում են իրար պէտքերի համար։

«Մէկն ամենքի համար ու ամենքը մէկի»։

1) Ի՞նչ աշխատանք են անում ձեր տանեցիք ուրիշների համար։

2) Ի՞նչ աշխատանք են անում ուրիշները ձեր տան համար։

3) Որ մեծանաս ինչ ես ուզում դառնաս։ Քո անելիքը ուրիշներին պէ՞տք է թէ ոչ։

---

41. Քրտինք

Աշխատի՛ր դու, չարքաշ մըշակ, քըրտինք թափի՛ր դու անվերջ,
թող քըրտինքով մայր-երկիրը կըշտանայ.
զուր չի անցնի քո տանջանքը. այնտեղ երկրի կըրծքի մէջ
քո քըրտինքը նոր ուժ, նոր կեանք կը ստանայ։

Աշխատի՛ր դու, ուրախ սրտով, քո տանջանքը քըրտնալից
սուրբ է, եղբա՛յր, երկընքից օրհնըւած.
քրտինք թափի՛, և փոխարէն մայր-երկիրը իր կրծքից
քեզ լիառատ կը պարգևի արդար հաց։

Ինչու է քրտինքն ու աշխատանքը օրհնւած։

39. Քրիստափոր Կոլումբոս

ա.

Սրանից մօտ հինգ հարիւր տարի առաջ Հնդկաստանը աշխարհիս ամենահարուստ երկիրներից մէկն էր. այնտեղից արտահանում էին թանկագին ապրանքներ՝ մարգարիտ, սադափ, մետաքսեղէն, ոսկեթել մանւածքներ, թէյ, սուրճ, դարչին, բրինձ։ Վաճառականները հակեր էին կապում, ուղտերին բարձում, կարաւաններ կազմում, ու ճամփայ ընկնում։ Կարաւանները անցնում էին լեռների կիրճերով, աւազոտ անապատներով, օվազիսից օվազիս, քաղաքից քաղաք. ուղտերը կոտորւում էին արևակէզ աւազից ու ծարաւից, մարդիկ հիւանդանում էին, աւազակները կողոպտում էին կարաւաններն ու գերի էին վարում կամ սպանում մարդկանց։ Ամեն տեսակ վտանգների ենթարկւելով, մէկ-երկու տարուց, վերջապէս վաճառականները հասնում էին Միջերկրական ծովի ափերին, որտեղից ապրանքները նաւերով փոխադրւում էր Եւրոպա։

Շատերը արդէն որոնում էին մի այլ ճամփայ դէպի Հնդկաստան, աւելի կարճ ու աւելի ապահով։ Ջենովացի Քրիստափոր Կոլումբոսն էլ ամբողջովին տարւած էր այդ մտքով։

Բախտը նրան գցել էր Պորտուգալիայի մայրաքաղաքը՝ Լիսաբոն։ Նա գիտէր որ երկիրը կլոր է, և համոզւած էր, որ Պորտուգալիայից շարունակ դէպի արևմուտք գնալով անպատճառ պիտի հասնի Հնդկաստան։ Նա դիմեց Պորտուգալիայի թագաւորին, խնդրելով որ նպաստեն իրեն։ Նրան յուսադրում էին, իսկ ծածուկ իրենք մի նաւ պատրաստեցին ու մի պորտուգալացի նաւապետի ուղարկեցին նոր ճամփան գտնելու, որ այդ պատիւը մի օտարի չը վիճակւի։ Նաւապետը զուր շրջեց դէս ու դէն ու ձեռնունայն վերադարձաւ։ Այդ խաբեբայութիւնից զայրացած, Կոլումբոսը թողեց Պորտուգալիան ու դիմեց իր հայրենիքը Ջենովա։ Գնում էր Սպանիայով։ Այստեղ մի վանահայր, ոգևորւած նրա ծրագրով, խորհուրդ տւաւ դիմի Սպանիայի թագաւորին։ Գիտնականները նրա առաջարկը անմիտ էին անւանում, պալատականները ծաղրում էին, երկար ժամանակ թագաւորը խօսք չէր տալիս, վերջապէս երկար տարիներ ամեն խոչընդոտի դէմ կռւելով Կոլումբոսն ու վանահայրը հասան իրենց նպատակին։ Թագաւորը

խոստացաւ օգնի, եթէ Կոլումբոսը բոլոր գտած երկիրները կը հպատակեցնի Սպանիային։

Պալոս նաւահանգստում պատրաստուած էին հին, քայքայուած երեք նաւեր. նաւաստիները ընտրուած էին ամեն տեսակ ոճրագործներից ու յանցաւորներից։ Կոլումբոսը տեսնելով այդ նաւերը՝ սաստիկ մտատանջութեան մէջ էր՝ ճամփայ ընկնի թէ հրաժարուի։ Տասնըութը տարիների ճիգերից ու չարքաշութիւնից յետոյ հրաժարուէ՞ր այս ամփից։ Ուրիշ անգամ էլ կաջողուէր։ Կոլումբոսը որոշեց ապաւինել իր ճակատագրին։

Հէնց որ փչեց բարենպաստ քամին, Կոլումբոսը նաւը ելաւ, հրամայեց խարիսխները քաշեն ու առագաստները բանան։ «Բարի՛ ճանապարհ, բարի՛ ճանապարհ, Աստուած աջողի,» կանչում էր ժողովուրդը ափից, մինչև որ նաւերը աչքից չքացան։

Այդ օրը 1492 թւի օգոստոսի 20-ն էր։

Բ.

Նաւեցին դէպի Կանարեան կղզիները։ Ղեկավարներից մէկը դիտմամբ կոտրեց ղեկը, որ նաւերը ստիպուած լինեն ետ դառնալու։ Բոլորն էլ շփոթւեցին և վատ նշան համարելով պահանջում էին վերադառնան։ Կոլումբոսը մի կերպ ուղղել տւաւ ղեկը և հրամայեց առաջ գնան։ Ամենքը տրտնջում էին. «Իր յիմար քմահաճոյքին է ուզում մեզ զոհի. բոլորիս կորցնելու է։»

Վերջապէս հասան Կանարեան կղզիները։ Ակներև էր որ այդ նաւերով անկարելի էր ճամփորդութիւնը շարունակել անծանօթ ովկիանոսով, անհրաժեշտ էր նորոգել, որի համար մի ամբողջ ամիս պէտք եկաւ։

Ղեկերը նորոգել էին, բոլոր փթած մասերը փոխել, թարմ ջուր, միս, փայտ վերցրել, ու մի օր, մթնշաղից օգտւելով, որ չընկնեն իրենց հալածող պորտուգալացիների ձեռքը, Կոլումբոսը ճամփայ ընկաւ դէպի արևմուտք։ Երբ լոյսը բացւեց, էլ ոչ պորտուգալացիքն էին երևում, ոչ ցամաքը. շուրջը միայն ծով էր ու երկինք, անսահման տարածութիւն։ Նաւաստիներին երկիւղը տիրեց. «Ո՞ւր է տանում մեզ. չորս բոլորը միայն ծով է ու ծով, և օրէօր աւելի հեռանում ենք ցամաքից։ Ձենք ուզում, չէ՛, նոր երկիրներ. թող ետ տանի մեզ մեր հայրենիքը։»

Մի քանիսը զգուշացնում էին թէ ծովային օրէնքները խիստ են և

մահու ու կեանքի իրաւունք են տալիս նաւապետին։

«Մեզ ի՞նչ.—կանչում էին նաւաստիները.—նա մենակ է, մենք շատ. ինչից ենք վախենում, էլ ի՞նչ ենք մտիկ անում։»

Կոլումբոսը լսում էր այս տրտունջները, յորդորում, համոզում, իսկ հարկ եղած տեղը և սաստում, սպառնում։ Վեցերորդ օրը տեսան ջրի երեսին լողացող մի մեծ գերան, ուրախացան, կարծելով որ ցամաքը մօտիկ է. հեռաւոր ամպերը ընդունել էին ցամաքի տեղ։

Շարունակում էին նաւել։ Հասան մի տեղ, ուր ջուրը ծածկուած էր խիտ խոտով, որ խանգարում էր նաւարկութիւնը։ Բոլորն էլ վախենում էին՝ չը լինի թէ ծովի վերջն է ու խոտի տակ խութեր են ծածկուած։ «Նաւերը էս է ժայռերին կը դիպչեն ու կը փշրւեն. ամենքս էլ կը խեղդւենք» մտածում էին նրանք։ Բայց Կոլումբոսը սիրտ էր տալիս՝ «Ձենք խեղդւի. ջրախոտ է, տակը քարեր չը կան»։ Լողում էին խոտի միջով կարծես մի կանաչ դաշտով։ Վերջապէս դուրս եկան այդ խոտերից էլ, կրկին միևնոյն կապոյտ ծովը, միշտ միևնոյն երկինքը։

Էլի մի քանի օր անցաւ, երևացին բազմաթիւ թռչուններ. գիշերները նստում էին կայմերի վրա, բայց արևի ծագելուն պէս թռչում հեռանում էին։ «Եթէ թռչուններ են թռչում, անշուշտ ցամաքը մօտիկ է,» ուրախանում էին նաւաստիները։ Յաջորդ օրը տեսան թռչող ձկներ. մի քանի հատ էլ նաւերի վրա ընկաւ. երբէք այդպիսի ձկներ չէին տեսել։

Բայց զուր յոյսեր. օրեր էին անցնում, ցամաքը չէր նշմարւում։ Նաւաստիները բացէ ի բաց հրաժարւում էին աւելի հեռու նաւելուց։ Կոլումբոսը կանգնեց ապստամբների մէջտեղ ու կարուկ յայտարարեց. «Այսքան ժամանակ եկել ենք, էլի մի երեք օր սպասենք։ Եթէ այս երեք օրն էլ ցամաքը չը տեսնենք, կը վերադառնանք տուն։

Գ.

Ապստամբները խոնարհւեցին. Կոլումբոսը յոյս ունէր որ երեք օրում անպատճառ կը հասնեն ցամաքին։ Շատ նշաններ կային. յատակը չափելով նկատել էր, որ հետզհետէ խորութիւնը պակասում է. թռչունները պտտւում էին արդէն երամներով. կային և փոքրիկ թռչուններ, որոնք ծովափից հեռու թռչել չէին կարողանայ. երեկոները փչում էր մի այնպիսի տաք քամի, որ երբէք ծովից չի փչում։

Էլի մի օր անցաւ, դեռ ոչինչ չէր երևում։ Կոլումբոսն էլ

ներքուստ յուզւում էր, բայց նաւաստիներին խրախուսելու համար յայտարարեց թէ երկու հազար հինգ հարիւր րուբլի է նշանակւած նրան, ով ամենից առաջ կը տեսնի ցամաքը։ Ամբողջ գիշերը մարդիկ չէին քնած. շատերը կայմերի վրա լուսացրին։ Իսկ Կոլումբոսը մտատանջութեան մէջ ինքն իրեն ասում էր. «Եթէ այս օր էլ ցամաքը չերևաց, ինչ պէտք է անեմ։ Նաւաստիները կապստամբւեն ու ամեն ինչ կորած է։»

Լուսաբացից առաջ Կոլումբոսը ելաւ տախտակամած և հեռւում մի կրակ տեսաւ. իր աչքերին չը հաւատալով՝ կանչեց մի նաւաստու ու ցոյց տւաւ հեռուն։ Երկուսն էլ սրտատրոփ նայում էին. կրակը շարժւում էր։ Անկասկած՝ նաւակ էր գնում, իսկ նաւակով ափից շատ հեռանալ ոչոք չէր վստահանայ։ Կոլումբոսի ուրախութեանը չափ չը կար։

Լոյսը նոր էր բացւում, որ առաջաւոր նաւից ձայն տւին. «Ցամաք, ցամա՛ք։» Կոլումբոսի նաւը ամենից ետևն էր, շուտով այնտեղից էլ նկատեցին։ Բոլոր երեք նաւերի վրա էլ մի խելառ ցնծութիւն բարձրացաւ։ Նաւաստիները համբուրում էին Կոլումբոսի ձեռները, ոտները, զգեստի ծայրերը։ «Ների՛, ների՛, Կոլումբոս, որ չէինք հաւատում քո խոստումներին ու ըմբոստանում էինք քո դէմ. ովկիանոս չը տեսած՝ սարսափել էինք։» Իսկ Կոլումբոսը երջանիկ կրկնում էր. «Ամեն ինչ մոռացւած է, ես չեմ բարկանում ձեզ վրա»։

Երեք ամիս անծայր ջրերով նաւելուց յետոյ վերջապէս հասնում էին ցանկալի ցամաքին։

Կոլումբոսը հրամայեց մակոյկներն իջեցնեն ու իր օգնական նաւապետների ու նաւաստիների հետ դիմեց դէպի ափը։ Քանի աւելի մօտենում էին, այնքան աւելի էին զարմանում. ափին բարձրանում էր մի վիթխարի անտառ, որի ամեն մի հսկայական ծառը հազիւ չորս մարդ կարողանար գրկել, ամեն մի տերև երեք մարդ կը ծածկէր։ Ծառերը, ծաղիկները, թռչունները՝ բոլորն էլ այնպէս չէին, ինչպէս Եւրոպայում։ Անտառից դուրս վազեցին վայրենի մարդիկ, մորթին կարմիր, գլխի մազերը սև, երկար ու կոշտ, անմօրուք. ամբողջովին մերկ էին, միայն գլխին փետուրներ ու զարդեր. մարմինն ու երեսը նախշած էին բազմերանգ ներկերով, ականջներին ու ռնգներին օղակներ ու ոսկու կտորներ։ Նրանք ապշած նայում էին նորեկներին։

Ելնելով ծովափը, Կոլումբոսը դրօշակը տնկեց ու յայտարարեց.

րեց նրանից և չուզեց նոյն իսկ ընդունել իր մօտ։ Վշտից, անաջողութիւնից սրտաբեկւած՝ Կոլումբոսը հիւանդացաւ և մեռաւ։ Նրա հետ թաղեցին և նրա շղթաները, միակ պարգևը, որ մնացել էր իրեն այնքան երախտիքների փոխարէն։

Նա մեռաւ՝ հաւատացած որ գտել է Հնդկաստանի արևմտեան կողմերը։ Բայց շուտով իմացւեց որ նրա գտածը մի Նոր Աշխարհ է։ Այդ աշխարհին յետնորդները նոյն իսկ չը տւին Կոլումբոսի անունը. նա կոչւեց Ամերիկա, մի երկրորդական ճամփորդի անունով, որ իր գրքի մէջ առաջին անգամ նկարագրեց այդ նորագիւտ երկիրները։

43. Գարուն

Կռունկները շարան-շարան մեր գլխով
կռկռալով եկան անցան երկնքով.
գա՛-րո՛ւն, գա՛-րո՛ւն աւետեցին միասին.
լսեց, բացւեց նուշ, ծիրան ու կեռասին։

Առուները ծըլվըլալով թռան վեր,
ձորից ելան կաքաւները դէպ սարեր՝
գարնան գալը ողջունեցին միաձայն,
կըչկըչալով օրհներգ ասին բնութեան։

Կանաչ դաշտում գոյն-գոյն սիրուն թիթեռներ
ոստոստում են ուրախ անհոգ վար ու վեր։
Հովիւն ուրախ սըրնգելով՝ դէպ արօտ
դուրս է քըշում արածելու գառն ու հօտ։

44. Շէկօն ու Մարալը

ա.

Գեղեցիկ էին Շէկօն ու Մարալը իրենց հաստ պարանոցով, իրենց լայն ու լերկ գաւակներով, իրենց հարթ թիկունքով և հպարտ, խրոխտ շարժումներով։ Գեղեցիկ էին մանաւանդ նրանց գլուխները։ Զոյգ սրածայր եղջիւրները բարձրանում էին հարթ ու լայն գանգերի վրա և դեղանկար ու սպառնական ձևով աղեղւում էին դէպի ճակատը.

ուռուցիկ ու խոշոր աչքերը իրենց շարժուն գնդերով փայլում էին
ճակատի վրա, ինչպես շիկացած ածուխներ, և լայն ռնգներից նրանց
ուժեղ շունչը դուրս էր գալիս լիքը փնչոցով։
Գեղեցիկ էին Շէկօն ու Մարալը, գյուղի պարծանքն էին, բոլո-
րի սիրո և հիացմունքի առարկան։ Եվ նրանք իրար թշնամի էին,
կատաղի հակառակորդներ։
Ոչոք նրանց չէր տեսել միասին դաշտում կամ ամոլին լծված
գութանի տակ. նրանք արածում ու աշխատում էին ջոկ-ջոկ, իրա-
րից հեռու։
Անողորմ, անհաշտ հակառակորդներ էին։ Երբեք չէին հան-
դիպում իրար Շէկօն ու Մարալը. բայց ամեն մեկը կարծես
իմանում էր, որ գյուղում ինքը մենակ չի, որ իրենից հեռու,
հակառակ կողմի դաշտերում, արածում է մի ուրիշը, իր
հակառակորդը։ Նրանք իրար չէին տեսնում, բայց զգում էին
իրար ներկայությունը հեռավորությունից և երբեմն երբեմն դունչերը
վեր ցցած՝ փնչացնում էին, հոտոտում, փնտրում իրար։
Ամեն գարնան երկու հակառակորդների հանդիպումը դառնում
էր ավելի վտանգավոր, որովհետև ձմրան պարապությունից նրանք
ավելի ուժ ու եռանդ ստացած ավելի կատաղի էին դառնում։ Երբ
արևի առաջին շողերի տակ ծաղիկ ու կանաչ զարդարում էին լեռ
ու դաշտ, երբ առվակները պատռելով սառցե պատյանը կարկաչում
էին կանաչապատ թմբերի տակ, ծառերը իրենց ծաղիկների բուր-
մունքով լցնում էին օդը և թռչունները դայլայլում էին հովիտներում
ու այգիներում, այն ժամանակ Շէկօն ու Մարալը դուրս էին գա-
լիս գոմերից, ինչպես երկու կատաղած վիշապներ։
Մորթիները ձիթած ու փայփլուն, եղջյուրները խնամքով սրած
և պոչերն ու ճակատը կարմիր գույնով ներկած, նրանք արևին ու
լույսին կարոտ, խայտալով վազում էին դեպի դաշտերը, չը նայելով
իրենց գեր ու անհագին մարմիններին։ Ձմեռային գոմի մշտական խա-
վարից մթագնած նրանց աչքերը բոցավառվում ու փայլատակում էին
գարնան արևի շողերի տակ, և նրանք լայն կրծքով շնչում էին կեն-
դանարար ու ջերմ օդը։
Առանձին զգուշությամբ էին հսկում կատաղի կենդանիներին,
մինչև որ աշխատանքների հասա լուծը, խոր ակոսում թաղող ծանր
գութանը կամաց կամաց թուլացնեն նրանց կուլի եռանդը, նրանց
կատաղությունը։

Բ.

Եվ մի անգամ գարնան կռիվը պատահեց յանկարծ։
Մարալն այդ օրը առանձնապես անհանգիստ էր, չէր արածում,
կճղակներով քանդում էր հողը, հոտոտում էր օդի մեջ, տնքում էր,
փնչացնում, ապա դունչը բարձր ցցած՝ մռնչում էր ահագին ձայնով։
Յանկարծ նա թափ առավ և խելագար կերպով վազեց հակառակ
կողմը, ոտքի տակ տալով դաշտեր, արտեր, բանջարանոցներ։ Իզուր
անցավ հոտաղների ջանքերը նրան ետ կանգնեցնելու, իզուր անցան
խարազանների և մահակների հարվածները, Մարալը վազում էր ու
վազում։ Վերջապես նա հասավ մի կանաչազարդ թմբի դիմաց, եղ-
ջյուրները դեմ արեց ու սկսեց քանդել ու հողը ցրիվ տալ, ապա
դունչը վեր ցցեց և ահագին ձայնով մռնչաց։
Եվ յանկարծ որտեղից որտեղ՝ նրան իբրև պատասխան լսվեց Շէկօի
մռնչոցը հակառակ կողմից։ Մարալը աչքերը չռեց, ականջները ցցեց
ավելի լավ լսելու համար, քթածակերն ուռցրեց և այնպես մռնչաց,
որ լեռ ու ձոր թնդաց։ Դարձյալ մի անգամ լսվեց հակառակորդի
պատասխանը և շուտով հեռու բլրակի թիկունքից բարձրացավ Շէկօի
գլուխը։
Ախոյանները իրար տեսան։
Առաջին անգամ երկար տարիներից յետոյ Շէկօն ու Մարալը
տեսան իրար։ Այնուհետև կատարվեց մի զարմանալի բան։ Կենդանի-
ները նախ կանգ առան դեմ առ դեմ, մի առժամանակ գլուխները
դեպի երկինք ցցած, վերջին անգամ տնքացին ահավին ձայնով, փըն-
չացրին քթածակերից և աչքերից կրակ ցայտելով իրար վրա վազե-
ցին կատաղի արագությամբ։
Եկան, եկան և ահագին թափով զարկվեցին իրար։
Նրանց գանգերի թրխկոցը և եղջյուրների ճարճատյունը բռնեց
շրջակայքը։ Սարսափած հոտաղները, վազեցին դեպի գյուղ օգնություն
կանչելու։
Գյուղը ոտքի թռավ։
Հասան...
Կախվեցին գոմեշների պոչերից ետ ետ քաշելու համար. փայտե-
րով, խարազաններով հարվածեցին գլուխներին, դունչերին, ոտներին.
ոչինչ չէր օգնում։ Շէկօն ու Մարալը, հարվածներից ավելի կատաղած,
աշխատում էին ոչնչացնել իրար։ Նրանց արնակալած աչքերը կրակի

պէս վառւում էին և քիչ էր մնում դուրս ընկնեն խոռոչներից․ քթածակերը փնչացնում էին փուքսերի պէս, ոտների ջիլերը կծկւում էին և բացւում, ահագին փորերը ուռչում էին ու կծկւում․ ոսկորները ճարճատում․ Նրանք սեփական պոչերով, ինչպէս խարազանով, կատաղաբար հարւածում էին իրենց մարմինը, ասես աւելի կատաղելու համար, տնքում էին զօրից, եղջիւրներով իրար պարանոցն ու օձիքը քրքրում, իրար ետ-ետ մղում, աշխատելով մահացու հարւած տալ հակառակորդի փորին։ Մերթ նրանք գալարւում էին և աջ ու ձախ եղջիւրներն իրար գցած սեղմւում էին կողք կողքի, մերթ գալիս էին դէմ առ դէմ, իրար մղում ետ ու առաջ։



Արդէն Մարալի աչքն էր պատռւած, Շէկօի կուրծքն ու պարանոցը մի քանի տեղից վիրաւոր, արիւնը ծորում էր երկսից էլ և եղջիւրները կարմիր էին ներկւած, գետինը նրանց ոտների տակ ակօսւել էր վարած արտի պէս, բայց չէին բաժանւում, չէին թողնում և ոչ մէկը չէր մտածում տեղի տալ միւսին։

Զարհուրելի տեսարան էր․

Շէկօն ու Մարալը փշրում, խորտակում էին իրար․ կարծես նրանց երկսին միասին տեղ չը կար երկրի վրա։ Բազմութիւնը սոսկում էր, շւարել էր։

Գ․

«Ջւան բերէք»՝ ճչացին այս ու այն կողմից.

«Շուտով ջւան»․ կանչեցին հօտաղները։

Եւ բերին հաստ ջւանները միաժամանակ գցեցին երկսի կրծքերից և երկու կողմից սկսեցին ետ-ետ քաշել ահագին բազմութեամբ՝ նրանց իրարից զատելու համար։

«Քաշեցէք, քաշեցէք»։

Բազմութիւնը տնքում էր ու քաշում․ արդէն կռւողների գլուխները զատւեցին իրարից, եղջիւրների հազիւ ծայրերն էին հասնում իրար․

«Քաշեցէք, քաշեցէք»։

Բազմութիւնը տնքում էր ու ձգում ջւանները․ կռւողները բոլոր ուժով ճգնում էին վերստին մօտենան, առաջ էին նետւում, գլուխները ցնցում կատաղաբար, խոժոռ աչքերով իրար էին լափում, իզուր։ Ջւանները ձգւում էին ու ձգւում և կենդանիների ահագին մարմինները հեռանում էին իրարից։ Շուտով երկսի արանքում ներս ընկան մահակաւոր ու խարազանաւոր հօտաղներ, վերստին հարւածներ նրանց գլխին ու ոտներին, վերստին ճիչ, աղմուկ, ուրախաձայն բացականչութիւններ, և Շէկօն ու Մարալը իսպառ բաժանւեցին իրարից առանց յաղթւելու։

Եւ ամեն մէկին շրջապատած խարազանաւորների ու մահակաւորների ահագին բազմութեամբ քշեցին հակառակ կողմեր, յանդիմանելով հօտաղներին նրանց անզգուշութեան համար։

Կռիւը վերջացաւ։

Ո՛չ, կռիւը չը վերջացաւ.

Այնուհետև ինչ կատարւեց, ոչոք չէր կարող ասել․ միայն վերստին հնչեց նախ մէկի, ապա միւսը կատաղի մռնչոցը, նրանք համարեա միաժամանակ ետ դարձան, թափ առան բոց կտրած, հեւալով, տնքալով, փնչացնելով, ոտների տակ տալով ամեն ինչ և ամենքին տրորելով իրար վրա վազեցին.

«Փախէ՛ք, փախէ՛ք...»

Բազմութիւնը հազիւ կարողացաւ նրանց ոտների տակից խոյս տալ իրար տրորելով, հրհրելով, ճչալով։

Կատաղած ախոյեանները մի վերջին անգամ իրար վրա գնացին բոլոր ուժով, վերջին անգամ նրանց գլուխները դէմ առ դէմ եկան

ահագին թափով, վերջին անգամ նրանց գանգերը զարկւեցին իրար, ինչպէս կարծր ժայռի երկու կտորներ. զարկւեցին, լսւեց մի խլացուցիչ, մի սարսափելի որոտ, և նոյն վայրկեանին երկու թանձր մարմիններ ետ-ետ գնացին և միաժամանակ խորտակւած գետին ընկան, տնքալով և փնչացնելով։

Բազմութիւնը միաբերան ախ քաշեց, հեռու կանգնած կանայք ճչացին ու ծնկներին տւին, ծերերը գլուխներն օրորեցին վշտով։

Հարւածը զարհուրելի էր, վերջին հարւածը։

Շեկօն ու Մարալը ընկան փշրւած գանգերով, ռունգներից ժայթքեց թանձր, սև արիւնը, աչքերը շաղւեցին, և երկուսն էլ անշնչացան ու ձգւեցին լայնարձակ դաշտում։

Այսպէս ընկան Շեկօն ու Մարալը լայնարձակ, կանաչ դաշտերում։ Գիշերը վրա հասաւ։

Հեռուն, մութ խրճիթների սև յարկերի տակ սգում էր գիւղը։

45. Վե՛ր կաց, գեղջուկ

Արևը ահա փայլում է վերից
գըթառատ սիրով.
անուշ գոլորշին շըղարշի նըման
ճօճւում դաշտերով։
Բացւած բըներից գործի է դիմում
անհամար մըրջիւն.
մայր հողը ծըլնում, գետը տարածում
թովիչ կարկաչիւն։
Հէյ վե՛ր կաց, գեղջուկ, վեր կացէք, եզնե՛ր,
մի՞թէ չէք ըզգում՝
արտերը վաղուց սերմի կարօտից
լալիս են սըգում։

46. Ամենաթանկագին բանը

—Տո՛ւր ինձ այն, ինչ որ ամենից թանկագին է քեզ համար, և ես կը բժշկեմ քեզ,—ասաւ պառաւ վհուկը վիրաւոր թռչնակին, որը մենակ ընկած էր ջրի ափին և մեռնում էր։

Կարմիր արիւնը կաթիլ-կաթիլ ծորում էր նրա կրծքից սպիտակ

աւազի վրա, և կեանքը արագ թողնում էր նրա փոքրիկ մարմինը, որ արդէն սկսում էր սառչել։

—Ամենից թանկագինը, ի հարկէ, կեանքն է,—մտածեց թռչնակը։—Բայց մի՞թէ կը խլի բարի վհուկը ինձնից այն կեանքը, որ ինքը խոստանում է ինձ տալ։ Բարի վհուկը երևի հանաք է անում։

Եւ նրա վրա ուղղելով իր հանգչող աչքերը՝ թռչնակը շշնչաց.

—Լաւ, բժշկի՛. կը տամ քեզ այն, ինչ որ ամենից թանկագինն է ինձ համար։

Վհուկը դիպաւ նրա վէրքին իր գաւազանով, վէրքը ողջացաւ, և թռչնակը ուրախ վեր թռաւ, կենդանացած ու առողջ։

—Իսկ հիմա տուր ինձ թևերդ,—ասաւ վհուկը։

—Ո՛չ,—բացականչեց թռչնակը, ցնցւելով.—ո՛չ երբէք։

—Մի՞թէ թևերը ամենից թանկագին բանը չեն քեզ համար։

—Հէնց դրա համար է որ չեմ կարող տալ,—կամացուկ շշնչաց թռչնակը։—Առ իմ կեանքը։ Աւելի լաւ է բոլորովին չապրեմ, քան թէ ապրեմ և չը կարողանամ թռչել։

—Թռի՛,—ասաւ վհուկը,—ես չեմ կամենում քո մահը։ Բայց յիշի՛ր որ ամենից թանկագին բանը կեանքիցն էլ թանկ է։

47. Ողջոյն ձեզ

Ողջո՜յն ձեզ, գարնան նորեկ
թըռչուններ,
որ ծըլւըլում էք կանաչ թըփերում.
որքա՜ն ցընծութիւն, որքա՜ն կեանք
ու սէր
եռում է ձեր պարզ, անհոգ երգերում։

Խուռն երամով ազատ, համարձակ
մերթ սըլանում էք դուք նետի նըման
դէպի վեր՝ անհուն եթեր կապուտակ՝
մերթ իջնում երկիր՝ թըփերի վըրան։

Ողջո՜յն ձեզ, գարնան նորեկ թըռչուններ,
որ ծըլւըլում էք կանաչ թըփերում.
հեռու մեր կեանքի հոգեմաշ, տըխուր
վըշտից ու ցաւից, բընութեան գըրկում։

48. Նախրապան Մանուկը

ա.

Նախրապան Մանուկը վեր էր կենում տեղիցը նախորդ օրւայ դադրածութիւնից խոնջած անդամներով, գնում էր առուի վրայ երեսին մի քանի չոփ էր տալիս, փէշով սրբում ու դէմքի աղօթարանը դարձած՝ մի քանի անգամ խաչ էր հանում։ Ապա իր նախաճաշիկը, ինչ որ իր կին Շուշանը պատրաստել էր, փաթաթում էր մի կակուղ հացի մէջ ու կծելով դուրս էր գալիս, փայտը ձեռին կանգնում Ազիզենց կալումը։ Յետոյ երբ նախրի տաւարը գիւղից կտրւում էր, նախրապանը մտնում էր տուն, հացը շալակը կապում, մի մեծ գաւաթ գինի էլ կոնծում ու գնում իր բանին։ Ուտիս օրերը մի կտոր պանիր կը լինէր Մանուկի լաւաշի մէջ կամ կէս կողակ ձուկը, իսկ պասերին՝ աղը դրած բոխ կամ ողորմակոթ, իսկ եթէ գարունքն էր՝ իր կնոջ քաղած խաշած աղցաններից գարնան-ականջ, առւի-կարոս, սիբեխ, թելուկ կամ որևէ այդպիսի աղցան։

Նախրապան Մանուկի տան ուտելիքից ոչ մի բանը փողով չէր ստացւում։ Ինչպէս նախրարած նա ամեն շաբաթ հացը տաւարատիրոջ տներիցն էր հաւաքում, ամեն տանից մի-մի լաւաշ. իւղ ու պանիրը նրա համար ինքն իրեն էր ընծայ գալիս հարևանների տանից. տարեկան կողակն ու գինին, ինչպէս նախրապանի իրաւունք ունէր իր ժամանակին հաւաքելու. պաս օրերի համար աղը դրած ուտելեղէնները Մանուկի կինն էր գնում քաղում, և կամ ինքը նախիրը արածեցնելիս ժողովում էր դաշտիցը և երեկոյեան հացի տոպրակի մէջ կապած շալակին տուն բերում։

Ամեն բարութիւն Մանուկի տանը անպակաս էր։ Ոչ մի այգետէր էնքան շատ բերք չէր կախան անի ձմեռուայ համար, ինչքան Շուշան քուրիկը։ Ամեն Աստծու տւած օրը նրանց բաժին կը գար, ոչ-մի բանից չտես չէին մնում։

Նրանց հագնելիքն էլ տանիցն էր դուրս գալիս։ Շուշանը իրենց համար բաժին եկած մրգեղէնը միշտ փոխում էր գիւղի կողքով իրենց տան առաջից ոչխար անցկացնող քրդի կամ չոբանքեարի հետ բրդի վրա, լւանում, գզում, մանում, կարում, հագցնում. բամբակեղէնն էլ նա ինքն էր մանում, իսկ բամբակը որևէ հարևանի տղի ձեռքով դաշտեցիների հետ մրգով փոխել էր տալիս։

բ.

Երեկոները երբ նախրապանը ետ էր դառնում, ողջ գիւղի տաւարը տեղաւորում էր, տէրէց տէր էր անում և գալիս էր իր տունը, համբուրում իր երեխին, փառք էր տալիս իր արարչին ու կնոջ հետ նստում էին սեղան, մի կտոր հալալ հաց ուտելու։ Այնուհետև Մանուկը պառկում էր՝ իր բեզարած ջաները դինջացնելու։

Շատ անգամ Մանուկը սրտի ուրախ չաղ ժամանակը՝ հանդումը պատահած անցքերը հպարտ-հպարտ քաղցր-քաղցր պատմում էր իր Շուշանին, մանաւանդ եթէ գայլի ձեռքիցը մի արջառ էր խլած լինում, կամ նախրիցը փախս առած մի կով էր գտել, մի սարսափելի ձորից հանել վերև։ Այսպիսի պատմութիւնները շատ մեծ ախորժակով էր անում Մանուկը, հետն էլ կնոջ առաջին ուռած-ուռած պարծենում էր, որ թէև ինքը մի նախրապան է, բայց մի աչքով չը պիտի մտիկ տալ իրեն։

Ինքը Մանուկը մի բարձրահասակ մարդ էր, երկար սրած բեղերով, խոշոր ու սուր սև աչքերով, ահարկու ձայնով և յաղթանդամ մարմնով։ Նա իր հեզ բնաւորութիւնովը բոլորի աչքին սիրելի էր եղել, իր հսկայական ուժովը գրաւել էր ամբողջ գիւղի յարգանքը։

Շրջակայքի գողերից շատերը Մանուկի բռունցքի ուժը փորձել էին, երբ որ կամեցել էին մի կով կամ մի արջառ նախրից փախցընեն։ Ոչինչ սուր չէր բանեցնում մեր Մանուկը, նրա զէնքը իր կոմբալագլուխ մխոտած հոնի դագանակն էր։ Քանի սրերի բերաններ էտ գաւազանի վրա փշրւել էին։ Գողերը մին-մին անիծելիս՝ առած էին շինել ասում էին. «Նախրապան Մանուկի դագանակին հանդիպես դու»։ Էս էլ պէտք է ասել, որ էտ ահարկու մարդը ոչ մէկին վնաս չէր տւած. տաւարագող եկողին մի քանի լաւ, «զորս դու պատւիրեցեր», բռունցքներ հասցնելուց յետոյ, գլխին էլ մի քանի գայլի աւետարան կը կարդար ու բաց կը թողնէր։ Էլ երբ էր գժւել էն մարդը Մանուկի նախրին խէթ աչքով մտիկ տայ, խելքը հացի հետ հօ չէ՞ր կերել։

Ահա հէնց այս էր պատճառը, որ Մանուկը տասնըհինգ տարի էր գիւղի նախրապանութիւնը իրեն էր սեփականել։ Նրա միւս ընկերները տարէնը մինը, համարեա, փոխւում էին, իսկ ինքը կար ու կար, և ինչպէս միշտ պարծենալով կրկնում էր, քանի կենդանի էր՝ պէտք է լինէր։

49. Զատիկ

Տես, գեղածիծաղ զարթել է բնութիւն,
Թաւիշ կանաչը ծածկել է դաշտեր,
Թարմ կոկոններով ծառն է զարդարուն,
լեռներից կայտառ վազում են ջրեր։

Ցնծութեան ձայներ են լըսւում օդում.
արեւը շողուն, երկինքն է վըճիտ.
վիշտը մոռացւած, հոգին է խընդում,
ամենքի դէմքին բախտաւոր ժըպիտ։

Փըրկիչը յարեաւ. յարեաւ կապանքից
բնութիւնն ազատ ու կանաչագեղ
և արդ տօնում է կարծես, բերկրալից
իր յաղթանակի հանդէսը շքեղ։

---

50. Մեր պարտէզը

ա.

Մանուկ հասակում շատ էի սիրում ծառ բարձրանալը։ Օրւայ մեծ մասը անց էի կացնում ծառերի վրան։

Գիտէք, որքան լաւ է բարձր ծառի վրայից դիտել շրջակայքը։ Սիրում էի նստել մի բարձր-բարձր ճիւղի վրա, այնքան միայն, որ նա չը կոտրւէր իմ ծանրութիւնից. և նայում էի հեռւում երևացող գեղեցիկ կապոյտ լեռնաշղթային, արծաթափայլ լայն գետին, որ հոսում էր նրա ստորոտով, հեռաւոր գիւղերին, որոնց միայն այգիներն ու արտերն էին նկատւում. արևի մայր մտնելը, ամպերի գնացքը կապոյտ երկնակամարի վրայով, թռչունների թռիչքը օդի բարձր շերտերում սիրելի էին ինձ անչափ անչափ։

Աննկատելի կերպով ես անց էի կացնում ամբողջ ժամեր ծառի վրա նստած։ Տանը գիտէին, որ եթէ չեմ երևում, նշանակում է գտնւում եմ մի որևէ ծառի վրա։ Եւ շատ անգամ ծաղրի էի ենթարկւում այս աստիճան ծառ բարձրանալ սիրելուս համար։

Այդպէս ես սիրում էի նստել և դիտել բնութիւնը, սիրում էի երգել և իմ երգը լսւում էր հեռու, հեռու։

բ.

Գեղեցիկ էր մեր պարտէզը։ Նա չորս կողմից շրջապատել էր մեր սպիտակ տունը, որ նոյնպէս գեղեցիկ էր իր բարձր պատշգամբներով, մեծ-մեծ լուսամուտներով, և մի դղեակի տպաւորութիւն էր անում նայողի վրա։

Չը կար մի թիզ տեղ մեր պարտէզում, որ մշակւած չը լինէր։

Կլոր աւազանը, որ գտնւում էր պարտէզի ամենալաւ տեղում, գեղեցիկ պատշգամբի առաջին, ունէր շատրւան, որից ջուրը անդադար խփում էր մի քանի մետր բարձրութեամբ և ջրի շիթերը արևի ճառագայթների տակ գոհարի նման թափւում էին կրկին աւազանի մէջ։

Վարդի թփերը, անուշաբոյր ծաղիկների գեղեցիկ մարգերը շըրջապատել էին աւազանը, դա մեր դրախտ-պարտէզի ամենասիրուն անկիւնն էր։

Շատրւանի միօրինակ ձայնը մի քաղցր մեղեդի էր ծաղիկների համար և երբ տապ օրերին մեղմիկ քամին փչում էր, ծաղիկները շարժելով իրենց կապոյտ, կարմիր, դեղին, սպիտակ գլուխները՝ կարծես յայտնում էին իրենց շնորհակալութիւնը, որ բուսել են քաղցրահնչիւն և զովարար աւազի շուրջը։

Մեր պարտէզի բոլոր ծառերն էլ պտղատու էին։ Սալորի ծառերը կազմում էին մի ամբողջ շարք, խնձորենիքը մի երկրորդ, մի երրորդ շարք տանձի ծառերն էին, կային և նշի, դեղձի, կեռասի և ուրիշ պտղատու ծառեր։

Գարնանը, երբ մէկը միւսի ետևից ծաղկում էին ծառերը սպիտակ-վարդագոյն ծաղիկներով, օդի մէջ տարածւում էր մի քաղցր բոյր, իսկ ժրաջան մեղուները արագութեամբ մտնելով ծաղիկների խորքերը ծծում էին անյագ մեղրի հիւթը և հաւաքում փոշին և կարծես ցաւում էին, որ անկարող են այդչափ միլլիոնաւոր ծաղիկների ամբողջ հիւթը և փոշին հաւաքելու։

Ինչպէս է ձեր պարտէզը։

51. Գետակն ու աղբիւրը

Գետակը ասում է.
Խոր ձորեր ոլոր-մոլոր
տալիս եմ հազար մանէման,
ճամփէս քարափներ խոլոր՝
պանդուխտ եմ, ամա՛ն, աման.

Ա՛ն. աղբիւրը ասում է.
Ի՞նչ սոսկալի քարափ է սա.
մէջէմէջ ու մութումութ.
հազիւ մի լոյս աշխարհք ընկայ,
գնամ գետին հասնեմ շուտ։
Կա՛ց, սպասի՛, կաց մի հասնեմ.
Դէ՛, սպասի, տես, գալիս եմ։

Գետակը ասում է.
Դէ՛, շտապի, ե՛կ, շուտ արա.
վա՜յ, կողքերս, վա՜յ. ես մեռայ...
Մի՛ նայէք ինձ այդպէս, ժայռեր,
չեմ դիմանայ ձեր աչքի սևին.
ճամփայ տւէք, անցնեմ, ձորեր,
իմ կապտաչեայ հասնեմ ծովին։

Քարափները ինչ են ասում, ծովն ինչ է ասում,

52. „Գրողի մեքենան“

ա.

1807 թւի օգոստոսի 11-ին Ամերիկայի Նիւ-Եօրկ քաղաքի գրեթէ բոլոր բնակիչները խռնւել էին Հուդսոն գետի նաւահանգիստում։ Ամեն մէկը ուզում էր տեսնի թէ ինչպէս պիտի բանի մեքենագէտ Ռոբերտ Ֆուլտոնի հնարած նաւը, որը իբր թէ պիտի գնար առանց քամու և՛ հոսանքով, և՛ հոսանքի հակառակ։

Ափի մօտ երեւում էր մի տարօրինակ նաւ, առանց կայմի, առանց առագաստի, մի հաստ ծխնելոյզ էր միայն տնկւած մէջտեղից, մի մի ահագին անիւ էլ ամրացրած կողքերին։

—Տեսէ՛ք, տեսէ՛ք,—ծիծաղում էր մի ծերունի նաւաստի ամբոխի միջից,—մի ամբողջ գործարան է դրել նաւի վրա։ Գլուխս կտրել կը տամ, թէ որ ծանրութիւնից յատակը չը գնայ։ Այսպէս էլ անխելքութի՜ւն։

—Տղե՛րք, սայլ է շինել. ջրի երեսին անիւներով է ուզում ման գայ։ Էյ, սայլապան Ֆուլտոն,—ծաղրում էր մի ուրիշը։

—Նայեցէ՛ք, նայեցէ՛ք,—յանկարծ կանչեց ամբոխը, — մեքենան վառում են։

Ծխնելոյզից քուլա-քուլա ծուխ բարձրացաւ, մեքենան սկսեց վշշալ։ Տախտակամածի վրա յուզւած ման էր գալիս մի քառասուն տարեկան տղամարդ ու հրամաններ արձակում։

—Ֆուլտո՛ն, Ֆուլտո՛ն,—աղաղակեց մէկը ափից։—Էն աշխարհում պապիս բարև արա ինձանից։

Միահամուռ հռհռոցը խլացրեց այս ծաղրանքը, ամեն կողմից սկսեցին շւացնել ու կանչել.

—Բարի ճանապարհ, «խելառ Ֆուլտոն»։

Այս անունն էին դրել տարօրինակ նաւին, որի ճակատին մեծ տառերով գրւած էր՝ «Կլերմոնտ»։

Յանկարծ շոգենաւից լսւեց ականջ ծակող մի սուլոց։ Ամբոխը պատասխանեց աւելի անսանձ շւոցներով ու չարախնդաց ճիչերով։

Անիւները պտտւեցին, շոգենաւը ցնցւեց ու սկսեց ափից հեռանալ, սկզբում շատ դանդաղ ու ծանր, իսկ յետոյ աւելի ու աւելի արագ ու թեթև։ Շւոցն ու ծիծաղը մէկ անգամից կտրւեց. ապշած, աչքերը չռած նայում էր ամբոխը, ու յանկարծ հազարաւոր կուրծքերից դուրս թռաւ մի անզուսպ բացականչութիւն. «կեցցէ»։ Ժողովուրդը վազում էր ափով շոգենաւի ետևից, մինչև որ նաւը աչքից անհետացաւ, ուղևորւելով դէպի Օլբանի, գետն իվեր։

Բայց Ֆուլտոնը ուշք չէր դարձնում ոչ ամբոխի շւոցներին ու ծաղրանքին, ոչ էլ հիացմունքին. նա լարւած հետևում էր իր նաւի ընթացքին. մէկ արագացնում, մէկ դանդաղեցնում էր, մէկ աջ էր ուղղում, մէկ ձախ, ու շարունակ դիտում էր՝ չը կա՞յ արդեօք որև է պակասութիւն։ Հետզհետէ երջանկութեան ու հպարտութեան զգացմունքը լցնում էր նրա հոգին, որ այնքան տանջւել էր այդ մեծ նպատակին հասնելու համար։

Բ.

Մի շաբաթից յետոյ տեղական լրագիրներում լոյս տեսաւ մի յայտարարութիւն, որի մէջ Ֆուլտոնը յայտնում էր, որ շոգենաւը ամեն չորս օրը մէկ անգամ երթեւեկելու էր Նիւ-Եօրկի և Ալբանիի մէջ, դուրս գալով առաւօտեան և յաջորդ օրւայ իրիկունը տեղ հասնելով։

Նշանակւած օրը նորից Նիւ-Եօրկի ամբողջ գետափը ծածկւած էր ժողովուրդով, որ եկել էր տեսնելու թէ ով է լինելու այն յանդուգնը, որ սիրտ կանի ու կը մտնի այդ «Գրողի մեքենան»։

Ֆուլտոնը իզուր բարձրաձայն դիմեց մի քանի անգամ ամբոխին, հրաւիրելով ցանկացողներին իրեն հետ ուղևորւեն Ալբանի, բայց բոլորն էլ ետ ետ էին քաշւում շոգենաւի մօտից, թէև տեսնում էին որ բացի Ֆուլտոնից նաւի վրա կային և ուրիշ ծառայողներ։ «Սատանի հետ է ընկերացել»—խօսում էին ամբոխի մէջ։

Շոգենաւը ճամփայ ընկաւ։ Գետափնեայ գիւղացիք, մանաւանդ կանայք և երեխաները ճչում ու լալիս էին, հէնց որ հեռւից նշմարում էին այդ «հրէշը», որ ծուխ ու բոց էր ժայթքում և ահռելի վշշում էր։ Ճամփին պատահող նաւերի նաւաստիները սարսափահար կանչում էին՝ «Վիշապ, վիշապ» ու թաքնւում տախտակամածի տակ։ Ֆուլտոնը մենակ կանգնած էր շոգենաւի վրա և տխուր մտածում էր...

Գ.

Նրա մտքով անցնում էր իր ամբողջ անցեալը, զրկանքներով, հիասթափումներով, չարքաշութիւնով լի անցեալը։ Հօրը չէր յիշում. նա մեռել էր, երբ ինքը դեռ երեք տարեկան էր։ Մայրը օրավարձով լւացք էր անում, դաշտում աշխատում կամ դռնէ դուռը կար անում։ Իսկ տանը լիքը եղբայրներ ու քոյրեր։ Ռօբերտը այնուամենայնիւ դպրոց էր գնում, գրել կարդալ սովորում։

Յիշեց Ֆուլտոնը թէ ինչպէս աշակերտութիւն էր անում ոսկերչի մօտ, ապա նրանից հեռացաւ և պարապում էր պատկերահանութեամբ։ Երանի այն օրերին. ինքը այնպէս հաւատում էր թէ առաջնակարգ նկարիչ է դառնալու։ Ու յանկարծ Ռօբերտի աչքի առջև կանգնեց մօր անմոռանալի կերպարանքը. ո՜րչափ երջանիկ էր նա, երբ որդին իր խնայողութիւններով գնեց մի կտոր հող, մի տնակ և տնտեսութեան բոլոր պարագաները ու այդ ագարակի մէջ բնակեցրեց պառաւին։

Յետոյ սկսւում են թափառումները Անգլիա, Ֆրանսիա, ուրիշ երկիրներ և հիասթափութիւն. համոզւում է որ նկարչութեան տաղանդ չունի ու տարւում է մեքենագործութեան... Ի՜նչքան անքուն գիշերներ, սոված օրեր է անց կացրել իր ամենագլխաւոր նպատակին հասնելու համար և այդ նպատակը եղել է մարդկութեանը մի այնպիսի նաւ տալ, որ շոգու միջոցով ազատ ման գայ թէ հոսանքի և թէ հակառակ ուղղութեամբ։ Եւ ահա այժմ, երբ իր երազանքը իրականացել է, հէնց իր հայրենակիցներն են, որ երես են դարձնում իրենից...։

Դ.

Միւս առաւօտ Ֆուլտոնը կրկին մէկ երկու ժամ իզուր սպասեց ճամփորդի. ոչ ոք չէր երևում. ամբոխը լուռ կանգնած էր ափին։

Յանկարծ չէր ուզում հաւատալ իր աչքերին. ամբոխը ճեղքելով՝ շոգենաւի սանդուխքով սկսեց բարձրանալ մի լրջմիտ եանկի ճամփի պայուսակը ձեռքին։

—Ի՞նչ էք կամենում,—հարցրեց Ֆուլտոնը։

—Չէ՞ որ դուք յայտարարել էիք թէ ճանփորդներ էք փոխադրում Ալբանիից Նիւ-Եօրկ։ Ստացէք փողը։

Ու մեկնեց փողը։ Ֆուլտոնը, յուզմունքից չէր կարողանում խօսի։

—Այստեղ վեց դոլլար է (12 ռուբլի). գուցէ քիչ է,—հարցրեց ուղևորը տարակուսած։

—Ո՛չ, ո՛չ.—բացականչեց Ֆուլտոնը՝ արտասուքը աչքերին, սեղմելով պարոնի ձեռքը։—Հէնց այդքան է նշանակւած։ Բայց հասկանո՞ւմ էք, սա առաջին վարձատրութիւնն է, որ ստանում եմ իմ բազմամեայ տառապանքներիս համար, և դուք առաջին մարդն էք, որ ձեր կեանքը վստահանում էք ինձ։ Ես կուզենայի ձեզ հետ մի շիշ գինի խմեմ այն վստահութեան համար, որով վերաբերւեցիք իմ նաւին, բայց այժմ ես այնքան աղքատ եմ, որ չեմ կարող գնել այդ մի շիշ գինին։ Գուցէ երբ և իցէ աւելի լաւ հանգամանքների մէջ իրար հանդիպենք, այն ժամանակ մենք միասին մի քանի շիշ դատարկենք ի յիշատակ այս օրւայ։

—Մի՛ վհատիք,—ընդհատեց նրան ուղեկիցը.—ապագան ձերն է։

Ե.

Վերջը նրանք ճիշտ օր նորից պատահեցին և Ֆուլտոնը միշտ առանձին խանդաղատանքով էր խօսում իր «առաջին ուղևորի» մա-

սին։ «Այդ մարդը ինձ վստահացաւ,—ասում էր նա,—երբ դեռ ոչ ոք չէր վստահանում»։

Անծանօթի գուշակութիւնը կատարուեց։ Հէնց իր կենդանութեան օրով Ֆուլտոնը տեսաւ, ինչպէս շոգենաւերը երեւացին Ամերիկայի ուրիշ գետերի վրա էլ, նոյնպէս և Եւրոպայում։ Նրա մահից մի տարի առաջ շոգենաւը առաջին անգամ կտրեց անցաւ Ատլանդեան ովկիանոսը՝ Նոր Աշխարհից Հին Աշխարհը։

Երբ 1815 թւին Ֆուլտոնը մեռաւ, ամբողջ Նիւ-Եօրկը սուգ հագաւ։ Թաղման օրը բոլոր պաշտօնատեղիներն ու արհեստանոցները փակուեցին, բոլոր բնակիչները գնում էին մեծ մարդու դագաղի ետեւից դրօշակները պարզած։ Իսկ նաւահանգստից անընդհատ որոտում էին երեսուն ահագին թնդանօթներ նրա նոր շինած՝ պատերազմական վիթխարի շոգենաւի վրայից։

Այդ շոգենաւը, ուր վեց հարիւր նաւաստի պիտի ծառայէր, կոչւում էր «Ֆուլտոն»։

1) Ամբոխը սկզբում ինչո՞ւ էր ծաղրում Փուլտոնին։ Ինչո՞ւ էին վախենում նրա «հրէշից»։

2) Ի՞նչ նշանակութիւն ունի մարդկութեան համար շոգենաւի գիւտը։

53. Համբարձում

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալւան
զուգել են հանդեր նախշուն գորգերով,
փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
վիճակ հանելու աշխոյժ երգերով.

«Համբարձում, եա՛յլա,
եայլա ջան, եա՛յլա,
սև սարեր, եայլա.
եայլա ջան, եայլա։»

Երգ ու բոյր խառնած,
թև-թևի բռնած
զուգում են լեռներ,
ծաղիկ են քաղում,
ծաղկի հետ խաղում,
ինչպէս թիթեռներ։

Համբարձում եայլա,
եայլա ջան, եայլա,
լաւ օրեր, եայլա,
եայլա ջան, եայլա։

Եկաւ Համբարձում
ծաղկով զարդարուած,
մեր բախտին հարցում.
«Ո՞վ է մեզ գրուած»։

Դէ հանի՛, ա՛ղջի,
վիճակն ի բարին,
երգերով գովենք
էն իգիթ եարին։

Համբարձում, եայլա,
եայլա ջան, եայլա,
հուր սրտեր, եայլա,
եայլա ջան, եայլա։

Թընդում են երգեր, խընդում են սրտեր
ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
ելնում է մէկին իր երազն ու սէր,
միւսի մուրազը սրտումն է մնում։

Պըտոյտ է տալիս վիճակը նորից
շըղարշը գլխին ծաղիկ ծաղկամէր,
թընդում «ջան գիւլում» մատաղ սրտերից,
հետը գլգլում էն ծաղկոտ սարեր։

Ձեզ մոտ ինչպէս են տօնում Համբարձման օրը։

54. Երասխի վրայով

ա.

—Դէհա, քշում եմ, նստեցէք...

Միայն հայրս էր մնում դուրսը։ Բազմաթիւ գիւղացիների մէջ կանգ առած՝ խօսում էր նրանց հետ և հրաժեշտի բարևն էր տալիս։

Ամենքս նստել, տեղ էինք բռնել այդ մեծ ֆուրգօնի մէջ, տախտակէ կամարի տակ կծկւած։

Գնում էինք, ամբողջ ընտանիքով և ընդմիշտ. գաղթում էինք գիւղից։

Շարժւեց ֆուրգօնը, հեռացրեց մեզ գիւղի տեսքից, նրա դաշտ ու լեռներից, մօտը հոսող և այժմ այնպէս ուրախ փայլող գետակից...

Պէտք է որ տասը-տասներկու տարեկան լինէի մեր այդ գաղթականութեան ժամանակ։

Ի հարկէ, ես էլ ընկերներ ունէի, ունէի և իմ սիրած անկիւնները. բայց տխուր չէի և ոչ էլ ցաւում էի գիւղից հեռանալուս համար։

Չը գիտեմ ինչու էր այդպէս։ Սրտեօք լաւ ընկերնե՞ր չունէի, թէ՞ մանկական թեթևամտութիւն էր այդ։

Ընդհակառակը, այդ ճամփորդութիւնը զւարճացնում էր ինձ։ Առաջս փռւած էին ընդարձակ, ժպտուն դաշտեր՝ լի բազմատեսակ և գոյնզգոյն ծաղիկներով. կարկաչում էին առւակները, ճչւում էին թռչունները և մեր ֆուրգօնը վազում, գլորւում էր այդ ամենի միջով։

Մի քանի անգամ ցած թռայ ֆուրգօնից, ծաղիկների փնջեր դըցեցի ներս, ծառերից ճիւղեր կտրտեցի, յետոյ նորից հեծայ ֆուրգօնի հետևում իմ տոպրակի վրա, ու կանչեցի եղբայրներիս.

—Դէհ, տղերք, մի բան երգենք...

Ձայնակցեցին, ես մի երգ սկսեցի. բայց շուտով ստիպւեցինք լուռ կենալու, որովհետև ֆուրգօնի ցնցումները խայտառակ կերպով փշրտում ու ջարդում էին թէ մեր կողերը և թէ մեր երգը։

Այդպէս էր ահա, որ դուրս եկանք իմ հայրենի գիւղից և գաղթեցինք դէպի հեռու աշխարհներ։

բ.

Ցնցեց, անխիղճ կերպով ցնցեց մեզ մեր ֆուրգօնը մինչև երեկոյ։

Մութին հասանք մի գիւղ. իսկ միւս առաւօտ շուտով դարձեալ լցւեցինք մեր արկղի մէջ և սկսեցինք իջնել դէպի մի աւազոտ ու ընդարձակ դաշտ՝ անցնելով կոյտ-կոյտ բլուրներից։

Օհ, դա՜շտ եմ ասում, բայց աւելի ճիշտ կը լինէր ասէի՝ անապատ։

Ոչ մի ծառ։ Նոյն իսկ խոտը այնտեղ քիչ էր, դեղնած ու չորացած։ Շուրջդ ամբողջ աւազ է, բայց աւելի հող ու անտանելի փոշի։

Եւ ինչպիսի՜ փոշի։ Ամպ, կատարեալ ամպ էր, որ շրջապատում էր մեր ֆուրգօնը։

Էլ սև ոչինչ չը մնաց։ Փոշին շերտ կապեց մեր շորերի ու մազերի վրա. քամին սուրաց ու սուրաց. մի տաք, խեղդող քամի, մինչև որ վերջապէս հասանք աւազների և կարողացանք բանալ աչքներս ու բան տեսնել։

Եւ առաջին բանը որ տեսանք՝ զարմանքից կանչեցինք ամենքս։

Ուղիղ մեր դիմաց, ծանր ու մեծ՝ սահում գնում էր վերևից ներքև մի լայն, շա՜տ լայն գետ, պղտոր ու կարմիր ջրերով։

Օհ, ինչպէս ծանր էր գնում նա և ինչպէս շքեղ էր։

—Երա՜սխ,—կանչեց հայրս,—Երասխ գետն է։

Գ

Քիչ յետոյ մեր ֆուրգօնը կանգ առաւ ուղիղ գետափին։ Ցած իջանք։ Բեռները բոլոր իջեցրին, մի մեծ կարպետ փռեցինք գետնին, մայրս սփռոցը բացաւ և նստանք ճաշի։

Գետեզրը այդտեղ ամայի էր։ Մի հողաշէն խրճիթ միայն կար, մէջը զինւորներ, որոնք ներս ու դուրս էին անում, հօրիցս ինչ որ թղթեր ուզեցին, ներս տարան և ետ բերին տւին, յետոյ, երբ քիչ մեզ զննել էին՝ թողին հեռացան։

Հայրս բացատրեց մեզ, որ գետի միւս ափը պարսկական հող էր, և մեզնից այստեղ, ռուսաց հողում, անցագիր հարցրին ու թոյլատրեցին սահմանն անցնելու։ Անցագրի պաշտօնատունը և մաքսատունը գտնւում էին մեզնից բաւական հեռու, ցածում։

Ճաշը վերջացնելուց յետոյ, մենք երեխաներս գետափ իջանք և զննել սկսեցինք եզերքին կպած մի մեծ նաւ։

Այդպէս նաւ իսկի չէի տեսել պատկերի վրա, իսկ մեր թղթէ նաւակները բոլորովին ուրիշ տեսակ էին։ Սա մի խոշոր արկղ էր. ուղղակի սնդուկ, չորս կողմը փայտէ վանդակ շինած։ Մի երկար ձող էլ, որ թիակը պէտք է լինէր, արկղի միջից պարզւում գնում էր և խրւում ջուրը։

—Լաստ է.—հասկացրեց մեզ հայրս, որ մօտ էր եկել։

Դրանո՞վ էինք միթէ անցնելու։ Այդ ջրոտ, ցեխոտ ու լպրծուն յատակի վրա՞ էինք հաւաքւելու։ Իսկ մեր ֆուրգօ՞նը, ապրա՞նքը, ձիե՞րը։

—Կը տեսնէք.—ժպտաց հայրս—բոլորն էլ կանցնեն։ Գնացէք առայժմ գետափից հեռու։ Մի՛ մօտենաք ջրին։ Այստեղ ափերը փլւում են յանկարծ։ Իսկ եթէ ջուրն ընկաք, էլ պրծնելիք չի լինի։

—Կը խեղդւե՞նք։

—Եւ ինչպէ՜ս...—ասաւ մեծ եղբայրս—ա՛յ, այսպէս կը խրւես ջրի մէջ, յետոյ, ղօ՜լ - ղօ՜լ - ղօ՜լ... Ջուրն ու ցեխը կը լցւի փորդ ու վիզդ... Ջրի տակը։ Մէկ էլ էն կը տեսնես՝ որ ծովն ես հասել...

—Իրա՞ւ, ինչ ցեխո՜տ է։

—Կարմիր ցեխ է։

—Կասես արիւն լինի.. Լերդացած ու հողախառն արիւն։

Հայրս, որ հեռացրել էր մեզ գետից, նայեց ջրերին և ասաւ տխուր.

—Օ՜, Երասխը շատ ու շատ արիւն է խմել, անթիւ դիակներ քշել-տա-

րել ու այս երկրի բնակիչներից հազարաւորների խեղդոտել... Արիւնխում գետ է դա։

Ու լռեց։ Սպասում էինք, որ էլ խօսէր. պատմէր՝ թէ դա ինչ արիւն էր, ինչ դիակներ, երբ և ինչո՞ւ։

—Հայրի՛կ,—ասի ես — պատմի խնդրեմ։ Ի՞նչ դիակներ են. գե՞տն է մեծացել, թէ՞ կռիւ է եղել այստեղ։

Դ.

Եւ հայրս, մի քիչ լռելուց յետոյ, գնաց նստեց մի քարի վրա ու սկսեց պատմել։

—Սրանից շա՜տ և շատ տարիներ առաջ — կը լինի մօտ 300 տարի, այս կողմերը լիքն էին շէն ու մեծ գիւղերով։ Սկսած այդ գետից մինչև շատ հեռու քաղաքները, լիքն էին հայերով. ծաղկած դաշտեր, հարուստ բնակիչներ...

Բայց ահա պարսիկները կռիւ սկսեցին օսմանցիների դէմ և գնացին քարուքանդ անելու միմեանց երկրները։

Կռիւը կատարւում էր հայերի բնակած տեղերում։ Երկու կռւող ազգերի հազարաւոր զօրքերը մորեխների նման ընկնում էին արտերը, ոտնատակ տալիս, փչացնում էին գիւղ ու քաղաք, այրում էին ու քանդում ամեն բան։ Աշխատում էին այնպէս դատարկել երկիրը, որ դէմից եկող թշնամին ո՛չ ուտելու բան գտնէր, ո՛չ էլ բնակւելու տեղ։

Առաջ պարսիկները յաղթեցին ու գնացին առաջ։ Բայց յետոյ սկսեցին յաղթւել ու ետ քաշւել, որ գնան իրենց երկիրը մտնեն, գետի ա՛յն միւս ափը։

Ետ էին քաշւում, բայց անցած տեղերում ինչ գիւղ ու քաղաք որ կար՝ քարուքանդ էին անում, հայ բնակիչներին էլ զօռով դուրս քշում իրենց տուն ու տեղից, ոչխարների նման առաջ անում ու մղկտացնելով բերում հաւաքում այստեղ։

Էլ մա՛րդ չը թողին. տղայ, աղջիկ, կին ու տղամարդ՝ անխնայ տւին մտրակների առաջ, շտապով դուրս արին ու հազար-հազարներով առին և բերին, որ գետը անցկացնեն, որ չը թողնեն օսմանցիներին օգնելու, տուն ու հաց տալու։

Շտապեցնում էին, որովհետև թշնամին գալիս, հասնում էր։

Էլ չը թողին գոնէ իրենց հետ շոր կամ ուտելիք վերցնեն։ Ով ինչ կարողացաւ՝ շուտով կապեց մէջքին, եթէ ձի կամ էշ ունէր՝ նրանց վրայ, մեծ մասը ոտքով, մտրակի ու փայտի հար-

ւածների տակ գնում էին փոշոտ, յոգնած։

Եւ զօրքերը անգութ կերպով սպանում էին նրան, ով յոգնում, ետ էր մնում, ով չէր կարող գալ… Սպանում էին հիւանդներին, թոյլերին։

Մայրերի ձեռքերից երեխաներին խլելով՝ շպրտում էին, ծերերին մորթոտում, քարերից ցած գցում, և երբ այլևս շունչ չէին թողել գիւղերում, կրակի էին տալիս տներն ու խոտի դէզերը, արտ ու ամբար…

Այդպէս ահա, հազար-հազար կին, աղջիկ, տղամարդ ու մանուկ բերին կիտեցին այս պղտոր ջրերի մօտ և սկսեցին անց կացնել գետից։

Անց կացնել, բայց ինչով։ Հազիւ մի քանի լաստ ու նաւակ կար։ Քիչ-քիչ անցկացնելը երկար կը քաշէր. Թշնամին համառում էր. պէտք էր շտապել…

Եւ ահա թագաւորը հրամայեց որ քշեն ու ջուրը լցնեն ամենքին՝ հազարաւոր կին, տղամարդ ու մանուկներ։

Սկսուեց մի զարհուրելի տեսարան։

Թագաւորի զօրքերը, ձի հեծած, սրերի և մտրակների, փայտերի և հրացանների հարուածներով ժողովեցին այդ հազարաւոր թշուառներին ու քշեցին ջուրը…

Ճիչ, աղաղակ, լաց ու կոծ…

Գետը սևացաւ մէջը լցուածներով։ Խեղդւում էին, օգնութիւն կանչում… Ջուրը տակովն էր անում մանուկներին, կանանց, լողալ չը գիտցողներին։ Լողալն էլ օգուտ չունէր. ո՞վ կարող էր դէմ դնի այս ալիքներին որ ազատւի… Խեղդւում էին, ոչ ոք չը կար օգնող։

Ընդհակառակը, զինուորները իրենց ձիերով ջուրն էին մտել և ծեծում ու առաջ էին մղում ետ մնացողներին, սպանում էին չը գնացողներին…

Կէսից աւելին խեղդուեց, ջուրը ծածկուեց գլուխներով, իսկ ափերի վրա դիզուեցին դուրս ընկած դիակները. հարիւրաւո՜ր, հազարաւո՜ր դիակներ…

Պղտոր ալիքները տակովն արին խեղճերին։ Երասխը կարմրեց, և այս բոլոր սարերն ու ձորերը լցուեցին մեռնողների ճիչ ու լացով, յուսահատ աղաղակներով…

Հայրս լռեց և տխուր ու մտածկոտ գլուխը կախեց կրծքին…

ե.

Կէսօրից յետոյ, ամենից առաջ բեռները անցկացրին։

Չորս, հինգ թուրք մշակներ արագութեամբ լաստի վրա դիզեցին ամեն ինչ, իրենք էլ նստեցին և ափին կանգնած մի մարդ արձակեց պարանը։

Երբ ամենքը նստել էին, լաստավարը մի ձող դէմ տուաւ ափին, ետ մղեց լաստը, ընկաւ երկար թիակի վրա և դէպի ջուրը սահեց։

Կարծում էինք թէ ուղիղ դիմացի ափն էին գնալու։ Բայց որքա՜ն զարմացանք, երբ տեսանք որ ջուրը քշում էր լաստին միշտ դէպի ցած։

—Այդպէս է,—բացատրեց հայրս.—հոսանքի հետ կիջնեն, կամաց-կամաց կը ծռեն դէպի միւս ափը և այս մեր կանգնած տեղից շատ հեռու, դիմաց կելնեն։ Նայեցէք. տեսնո՞ւմ էք հեռւում, միւս ափի վրայի, այն շէնքերը. այնտեղ է կայարանը։

Լաստավարը միշտ իր թիակի վրա էր ընկած։ Ճգնում էր ծռի լաստը և տանի դէպի միւս ափը։

Աչքով երկար հետևեցինք, բայց յետոյ յոգնեցինք։ Մինչև վերադարձը մի ժամից աւելի տևեց։

Ահա այդ ժամանակ էր, որ մեզ մօտ, ափի վրա եկան նոր հիւրեր։

Երեսուն-քառասուն ոչխարներ էին դրանք, փոշոտ, աղտոտ, յոգնած ու գլուխները կախ. խեղճ անասունները կիտուեցին եզերքին, կպան միմեանց ու սպասեցին։

Կային նրանց հետ նաև երկու խոշոր շներ։ Բայց ինչպիսի՜ շներ։ Մանաւանդ մէկը, ահագին, ուղիղ մի հորթի չափ. բրդոտ, արիւնոտ աչքերով և սև, մեծ մռութով։

Նրանք էլ յոգնել էին։ Լեզուները կախ՝ հասան թէ չէ, շնթռկեցին և աչքերը փակ՝ մնացին։

Երկու թուրք հովիւներ էին հօտը բերողները։ Երկու, ահագին շէկ փափախներով, սևադէմ մարդիկ, որ երկար ցուպերովը մի կէտի վրա ժողովեցին ոչխարներին և իրենք էլ նրանց կողքին՝ փռուեցին գետին։

զ.

Վերջապէս լաստը վերադարձաւ։ Հիմի հերթը մերն էր։

Նստեցինք բաւական վախվխելով։ Մշակներն ու լաստավարը ներս

տարան մեզ ու մի որոշ տեղ նստեցրին կարպետի վրա։ Հայրս ու մայրս խստիւ պատուիրում էին, որ տեղներիցս չը շարժւենք։

Այնուհետև լաստավարը հօրիցս իրաւունք խնդրեց ոչխարների հօտն էլ մեզ հետ անցկացնելու

Տեղ կար։ Ոչխարներին ու շներին քշեցին ներս և ժողովեցին մեր կողքին։

Ոչխարները խրտնում էին, առաջնորդ երկու այծերը պոզերով փորձեցին դէմ գնեն։ Երբ լաստը շարժւեց՝ ոչխարները կանգնած մնացին և մինչև անգամ վախից սկսեցին դողալ։

Այծերը միայն հանդարտ չէին մնում։ Տեղները նեղ էր։ Այս ու այն ոչխարին էին հրում, անցնում էին ուրիշ կողմ, երբ ջուրն էին տեսնում՝ խրտնում էին, ետ-ետ գնում և ամենքին նեղութիւն տալիս։

—Հանգիստ կացէք, անիծածներ,—ձեռքով խփեց նրանց հովիւներից մէկը։

Բայց երբ լաստը հոսանքի մէջ մտաւ ու սկսեց պտտել ու անցնել և երբ ջրերն եկան ու խփել սկսեցին լաստի կողերը, այծերը աւելի գժւեցին։

Մենք սաստ վախից կծկւել՝ իրար էինք կպել։ Ո՛չ միայն յիշեցի, այլ մի րոպէ անգամ մտքիցս չէին հեռանում հօրս պատմածները։

Աչքիս առջև էին գալիս կատաղի ջրերը՝ ծածկւած գլուխներով՝ մանուկ, կին ու տղամարդ խեղդւում էին, ձեռները յուսահատ կերպով շարժում, օգնութիւն կանչում…

Մօրս աչքերի մէջ էլ սարսափ էր նկարւած։ Գրկել էր մեզ ու նստել։

—Մի՛ նայէք, ջրին մի՛ նայէք…—մռմռում էր նա։

Հանգիստ ու անվրդով էին միայն թիակի վրա ընկած լաստավարը, հովիւները, այլև շները։

Ափն իջանք։ Լաստը ետ դարձաւ փուրգոնն ու ձիերը բերելու, իսկ մենք ջրի եզերքին՝ սպասում էինք։

Մի քանի ժամից յետոյ մեր փուրգոնը պատրաստ էր նորից մեզ տանելու մեր նոր հայրենիքը։

1) Տեղափոխության ինչ միջոցներ կան մեր երկրում։ Ո՞րն է իւրաքանչիւրի առաւելութիւնն ու թերութիւնը։

2) Տեղափոխության էլ ինչ միջոցներ գիտես, որ կան ուրիշ երկրներում։

55. Քոչ

ա

Ծագում է մանուկ արեւը գարնան
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից.
զարթնում են մէկ-մէկ սարերն աննման
ձմրան անվրդով քընի մըշուշից։
Ահա Լալւարի վիթխարի ուսին
բազմում է արփին թարմացած ոյժով,
սարեր ու ձորեր իրար երեսին
նայում են, ժպտում ամպի մշուշով…
Վերջին ձիւներն էլ արդէն հալ ընկան,
արտասւեց խոկոյն լեռների հըսկան.
ամէն մի ձորից աղբիւր է հոսում,
ամէն մի թըփից բիւլբիւլ է խօսում.
և՛ գալար հովիտ, և՛ ժայռի կրծքեր
արձագանք տալով գարուն են հնչում.
ձըմրան փարախից հովւական երգեր
զեփիւռի թեւով սարերն են թռչում։

բ

Ահա գարնան հետ և շարան-շարան
դաշտավայրերից դէպի զով սարեր

ձըգւեց սայլերի, ուղտերի քարւան·
փախչում են շոքից թէ՛ թուրք, թէ՛ հայեր։
Թընդում են ձորում զանգի հընչիւններ,
ձիերի խըրխինջ, պայտերի դոփիւն,
մէկ մէկի կըցած անվերջ քարւաններ
քաշում է նաւը, ահեղ մըռնչում·
որը տանում է ալաչխի քեչան,
կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան,
որն էլ զարդարւած գիր ու փնջերով՝
օրօրւում, անցնում լեռան լանջերով·
բայց նաւն ինքնագոհ քայլում է հանդարտ
բոժոժ ու զանգեր վըզին ու կըծքին,
և օրօրելով կապերտներ ու զարդ,
գեղեցիկ հարսն է նա տանում մէջքին·
մերթ բարկանալով կանգնում է հպարտ,
մերթ փըփուր թափում կատաղած բերնով,
մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,
նա պարծենում է գեղեցիկ բեռով։
Բռնել է ճամփէն խիստ իրարանցում,
դոփում են ձիեր, սանձերը կըծում։

Գ.

Գիշերը հասաւ· մըթին է ճամփան·
մարում է կամաց աղմուկը քոչի·
առւակի ափին քարւաններ իջան·
կանչում են՝ «Տըղերք, ապրանք չըկորչի»։
ձիերի ջոկեր, ուղտերի քարւան,
սայլերի ճըռռոց, ոչխար ու տաւար
գըտնելով ձորում գիշերն իջևան,
հանգիստ են առնում միւս օրւան համար։
Կըրակի վըրայ, առւակի ափին
մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
սար ու ձոր ընկած հովիւն է կանչում·
մի այլ տեղ ուրախ շըրջան բոլորած՝
ուտում են նըրանք կաթն ու խորոված·

գիշերն էլ արդէն ննջում է· լըռում,
յոգնած քոչւորին հանգիստ քուն բերում·
միայն մի կով է դարձեալ բառաչում
և քունը կըտրած հորթուկին կանչում·

Դ.

Անցնում են ծէգին քոչ-քոչի միջով·
գարնան արևից փայլում են զէնքեր·
և թարմ կենսաբոյր թաւիշ կանանչով
բացւում են, ժըպտում սարւորի դէմքեր։
Փոքրիկ երեխան պինդ մէջքին կապած՝
խեղճ հովւի կինն էլ վազում է ոտքով,
օգնում է մարդուն՝ գոհ ու սրտաբաց,
բախտի որոշած ծանրը վիճակով։
Մայում են, բայում գառնուկն ու մաքին,
թընդում կովերի, հորթերի բառաչ·
իսկ տըրտընգալով գոմէշը ձագին
կանչում է դանդաղ վազելով առաջ·
վազում են յոգնած շըները հօտի
և լեզուն հանած թանչին են տալիս·
Լըսւում է յանկարծ ձայնը լակոտի,
որ քոչից ընկած՝ կալանչ է գալիս։

Ե

Քարւանի ծայրը սարերը հասաւ,
հասաւ ու ձուլւեց թուխ ամպերի հետ·
վըրան-վըրանի ետևից բըսաւ
ծաղիկների մէջ գոյն-գոյն սիրաւէտ։
Ալաչուխ, դագա, անվերջ վըրաններ,
շըրջան կազմելով սառն աղբրի ափին,
ինչպէս ծեր արծւի կարկատած բըներ,
յենւեցին մէկ-մէկ բարձր քարափին։
Գուգարք սարերի սիգաւէտ լանջին
բազմել են հայի, թուրքի բինաներ,
բայց դարձեալ խառնւած քոչ-քոչի միջին՝

դեռ երերում են ուղտի քարւաններ․
խըրխնջում է ձին, կովը բառաչում,
բոլորն էլ իրենց եուրտն են ճանաչում․
մայում է անուշ ամլիկը գառան.
սարեր ու ձորեր նորից կեանք առան։

1) Գիւղացիք ամառը ինչո՞ւ են քոչում։
2) Քաղաքացիք էլ քոչո՞ւմ են․ եւ ինչո՞ւ։

56․ Արտը

ա․

Անիից էի վերադառնում և անցնում էի մի հայ գիւղի միջով։

Գիշերը սաստիկ անձրև էր եկել, այնքան սաստիկ, որ շատ պատեր ու խրճիթներ փլցրել էր։ Փողոցներից հեղեղներ էին վազում կչկչալով։ Երկինքը ծածկւած էր. միաձոյլ կապարագոյն ամպերով դեռ էլի մէկ-մէկ անձրևում էր։

Գիւղի վերջին խրճիթին էի հասել, երբ նրա դուռը ճռնչաց, մի քանի մանուկների ճիչերը ականջիս հասան և առաջս դուրս եկաւ մի ալեզարդ ծերունի՝ բահը ուսին։ Մի վայրկեան ինձ նայեց, յետոյ պատերի տակով անցք փնտռեց քայլելու։ Նրա հնամաշ տրեխներից ջուրը հոսում էր գուլպաների մէջ։ Խոնաւութիւնը թափանցում էր բաց կուրծքը։

Գիւղից դուրս էինք եկել։

Անցնելով՝ մի առ մի դիտում էի երկու կողքի արտերը։ Շատերի միայն մի քանի ակօսներն էին աւերւել և մէջ տեղերում լըճակներ գոյացել։ Մի քանիսը լիովին ողողւել էին։ Ջրի հոսանքները արմատախիլ էին արել, քշել տարել ցորենի դալար ծիլերը և հաւաքել ակօսների մէջ։ Ցեխ էր գոյացել ամեն մի փոքր շաւղի վրա, ամեն մի փոսի մէջ պղտոր կարմրագոյն ջուր էր կիտւել և շատ հասկեր լողում էին նրանց երեսին, որպէս խեղդւածներ։

«Վա՜խ, վա՜խ», արաւ ծերունին։

Բայց վնասը ընդհանրապէս շատ էլ մեծ չէր երևում։ Հողը դիմացել էր․ երևում էին բոլորովին չը փչացած արտեր անգամ․ ծիլերը դիմացել էին և այժմ գւարթ ցցել էին սկսում իրենց գլուխնե-

րը, թէև կային այնպիսիները, որոնց արմատները մերկացել էին ու դառել էին ոտաբոբիկ։

—Է՜, փա՜ռք Աստծու,—խօսեց ծերունին տեսնելով դրանց,—շատ էլ վնաս չի եղել։

—Քո արտն էլ էդպէս կը լինի, ծերո՛ւկ․—սրտապնդեցի նրան։

Անխօս գլուխը երերցրեց։ Կասկածում էր և հայեացքը միշտ հեռուներն էին։

բ․

Այդպէս քայլելով մենք հեռացանք գիւղից և յետոյ ծռւեցինք դէպի լեռները։ Ծռւելիս ծերունին մի րոպէ կանգ առաւ և աշխատում էր հեռուից նշմարել իր արտի դրութիւնը։

—Ո՞րն է արտդ։

—Է՜ն, բարձրը։

Ջրի հեղեղներ էին հոսում այնտեղ, ջրակոյտեր էին փայլում։

Ծերունին գունատւեց։

—Տունս քանդւել է...

—Միթէ վնասւե՞լ է։

—Զգիտեմ դեռ...—ասաւ նա խեղդւած ձայնով.—գուցէ աչքերս չեն ջոկում... ծերացել եմ...

Առաջ գնացինք։ Մօտենում էինք։ Քայլելը աւելի դժւարանում էր․ վերևից գրեթէ ցեխի հեղեղ էր, որ իջնում էր ցած խառն ծիլերի, ցողունների հետ...

Հևում էր ծերունին, շունչը կտրւել էր։ Քիչ էլ քայլեցինք։ Էլ կանաչ չէր երևում․ ցեխի հեղեղ և ջուր էր, որ տեսնում էինք, աւերիչ, ապականիչ հեղեղ...

Մի քանի քայլ յետոյ կանգ առաւ ծերունին և բահը ուսից ցած թողեց։ Իր արտի կողքին էր։ Թշւա՜ռ արտ...

Վերևից, փոսերի մէջ գոյացած ջրերը պատռել էին իրենց թումբերը, ուժգնութեամբ ցած հոսել և գրեթէ սրբել էին արտը։ Տեղ տեղ ովազիսների պէս մնացել, իրենց մերկ արմատներն էին ցոյց տալիս ցորենի ծիլի կղզեակները։ Երկար, կանաչ շերտեր իրար վրա, արմատախիլ, ջարդւած, հոգեվարք, սահել էին ամեն ուղղութեամբ և թաթախւել ցեխով։ Ոմանք մինչև վիզը խրւել, ուրիշները հազիւ իրենց մէջքն էին երևցնում։ Հողը ամբողջ կանաչել էր նրանց դիակներով...

Եւ անձրեւը նորից տեղում էր, տեղում ու իր մեծ կաթիլներով ճղփացնում լճացած ջրերը։

Ընկաւ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին, ծնկները կթոտուեցին և նա նստեց տեղն ու տեղը, իր ընտանիքը կերակրող ցորենի դիակների կողքին ու գլուխը թաղեց ձեռքերի մէջ…

Ջին քշեցի։ Սիրտ չունեցայ մխիթարական ոչ մի խօսք ասելու։ Աւելորդ էր։

Եւ երբ հեռւից ետ նայեցի, տեսայ՝ թշուառ ծերունին, միշտ նոյն դիրքի մէջ, նստած իր աւեր արտի կողքին, գլուխը ձեռքերի մէջ և ալեզարդ մազերը տեղացող անձրևի տակ…

57. Անձրեւ

Կացէք, էյ ամպեր, ինչու էք փախչում,
անձրև չէք թափում։
Ծարաւ արտերը օրեր են համրում,
ձեզ են սպասում։
Քամի՛, ա՛յ քամի, խղճա արտերին
ու թող ամպերին՝
որ կանգնեն, շաղ տան կենսատու շիթեր,
ջրեն մեր արտեր։

—

Քամին կտրրուեց, անձրև է մաղում
արտերը ջրում։
Արտը բարձրացաւ, ձողուն արձակեց,
ու հասկեր բռնեց։
Գիւղացին գնում, տեսնում է, խնդում
խնդում ու ասում.
«Փա՛ռք քեզ, Տէր-Աստուած, որ տուիր մեզ հաց,
չը թողիր քաղցած»։

58. Ագռաւների յարձակումը

ա.

Իրիկնադէմին էր։ Ելայ ծառը սալոր ուտելու։ Բարձրացայ ամենաբարձր ճիւղերից մէկի վրա և սկսեցի քաղել հասունացած, կարմրին տուող, ճեղքուած, քաղցրահամ սալորները։ Երբէք այդչափ վերև չէի բարձրացել։ Կանգնել էի մի այն ատիճան բարակ ճիւղի վրա որ եթէ մի զօրեղ շարժում անէի, պիտի կոտրուէր, անպատճառ։

Յանկարծ նկատում եմ, որ հարիւրաւոր ագռաւներ զանազան կողմերից կռաւելով գալիս են դէպի սալորի ծառը։ Սալորենին, որ լուսաւորուած էր պայծառ արևի ճառագայթներով, մի ակնաթարթում մթնեց։

Սև-սև ագռաւները հաւաքուեցին գլխիս, նստոտեցին սալորենու ճիւղերի վրա և սկսեցին կատաղի կերպով կռաւել, լայն-լայն բաց ու խուփ անելով իրենց զզզրելի կտուցները։

Նրանք իրենց տեղերում չէին հանգստանում, թռչում էին մի ճիւղից միւսը, պտոյտներ էին անում իմ գլխին, մօտենում էին ինձ այնչափ մօտ, որ զգում էի, ինչպէս նրանց թևերը դիպչում էին մազերիս։ Մի քանիսը, աւելի յանդուգները չեչտակի յարձակւում էին վրաս ու քիչ էր մնում աչքերս հանէին։

Ես իսկոյն հասկացայ պատճառը։ Ծառի վրան կար ագռաւի մի բոյն, որի մէջ գտնւում էին նրա տգեղ ձագուկները։ Ես կանգնած էի անմիջապէս ագռաւի բունի տակ։ Այդ սեւլի․ տգեղ, չարագուշակ թռչունները եկել էին ազատելու իմ ձեռքից իրենց ընկերոջ բունը, որին վնաս տալու մասին ես սակայն չէի մտածում։

բ.

Ես յուզուած էի, թոյլ, մենակ, իսկ թշնամիներս կատաղի և բազմաթիւ։

Շարժում եմ ճիւղերը։ Ագռաւները աւելի զայրացած մի փոքր հեռանում են, բայց մինչև ես մի քայլ կանեմ դէպի ներքև, մինչև ես կը բռնեմ մի հաստատուն ճիւղ իջնելու համար, նրանք աւելի ևս կատաղած, աւելի ևս բարձրաձայն կռռալով յարձակւում են վրաս։

Օգնութեան չեմ կանչում, հեռու եմ, ձայնս չեն լսի։ Աշխատում եմ ինքս դիմադրեմ, շարժում եմ անդադար ճիւղերը, միակ միջոցը, որով կարող եմ պաշտպանել։

Բարակ, վտանգաւոր ճիւղերը բռնելով իջնում եմ, առանց նայելու, թէ ոտս ուր եմ դնում, բնազդաբար։ Իմ հայեացքը շարունակ դէպի վեր է ուղղուած։

Թոյլ, բարակ ճիւղերը կոտրւում են անդադար ոտիս տակ, քիչ է մնում վայր ընկնեմ, սակայն փոքր առ փոքր իջնում եմ։

Աշխատում եմ ոչ մի շարժում չանեմ դէպի ագռաւի բոյնը, իսկ յարմար ճիւղերն էլ հակառակի պէս այն կողմն էին գտնւում։ Ագռաւների կտցահարած տերևները, նուրբ ճիւղերը անձրևի նման գլխիս էր թափւում. թշնամիներիս զայրոյթը գագաթնակէտին էր հասել։

Վերջապէս այդպէս կռիւ մղելով կարողանում եմ իջնեմ այնքան, որ հասնում եմ հաստ և ամուր ճիւղերին։

Ագռաւների զայրոյթն էլ քիչ-քիչ մարում է։ Իրենց բոյնը միջի թանկագին ձագերով արդէն ազատւած համարելով իմ չար դիտաւորութիւնից, պաշտպանութեան եկած հարիւրաւոր ագռաւները սկսեցին ցրւել իրենց հեռաւոր բոյները և աւետել ագռաւային աշխարհին իրենց կատարեալ յաղթանակը։

Ես ծառի կէսից թռայ ներքև, գունատ, յոգնած, դողում էի ամբողջ մարմնով և ագռաւների ղռռոցը դեռ հնչում էր ականջումս։

Դողդոջուն ոտներով վազեցի դէպի մայրս. ընկայ գիրկը և սկսեցի սաստիկ լալ.

—Մայրիկ, ագռաւները աչքերս հանում էին...

Գիտէք ուրիշ ղէպքեր, երբ թռչունները իրար պաշտպանելիս լինեն։ Միայն թռչուննե՞րն են իրար պաշտպանում։

59. Համերգ

Վտակը ժայռից ներքև է թռչում,
թափ առած ընկնում քարերի գլխին,
զարկւում աւազին, շաչում է, ճռչում,
ճռչում անհանգիստ, փրփուրը բերնին։

Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,
ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
այնպէս է ծերուկ անտառը կամաց
արձագանք տալի ջրի աղմուկին։

Սակայն բնութեան գըւարթ համերգի
ունկընդիրն անխօս, յաւիտենական,
ժայռը մըտախոհ իր մռայլ մըտքի
տակից ընկած լըսում է նըրան։

60. Յովհան Գուտենբերգ

ա.

Ստրասբուրգ քաղաքի մօտակայքում, մի հին կիսաւեր վանքի սենեակում, լարւած աշխատում էր Յովհան Գուտենբերգը։ Մեծ ու մանր դանակներով, սրածայր փորիչներով ու բզերով նա ջղաձգօրէն կտրատում, փորագրում, ծակծկում էր փայտի կտորներ, երբեմն միայն գլուխը թափ տալով՝ ճակատին իջած խիտ մազերը ետ գցելու համար։ Նրա շարժումները արագ էին և ոգևորւած։ Քունն ու քաղցը մոռացած՝ ճարպիկ ու ամուր մատներով շտապշտապ բանում էր. փայտի մանրուքն ու տաշեղը թափթփւում էր նրա երկար մօրուքի վրա, որ անկարգ ցրիւ էր եկել լայն կրծքին։ Դուռը ամուր փակւած էր. լուսամուտի վարագոյրները իջեցրած։

Զարմանալի բաներ էին պատմում Գուտենբերգի մասին, նրա ծածուկ պարապմունքների մասին։ Ասում էին թէ կախարդ է, գործ ունի գերբնական ուժերի հետ։ Շատունց է որ տեղափոխւել էր Ստրասբուրգ, փախչելով հայրենի Մայնցից քաղաքային խռովութիւնների ժամանակ։ Հակառակորդները նրան զրկել էին հայրական ժառանգութիւնից, բայց նա չէր ընկճւում և յափշտակւած պարապում էր գիտութեամբ և արհեստներով։ Նա սովորել էր ոսկերչութիւն, ինքը հնարել էր թանկագին քարեր ողորկելու մի նոր միջոց, գեղեցիկ հայելիներ էր շինում, մետաղէ շրջանակներ էր ձուլում, նախշերով զարդարում։ Ամբողջ հոգով սիրել էր ձեռարւեստը. ինքը ազնւական էր և ուզում էր իր դասակարգի մարդկանց հետ միացած մի գործ սկսի. բայց ազնւականներից ոչ ոք չուզեց միանալ նրան՝ արհամարհելով արհեստն ու ձեռքի աշխատանքը։

Այն ժամանակ նա ոտնատակ տւաւ նախապաշարումները, ան-

դամ գրեց ոսկերիչների համքարութեան և հասարակ արհեստաւորների հետ ընկերակցութիւն կազմեց ակնեղէն և հայելիներ շինելու համար։

Բ.

Այն օրից, երբ Գուտենբերգը մօտիկ շփման մէջ էր մտել ամբոխի հետ, մի ծածուկ տրտմութիւն համակել էր նրա հոգին։ Շուրջը տեսնում էր անթափանց տգիտութիւն և կոպտութիւն. և չէր կարողանում հաշտուել այդ ամենի հետ։ Նոյն իսկ այն հազուագիւտ մարդիկը, որոնք մի կերպ կարդալ էին սովորել և կուզենային դուրս գան իրենց մտաւոր խաւարից, ոչինչ չէին կարողանում անեն, որովհետև ուսում ձեռք բերելը շատ դժւար էր. ձեռագիր գրքերը թանկ էին և սակաւաթիւ։

Գուտենբերգը գիշեր ցերեկ մի բանի մասին էր մտածում. ինչպէս մի հնար գտնի, որ գրքերը ամենքի համար մատչելի դառնան։

Դրա համար էր որ նա փակւում էր մենակ իր սենեակում ու աշխատում։ Եւ այժմ նրան թւում էր թէ հնարը գտել է։

Փայտից կտրատել էր հաւասար քառակուսի ձողիկներ, քսան և չորս հատ, լատինական այբուբենի տառերի թւով. ամեն մէկի գլխին փորագրել էր մի մի տառ բարձրաքանդակ և թարս, իսկ ձողիկների տակերը ծակել էր, իրար կողքի շարել այբբենական կարգով, ծակերով թել անցկացրել, ամբողջ շարքը իրար հետ ամուր կապել, և այժմ թաթախում էր մի սև հեղուկի մէջ ձողիկների գլուխները, ապա դնում մի կտոր մագաղաթի վրա ու ամբողջ մարմնով ընկնում վրան։

Մագաղաթի վրա դրոշմւում է լատինական այբուբենը։ Յուզւած Գուտենբերգը նորից է կնքում իր շարւածքը, կրկին նոյն այբուբենը երրորդ, չորրորդ անգամ։ Հիացած նա քանդում է շարւածքը ու նորից շարում ձողիկները, այս անգամ իբրև մի բառ, ու կրկին դրոշմում մագաղաթի վրան. տպւում է մի բառ...

Բազմաթիւ տարիների երազանքը իրականացած է. գտել է վերջապէս գրքերը բազմացնելու և էժանացնելու միջոցը։

Ինչքան պարզ բան, ինչքան հասարակ։ Աստւած իմ, ինչպէս էր որ մինչև հիմա չէր մտածել։

Բայց փայտը փափուկ է, շուտով է ծռւում, մաշւում կամ կոտրւում. և միշտ ձեռքով դրոշմելն էլ դժւար է։

Գուտենբերգը նորից անխոնջ աշխատում է իր սենեակում, մարդկանց աչքից հեռու։ Նոյն իսկ ընկերակիցները կարծում էին թէ նա հայելիների նկարներն ու քանդակներն է գծագրում, որ այդչափ

երկար նստած է գիշերները և ազատ րոպէներին անգամ դուրս չի գալիս իր առանձնութիւնից։ Մինչ նա այժմ իր բոլոր ուժերն ու շահած փողերը գործ էր դնում իր գիւտը կատարելագործելու համար։

Նա մտածեց մետաղից ձուլի տառերը. կաղապարներ պատրաստեց տառերը մէջը շարելու համար, որ բառեր կազմեն, բառերից տողեր տողերից երեսներ. շինեց տախտակներ և շրջանակներ, որ շարւածքը ամուր սեղմւի ու կապւի որ ոչ մի տառ միջից չը թափւի. հնար գտաւ շարւածքի մէջ սպրդած սխալները իսկոյն ուղղելու. հնարեց զանազան գոյնի թանաքներ, որ շուտ չորանան, հնարեց բարձեր որ թանաքը տառերի երեսին հաւասար քսւի։

Ապա սկսեց մտածել մի այնպիսի մեքենայի մասին, որ շարւածքի վրա թուղթը դնելիս՝ հաւասարապէս ճնշի ու թուղթը չը պատռի։

Գ.

1440 թւի մի գեղեցիկ օր Գուտենբերգը արագ քայլերով գնում էր Ստրասբուրգի նեղ փողոցներով դէպի իր ծանօթ ճախարակագործ վարպետի արհեստանոցը, թիկնոցի քղանցքի տակ մի մեքենայի փոքրիկ օրինակը պահած։ Ուզում էր նոյն մեքենան աւելի մեծ չափերով պատւիրի։

Վարպետը օրինակը ձեռքին շուռ ու մուռ տւաւ և մի տեսակ արհամարհանքով և ծաղրական եղանակով ասաւ.

—Ձեր ուզածը մի նոր ձևի ճզմիչ է, մի նոր ձևի մամուլ, պարոն Յովհան։

—Այո,—պատասխանեց Գուտենբերգը ոգևորութեամբ—իսկապէս որ դա մի ճզմիչ է, մի մամուլ. բայց մի մամուլ, որից շուտով հոսելու է անսպառ հոսանքով ամենահրաշալի ըմպելիքը, որ երբևէ յագեցրել է մարդու ծարաւը։ Այդ մամուլի միջից վեհ ճշմարտութեան աղբիւրն է բխելու, այն լոյսն է հոսելու, որ պիտի ցրւի տգիտութեան խաւարը և չը տեսնւած ճաճանչներով պիտի փայլի մարդկանց հոգիներում։

Երբ մի փոքր ժամանակից յետոյ վարպետը յանձնեց Գուտենբերգին պատրաստ մեքենան, կարծես հասկանալով որ այդտեղ մի մեծ գաղտնիք է ծածկւած, բացականչեց.

—Ես տեսնում եմ, պարոն Յովհան, որ դուք հաղորդակից էք երկնային հոգիներին։

Անշուշտ նա ինքն էլ լաւ չէր հասկանում թէ ինչ էր ասում, բայց նրա բերանով ճշմարտութիւնն էր խօսում։

Նրա բերած մեքենան առաջին տպագրական մամուլն էր։

61. Բուն

Գիշերն եկավ, աստղունքն ելան,
լուսնեակն անուշ ցոլցըլաց.
ծաղկունքն ամեն նոր քուն մըտան,
ամպի ցօղով լուսնի շողով
հարհանդ-մարմանդ քուն մըտան։
Դուք էլ քընէք, ոսկի աստղեր,
վարդ ու բլբուլ, քուն եղէք,
օրօր-հովեր, շորոր-հովեր,
անուշ-անուշ քուն եղէք։

---

62. Տպարանում

ա.

Զվարթ և ուրախ է այսօր տպարանում։ Կէս ամսվա ռոճիկը բաժանելու օրն է։ Կարծես արևը աւելի պայծառ է փայլում, գրաշարների ձեռքերը աւելի արագ և աշխուժ են շարժւում, տառերը իրենք իրենց են թռչում կասսաների աչքերից և իրար կողքին շարւում։ Ամենքի երեսներին մի խորհրդաւոր ժպիտ է շողում։ Մինչև անգամ գրաշար ծերունի Միխօն, որ իր ամբողջ ռոճիկը պիտի գինետուն տանի, նա էլ է ժպտում։

Իսկ ներքևում, ստորին յարկում, տպագրական մեքենան էլ կարծես աւելի ժիր է դըրդում, և աւելի զիլ է հնչում տպիչ Գասպարի երգը.

«Ձայնը հնչեց Էգրումի հայոց լեռներէն, հայոց լեռներէն...»
Զարմանալի տղայ է Գասպարը։

Այն օրից ի վեր, ինչ հայրը բերել, աւել է տպարան, նրա քաղցր ձայնը լցնում է բոլոր անկիւնները։ Տպարանի տէրը կամեցել էր արգելել որ չերգի, բայց գրաշարները մէջ էին մտել ու համոզել, թէ իրենց չի խանգարում։

Գասպարը երգում էր անվերջ, մէկ երգը միւսի ետևից, երգում էր միշտ մինչև վերջին տունը, առանց մի տող բաց թողնելու։ Կամ սկսում էր շւացնել, և այն ժամանակ կարծես մի կախարդական սրինգ

յայտնի չէ թէ որտեղից ներս պըրծած, մեքենայի անիւների մէջ թաքկացած, նրա չխչխկոցին էր փաթաթւում և ուրախ ձայնակցում...

Երբեմն այդ երգը հնչում էր տխուր, կարօտով տանում էր այն երջանիկ աշխարհը, ուր գլխից վեր փռւում է ոչ թէ մռայլ, սևացած առաստաղը, այլ խոր, կապուտակ, պայծառ երկինքը, աչքերի առջև ոչ թէ մրոտած, հաստ պատերն են ցցւած, այլ ձգւում են սարեր, սարեր, առաւօտեան մէգի տակից յանկարծ խնդացող սարեր...

Երբեմն էլ այդ երգը փոխւում էր պարերգի.

«Օյ, Նազանըմ, Նազանըմ,
գիւլ Նազանըմ, Նազանըմ»։

Այդ ժամանակ գրաշարները յանկարծ ծիծւում էին, և շարունակելով իրենց աշխատանքը՝ գլուխները երգի եւէջների հետ թափ էին տալիս։

—Բիւլբուլ է,—շշնջում էր զմայլած գրաշար Միխօն, բոլոր զաւակներից, մերձաւորներից զրկւած, աշխարհիս երեսին մենակ, չոր ծիացած Միխօն,—բիւլբիւլ է։

Ամեն առաւօտ, թշերը կարմրած, ժպտուն աչքերով, գլխարկը ծոծրակին քաշած, երեսը մաքուր լւացած, Գասպարը ուղղակի փողոցից ներս էր վազում գրաշարանոցը, մէկ շարքից միւսին անցնելով, աջ ու ձախ ողջունելով «Բարի լոյս, քեռի Յակոբ. բարի լոյս, Սիմօն բիձա. էյ, ընկեր Կարապետ, գալուստդ բարի», և առանց պատասխանիս պասելու շտապում էր կանգնում ծերունի Միխօի առջև։

—Բարի աջողում, Միխօ ապեր, էս գիշեր ո՞նց էիր. կռնակդ հօ էս օր էլ չի՞ ցաւում։

—Չէ, չէ, Գասպար ջան, էսօր լաւ եմ, լաւ. շատ ապրես, աչքիս լոյս,—և Միխօի ճակատի խոր կնճիռները հարթւում էին և արփնակալած աչքերում փայլում էր հայրական գգւանքը։

Իր կոշտ ձեռքը մեկնում էր Գասպարին ու սեղմում նրա փոքրիկ թաթը։

Գասպարը իջնում էր ցած.

—Բարի լոյս, Սոնա բաջի,—կանչում էր նա գեղեցիկ տպագրական մեքենային։—Հանգստացար, հա՞, իմ Նազան։

Ու մօտենալով՝ սկսում էր քնքշութեամբ շոյել մեքենայի մեծ անիւը, կողքերը, յետոյ գցում էր գոգնոցը, առնում էր ձէթի ամանը ու ձէթ ածում մեքենայի բոլոր ծակոտիները, որ մեքենան փափուկ, անաղմուկ բանի։

—Պառաւել ես, Սոնա բաջի, պառաւել, պասդ չես ուզում կոտրես... Նազ ու տուզով ես ժաժ գալի։ Շուռ արի, շուռ արի, տեսնեմ։

Մեքենապետը քրմծիծաղ տալով ականջ էր դնում իր աշկերտի այս շատախօսութեանը ու շարուածքը պարփակում, որ մեքենայի տախտակի վրա թողնի, սարքի։ Գասպարը անհամբեր սպասում էր թէ երբ պիտի գայ իր հերթը, մեքենային թուղթ տալու ժամանակը։ Վերջապէս երբ մեքենան պատրաստ էր լինում, Գասպարը կանգնում էր բարձր պատուանդանի վրա ու սկսում էր թերթը թերթի ետևից հասցնել, դարսել մեծ թմբուկի վրա։ Մեքենայի մեծ անիւը հետզհետէ աւելի արագ էր պտտւում, թմբուկը աւելի շտապով էր թերթերը փախցնում, շարուածքը կրող տախտակը աւելի ոգևորուած էր գնում գալիս, և հետզհետէ աւելի ոգևորուած էր հնչում Գասպարի առաւօտեան երգը.

«Սոնա բաջին վազում է, վազում է,
Թուղթը թղթին դարսում է, դարսում է։

Աստուած մի արասցէ, եթէ գրաշարներից մէկը նրա ջգրու մի վատ բան ասէր մեքենայի մասին... Գասպարը պարծենում էր որ ամբողջ տպարանը իր մեքենայով է ապրում։

Բ.

Այս առաւօտ առանձնապէս ախորժելի էր թէ մեքենայի դղրդիւնը և թէ Գասպարի այդ երգը։ Ծերունի Միխօն չը գիտեմ ինչու երբեմն յանկարծ ժպտում էր ու փփսում։ «Ապրես, շատ ապրես»։

Եւ այդ փփսուկին ամեն անգամ պատասխանում էր կողքին կանգնած աշկերտ Պալէի չար փնթփնթոցը.

—Զռում է... զռում է...ո՞նց է զռում։

Վերջապէս ծերունի Միխօն էլ չը համբերեց ու կանչեց.

—Սուս, փուճ կենդանի, ձէնդ։

Պալէն լռեց, բայց նրա թշերի ծայրերը մի րոպէ կարմրեցին և կարծես աւելի դուրս ցցուեցին նիհար ու դեղնած դէմքի վրա։

Միայն մի քանի րոպէից յետոյ նա կամացուկ արտասանեց.

—Ամեն մէկը վրէս բղաւում է, ձեր ճորտն եմ, ի՞նչ է։

—Հ՞ը, հ՞ը, իծաներդ հաւաքւում են, հա՞,—կանչեց նորից ծերունի Միխօն։—Հէրդ էսօր երևի քիչ է դնքսել...

— Չէ, քոյրը անհաց տանից դուրս արաւ,—մէջ մտաւ միւս կողկից աշկերտ Մօսին, որ Պալէի հարևանն էր։—Դրանց տանը ամբողջ օրը կռիւ է։

Պալէն բան չը պատասխանեց. նրա կատաղած աչքերը ուղղուեցին Մօսիի կողմը, կարծես ողջ-ողջ կուլ տալ էին ուզում։

Ներքևից, մեքենայի բաժանմունքից լսւում էր Գասպարի երգը.

«Ալագեազ բարձր սար է, վա՜յ լէ լէ...
Ջուրը հիւանդի դեղ է, վա՜յ լէ լէ...»

—Մի քիչ էլ է Գասպարի նման լինէիր, — նկատեց ծերունի Միխօն։

—Հա՛, Գասպարին հացի վրա քսեցէք ու կերէք։

—Լպստած, լպստած մի խօսի։ Աւելի լաւ է գնա, հինգ հատ տասնըվեցի գլխատառ Ո բեր։

Պալէն դժկամակութեամբ թողեց իր գործը ու գնաց տառերը բերելու։ Նա այսօր սովորականից աւելի մռայլ էր ու չարացած։ Կարծես ջգրու, տպարանումն էլ այդ առաւօտ յանձնել էին նրան ցրուածք անել, մինչդեռ նա իրեն արդէն կատարեալ գրաշար էր համարում։ Ցրուածքը յանձնւում է առհասարակ նոր մտնող աշկերտներին և համարւում է ամենահասարակ աշխատանքը։

Նա տառերը բերաւ, արհամարհանքով շպրտեց ծերունի Միխօի առջև։

—Թամբա՛լ,—աղաղակեց նրա վրա վարպետը։

—Թամբալը դուք էք,—փնթփնթում էր Պալէն։—Մէկ էս բեր, մէկ էն բեր։ Արիւններս ծծեցիք, ծծեցիք...

—Այ, քեզ էստեղ բերողին ինչ ասեմ, հա,—բարկացաւ ծերունի Միխօն։

—Տանը դրան միշտ ժանդ են ասում,—նկատեց կրկին աշկերտ Մօսին, որ հէնց այդ ժամանակ կապած երեսներն էր տանում սրբագրութիւնը հանելու։

Պաւլէն՝ էլ չը համբերեց ու այնպէս բրդեց Մօսիին, որ ամբողջ շարուածքը նրա ձեռքից դուրս պրծաւ, յատակին թափուեց։

Մի ծանր ապտակ իջաւ Պաւլէի վզակոթին, մի ուրիշն էլ թշին։ Ամբողջ գրաշարանոցը գլխին հաւաքուեց։ Տպարանատէրն էլ երևաց։

—Ի՞նչ է, ի՞նչ է... Ո՞վ թափեց։

—Պաւլէն, Պաւլէն,—ձայն տուին ամեն կողմից։

—Լա՛ւ, լա՛ւ, գնացէ՛ք, ձեր գործը շարունակեցէ՛ք, դրա հախիցը ես կը գամ։ Էս րոպէիս թափուածքը հաւաքի ու մինչև ամբողջը չը ցրուես, տուն չես գնայ։

Պաւլէն լուռ ու մունջ անշարժ կանգնած էր. նրա աչքերում կատաղութեան բոց էր վառւում, բարակ շրթունքները կրծոտում էր, բռունցքները սեղմում, բաց անում։

Իսկ ներքևից, մեքենայի բաժանմունքից հասնում էր տղէկ Գասպարի ձայնը.

«Ամպել է՝ թօն չի գալի,
Մթնել է՝ տուն չի գալի,
Վայ լէ՛, լէ՛, լէ-լէ ջան,
վայ լօ՛, լօ՛, լօ-լօ ջան»։

գ.

Վերջապէս հասաւ ռոճիկ բաժանելու րոպէն։ Բոլոր բանուորները գրաշարանոցից, մեքենայական բաժանմունքից հաւաքուել էին գրասենեակը, շրջապատել սեղանը, փողերն էին ստանում։ Գասպարը կատակներ էր անում մէկի միւսի հետ։ Պաւլէն պատին կրթնած՝ մրոտած մատներով ամուր տրորում էր իր քունքը։

Մէկ էլ դուռը լայն բացուեց, փողոցից թարմ օդի հետ ներս պրծաւ օղիի սոսկալի հոտը։

Շեմքին երևաց Պաւլէի հայրը՝ հարբած, գզգզուած, վերարկուն թևին գցած, անկարգ գդակը ծոծրակին, մէկ ոտի գուլպան ցած ընկած.

—Եկե՛լ եմ, եկե՛լ...—աղաղակեց նա, խաղէյինը շէ՛ն կենայ, շէ՛ն, հայ-հա՛յ...

Ու տարուբերուելով մօտեցաւ տպարանատիրոջ սեղանին, բռունցքը այնպէս խփեց տախտակին, որ վրայի թանաքամանը, մանր իրերն ու հաշուեմատեանները վեր թռան։

—Աղա՛ ջան, դուն շատ ապրես, եկե՛լ եմ, եկե՛լ։

Բոլորն էլ ծիծաղեցին։ Ամեն ռոճիկ ստանալու օրը նա ճշտութեամբ երևում էր գրասենեակում և ստանում Պաւլէի փաստակը։ Մի ժամանակ հին տպարաններից մէկում մեքենայի անիւը պտտեցնող էր եղել, բայց այն օրւանից, երբ գրեթէ ամեն տեղ շարժիչներով կամ ելեկտրականութեամբ էին սկսել մեքենաները բանեցնել, նա զրկուել էր պաշտօնից և կնոջ մահից յետոյ՝ հարբեցողութեան էր գլուխը տուել։ Երբ ձեռքի փողը վերջանում էր, փողոցէ փողոց ման գալով՝ սրանից նրանից գրոշներ էր խնդրում, գինետները մտնում, հարբում։

—Հեռո՛ւ, մի քիչ հեռու,—կանչեց տպարանատէրը, շտապելով նրա առաջը դնել Պաւլէի ռոճիկը։—Վեր առ, գլխիցս ռադ եղիր։

—Բե՛ր, բե՛ր, էտ պէտլածները, դրանց հոգուն մեռնեմ,—ասում էր հարբածը՝ մէկ-մէկ վերցնելով արծաթէ մանեթանոցները։—Էլի բեր, էստեղ չո՛րս է, չո՛րս...

—Երկուսը հանում ենք. էսօր հինգ երես շարուածք է թափել. նորից պիտի շարել տանք։

—Ո՞նց թէ թափել է... Ո՞նց թէ թափել է... Ո՞նց թէ համարձակուել է... Ես դրա հոգին...

Եւ երկու բռունցքները բարձրացրած, աչքերը արիւնով լցուած, հայրը դիմեց Պաւլէի վրա, որը կծկուած սպասում էր հարուածին։ Եթէ բանուորները մէջ չը մտնէին, նա անպատճառ տեղն ու տեղը կը սպանէր տղին։

—Շարուածքն ես թափում, հա՛, սատանի ճո՛ւտ, հացն ես կտրում, հա՛...—հայհոյում էր նա։

Բանուորները հրելով հրելով հազիւ հազ կարողացան փողոց դուրս հանել նրան։ Դեռ երկար ժամանակ՝ մայթի վրա կանգնած, նա ըսպառնում էր թէ խաղէյինին, թէ Պաւլէին և թէ իրեն վռնդող բանուորներին։

Գասպարը շուռ եկաւ Պաւլէին մօտենալու համար, բայց Պաւլէն արդէն չը կար, անհետացել էր ետևի դռնով։

Դ.

Յաջորդ օրը Պաւլէն տպարան չեկաւ: «Երևի հայրը այնքան ծեծել է, որ տեղից շարժուել չի կարողանում», վճռեցին գրաշարները:

Կէսօրից յետոյ Գասպարը տուն էր վազում ճաշի, որ երեկոյեան ժամը 7-ին նորից գայ՝ իր հերթին բանի մինչև ժամը 10-ը լրագիրը տպելու համար. Նա հէնց տպարանի դիմացը, անկիւնի ետևում, նկատեց Պաւլէին: Պատին կպած և մի մեծ քար ձեռքին՝ տպարանի ապակիներին էր նայում:

Գասպարը իսկոյն հասկացաւ նրա միտքը:

—Էստեղ ի՞նչ ես շինում. էսօր ինչու չեկար:

—Ես՝ էլ եկողը չեմ, տուն էլ գնացողը չեմ:

Այստեղ միայն Գասպարը նկատեց որ նրա շորերը կեղտոտ են. երևի գիշերն դրսում էր անցկացրել:

—Արիւնս ծծեցին, ծծեցին: Չէ, էն բանը բերեմ նրանց գլխին որ:

Ու քարը ձեռքից բաց թողնելով, Պաւլէն արագ հեռացաւ պատի տակից և խառնուեց անցնող ամբոխի հետ:

—Երնէկ իմանամ՝ ինչ է ուզում անի—ասաւ ինքն իրեն Գասպարը:

Երբ մթնեց, նա մի կէս ժամ առաջ եկաւ տպարան: Բակը մըտնելիս նրան այնպէս թւաց, թէ մի սուեր թաք կացաւ դարպասի ետևը: «Չը լինի՞ թէ Պաւլէն է»—մտածեց նա:

—Բարի իրկուն, Սարգիս ապէր,—ասաւ նա տպարանի պահապան ծառային, որ աղօտ լամպի լուսով աւլում էր մեքենայի բաժանմունքի Ջրած յատակը:—Բարի իրիկուն, Սօնա բաջի.

Մի ծանրութիւն ճնշում էր Գասպարի սիրտը: Սուս ու փուս բարձրացաւ մեքենայի պատուանդանի վրայ, շոյեց թմբուկը, տրմընկը կրթնեց վերի տախտակին և խոր մտածմունքի մէջ ընկաւ:

Նա մտածում էր Պաւլէի մասին: Ի՞նչու Պաւլէն երբէք չի մըլպտում, ինչու երեսը միշտ այնպէս չար է. մի՞թէ հիմա սանը չէ:

Մինչև անգամ մեքենապետը նկատեց Գասպարի լըջութիւնը.

—Հը, ինչ է պատահել. ինչու չես երգում: Յոգնե՞լ ես:

—Ոչինչ—պատասխանեց աշկերտը և սկսեց լուսաւորել լրագրի շարուածքը, որ մեքենապետը սարքում էր երկաթի տախտակի վրա:

Վերջապէս շարուածքը սարքուած էր. խոր լռութեան մէջ լսեց մեքենայի ծանր ճնալ գալը: Գասպարը կանգնեց իր տեղը, պատ-

ւանդանի վրա և սկսեց թուղթ հասցնել: Վարպետը մի քիչ կացաւ ու համոզուելով որ ամեն ինչ կարգին է, իր սովորութեան համեմատ բարձրացաւ վերև՝ գրաշարանոց, հերթապահ գրաշարի հետ զրոյց անելու:

Գասպարը մնաց մենակ ու ականջ էր դնում մեքենայի չըխկչըխկոցին. նրան թւում էր թէ Սօնա բաջին տխուր կրկնում էր.

—Ի՜նչ ծա՛նր է, ինչ ծա՛նր է...

Մէկ էլ կամացուկ դրսի դուռը բացուեց ու ներս մտաւ Պաւլէն: Նա բռնած ունէր մի ահագին կտոր երկաթ, որ միշտ ընկած էր լինում տպարանի բակում, և արագ մօտենալով մեքենային ուզում էր գցի հէնց տախտակի վրա, ատամնաւոր անիւների տակ ու փշրի ամբողջ մեքենան:

Մի ակնթարթում Գասպարը վայր թռաւ պատուանդանից ու առաջ քան Պաւլէն կարողանար իր մտադրութիւնը կատարել, բռնեց երկաթի ծայրից և սոսկալի ուժով քաշեց, նետեց մի կողմ: Այն ժամանակ Պաւլէն յարձակուեց նրա վրա որ նրան գցի ելեկտրականութեամբ ինքն իրեն շարժւող մեքենայի տակ:

Բայց Գասպարը շատ աւելի ուժեղ էր. նա գլորեց Պաւլէին ու վրան պառկեց:

—Դո՛ւ... դու... ուզում էիր... մաշինէս...

—Մաշինէդ էլ, դու էլ, բոլորդ էլ... ատում եմ ձեզ... արիւնս ծծեցիք, արի՛ւնս:

—Ո՞վ է ծծում, մաշինէ՞ս:

—Գրաշարները, խազէյինը, հայրս... Թո՛ղ, ասում եմ քեզ, թող, թէ չէ կը կծեմ:

—Կծի՛, բայց չեմ թողնի քեզ: Գժուե՞լ ես մաշինէս քեզ ինչ է արել:

—Նա է էս դժոխքը պահում, նա՛:

—Խիղճդ կորցրել ես, Պաւլէ: Բոլոր բանւորներին հօ անբախտացրիր, այ տղա՛յ:

—Թո՛ղ, թո՛ղ, կերթա՛մ, էլ չեմ գայ: Ջուրը կընկնեմ:

Գասպարը յանկարծ նստեցրեց Պաւլէին ու նրան ամուր գրկած՝ բացականչեց.

—Ի՞նչ ես ասում, խեղճ Պաւլէ: Դու հիւանդ ես. խելքի եկ:

—Թող, կերթամ, էլ չեմ գայ... չեմ գայ:

—Չեմ թողնի: Երևի սոված ես. քեզ էսօր էլ ծեծեցին, հա՞—հար-

ցրեց Գասպարը այնպիսի կարեկցութեամբ, որ Պալէն էլ չը դիմացաւ ու սկսեց հեկեկալ, շարունակ կրկնելով.

—Թո՛ղ... ասում եմ... թո՛ղ։

—Հանգստացի՛, հանգստացի,— մեղմութեամբ և գգուանքով ասում էր Գասպարը, իսկ մեքենան գնում էր գալիս ու նոյնպէս շըշընչում.

—Հանգստացի՛, հանգստացի...

—

Ոչ ոք չիմացաւ թէ ինչ կատարւեց այդ գիշեր ստորին յարկում, մեքենայի բաժանմունքում։ Առաւօտեան վարպետ Միխօն շատ զարմացաւ, երբ տեսաւ որ Պալէն իրենից առաջ եկել գործի էր կանգնել, զարմացաւ նոյնպէս թէ ինչու Գասպարն ու Պալէն այդ օրը առանձին սիրով իրար բարևեցին։

Բայց աւելի զարմացաւ ծերունին, երբ լսեց թէ ինչպէս իր կողքին «ժանգ»՝ Պալէն կամացուկ կրկնում էր ներքևից հասնող երգի եղանակը.

«Սոնա բաջին վազում է, վազում է,
Թուղթը թղթին դարսում է, դարսում է...»

---

63. Լոռեցի Սաքօն

ա.

Խոր ձորի միջին ահա մի տընակ.
այնտեղ այս գիշեր Սաքօն է մենակ։
Հովիւ է Սաքօն, ունի մի ընկեր.
սատանի նման, նա՛ էլ այս գիշեր
գնացել է տուն։
Ու Սաքօն անքուն
Թաց տրեխները հանել է քերել,

գուլպան բուխարու վրա կախ արել
ու թինկը տւել, մեն մենակ թթւել։
Բուխարու կողքին լուռ թինկը տւած
մտածում է նա...Ու մին էլ, յանկարծ,
միտն եկան տատի զըրոյցները հին...
Միտն եկան, ու մեր Սաքօն ակամայ
սկսաւ մտածել չարքերի վրա,
թէ ինչպէս ուրախ, խմբով, միասին,
ծուռը ոտներով, գիշերւայ կէսին,
թուրքերի կանանց կերպարանք առած,
երևում են միշտ միայնակ մարդկանց...

բ.

Սրընթաց պախրա՞ թէ գայլ գիշատիչ
շեշտակի անցաւ փարախի մօտով,
այծեամը յանկարծ մօտակայ ժայռից
անդունդը մի քար գլորեց ոտով,
գիշերւայ հովից տերևն էր դողում,
երկչոտ մուկնի՞կը վազեց անկիւնում,
թէ՞ ոչխարների թոյլ մրնջոցն էր այն,
Սաքօին թըւաց, թէ մի ոտնաձայն
եկաւ ու կանգնեց փարախի վըրա,
կանգնեց ու լըռեց...։ Ականջ դըրաւ նա...
«Ո՞վ հող թափեց բուխուրակից...
Էն ո՞վ նայեց լխածակից...
Էս ո՞վ կըտրից անցաւ թեթև,
շունչ է քաշում դըրան ետև...
Ո՞վ ես, էհէ՜յ... ի՞նչ ես անում,
ի՞նչ ես լռել, ձէն չես հանում...»
Պատասխան չը կայ. լըռութեան միջում
Ջորագետն է խուլ մըրափած վըշշում։
«Հա՛, իմացա՛յ, Գէւօն կըլնի.
իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...
Վախեցընում է, հա՛, հա՛, հա՛, հա՛...
Գէւօ՛, Գէւօ՛...» Ձէն-ձուն չը կայ։
Եւ ով կը լինի զարթուն այս ժամին.
քընած է աշխարհ, քընած է քամին։

Գ.

Աչքերը հանգչող կըրակին յառած՝
ծանըր է շընչում հովիւն ահառած,
ու վայրի հոգին լեռնական մարդու
ալեկոծում է կասկածն ահարկու։
«Չէ, քամին էր էն... էն գայլի շւաք...
էն աստղեր էին աչքերի տեղակ,
որ լուսածակից ներս էին ընկել...»
Ուզում է վերև մըտիկ տայ մէկ էլ՝
ու սիրտ չի անում։
Ականջ է դընում...
Գալիս են կըրկին, թեթև, կամացուկ,
դըռան ետևից փըսփըսում ծածուկ.
«Էստեղ է նա,
հա՛, հա՛, հա՛, հա՛,
տե՛ս-տես, տե՛ս-տես,
նայի՛ էնպէս,
մըտիկ արա՛,
հա՛, հա՛, հա՛, հա՛...»
Սաքօն շարըժւեց փըշաքաղած,
դէպի շէմքը նայեց, դողած...
Ճըրըխկ... յանկարծ դուռը բացւեց
թուրք կանանցով տունը լցւեց,
տունը լցւեց թուրք կանացով,
ճիչ-գոռոցով, հըրհըռոցով...
—Սաքօ՛, Սաքօ՛, մեզ մօտ արի,
արի մեզ մօտ հարսանիք,
տե՛ս, ի՛նչ ուրախ պար ենք գալի,
սիրուն, ճահել հարսն-աղջիկ։
—Ինձ մօտ արի՝ ձըւածեղ անեմ...
—Ինձ մօտ արի՝ բըլիթ տամ...
—Ես քո հոքիրն...—Ես քո նանն եմ...
—Ես էլ ազիզ բարեկամ...
—Սաքօ՛, Սաքօ՛, մեզ մօտ արի,
էս աղջիկը տես ինչ լաւն ա...

տե՛ս, ի՛նչ ուրախ պար ենք գալի,
տարանի նա՛, դարա՛ նա նա՛...

Դ.

Անհետ ձոր է։ Մի կըլոր լուսին
նայում է գաղտուկ, թաքչում ամպերում։
Էն մութ, ահաւոր գիշերւայ կէսին
վազում է Սաքօն Լոռու ձորերում։
Չարքերը ընկած նրա ետևից,
հերարձակ խմբով, ճիչ-աղաղակով՝
համնում են մէջքին, բըռնում են թևից,
զարկում են, զարկո՛ւմ օձի մըտրակով.
ճըչում են կանչում քաչքերը կայտառ,
վազում է, վազում Սաքօն խելագար...

---

64. Պայթիւն հանքում

ա.

Ես բանում էի հանքի խորքում. գործիքովս քանդում էի ապառաժը։ Ընկերս ծալապատիկ նստած ճրագը ձեռքին լոյս էր անում։

Յանկարծ մեր ականջին հասաւ մի խուլ հեռաւոր դղրդիւն։

—Ի՞նչ էր,—բացականչեց ընկերս, ոտի կանգնելով վախեցած։

Մեր մօտից մի մարդ անցաւ վազէվազ. նա հևում էր։

—Ի՞նչ էք կանգնել անշարժ—գոչեց նա առանց կանգ առնելու—չը լսեցի՞ք... գազի պայթիւնը... Շուտ փախէք դուրս։ Եւ անհետացաւ։ Նոյն վայրկեանին մեր ճրագները հանգան և մենք թաղւեցինք թանձր խաւարի մէջ։ Օդը սաստիկ խեղդող դառաւ։

Գլխապատառ վազում ենք, սայթաքելով ամեն մի քայլափոխին։

Բայց ո՞ւր ենք վազում։ Մեր աջ ու ձախից ձգւում են անհաշիւ ոլորուն անցքեր, գալերիներ, որոնք նոյնպէս թաղւած են խաւարի մէջ. նրանց վրա գտնւում է նոյն տեսակ մութ գալերիների մի ուրիշ շարք, ապա երրորդը, չորրորդը։ Ինչպէս գտնենք մեր ճանապարհը այդ ահագին լաբիրինթոսի մէջ, այս սոսկալի ստորերկրեայ աշխարհում, երբ զրկւել էինք մեր անբաժան ընկեր՝ լապտերի լոյսից։ Սովորական ժամանակ այդտեղ դէս ու դենից լուսաւոր կէտեր

են երևում, բանւորների լապտերները։ Իսկ այժմ... Մարել են մեր այդ կենսատու աստղիկները, իրենց հետը տանելով մեր կեանքն ու մեր յոյսերը։

Վազում ենք սակայն։ Յանկարծ մեր առաջ թանձր ծուխի մի պատ է բարձրանում։ Մռայլ, գարշելի հոտ ունեցող խաւարը պատել է մեզ չորս կողմից, այրում է մեր դէմքերը։ Գլուխս պտոյտ է գալիս։ Խեղդւելու վրա ենք։ Եւ խելագարի պէս ետ ենք վազում այս դժոխքից։

Բայց ուր էլ որ գնում ենք, այդ անիծած գազերը անանցանելի պատնէշի նման մեր ճանապարհը կտրում են ու ետ հրում։

Միևնոյն տեղում չենք կարողանում մնալ, դէս ու դէն ենք նետւում, շրջում, պտտւում այդ մութը հանքում, որը չի ուզում մեզ բաց թողնի ու պինդ բռնած պահում է մեզ իր մռայլ ճիրաններում։

Բ.

Բոլորովին յոգնած և յոյսս կտրած՝ ես մեքենաբար ձեռքս տանում եմ գրպանս։

Ինչ կայ այնտեղ. ժամացոյցս. մի հասարակ պարզ ժամացոյց ժանգոտւած ու մաշւած, որի վրա հանքը մի անջնջելի դրոշմ է դրել։

Բայց զարմանալի է. այդ ժամացոյցը այժմ ինձ վրա մի տարօրինակ տպաւորութիւն է անում։

Նա միակն է այս քաօսի մէջ, որ մի կանոնաւոր, խելացի բան է ներկայացնում։ Նա մեզ միացնում է ամբողջ աշխարհի հետ։ Նրա չըխկչըխկոցը զարմանալի կերպով ինձ հանգստացնում է ու սիրտ է տալիս։ Նա կենդանի է, նա խօսում է։ Կարծես ասում է ինձ. «Պինդ կաց, սիրելիս, խելքդ մի կորցնի. աշխատի՛. աշխատի յարատև և կանոնաւոր. և կը փրկւես»...

Ա՜խ այդ բարերար չըխկչըխկոցը։

Ի՜նչքան նա սփոփել է մեզ բոլորիս մեր այդ օրերի գերեզմանային դաժան կեանքի ժամանակ, երբ մենք սաստիկ սովի, ծարաւի ու յոգնածութեան ազդեցութեան տակ կատարեալ յուսահատութեան էինք հասնում։ Մեզնից ամեն մէկը վերցնում էր նրան, շոյում, փայփայում, ականջին դնում, լսում ու անվերջ լսում, և չէր ուզում բնաւ բաժանւի։ Կատարեալ երեխայ էինք դարձել։

Ես շուտ-շուտ ժամացոյցս լարում էի, որ չը կանգնի։

Գ.

Ժամացոյցիս չըխկչխկոցը վերադարձրեց ինձ սառնասրտութիւնս։

— Չէ, պէտք չէ որ յուսահատւեմ,— ասի ինքս ինձ։

Ընկերներս անշարժ պառկած էին յուսահատ։ Վճռեցի յոյսի մի նշոյլ վառեմ նրանց սրտում և ստիպեմ շարժւելու։

— Լսեցէ՛ք, ընկերներ, մեզ կանչում են. հանքը զարկում են,— գոչեցի ես։

«Հանքը զարկում են». ինչ գրաւիչ խօսքեր մեզ պէս կորած, կեանքից կտրւած մարդոց համար։

Դա նշանակում էր, որ այնտեղ, վերևում, ուր որ փայլուն արեգակը շոյում է երկիրը իր տաք ոսկեզօծ ճառագայթներով, այնտեղ արդէն մտածել են մեր մասին և ամեն ջանք գործ են դնում մեզ ազատելու։

«Հանքը զարկում են». սա մի ձայն է, որ երաժշտութիւնից էլ քաղցր է, որ իջնում է վերևից պահապան հրեշտակի նման մեր յոյսերը վառ պահելու և յորդորելու, որ մենք համբերութեամբ տանենք մեր բոլոր նեղութիւնները, մինչև որ մեր փրկիչները գան հասնեն մեզ։

Հանքը զարկելը հաղորդակցութեան մի միջոց է, իր տեսակի մի հեռախօս, ի հարկէ շատ աւելի պարզ ու հասարակ. Նրա միջոցով հանքահանները իմաց են տալիս իրար, երբ մէկի հետ դժբախտութիւն է պատահում, զարկելով այդ նպատակով շինւած խողովակը, որ իրար է միացնում գալերիները։ Նոյն բանն են անում վերևի յարկից՝ վտանգւածների մասին տեղեկութիւն ստանալու համար։

Եւ տեսէք, ինչ տարօրինակ բան է մարդու երևակայութիւնը։ Այդ ձայնը, որ գոյութիւն չունէր. նրանք բոլորն էլ պարզ լսում էին։

Արագ ոտի թռան, և նորից ճանապարհ ընկանք։

Դ.

Գնում ենք անվերջ նեղ անցքերով, բարձրանում ենք, իջնում, մագլցում, սահում։

Գալերիի վերի մասում մի ինչ որ պատնէշի ենք հանդիպում, ձեռքերով շօշափում ենք և ամբողջ մարմնով ցնցւում։ Դա դիակների մի ամբողջ դէզ է՝ կուտակւած և դէս ու դէն ցրւած։

Դիակները դեռ սառած չէին։ Պարզ էր, որ մեր գալուց քիչ առաջ էին մտել իրենց յաւիտենական քունը։ Խեղճե՜ր. երևի նրանց

բանելու տեղը շատ մօտիկ է եղել պայթումի տեղից և մեզանից շատ են ենթարկուել վատ գազերի ազդեցութեանը։ «Անշուշտ մեզ էլ նոյն վիճակն է սպասում մօտ ապագայում», մտածում եմ ես և դարձեալ ցնցւում։

Շտապով թողնում ենք այդ սոսկալի վայրը և գնում... անվերջ գնում։

Ոտներս տանում են ինձ բոլորովին մեքենաբար. էլ չը գիտեմ թէ ո՞րտեղ ենք գտնւում մենք, ո՞ւր ենք գնում։ Մտքերըս չեմ կարողանում կենտրոնացնել մեր դրութեան վրա, որ որոշեմ անելիքս։ Շարունակ մտածում եմ իմ սիրելիների մասին. արդեօք բախտ կունենամ նրանց նորից տեսնելու։ Ի՞նչքան լաց է լինում երևի կինս՝ փոքրիկիս գրկած, ինձ անշուշտ կորած համարելով։

Բոլորս լուռ ենք, տխուր մտածմունքների մէջ խորասուզւած։

Յանկարծ մեր առաջ մի բան է շարժւում մթութեան մէջ։ Եւ լսւում է մի ձայն, մի մարդկային ձայն, որի մէջ մի անսահման ուրախութիւն էր հնչում.

—Ահա՛, ահա՛, գալիս են մեզ ազատելու։

Այդ մի ձայնից յետոյ լսւում է երկրորդը, երրորդը։ Նրանք հինգ հոգի էին։ Տեղներից վեր են կենում և վազում դէպի մեզ։

Մթութեան մէջ փնտռում ենք իրար, ձեռներս պարզած, աչքակապուկ խաղացող երեխաների նման։ Տալիս ենք մեր անունները և յայտնում որ մենք էլ նրանց նման հանքի դժբախտ բանտարկեալներն ենք։ Դժւար է նկարագրել խեղճերի յուսախաբութիւնը...

Առաջարկեցինք, որ մեզ միանան ու գնանք միասին հանքի ելքը փնտռելու։ Եւ գտանք... քսան օր գետնի տակ խաւարի մէջ անտանելի տառապելուց յետոյ։

65. Գիշեր

Սիրուն պատկեր. պարզ գիշեր էր.
և օթեղէն ովկիանում
փայլում էին անթիւ աստղեր.
ի՜նչ ուրախ էր սիրտս զարկում։

Հազարաւոր ծաղիկներ վառ
անուշութիւն էին բուրում,
ցօղի համբոյրը կենսաբար
բնութիւնն էր զովացընում։

Եւ ես անխռով երգում էի,
ու իմ երգս խիստ մաքուր էր.
ազատութիւն էի երգում,
հայրենիքի կարօտն ու սէր։

---

66. Թշնամիները

ա.

Ճակատամարտը վերջացաւ։ Հեռւում դեռ լսւում էր թնդանօթների դղրդիւնը և յաղթանակող զօրքերի համազարկերն ու փողերը։ Կուի դաշտում կոտրւած սայլերի, թափթփած հրացանների, փշրւած սրերի, քանդւած չափարների մէջ ընկած էին սպանւածների կոյտեր, մարդկանց ու ձիերի դիակներ, այլանդակւած, յօշոտւած. այդ կոյտերի միջից տեղ տեղ լսւում էր վիրաւորների խոր հառաչանքները։

Մի չորացած առւի եզերքին, խիտ եղինջի մէջ, իրարից ոչ հեռու պառկած էին երկու զինւոր, երկուսն էլ ծանր վիրաւորւած։

Նրանց համազգեստները տարբեր էին։ Մի քանի ժամ առաջ դեռ կատաղի թշնամիներ էին, իրար դէմ կանգնած, պատրաստ սւիններով միմեանց խողխողելու, իսկ այժմ...

Այժմ լուռ նայում էին իրար և այնպէս ուզում էին խօսեն, գոնէ մի բան ասեն, բայց ափսոս որ իրար լեզուն, չէին հասկանում։ Յանկարծ աւելի երիտասարդը դժւարութեամբ մի-երկու քայլ հագիւ

սողէսող տալով մօտեցաւ իր թշնամուն և մեկնեց նրան իր գինու սրւակը. յետոյ էլ աշխատում էր թաշկինակով կտրի նրա վէրքից հոսող արիւնը։ Բայց ոչինչ դուրս չեկաւ, միայն ինքը աւելի թուլացաւ ու պառկեց։ Երբեմն մէկը, երբեմն միւսը ճիգ էին թափում վեր բարձրանալու մի քիչ՝ թևի վրա, օգնութեան էին կանչում, բայց նրանց կանչերին մօտերքից պատասխան էր տալիս միմիայն փորը ճղւած մի ձիու աղեկտուր խրխինջը։

Բ.

Վերջապէս երիտասարդը յոգնած և թուլացած, քուն մտաւ։

Վրա հասաւ պարզկայ գիշերը. ցուրտ քամին գալիս փչում էր հեռաւոր լեռներից։ Կռւի դաշտում աւելի ու աւելի նւաղում էին հառաչանքները. վիրաւոր ձին էլ չէր խրխնջում...

Կէս գիշերին աւելի տարօք վիրաւորը կրկին մի փորձ արաւ նըստելու, բայց իզուր, արդէն բոլորովին արիւնաքամ էր եղել։ Մահւան սառնութիւնը սկսել էր պատել նրա անդամները...

Աչքը գցեց իր հարևանի վրա։ Երիտասարդ վիրաւորը քնած էր խորը և մի տեսակ ակամայ կուճ էր եկել գիշերւայ կտրող ցրտից։

—Պիտի սառչի.—անցաւ հասակաւորի մտքովը. — անպատճառ պիտի սառչի, խեղճը. ինչպէս էլ երիտասարդ է...

Երբ արշալոյսի դէմ վիրաւորներին հաւաքող խումբը մօտեցաւ նրանց, երիտասարդը զարթեց, ուզեց բարձրանայ ու զարմացաւ որ իր վրա մի վերարկու կար գցած։

Նայեց շուրջը, նայեց հարևանին։ Հարևանը մեռած էր և պառկած առանց վերարկուի. նրա վերարկուն էր իր վրա...

Տէր Աստւած, ինչ չարչարանք պէտք է կրած լինէր այդ հոգեվարքի մէջ արիւնաքամ եղող մարդը, մինչև որ վերարկուն հանել կարողացաւ ու ծածկել մօտը պառկած վիրաւորի վրա։

Երբ երիտասարդին բարձրացնում էին որ տանեն, նա խորին յուզումով ու երախտագիտութեամբ նայում էր իր «թշնամու» տանջւած ու կարկամած երեսին ու չէր կարողանում հայեացքը հեռացնել նրա կիսախուփ մարած աչքերից։

---

67. Անիծած հարսը

Վաղ ժամանակ մի հայ շէնում
մի յարգւոր հարսն է լինում։
Նըրա բերնից՝ կեսուր-կեսրառ
չէին լըսել մի շունչ, մի բառ,
չէին տեսել շուրթը մի օր...
Էսպէս խոնարհ ու յարգւոր,
Մի օր մենակ օդում նըստած,
իր ճոխ մազերն արձակ թափած,
ազատ, անփոյթ սանրում, հիւսում,
հետն էլ ձէնով երգ էր ասում.
«Աշխարհքը բանտ,
մէջը անբախտ
ես մի գերի անխընդում.
սիրուն շորեր,
ջահիլ օրեր
ինչ եմ անում էս բանտում։
Էրնէկ ծըտին,
ճիւղքի միջին
ծըլւըլում է, թըրթըռում,
թըռչում՝ սիրած
ընկերն առած,
ազա՜տ, կանաչ արտերում։
Ա՜խ, սեւ ըլի,
չըքւի, փըլի
ծընւած օրը աղջըկայ,
ցաւ ու խընդում
փակւած սըրտում,
ծիծաղ չը կայ, «ախ» չը կայ...
Մին էլ յանկարծ բացւեց դուռը
Ու ներս մտաւ ծեր կեսուրը։
—Յօ, պօ, պօ, պօ, կանչեց խեղճը,
գետին պատռի, մըտնեմ մէջը...
—Յոպոպ դառնաս,
անամօթ հարս։
Մի տես, մի տես,
թէ լըրբի պէս
գըլուխը բաց,
ազատ նըստած՝
ինչ է կանչում,
չի ամաչում...
Լեզուդ լալկի,
մազըդ թաղքի,
գըլխիդ կըպչի
սանրը միջի։
Ասաւ-չասաւ,
մին էլ տեսաւ՝
սանրը գըլխին
հարսն առաջին
յոպոպ դառաւ,
երդկից թըռաւ,
ու վերացաւ,
վե՜ր, հեռացաւ։
Էն էր ու էն.
խեղճն էն օրէն
հանդերն ընկած՝
յոպոպ մընաց,
միշտ էլ էն հին
սանրը գըլխին,
չալ՛կ-մալ՛կ,
լեզուն լալիկ,
անխօս ու լուռ,
մոլո՜ր, տըխուր։
Բայց երբ յանկարծ
միտն է գալիս,
որ գըլխաբաց,
երգ ասելիս՝
իր կեսուրը
բացեց դուռը,
վեր է թըռչում
սըրտատըրոփ
ու դեռ ճըչում.
—Յօ-պոպ... Յօ-պոպ...



68. Անիի աւերակները

Մէկ տափարակ հարթ տեղ բաց է լինում յանկարծ տեսնողի առաջին, մէկ մեծ դաշտ, չորս կողմը սարերով պատած։

Քանի գնում է մարդ, ամպ ու մառախուղ քաշւում, պարզւում են. հէնց իմանում ես՝ թէ առաջիդ մէկ էնպէս քաղաք է բաց լինում, որ հազար հազար կենող միջումն ունի, ու ցրտի կամ շոքի ձեռից յոգնած՝ ուզում ես, որ շտապես, գնաս մի աստուածասէրի դուռն վեր գաս, հանգստանաս, էլ ետ ճամփէդ բռնես, գնաս։

Մէկ տեղից ահագին բերդի պարիսպն է քեզ խաբում, մէկ տեղից զարմանալի եկեղեցիների գմբէթը ու մեծութիւնը. միւս տեղից բարձր մինարէները, պալատ ու ապարանքի գլուխները։ Մտքումդ առում ես՝ թէ էս տեսածդ մէկ մեծ զօրեղ թագաւորի գահ պէտք է լինի։ Էստեղ ոսկին ու արծաթը աղբի հետ պէտք է խառն ընկած լինի, էստեղ օրը հարիւր քարւան ներս մտնի, հարիւրը դուրս գայ։ Հէնց իմանում ես, թէ ցերեկը փոշին ու մէգն է աչքդ բռնում, գիշերը՝ մութն ու խաւարն է քեզ խաբում, որ մարդ, շունչ, անասուն չես տեսնում, հէնց դիակեր ագռաւներն են աչքերիդ սևին տալիս։

Մարդ չը կայ մօտդ՝ որ հարցնես, գիր չես կարդացել՝ որ իմանաս։ Մտքիդ հետ ընկած, տեսածդ հրաշք կարծելով կամ աչքակապութիւն, որ յանկարծ գլուխդ չես բարձրացնում, մարմինդ դող է ընկնում, կռներդ թուլանում։ Հէնց իմանում ես թէ մէկ վիշապ կամ մէկ թշնամի հէնց նոր է մտել ու բոլոր կենողներին կամ կուլ տւել, կամ սուրը քաշել, կամ գերի արել, ինքն էլ փախել. ուզում ես, որ աչքդ խփես, ետ դառնաս։

Ա՛խ, չէ, չէ, ետ մի՛ դառնայ. էստեղից ծուխը քանի հարիւր տարի է, որ կտրւել է. կա՛ց, մի վախենայ. անշունչ քարերն ու եկեղեցիները մարդակեր չեն։ Աչքդ բա՛ց արա, սիրտդ քե՛զ հաւաքի։ Էս սրբատաշ տաճարները, էս ահագին բերդը, էս քարերը քեզ կասեն՝ թէ սա է գոռոզ Անին, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ մի ժամանակ էնքան էր իր հարստութիւնովը, իր փառքովը փարթամացել, ճոխացել ու մեծամտել,

---

69. Աւերակում

Մոլոր, մենակ ես շրջում եմ
աւերակում հայրենի,
աչք եմ ածում, ու յիշում եմ
անցած կեանքը վաղեմի։
Է՛, այստեղ էլ ժամանակով
շէն ու կենդան է եղել,
ուրիշ օրով, ուրիշ կեանքով,
ուրիշ մարդիկ են ապրել։

Ահա նրանց տեղ-տները
լուռ-լուռ փոսեր ցիրուցան,
ահա նրանց շիրիմները,
մամռոտ, անշուք, աննշան։
Ահա մեծի ապարանքը
ու ամրոցը կիսաւեր,
ահա նրանց խաղաղ վանքը,
աղօթում է կարծես դեռ…

Մթընշաղը գետինն առել,
լուռ է աշխարհք արարած.
բեկորներին աչքերս յառել
մտածում եմ շւարած։
Հին դարերի մշուշի մէջ
նշմարում եմ ես ահա
փարթամ քաղաք, տներ անվերջ…
մեծ պալատներ… ու սրահ…

Ու սրահը ճոխ զարդարւած
վառւում է ուշ գիշերով…
Էն սրահում, լուսաւորւած
բիւրեղեայ թանկ ջահերով
հայրենիքի ազատանին
հաւաքւել է խնջոյքի,
տօն է տօնում, տօ՛ն յաղթութեան
իր հաւատի ու զէնքի…

Ու փափկասուն տիկինները
հանդիսաւոր ընթացքով
ճեմ են առնում, աչք են ածում,
սէր են թափում հայեացքով։
Պարիկները պար են պարում
ու տոփում են համարձակ,
ու թրնդում են մեծ սրահում

երգ ու նուագ ներդաշնակ…
«Վո՜ւյ…», «վո՜ւյ…» բուն էր.
վայեց անա…
Մութն է։ Ու ես գլխիկոր
էն աւերակ քաղքի վրա
կանգնած, ինչպէս մի բուէճ…

70. Ինքնուս մեքենագէտը

ա.

Տասնըեօթը տարեկան Գէորգ Ստեֆէնսօնը վերակացու էր
նշանակւած ածխահանքի ջրհան մեքենայի վրա։ Մի շատ պա-
տասխանատու պաշտօն. պէտք է հսկէր որ ջուր չը հաւաքւի
հորերում ու ստորերկրեայ անցքերում և աշխատող բանւորներին չը
խեղդի։ Ջրհանը պիտի անընդհատ և կանոնաւոր գործէր։ Գէորգը
վաղուց էր երազում այդ պաշտօնի մասին, այն ժամանակւանից,
երբ դեռ փոքրիկ մանուկ գալիս էր իր հօր մօտ, որը մի այդպիսի
մեքենայի հնոցի կրակ վառողն էր։ Այժմ սիրահարւած իր մեքենային՝
Գէորգը ուշադրութեամբ ուսումնասիրում էր նրա կազմութեան ամեն
մանրամասնութիւնը։ Երբ աշխատանքները վերջանում էին և ընկեր-
ները շտապում էին պանդոկները թուղթ խաղալու, աքլոր կռւեցը-
նելու կամ գինի խմելու, նա քանդում էր իր մեքենան, մաքրում
բոլոր մասնիկները ու նորից սարքում։ Եւ մեքենան միշտ կարգին էր
բանում։ Բայց Գէորգի սուր աչքը նկատել էր նրա կազմութեան մէջ
մի քանի թերութիւններ. պատանին շարունակ մտածում էր՝ չի կա-
րող արդեօք մի կերպ կատարելագործել մեքենան։ Նա ուզում էր
ծանօթանալ ուրիշ տեսակի շոգեշարժ մեքենաների հետ ու մի ին-
ժիներից խնդրեց այդ մեքենաների նկարները։ Ժամերով զննում էր այդ
նկարները, բայց չէր հասկանում։

Երբեք նա այդպէս վշտացած չէր եղել, այդպէս խորը չէր զգա-
ցել իր անուսում լինելը. գրել կարդալ անգամ չը գիտէր։ Եւ իր հո-
գու մէջ նա հաստատ վճռեց գիր սովորել։ Այդ միջոցին մօտակայ-
քում մի ուսուցիչ դպրոց էր բաց արել, Ստեֆէնսօնը նրա օգնու-
թեանը դիմեց ու շաբաթական մի տասը կոպէկ վճարելով՝ սկսեց դաս

առնել։ Երեկոները, հէնց որ պաշտօնավարութիւնը վերջացնում էր,
իսկոյն վազում էր այն գիւղը, որտեղ դպրոցն էր և փոքրերի կողքին
նստած մի երկու ժամ պարապում, ապա շտապով վերադառնում էր
տուն, նստում բուխարու առջև մինչև կէս գիշեր, կարդում կամ
գրում քարետախտակի վրա։ Ցերեկով էլ, մեքենայի մօտ զբաղւած,
ամեն մի յարմար րոպէից օգտւում էր քաղում թւաբանական խնդիրներ
լուծելու։ Բանւորները ծիծաղում էին նրա վրա, երեխաները դպրո-
ցում ծաղրում էին նրան, բայց Ստեֆէնսօնը ուշք չէր դարձնում, և
ձմեռւայ վերջը արդէն կարողանում էր գրել ու կարդալ և թւաբա-
նական չորս գործողութիւնները կատարել. իր ուսուցիչը միայն այդ-
քանը գիտէր։

բ.

Այժմ գրքերը բաց էին Ստեֆէնսօնի առջև։ Բայց իր օրական
վաստակով հազիւ կարողանում էր միայն տնային անհրաժեշտ ծախ-
սերը հոգալ. գիրք առնելու էլ փող չէր մնում։ Բայց Գէորգը վհատել չը
գիտէր։ Իրեն յատուկ հնարագիտութեամբ նա ինքն իրեն կօշիկ կար-
կատել սովորեց և ազատ ժամերին սկսեց կօշկակարութեամբ պարա-
պել։ Պատւէրները անպակաս էին։ Վերջապէս նա կարողացաւ այն-
քան ետ գցել, ու իր խնայած գումարով գնեց մեքենագիտութեան
վերաբերող իրեն հարկաւոր գիրքը։
Տարէցտարի նրա տնային ծախսերը աւելանում էին։ Պսակւել
էր ու շուտով մի զաւակ էլ ունեցաւ, որին Ռօբերտ անւանեց։
Հարկաւոր էր աւելի վաստակել։ Ճշմարիտ է, նրա ռոճիկն էլ հետըզ-
հետէ աւելանում էր և աւելի ու աւելի բարդ մեքենաների վարելն
էին նրան յանձնում. բայց դրա հետ միասին աճում էր և նրա բնա-
կան սէրը դէպի մեքենագիտութիւնը։ Նա մի սոսկ բանւոր չէր, այլ
միշտ կատարելագործութիւններ էր մտցնում իրեն յանձնւած մեքե-
նայի մէջ և տանը փորձեր էր անում, փոքրիկ մոդէլներ շինում, նոր
մեքենաներ հնարում, ուրիշների գիւտերին հետևում… Ստեֆէնսօնը
յափշտակւած էր դրանով։ Հարկաւոր էին գրքեր, նկարներ, փորձերի
համար նիւթեր։ Պէտք էր եկամուտն էլ աւելացնել։ Գէորգը սրամիտ էր ու
ճարպիկ. նա ազատ ժամերին, բացի տնամաններ կարելուց, ժամա-
ցոյցներ էր նորոգում, շորեր էր ձևում, նոյն իսկ բեռներ կրում։
Ու շարունակ սովորում էր։ Նա չը վհատեց ու չը դադարեց իր սի-
րած մեքենագիտութեամբ պարապելուց, երբ իրար ետևից ծանր

փորձութիւններ կուտակուեցին նրա գլխին.— պաշտած կինը վախճանուեց, շուտով հայրն էլ կուրացաւ։ Նրա աշխատասիրութիւնն ու բարեխղճութիւնը ամենքին զարմանք էր պատճառում, ոչ պակաս նաև նրա հնարագիտութիւնը։ Նրա տունը դարձել էր մեքենաների մի ամբողջ թանգարան. անկիւններում, դարակների վրա, պատուհաններում, պահարանների գլուխներին դրուած էին ինքնահնար մեքենաների մոդէլները։ Գէորգը հետևում էր նոր լոյս տեսած գրքերին, գործադրում էր նորագոյն գիւտերը, ամեն մի հանդիպած բանագէտ մարդուց աշխատում էր մի բան սովորել։ Շրջակայքի բանուորները յարգում էին «Գէորգ վարպետին», որը սիրելի էր դարձել բոլորին իր բարի, կարեկից և ուրախ բնաւորութեամբ։ Ստեֆէնսոնի անունը բարձրացաւ մանաւանդ մի դէպքից յետոյ, երբ մէկ շաբաթուայ մէջ ուղղեց մի ջրհան մեքենայ, որը կարգի բերելուց հրաժարուել էին արդէն բոլոր գիտնական և ուսում առած ինժիներները։ Նրան իսկոյն յանձնեցին մի աւելի արդիւնաւոր պաշտօն. հարևան ածխահանքերից ու գործարաններից սկսեցին դիմել նրան ու գործնական խորհուրդներ հարցնել։

Գ.

Այդ ժամանակ արդէն մի միտք հանգիստ չէր տալիս նրան ու համակել էր նրա ամբողջ հոգին։ Մտածում էր մի այնպիսի մեքենայ շինի, որ կարողանայ շոգու օգնութեամբ ամենածանր բեռները փոխադրել հեռաւոր տարածութիւններ։ Նա արդէն հնարել էր մի այդպիսի տեղաշարժ, բայց դա դեռ շատ թերութիւններ ունէր. պէտք էր շարունակ կատարելագործել։ Եւ դրա համար անհրաժեշտ էր, որ հետազօտի, փորձեր անի, սովորի։

Ռոբերտ որդին արդէն 12 տարեկան էր. հայրը նրան տուել էր Նիւկէսըլի լաւագոյն դպրոցը։ Ամեն առաւօտ էշը հեծած որդին գնում էր քաղաք և երեկոյեան վերադառնում և պատմում էր հօրը, ինչ որ դպրոցում այդ օրը իմացել էր։ Եւ դա մի սովորութիւն դարձաւ որ տարիներ շարունակուեց։ Այսպիսով Ռոբերտը եղաւ իր հօր ուսուցիչը։ Ամեն շաբաթ օր, տղան բերում էր դպրոցի կամ գիտնական մի ընկերութեան գրադարանից հօրը հարկաւոր գրքերը, իսկ երբ թանկագին և սակաւագիւտ հրատարակութիւնները տուն չէին տալիս՝ ինքը ուշադրութեամբ կարդում էր, քաղուածքներ անում և նկարները արտանկարում։ Որդին, որ հօրից պակաս չէր սիրում մեքենագիտութիւնը, այդ նկարներով կարողանում էր հօրը բացատրել

ամենաբարդ մեքենաների կազմութիւնն ու գործածութիւնը։ Առանց քաշուելու, անկեղծ յափշտակութեամբ հայրը սովորում էր որդուց այն, ինչ որ բախտը հնարաւորութիւն չէր տուել իրեն սովորելու։ Բայց և որդին անգնահատելի տեղեկութիւններ էր ստանում իր հօրից գործնական մեքենագիտութիւնից։

Այժմ տեղաշարժի կատարելագործութիւնը աւելի արագ և աջող էր առաջ գնում։ Հետզհետէ մեքենան աւելի արագ էր ման գալիս և աւելի ծանր բեռներ էր քարշ տալիս ռելսերով։ Գիտնական ինժիներները դեռ ծաղրում էին «ինքնուսին» և նրա գիւտը չէր ընդհանրանում. բայց գործնական մարդիկ հասկանում էին երկաթուղու գիւտի նշանակութիւնը և երբ ընկերութիւն կազմուեց Լիւերպուլից Մանչեստր գիծ շինելու համար, հիմնադիրները Ստեֆէնսոնին հրաւիրեցին կառուցանելու։ Գիտնական ինժիներները գրում և ծաղրում էին իրենց թերթերում. «Ի՞նչ կարող է աւելի անհեթեթ ու ծիծաղելի լինել, քան այն միտքը, թէ տեղաշարժները ձիուց աւելի արագ են ման գալու». «Թող Ստեֆէնսոնը չափաւորի իր երևակայութիւնը, եթէ չի կամենում որ իրեն խելագար ճանաչեն ու փակեն գժանոցում»։

Բայց Ստեֆէնսոնը չէր ընկճւում։ Իր մեղմ, բայց տոկուն բնաւորութեամբ և հաստատամտութեամբ նա նպատակին հասաւ. կառավարութիւնը թոյլ տուաւ որ երկաթուղին շինուի։

Դ.

Դրանից առաջ էլ մի երկու կարճ երկաթուղիներ Ստեֆէնսոնը շինել էր։ Բայց այս մէկը հսկայական գործ էր։ Պէտք էր երեսուն վերստ երկարութիւն ունեցող խոր ճահճի միջով ճամփի թումբ անցկացնել, լեռներ ճեղքել, թունէլ ծակել, 64 կամուրջ շինել, որոնցից մէկը շատ մեծ և շղթաներից։ Այսպիսի դժուարութիւնների ինժիներական արհեստը դեռ չէր յաղթած։ Ստեֆէնսոնը հասկանում էր որ այդ շինութեան աջողութիւնից է կախուած իր գիւտի ապագան։ Նա ամեն տեղ էր, նախագծում էր, հսկում, օրինակ տալիս, ամբողջ օրը ոտի վրա էր։ Նրա ձեռքի տակ աշխատում էր և Ռոբերտը։ Փորձառութիւնն ու գիտութիւնը ձեռք ձեռքի էին տուել։ Ամբողջ օրը աշխատելուց յետոյ՝ Գէորգ Ստեֆէնսոնը գիշերուայ մեծ մասը գծագրում էր նախագծեր, նոր և նոր յարմարութիւններ էր հնարում, թղթակցութիւններ էր գրում։ Եւ երբէք ոչոքի խելացի խորհուրդը չէր արհամարհում։

1830 թ. յունւարի 1-ին գիծը պատրաստ էր։ Բայց ընկերութեան կառավարիչները տատանւում էին՝ բանեն ձիո՞վ, անշարժ մեքենաներով թէ՞ տեղաշարժով։ Ստեֆէնսօնը համոզեց տեղաշարժների մրցութիւն նշանակել։

Որոշւած օրը Ստեֆէնսօնը մասնակցեց մրցութեան իր նոր շինած՝ «Ռակէտ» տեղաշարժովը։ Բազում տարիների գործնական դիտողութիւնը միացրել էր իր ինքնակրթութեամբ ձեռք բերած ընդարձակ գիտութեան հետ և կատարելագործել մեքենան։

«Ռակետը» դուրս եկաւ քարշ տալով իր ետևից բազմաթիւ վագոնները 1200 փութ բեռնով և շարժւեց 24 վերստ արագութեամբ մի ժամում. իսկ յետոյ մի մարդատար վագոնի հետ, որի մէջ նստած էին 36 հոգի, սլացաւ 40 վերստ արագութեամբ. ամբոխը չէր հաւատում իր աչքերին և ցնծութեամբ ողջունում էր Ստեֆէնսօնին։

«Ռակետը» յաղթել էր։

Աշխարհիս ամենամեծ գիւտերից մէկը արւած էր։

Յուզւած, ինքնավստահ գլուխը վեր բարձրացած, հայրը դառնում էր այդ օրը տուն՝ յենւելով իր որդու ուսին։ Եւ անսահման երջանիկ էր։

Թէ Անգլիայում և թէ ուրիշ երկիրներում արագ սկսեցին շինել երկաթուղիներ։ Թագաւորները, գիտնական ընկերութիւնները, մեծ մեքենագէտները դիմում էին Գէորգ Ստեֆէնսօնի խորհուրդներին։ Ամբողջ աշխարհը ճանաչեց «ինքնուս մեքենագէտին» ու խոնարհւեց նրա հանճարի ու գիտութեան առջև։

---

71. Հովիւը

Ագամայ մութը դեռ նոր փարատած
և սարի ուսից դեռ կամաց-կամաց
նոր է լուսաստղը երեսը հանում,
հովիւը ոչխարն արօտ է տանում։
Շրքեղ ու դալար լեռների օդը
և շաղաթաթախ ծաղիկն ու խոտը
դրախտի անուշ կընդրուկի նըման,
առատ բուրմունքով, շընչով կենսական

լըցնում է կուրծքը, վերացնում հոգին.
ի՜նչը կը հասնի մեր հովւի կեանքին։

Առաջին շողը արևագալին
երբոր ընկնում է լեռների ծայրին,
կարմըրին տալով, ասես թէ քըրքում,
ժայռի ժանիքը վարդերանգ ներկում՝
հուժկու հովիւը այդ ժամանակին
յենւած հովւական երկայն մահակին,
ծակւած փափախը ականջին թեքած,
թերմաշ եափընջին ուսովը գցած,
ինչպէս լեռների տէր ու թագաւոր,
ողջոյն է տալիս
նոր օրը գալիս
երամիշտներովն իրա թևաւոր։

---

72. Առաջինն ու վերջինը

ա.

Իմ գրասեղանի ճակատին պատից կախ արած կան զանազան նկարներ, պատկերազարդ բաց-նամակներ։ Այս բաները կան գրեթէ ամեն տեղ. կայ անշուշտ և ձեր տանը։

Բայց իմ գրասեղանի պատին պնդացրած կայ մի բան, որ չեմ կարծում՝ թէ մի ուրիշ պատի էլ կպցրած տեսնէք, երբև զարդ։ Դա մի շատ հասարակ բան է. մի պապիրոս. ծայրից մի քիչ ծխած, ճանճի ծեռուկներով ծածկւած, երեսուն տարեկան մի պապիրոս։

Այո՛, ուղիղ երեսուն տարի այդ պապիրոսը ցցած է պատիս, իմ աչքերի առաջ, իմ համր ընկերը գիշեր-ցերեկ։

Ահա՛ անեմ ձեզ այդ պապիրոսի պատմութիւնը։ Մի շատ հասարակ ու շատ սովորական պատմութիւն։

բ.

Այ էն տարին երկրորդ դասարանումն էի։ Մեր դասարանում երեք-չորս հոգի կային, որոնք թէ՛ հասակով, թէ՛ տարիքով մեծ էին մեր մէջը. նրանք հրամայում էին մեզ. վարժապետներն անգամ նրանց հետ մի ուրիշ տեսակ էին. մենք փոքրերս վախում էինք նրանցից

ու ակնածում. Թէև դասերը միշտ չէր գիտէին, բայց դասերից դուրս ուրիշ ամեն բան գիտէին. դուրսը, խաղերի ժամանակ, նրանք էին ղեկավարն ու պարագլուխը. դասարանի ներքին գործերում միշտ նրանք էին ամեն բան կարգադրողն ու որոշողը. հերթով օրապահ էինք լինում բոլորս, բայց իսկական, մշտական օրապահները նրանք էին. նրանք էին դասարանը վարում և չարութիւնների բոլոր աղբիւրը նրանցից էր. և մենք բոլորս հնազանդւում էինք նրանց. նախ որ վախում էինք ծեծից, եթէ չը լսէինք, մէկ էլ որ զգում էինք նրանց գերազանցութիւնը և խոնարհւում:

Նրանք ծխում էլ էին. գրպաններումը միշտ ծխախոտ կար. դասամիջոցներին քաշւում էին պարտէզի կամ մեր դպրոցի հին շէնքի մի խոր անկիւնը ու ծխում. այդ էլ որ չեղաւ՝ մտնում էին արտաքնոցները ու այնտեղ ծխում: Բոլորս գիտէինք, բայց ոչ ոք իհարկէ ուսուցիչներին ոչինչ չէր ասում, չէ՞ որ դա կը լինէր մատնութիւն. մենք ոչ միայն ոչինչ չէինք ասում, այլ և հիանում էինք. նրանք շարունակ ծաղրում էին մեզ, թէ մենք դեռ երեխայ ենք, դեռ ոչինչ չենք հասկանում. և այնպէս յաղթանակով ներս էին քաշում ծուխը, յետոյ բաց թողնում և այնպէս արհամարհանքով նայում մեզ վրա…

Գ.

Այդ արհամարհանքը ինձ շատ էր վիրաւորում. ես էլ էի ուզում նրանց պէս քաջ լինեմ, նրանց պէս մեծ լինեմ, մարդու շարք ընկնեմ, ես էլ էի ուզում ծխեմ:

Վճռել էի մէջս, բայց սկսելը յետաձգում էի. մի ներքին բնազդական բան պահում էր ինձ, չէր թողնում, մէկ էլ որ հայրս շատ բարի, բայց շատ էլ խիստ մարդ էր. որ իմանար, հոգիս կը հանէր:

«Ա՛յ, վախկոտ եմ, ա՛յ երեխայ եմ. նրանք դրուստ են ասում» անցաւ մտքովս». և այդ գաղափարը սաստիկ դիպաւ ինքնասիրութեանս:

Պատկերացաւ աչքիս դէմ մեր դասարանի ամենից մեծը, պապիրոսը դնչին, ինքնաբաւական ու մի սպանիչ արհամարհանքով ինձ նայելիս…

Էլ պրծաւ, առանց այլևայլութեան մտայ մեր դահլիճը, ուր սեղանի վրա միշտ պապիրոսներ կային դրած հիւրերի համար, որովհետև ոչ հայրս էր ծխում, ոչ մեծ եղբայրներս:

Վերցրի մի պապիրոս, արագ կոխեցի գրպանս ու դուրս եկայ. բայց որտեղ ծխէի. մտածեցի դէս-դէն, յարմարը խոհանոցն էր:

Ճաշերից յետոյ մայրս այնտեղ իսկի չէր մտնի, ծառան էլ այդ միջոցին գնում էր իր համար ման գալու և միայն թէյի ժամանակ էր վերադառնում:

Դ.

Մնացել էինք ես, իմ պապիրոսը և խոհանոցը: Ինձ թւում էր, թէ երեքս էլ միմեանց էինք սպասում: Հանդարտ քայլերով մտայ և դուռը փակեցի անձայն:

Սիրտս և ոտներս դողում էին…

Արագ-արագ սկսեցի լուցկի որոնել:

Լուցկի չը կար ոչ պլիտայի վրա, ոչ պահարանում, ոչ սեղանի արկղիկում, ոչ մի տեղ. անպիտան ծառան դրել էր գրպանը ու կորել. Նա էլ ծխող էր:

Փայտացած կանգնած մտածում էի՝ ինչ անեմ:

Յանկարծ գլխի ընկայ որ վառարանում կրակ կարող է լինել: Բացի դռնակը, դեռ պսպղում էին փոքրիկ կայծեր:

Փոխանակ ունելիքով կամ որև է մի բանով մի կայծ կամ մի կտոր փոքրիկ կրակ դուրս քաշելու, Աստուած խելքս առել էր այդ րոպէին, չոքեցի պլիտի առաջ և պապիրոսի մի ծայրը միշտ բերանիս՝ միւս ծայրը խոթեցի պլիտի դռնից ներս, կպցրի կրակին և մի պինդ ու երկար ձիգ տւի պապիրոսի ծուխը:



Լցւեց կուրծքս ծուխով: Ես բարձրացայ, պլիտի դուռը փակեցի և սկսեցի ագահաբար ու իրար ետևից աւելի ու աւելի խորը ներս քաշել ծուխը. միաժամանակ վախով նայում էի դռանը, ամեն մի ոտնաձայնին:

Յանկարծ զգացի, որ սիրտս խառնում է ու գլուխս պտոյտ է գալիս, գցեցի պապիրոսը և վազեցի դէպի դուռը ու… էլ չեմ յիշում…

Ե.

Երբ աչքս բաց արի, տեսնեմ

մեր սենեակումն եմ, մայրս կողքիս նստած, քնքշաբար շոյում է ինձ։ Տեսնում եմ նոյնպէս և իմ չարաբաստիկ պապիրոսը առաջս սեղանի վրա դրած։

—Ծխախոտը թոյն է, աչքիս լոյս,—ասաւ մայրս լուրջ ձայնով՝ հէնց որ ուշքս ետ էր եկել ու քիչ հանգստացել էի.—Նա քայքայում է մարդու առողջութիւնը, մանաւանդ մատաղ հասակից ծխողի։ Խօսք տուր ինձ, արևիդ մեռնեմ, ազնիւ խօսք տուր, որ այլ ևս երբէք ծխախոտ չես դնի բերանդ, մինչև հասուն մարդ դառնալդ։ Իսկ նրանից յետոյ ինքդ գիտես.—վերջացրեց մայրս և խորին խանդաղատանքով համբուրեց ճակատս։

Ես լալով փարեցի մօրս կրծքին։

—Մայրի՜կ, ես խոստանում եմ քեզ, որ էլ երբէք ձեռքս չեմ առնի պապիրոսը, քանի որ ապրեմ աշխարհիս երեսին, երբէք։

—Կամենում ես,—ասաւ մայրս,—ցցենք այս թերատ պապիրոսը քո գրասեղանի պատին, իբրև անմոռաց յիշատակ քո ուխտին։

—Այո՛, մայրիկ ջան.—պատասխանեցի ես՝ խորապէս յուզուած։

Եւ մայրս իր ձեռքով մեխեց պապիրոսը պատին։ Երեսուն տարի է արդէն։

Ես հաստատ պահեցի իմ խօսքը։

Եւ ամեն անգամ, երբ տեսնում եմ աշակերտներ կամ հէնց մեծահասակ գիմնազիստներ ու ռէալիստներ պապիրոսը բերաններին դրած միմեանց հետ զրուցելիս կամ թափառելիս, ես շուռ եմ տալիս նրանցից իմ երեսը՝ խորին զզուանքով…

---

73. Ամառ գիշերը գիւղում

Լուսընկայ գիշեր,
երկինքը պայծառ,
անհամար աստղեր
ցոլցլում են վառ։

Քընած է արդէն
հովտում ողջ գիւղը,
մըթնած ու լուռ է
գիւղացու հիւղը։

Յոգնած գիւղական
ընտանիքն ահա
սրահում, կալում
կամ կըտրի վըրա

երկնքի դիմաց
դրկուած են քընած,
վերևիցն, ասես,
ժըպտում է Աստուած։

74. Քինաքինա

ա.

Կոլումբոսից յետոյ սպանացիք հետզհետէ տիրեցին Միջին և Հարաւային Ամերիկայի մի մեծ մասին։ Շարունակ ահագին քանակութեամբ բախտախնդիր մարդիկ դիմում էին այդ նոր աշխարհները ոսկի ու հարստութիւն ձեռք բերելու յուսով։ Եւ Ամերիկայում իրենց այդ նպատակին շուտով հասնելու համար ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում և շատ վատ էին վարւում տեղացի ժողովուրդների հետ. աշխատեցնում էին, հարստահարում, ամեն չնչին բանի համար ծեծում, չարչարում ու հալածում։ Եւ բնականաբար տեղացիներն էլ ատելով ատում էին իրենց կեղեքողներին, թէև միշտ հպատակւում էին նրանց, ծառայում և արտաքուստ ամեն կերպ աշխատում էին հաճոյանալ, թէ չէ՝ ապրելը ուղղակի անկարելի կը լինէր եւրոպացիների ձեռքի տակ։

Այսպէս էլ Պերուի կառավարիչը 1640 թւին մի խիստ անսիրտ մարդ էր։ Շրջապատողները նրան հաճելի լինելու համար ինչ գազանութիւններ ասես անում էին տեղացիների գլխին։ Կառավարիչը յանկարծ մեռնում է կարճ միջոցում ու սարսափելի տանջանքներով։ Լուր է տարածւում որ պերուցիք թունաւորել են։

Սպանիայի թագաւորը նրա տեղը ուղարկում է մի ուրիշին։ Պերուցիների ականջը լուր է հասնում, որ նոր կառավարիչը՝ իշխան Գիխոնը մի մեղմ, արդար ու բարի մարդ է, բայց ոչ-ոք չի հաւատում,—այնքան վախեցել էր նրանց աչքը եւրոպացիներից։

Նոր կառավարչի գալուց մի-երկու օր առաջ պերուցիների ցեղապետը գիշերով ծածուկ կանչում է իր բոլոր ցեղակիցներին անտառի խորքը քինաքինայի մի գեղեցիկ ծառի տակ։ Եւ հէնց որ հաւաքւում են՝ այսպէս է խօսում։

—Գիտէք, որ Սպանիայից գալիս է նոր կառավարիչ։ Կարելի է որ սա նախորդից էլ աւելի վատթար կերպով մեզ տանջի ու չարչարի։ Եկէք կրկնենք մեր երդումը այս սուրբ «առողջութեան ծառի» տակ, որ երբէք յայտնելու չենք սպիտակամորթներին սրա բուժիչ յատկութիւնը։ Սպիտակների դէմ մեր միակ դաշնակիցը տենդն է, որից հազարներով կոտորւում են նրանք և միայն մի գանձ է մնում մեզ, որ դեռ նրանք չեն խլել մեր ձեռքից. և էդ գանձը այս ծառի բուժիչ կեղևն է։ Երկնքի այս պարգևը պահենք մեզ։ Վա՜յ նրան, ով վախից կամ գութից յայտնի մեր գաղտնիքը մեր կեղեքիչներին. մահ

մատնիչին։ Եթէ այդտեսակ մի դաւաճան գտնուի մեր մէջ, երդւենք որ սպանելու ենք նրան էլ, կնոջն էլ, երեխաներին էլ և սրբելու ենք նրա ամբողջ ցեղը աշխարհիս երեսից։

«Երդւում ենք, երդւում ենք.—կրկնեցին միաձայն պերուցինե-րը.—երդւում ենք՝ կրենք ամեն տանջանք ու մահացու չարչարանք, բայց մեր գաղտնիքը երբէք չը յայտնենք...»

Երդւեցին ու իսկոյն ցրւեցին. վտանգաւոր էին այդ տեսակ ծածուկ հաւաքումները, սպիտակները կարող էին իմանալ, կասկածել ու պատճառ դառնալ նոր հալածանքների։

Բ.

Եկաւ նոր կառավարիչը իր երիտասարդ կնոջ հետ։ Պերուցիք դէմ գնացին նրանց դիմաւորելու. և պերուցի կանայք ծաղիկներ սփռեցին իշխանուհու առաջ. դրանց մէջն էր և Զուման, ցեղապետի գեղեցիկ ու դեռատի հարսը։

Իշխանուհին Զումային որ տեսաւ, շատ հաւանեց և ուզեց որ իր մօտ մնայ ծառայելու։ Զուման մտաւ պալատ նրա ծառայութեանը և

կարճ ժամանակի մէջ այնպէս սիրելի դարձաւ, որ իշխանուհին մի քայլ իրենից հեռանալ չէր թողնում։ Իշխանուհու այդ սէրն ու վստահութիւնը ի հարկէ պալատական տիկիններին շատ էլ դուր չէր գալիս, նախանձում էին նրան, յաճախ չարախօսում էին նրա մասին իշխանուհու առաջ, աշխատում էին կասկած գցեն նրա սիրտը, թէ Զումայի սէրը կեղծ է, թէ բոլոր տեղացիք ատում են սպանացիներին, նա կեղծում է, ով գիտի ինչ դա նիւթելու համար. բայց տիկինը ոչ-մի ուշ չէր դարձնում այդ փսփսուկներին ու սրտանց կպել էր այդ պերուցի սիրուն ու երիտասարդ կնոջը։

Անցան ամիսներ և իշխանուհու առողջութիւնը խախտւեց. հիւանդութիւնը օր-օրի աւելի էր սաստկանում։ Սպանացի բժիշկը տալիս էր իր բոլոր գիտեցած դեղերը, ոչինչ չէր օգնում. հիւանդը մէկ տաքացնում էր, մէկ դողացնում և բժիշկը վարանած շարժում էր գլուխը՝ «Թունաւորւած չը լինի՞»։

Թո՜յն. ով պիտի թունաւորէր. պալատում ամենքը վստահելի մարդիկ էին. օտարը միայն Զուման է. միթէ նա...

Իսկ Զուման այդ միջոցին սաստիկ տանջւում էր. տանջւում էր, որովհետև խոր սիրում էր իր բարի տիրուհուն, և գիտէր նրան բուժելու դեղը, բայց յայտնել չէր կարող։ Եւ ո՛չ ոքի. չէ՞ որ երդւել էին

ամբողջ ցեղով, չէ՞ որ դա վերջին զէնքն էր տեղացիների ձեռքին, վերջին գանձը, քինաքինայի կեղևը...

Եւ Զուման լուռ տանջւում էր, իսկ իշխանուհու վիճակը օրէ օր վատթարանում։ Վերջապէս բժիշկը յայտնեց որ մահը մօտ է։ Զուման յուսահատ ինչ անելը չէր իմանում։ Յանկարծ մի լոյս ընկաւ նրա հոգին. տեղը յայտնել չէր կարող, բայց դեղը տալ այնպէս, որ ոչ ոք չիմանայ, հօ կարող էր։

Իսկոյն կանչել է տալիս իր ամուսնուն, ասում է՝ որ իրեն վատ է զգում, կարծես տենդ ունի, և խնդրում է, որ ծածուկ իր համար քինաքինայի փոշուց մի քիչ բերի։

Գալիս է գիշերը։ Ամբողջ պալատը թաղւած է խոր քնի մէջ. իսկ իշխանը իր սենեակում տարւած է իր աշխատանքով։ Զուման կամաց, ոտների մատների վրա, անց է կենում իշխանի սենեակի առաջով, մտնում է կից հիւանդի ննջարանը, զգոյշ մօտենում է անկողնին, որ հիւանդը չը զարթնի և դողդոջուն ձեռքով թափում է փոշին անկողնի կողքը դրած խմիչքի մէջ...

Յանկարծ մի ուժեղ ձեռք բռնում է ետևից նրա թևը, միւս ձեռքով փակում է նրա բերանը, որ ձայն չը հանի հիւանդի սենեակում ու քարշ է տալիս դուրս թուլացած ու խելակորոյս կնոջը։

—Ի՞նչ ցանեցիր խմիչքի մէջ.—հարցնում է իշխանը կատաղած առանց բաց թողնելու վախից քարացած կնոջ թևը։

Զուման լուռ է։

Իսկոյն ոտի է կանգնում ամբողջ պալատը, ծառաները կապկըպում են թոյն խառնողի թևերը ու տանում կոխում բանտ։

Գ.

Ամեն կողմ տարածւում է լուրը, թէ Զուման թոյն է տւել։ Յուզւում են պերուցիները, գիտեն որ խեղճ կնոջը տանջալի մահ է սպասում։

Դատարանի դահլիճը լիքն է բերնէ բերան. և՛ եւրոպացի և՛ տեղացի՝ ամենքը այնտեղ են։

Ներս են բերում պերուցի կնոջը շղթայակապ. և սկսւում է հարցաքննութիւնը։

—Դո՞ւ էիր իշխանուհու խմիչքի մէջ փոշի ցանողը։

—Այո՛։

—Ո՞րտեղից գտար այդ փոշին։

—Ես տւի նրան,—հնչում է յանկարծ բազմութեան միջից մի ուժեղ առնական ձայն և ցեղապետի տղան առաջ է գալիս։

—Ո՛չ, ո՛չ, նա յանցանք չունի. նա ոչինչ չէր իմանում,—հեծում է Զուման։

—Լռի՛, կի՛ն. մի՞թէ կարծում ես՝ էլ կարող եմ ապրել քեզնից յետոյ։ Ինձ յանձնում եմ դատարանին։

—Էտ ի՞նչ փոշի էր, որ տւիր նրան. թո՞յն։

—Ո՛չ։

—Գուցէ մի բուժի՛չ դեղ տենդի դէմ։

Զուման յիշում է իրենց երդումը և սարսափած բացականչում.

—Ո՛չ, ո՛չ. տենդի դէմ ոչ մի դեղ չը կայ։

—Որ դեղ չէ, ուրեմն թոյն.—եզրակացնում է դատաւորը.—ուրեմն խոստովանում էք, որ այդ փոշին թոյն էր։

—Մենք ոչինչ չենք խոստովանում.—պատասխանում է ամուսինը հպարտ։

—Ես միայն լռել կարող եմ.—աւելացնում է Զուման խոնարհ։

Կանչում են բժշկին՝ հարցնելու։

—Շատ տարօրինակ բան է իշխանուհու հիւանդութիւնը.—վըկայում է բժիշկը.—ոչ մի դեղ չի օգնում. ես կարծում եմ, որ այդտեղ գործում է մեզ անծանօթ դանդաղ մի թոյն։

Դատաւորները սարսափահար նայում են այդ երկու թունաւորիչների վրա, քիչ խորհրդակցում են ու վճռում.

—Վաղը, կէս օրին կայրւեն երկուսով խարոյկի վրա։

Ու մի խոր հառաչանք է դուրս թռչում դժբախտ կնոջ կրծքից։

—Քաջ եղի՛ր, Զումա։ Մահը մեզ կազատի այս ստոր ստրկութիւնից.—բացականչում է ամուսինը ոգևորւած.—մեռնենք ու լինենք ազատ։

Դ.

Առաւօտը բոլոր տեղացիներին հրաման գնաց, որ գան ներկայ լինեն պատժին։ Երկուսի սոսկալի մահով ուզում էին ժողովուրդին վախ ազդեն։ Մռայլ ամբոխը հաւաքւեց արդէն վառւած խարոյկի շուրջը, որ շղթայել էին սպանացի զինւորները։ Իսկ կառավարիչը չէր ուզեցել ականատես լինի, թողել հեռացել էր քաղաքից։

Շուտով երևաց հեռուից մի հարիւրեակ զինւոր, որանք շրջապատել բերում էին մահապարտներին։ Արևի պայծառ ճառագայթները խաղում էին զինւորների սաղաւարտների, զէնքերի ու զրահների վրա։ Թմբուկները սկսան որոտալ... գունդը կանգ առաւ խարոյկի առաջ։ Զումային ու ամուսնուն հագցրել էին երկար շորեր, գլուխներին գցել էին մի-մի տոպրակ աչքերի տեղը միայն ծակ թողած, ու թևերը կապած ետև։

Գունդը կանգ առաւ, թմբուկները լռեցին, տիրեց մի սարսափելի լռութիւն. ահագին ամբոխը քարացել էր իր տեղը, ոչ մի շըշիւն։ Եւ պաշտօնեան արդէն պատրաստւում էր մահապարտներին դէպի խարոյկը առաջնորդելու, երբ յանկարծ հեռուից ձիու դոփիւն լսւեց և մի սպայ շնչասպառ մօտ վազեց ու յայտնեց պաշտօնակա-

տարներին, որ սպասեն, գալիս է ինքը իշխանուհին, և առանց նրան պատժին չը ձեռնարկեն։

«Ի՞նչ է...», «ո՞վ է գալիս», «ինչո՞ւ», շշուկը ընկաւ բազմութեան մէջ, որ ծովի ալիքի պէս սկսեց շարժուել։

Եւ իրաւ, ահա իշխանուհու պատգարակը, որ չորս հոգի բերում էին իրենց ուսին։ Զինուորները խոյս տուին։ Նա դժուարութեամբ բարձրացաւ իր պառկած տեղից, յենւեց Թևին ու ասաւ.

—Ես միայն հիմա իմացայ, ինչ որ պատահել է, էն էլ գրեթէ զոռով. ինձնից ծածկում էին. շատ եմ ցաւում, թէ չէ այս սարսափելի պատկերը հիմա չէինք տեսնի։ Մեղապարտներին ներելը իմ իրաւունքից վեր է։ Բայց նրանց համար թողութիւն խնդրել կարող եմ, և յոյս ունեմ, որ ամուսինս չի մերժի իմ այս, գուցէ վերջին, խնդիրս։ Առայժմ հանգցրէք այդ սարսափելի խարոյկը և արձակեցէք Զումայի ու իր ամուսնուն կապանքները։ Ես պատասխանատու եմ, նրանք չեն փախչի։ Բերէք նրանց էլ ինձ հետ։

—Երկար կեանք ու առողջութիւն մեր իշխանուհուն.—լսեց յանկարծ մի բարձր ձայն ամբոխի միջից։

—Այո՛, կեանք ու առողջութիւն.—որոտաց ցեղապետի ձայնը իբրև պատասխան.—Նա պէտք է որ ապրի, նա պէտք է որ առողջանայ։

Եւ մի փսփսուկ ընկաւ տեղացիների մէջ. ականջ ականջի յայտնեցին իրար, որ մի ժամից հաւաքուեն անտառը...

ե.

Իշխանուհին դարձաւ պալատ բոլորովին ուժասպառ։ Հազիւ էր հանգստացել մի-երկու ժամ, որ հրամայեց իր մօտ կանչեն Զումային։

Իզուր համոզում էին, որ ձեռք վերցնի այդ անպիտանից, որ իզուր տեղը չը յուզուի բայց իշխանուհու կամքը անխախտ էր։ Բերին Զումային։ Իշխանուհին փռւել էր մի մեծ թիկնաթոռի մէջ, անշարժ ու տանջուած։

—Զումա՛, մօտ եկ.—խօսեց նա մեծ դժուարութեամբ։—Ես քեզ այնպէս սիրում էի... և չեմ կարող վրադ բարկանամ...

Զուման յուսահատութիւնից չը գիտէր ինչ անէր... Իշխանուհին կասկածում էր նրա վրա, թէև ներում, նրան որ անմեղ էր բոլորովին և այնքան տանջուել էր հէնց իշխանուհու սիրուն. և հիմա պէտք է լռէր, ո՛չ մի բառ արդարանալու համար. ա՛, խարոյկից աւելի ծանր

էր այս մէկը։ Դժբախտ կինը լուռ ընկաւ նրա ոտները ու բարձր հեծկլտալով իշխանուհու ձեռքը սեղմեց իր շրթունքին...

Բայց նոյն վայրկեանին արագ քայլեր լսեցին դուրսը և ուրախ ձայներ, որոնց մէջ ճանաչեց իշխանուհին իր մարդու ձայնը։

—Քո անունով ես ներում խոստացայ յանցաւորներին. ների նրանց.

—եղաւ հիւանդի առաջի խօսքը, հէնց որ ամուսինը շեմքից ներս մտաւ։

—Յանցաւոր չը կայ, որ ներեմ.—եղաւ կառավարչի զւարթ պատասխանը։ —Մտէք, մտէք, ներս մտէք.—դարձաւ նա դէպի դուռը։

Ներս մտան ցեղապետն ու իր տղան՝ Զումայի մարդը։

—Զումա՛.—ասաւ ծերունի պերուցին.—ցեղի թոյլտուութեամբ յայտնեցի ես իշխանին սուրբ ծառի գաղտնիքը։ Յայտնեցի, որ դու իշխանուհու խմիչքի մէջ բուժիչ դեղ էիր ցանել։

—Բուժիչ դե՞ղ.—բացականչեց հիւանդը ապշած ու զարմանքով.— ապա էլ ինչո՞ւ էիր լռում, Զո՛ւմա։

—Երդումը կապել էր նրա շրթունքները.—բացատրեց կեսրարը։— Բայց իշխանուհին իր գթասրտութեամբ յաղթեց մեր երդման ուժին։ Ինքը կիսակենդան եկել էր ազատելու ու ներելու իր կարծեցեալ թունաւորիչներին։ Նրա ազնիւ սիրտը ուրիշներին ազատելով՝ իրեն ազատեց վերահաս մահից։ Մենք վայրենիներս յարգում ենք սրտի ազնւութիւնն ու հոգու վեհութիւնը։ Մենք մեր «առողջութեան ծառը» նուէր ենք բերում իշխանուհուն։

—

Այդ օրից եւրոպացիք ծանօթացան քինաքինայի հետ, որ մարդկութեան բարիքներից մէկն է։ Եւ այն տեղը, ուր Զումայի համար խարոյկ էին վառել, բարձրանում է այժմ մի արձան, որի վրա ոսկի տառերով փայլում են հետևեալ բառերը. «Զումայի յիշատակին, որ փրկեց մահից սպիտակամորթների բարերար Գիխոն իշխանուհու կեանքը»։

75. Կալ

Սիրեցի ես քեզ, գիւղացի եղբայր.
երբ կարմիր շապկով, մազոտ կուրծքըդ բաց,
ծաղկէ թաշկինակ գլուխըդ կապած,
եզանը ձեռիդ խուրձ ես գլորում,
էհէյ, կանչում ես, հէյ, հրամայում,

դէզից վար իջնում, կամերիդ նայում.
մրջիւնի նման՝ մինչև երեկոյ
աշխատում ես դու առանց յոգնելու,
առանց տրտունջի՝ հոգոց հանելու։

Իսկ երբ երեկոն իջնի ասողալից,
բոլորում ես դու ժիր բանւորներիդ,
ձայն տալիս, կանչում ջահել հարսներիդ,
կալը հաւաքում. Թիակըդ առնում
և հէնց լեռներից փըչի մեղմ հովը,
լուսինն էլ ելնի, սըփռի իր շողը,
կասածըդ տալիս հովին ու զովին,
Թարմ ոսկի ցորենն ու դեղին դարման
ջոկում ես, դիզում պաշարըդ տարւան։

76. Վերելքը

ա.

1829 թւի սեպտեմբերի սկզբներին էր։ Կաթողիկոսի թարգման և գրագիր, Խաչատուր սարկաւագ Աբովեանին էր յանձնւած ցոյց տալ Ս. Էջմիածնի հնութիւնները գերմանացի գիտնական պրոֆէսոր Պարրոտին, որը իր հինգ աշակերտների հետ եկել էր ռուսաց նոր նւաճած երկիրը, Արարատեան դաշտը ուսումնասիրելու և ցանկանում էր Մասիս լեռան գագաթը բարձրանալ։ Իր գիտցած ռուսերէնով նա յափշտակութեամբ ամբողջ օրը տեղեկութիւններ էր տալիս հիւրերին, պտտացնելով Վաղարշապատի վանքերը։

Մթնել էր արդէն և յոգնած ճամփորդները վաղուց քնել էին վանական հիւրանոցում, իսկ երիտասարդ սարկաւագը յուզւած դեռ ման էր գալիս տաճարի պատի տակերում։ Նա մտածում էր օրւայ տպաւորութիւնների մասին։ Օտարականները աւետարանը, մասունքներն ու սրբերի պատկերները չէին համբուրում, մոմ չէին վառում, երեսներին խաչ չէին հանում, նոյն իսկ պատարագի միջոցին. այդ վշտացնում էր ջերմեռանդ սարկաւագին։ Բայց ինչպիսի ուշադրութեամբ ականջ էին դնում նրանք հայկական ժամերգութեանն և եկեղեցական երգերին, ինչպիսի հետաքրքրութեամբ զննում էին մասունքները, վանքի թանկագին իրերն ու հնութիւնները, շինութիւնների ձևերն ու զարդերը, հայերէն ձեռագրերը, մանաւանդ՝ ինչքան մանրամասն հարցնում էին՝ չը կայ արդեօք որև է բան ձեռագրերի մէջ Մասիսի մասին։

Ապա նրանք ամբողջ երեկոյ երկար դիտում էին Մասիսը։

Խաչատուր սարկաւագը յիշեց, թէ ինչպէս ինքն էլ շատ տարիներ առաջ, մանուկ ժամանակ, նստած մի բլրակի վրա, իր հայրենի Քանաքեռ

գիւղից դուրս, ժամերով աչքը չէր հեռացնում այդ աննման լեռան ձիւնապատ գագաթից։ Այնտեղ ապրում է Նոյ նահապետը իր բիւրեղէ ապարանքում,—պատմում էր միշտ հայրը,—անթիւ գոհարներով պսպղում են նրա պատերը արշալոյսին և վերջալոյսին, և փղոսկրէ գահի վրա բազմած՝ ծերունի նահապետը անհասանելի բարձունքից հսկում է շուրջը, Հայկական աշխարհը։ Իր տղայական երևակայութեամբ նա անզուսպ թռչում էր դէպի այդ բարձունքը. ո՜հ, ինչպէս կուզենար թևեր ունենալ ու սաւառնել վե՛ր, վե՛ր, Նոյ նահապետի մօտ, կանգնել նրա առջև ու ասել.

—Պապի, պատմի ինձ աշխարհի կործանումից ու մեծ ջրհեղեղից, պատմի՝ ինչ է անցել գնացել իմ անբախտ հայրենիքի վրայով...

Եւ ահա այժմ հեռաւոր հիւսիսից, Դորպատից, հազարաւոր մղոններ կտրելով, այդ օտարազգիները, թռել եկել են, ուզում են հասնեն ծերունու չքնաղ ապարանքին... Ո՞րտեղից են առել յանդուգն թևերը, ինչ են ուզում իմանալ ծերունուց։

բ.

Երբ երկու օր յետոյ օտարականները թողնում էին հիւրասէր վանքը, Խաչատուր սարկաւագը նրանց հետ էր։ Պրոֆէսոր Պարրոտի խնդիրքով կաթողիկոսը թոյլ էր տւել նրան, որ ընկերակցի գերմանացիներին, իբրև թարգման և իբրև երկրի հանգամանքներին ծանօթ ու աչքաբաց երիտասարդ։ Սարկաւագը անչափ երջանիկ էր։ Նա քշում էր իր նժոյգը կից պրոֆէսորի նժոյգին և վստահ ու հակիրճ պատասխաններ էր տալիս նրա հարցերին։

Յաջորդ օրը խումբը հասաւ ս. Յակոբի վանքը, Մասիսի լանջին, և պրոֆէսորը սկսեց իսկոյն փորձնական վերելքի պատրաստութիւնը տեսնել։ Իր մի ընկերոջ հետ միւս առաւօտն և եթ նա փորձեց արևելեան կողմով վեր ելալ։

Երեք օր նա չէր վերադառնում։ Նրա բացակայութեան միջոցին խմբի մնացած անդամները նոյնպէս պարապ չէին մնում. մէկը աստղերն և օդի երևոյթներն էր դիտում, միւսը հաւաքում էր ծաղիկներ, խոտեր, զանազան բոյսեր, ճիճուներ, ցամաքային ու ջրային կենդանիներ, երրորդը չափում նկարում էր շրջակայքը։ Խաչատուր սարկաւագը սրա կամ նրա հետ էր լինում, աշխատում էր ինքն էլ մի բանով օգնի և յաճախ հարցնում էր ինքն իրեն. «ինչին են պէտք սրանց այդ իրերը. այդ գործիքներով միթէ կը չափեն աստ-

ղերի շարժումը կամ լեռների բարձրութիւնը հեռուից»։ Եւ մի ներքին ձայն սաէպ կրկնում էր իրեն, թէ ինքը դեռ շատ է թերուս և շատ քիչ բան է սովորել վանքի Ժառանգաւորաց դպրոցում և Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում։ Նա իր ամբողջ էութեամբ զգում էր ու տեսնում, որ հայերէն գրքերից իր սովորածը այն չէ, ինչ որ գիտեն այդ մարդիկ։ Զգում էր և յուսահատւում։

Վերջապէս պրոֆէսորը վերադարձաւ և յայտնեց թէ հազիւ կարողացել էր տասն և երեք հազար ոտնաչափ բարձրանալ. աւելի հեշտ է լինել արևմտեան կողմից։

«Ինչ են սրանք անելու այնտեղ, վերևում,—ակամայ անցնում էր սարկաւագի մտքով, երբ պրոֆէսորն ու իր ընկերները շորերն էին կապկպում, ուտելեղէնի պաշարը տեսնում, երկաթատապան կօշիկներ հագնում ու ձեռներն առնում սրածայր կեռագլուխ գաւազանները։ Նա այլ ևս՝ չը համբերեց ու դիմեց Պարրոտին.

—Պարոն պրոֆէսոր, խնդրեմ՝ ինձ էլ առէք ձեզ հետ։

Պրոֆէսորը մի րոպէ զարմացած նայեց երիտասարդի երեսին։

—Բայց չէ՞ որ դուք դեռ անփորձ էք, անսովոր վերելքի դժուարութիւններին... վերջապէս՝ ոչ տաք զգեստ ունէք, ոչ էլ յարմար կօշիկներ,—ասաւ նա։

—Պարոն պրոֆէսոր, մենք լեռների զաւակ ենք, մանկուց սովոր ենք մագլցելու ժայռերով։ Ցրտից էլ չեմ վախենում։

Նրա վառվռուն աչքերի մէջ այնքան եռանդ ու հաստատակամութիւն էր ցոլում, որ գիտնականը մերժել չը կարողացաւ...

—Լաւ. եկէք։

Գ.

Մի տեղացի հայ կալւածատէր, վեց գիւղացի և երկու ռուս զինւոր պիտի ուղեկցէին գիտնական արշաւախմբին։

Վաղ առաւօտեան բոլորն էլ դուրս եկան վանքի պարիսպներից ու բռնեցին այն բարակ շաւիղը, որ

ձգւում էր Մասիսի արևմտեան լանջով։ Բեռները տանում էին ձիերով։

Երկար ժապաւէնի պէս սողում էր կարաւանը դէպի վեր։ Շաւիղը մէկ կորչում, մէկ նորից երևում էր, վերջապէս բոլորովին անհետացաւ։ Ճամփորդները երբեմն իջնում էին մեծ ու փոքր ձորակներ և նորից մագլցում ժայռերով, բայց շարունակ ընթանում էին դէպի վեր, դէպի վեր։ Սարկաւագը թեթև քայլում էր գիտնականների կողքին, որոնք ամեն րոպէ կռանում էին որև է քար, բոյս կամ կենդանի գետնից վերցնելու համար. շարունակ չափում, դիտում և արձանագրում էին իրենց յիշատակարանների մէջ։

Անդադար առաջ էին գնում. մի քանի անգամ միայն կանգ առան մի պատառ բան ուտելու կամ խմելու այն սառնորակ ջրերից, որ Մասիսի սառուցների տակից բղխելով կարկաջում էր այս կամ այն ձորակի յատակին։ Շտապում էին, բայց ժամերն էլ թռչում էին այնպէս արագ։

Արդէն վերջալոյս էր։ Արևը մօտենում էր Բարդող լեռներին։ Ներքևում, դաշտում, ստւերները երկարանում էին, մշուշը հետզհետէ աչքից կլանում էր գիւղերն ու դաշտի բլուրները։ Երասխի դալարուն մէջքի փայլը մարում էր ու վերջապէս հանգաւ. արևի շողերը այժմ խաղում էին դիմացի Արագածի թագի ցից ծայրերին։

—Նայեցէք, նայեցէք, — բացականչեց սարկաւագը, — ամբողջ դաշտը ծածկւել է մշուշով. այնտեղ գրեթէ բոլորովին խաւար է։

—Այնտեղ միշտ խաւար է,—նկատեց գերմանացի պրոֆէսորը։

Սարկաւագը ցնցւեց ամբողջ մարմնով ու լուռ հետևեց Պարրոտին. շտապում էին դէպի գիշերատեղին։

Երբ ճամփորդները տեղ հասան, վերջին ճառագայթները հանգչում էին նաև սպիտակափառ Մասիսի կատարին։ Իսկոյն խարոյկ վառեցին հետները բերած փայտով, սեղան բաց արին, հանեցին հաց, պանիր, գառան սառն միս, իսկ սուրճը եփ էր գալիս կրակի վրա։

Մի քիչ յետոյ ամեն մէկը պինդ փաթաթւած իր վերարկուի մէջ, պառկել էին քարերի տակ բաց արած թաղիքէ փոքրիկ վրանում։ Սարկաւագն էլ՝ ս. Յակոբի վանքի վարդապետից վերցրած եափնջին իր վրա գցած, մի կերպ կծկւել էր վրանի մուտքի մօտ։ Կողքին լսւում էր յոգնած ճանփորդների մռափիւնը, իսկ նա բաշլուղը գլխին փաթաթած՝ անթարթ նայում էր պարզ աստղալից երկնքին. Նրա մտքից չէին հեռանում պրոֆէսորի խօսքերը։ Նայեց ցած—Արարատեան դաշտի վրա լոյսի ոչ մի կայծ.

—Այո, մշտական խաւար է այնտեղ,—կրկնեց նա դառնութեամբ։

Սառը արեւմտեան քամին, որը սկսել էր հետզհետէ սաստկանալ և ոսկորների ծուծը թափանցել, կարծես նոյնպէս շշնջում էր նրա հետ՝ «Խաւար է, խաւար է...»

Դ.

Լուսացաւ։ Առնելով իրենց հետ միայն կարեւոր հագուստներն ու քիչ միչ ուտելու բան, ճամփորդները սկսեցին վերելքը, վրանն ու ձիերը թողնելով գիշերատեղում։

Անցնում էին ահագին քարակոյտերով, որ կարծես հսկայական ձեռքով դիզւած էին իրար վրա, բարձրանում էին լարւած ուշադրութեամբ և զգոյշ. մի սխալ քայլ ու վերջացաւ։ Ահա և սառցագիծը. այդտեղից սկսւում էր յաւիտենական ձիւնի տարածութիւնը։ Գնում էին արդէն սառուցի վրայով. թէև ոտը սահում էր, սակայն շատ աւելի հեշտ էր բարձրանալ։ Օդի նօսրութեան պատճառով կուրծքը լայն շունչ էր քաշում, և սիրտը աւելի արագ էր բաբախում։

Կէսօրն էր արդէն և գագաթը բաւականին հեռու էր դեռ, երբ եղանակը փոխւեց։ Ամպերը պատում էին ճամփորդներին, սառը քամին փչում էր մի անտանելի աղմուկով։ Վտանգաւոր էր ճամփան շարունակելը։

Հասել էին տասնըհինգ հազար ոտնաչափ բարձրութեան։ Մի րոպէ վարանելուց յետոյ, պրոֆէսօրը փորել տւաւ սառուցը ու մի խաչ տնկեց մակագրութեամբ՝ որ 1827 թւին ռուսաց կայսրութեան սահմանները հասան մինչև այդտեղ։

Գիտնականը մի անգամ էլ կարօտով նայեց դէպի վեր, դէպի Մասիսի ամպամած գագաթը որ չէր ուզում իրեն ընդունել, ու հառաչանքը կրծքի մէջ խեղդելով՝ հրամայեց նահանջել։

Ամենքի ետևից գնում էր ինքը Պարրոտը՝ գլուխը կախ գցած, կարծես անզգայ։ Սարկաւագը քայլում էր կողքին ու երբեմն թռուցիկ հայեացք էր նետում նրա դէմքին։ Երիտասարդը կուզենար նրան մխիթարել, բայց խօսք չէր գտնում։

—Օդաչափական գործիքն ինձ տւէք, պ. պրոֆէսոր, ես կը տանեմ,—ասաւ վերջապէս նա մեղմութեամբ։

Պրոֆէսորը գործիքը մեկնեց նրան։

Ե.

Իջան նորից Ս. Յակոբի վանքը։ Պարրոտը չէր շտապում այնտեղից հեռանալու. յամառութեամբ սպասում էր։ Իսկ եղանակը օրէ-

օր վատթարանում էր։ Մասիսը պաշարւած էր սև-սև ամպերով, գագաթից լսւում էր փոթորիկի աղմուկն ու կայծակների զարկը, կարծես ծերունի Մասիսը զայրացած էր որ մարդիկ յանդգնել էին ոտք դնել իր կուսական սառուցների վրա։

Մի քանի օր յետոյ հազիւ Մասիսի ճակատը պարզւել էր, որ Պարրոտը յայտարարեց իր ընկերներին.

—Վաղը ես նորից ելնում եմ գագաթը։

Նրա ուղեկիցները լուռ էին և այդ լռութեամբ հրաժարւում էին նրան հետևելուց։

—Ես էլ գալիս եմ ձեզ հետ, պարոն պրոֆէսոր,—ասաւ սարկաւագը։

Սեպտեմբերի 27-ին մի նոր, աւելի սակաւամարդ կարաւան ձըգւում էր նորից դէպի Մասիսի գագաթը։

Այս անգամ նրանք գիշերեցին աւելի բարձր, հէնց սառցագծի տակ, մեծամեծ քարերը ապաստան ընտրելով։ Ցուրտը սաստիկ էր, խարոյկի կրակն անգամ չէր տաքացնում, աչքը խփել անկարելի էր։ Կէս գիշերին գագաթը նորից ամպեց և խուլ որոտի ձայներ էին լսւում։ Բայց առաւօտեան առաջին ճառագայթները հազար ու մի գոյներով հրավառեցին սառցէ բիւրեղները. գագաթը բոլորովին մաքրւել էր։ Հիացած և քաջալերւած՝ նրանք առաջ դիմեցին սառուցների վրայով, հասան իրենց տնկած խաչի տեղը։ Ուղեկիցներից չորս գիւղացի ուժասպառ կանգ առան այնտեղ, մնացին երկու զինւորներն և երկու ուրիշ գիւղացիները։ Ողորկ սառուցի մէջ կացնով շարունակ ոտնատեղ փորելով, ելնում էին վեր։ Ահա գագաթի երկու բլուրները։ Էլի մի վերջին ճիգ, գրեթէ վազէվազ բարձրանում են, ու վերջապէս ամենաբարձր բլրի վրա...

Սքանչելի տեսարան։ Պարրոտը ցնծում էր։ Սարկաւագը ապշած նայում էր շուրջը. լեռներ, հովիտներ։ Ահա հիւսիսում Արագածը, ահա ոտների տակը Փոքր Մասիսի սուր ծայրը, իսկ այնտեղ՝ հեռւում Սիփանը։ Ի՜նչ գեղեցիկ գալարւում են Երասխը մի կողմից, Եփրատը միւս կողմից։ Սարկաւագը ամբողջ էութեամբ զմայլւած էր. բոլոր ջղերը երջանկութիւնից թրթռում էին։ Նա տարածւեց սառուցի վրա, համբուրեց նւիրական ձիւնը և յուզմունքից արտասուք էր թափում. Նա որոնում էր մի իր, մի բան այդ ձիւների մէջ, որ տանի հետը իբրև յիշատակ, բայց ոչինչ չէր գտնում։ Նա պոկեց մի կտոր սառուց։

Իսկ Պարրոտը օդաչափական գործիքներով շտապով չափում էր. բարձրութիւնը 16,200 ոտնաչափ էր...

Կէս ժամ յետոյ վերադառնում էին նորից իրենց գիշերատեղին: Այդ երեկոն Պարրոտը սովորականից աւելի էր խօսում: Նա պատմում էր իր ուրիշ վերելքների մասին եւրոպական մի քանի մեծամեծ լեռների գագաթները և թէ ինչ մեծ նշանակութիւն ունեն գիտութեան համար այդ ուսումնասիրութիւնները: Սարկաւագը տրտում ականջ էր դնում նրա ոգեւորուած ձայնին:

—Երանի ձեզ,—դուրս թռաւ սարկաւագի շրթունքից:

—Լսեցէք, Խաչատուր սարկաւագ.—յանկարծ դիմեց պրոֆէսորը.—միթէ դուք, մի այդպիսի ընդունակ, եռանդուն, ճարտար երիտասարդ, պիտի այդ կիսատ ուսումով մնաք: Ինչու չէք գնում համալսարան:

— Տեսնո՞ւմ էք այն Մեծ Մասիսը. աւելի հեշտ է այնտեղ բարձրանալ:

—Այնուամենայնիւ մենք բարձրացանք: Ես ձեզ խօսք եմ տալիս, որ դուք կը լինէք համալսարանում:

—

Մի տարի յետոյ Խաչատուր Աբովեանը ուղևորւում էր Դորպատ. պրոֆէսոր Պարրոտի միջնորդութեամբ կառավարութիւնը նրան ճամփածախս և թոշակ էր նշանակել:

Ցանկ

1.*Գիւղի ժամը, Յ. Յովհաննիս. 3
2. Մի շաքաթ ծառի վրա,
Վ. Փափազեան, փոփոխ. 5
3.*Այգում, ըստ Ս. Շահազիզի 9
4. Դաթուան և Պետրիկեյան 9
5.*Գինի, Վ. Միրաքեան . 15
6. Փոքրիկ նաւաստին . 16
7.*Նաւավար Ա. Ծատ., փոփ. 19
8. Գիժ Մարէ 20
9.*Դաւիթը և Կողբացին 21
10. Ծնճղուկ, Տուրգենեւից . 26
11.*Սարերի արքան,
Թարգ. Ա. Ծատուրեան 27
12. Գերի արծիւը, Դոստայեւսկի 28
13.*Արծիւ, Դ. Դեմիրճեան 30
14 Ապարանի գոմէշը . . 31
15.*Աշունը սարերում,
Վ. Միրաքեան . . . 38
16. Բորը 39
17.*Փոթորիկ,
Ա. Ծատուրեան փոփոխ. 45
...էշը մեզանում, Կ. Մելիք-
...Շահնազարեան, կրճատ. 45
...նան աերևներ, Կ. Մե-
...ք-Շահնազար., կրճատ. 48
...մեռւայ դէմ, Րաֆֆի 49
...րազ, Ս. Շահազիզ . . 51
22. Կոյրերի վարժարանը,
ըստ Ամիչիսի 52
23.*Ամպերի քարւանը,
Դ. Դեմիրճեան . . . 57
24. Երկաթուղին 57
25.* Կկուն ու աքլարը,
Ա. Խնկոյեան 60
26. Խորթ եղբայրս,
Ա. Ահարոնեան, կրճատ. 61
27.*Սասունցի Դաւթի կռիւը 67
28. Հայերէնի առաջ. ուսուց. 75
29.*Անգրագէտ,
Թարգ. Յ. Յովհաննիս. կրճ. 78
30. Ղարա-խանում,
ըստ Մամին-Սիբիրեակի 79
21.*Ջրահեղձը, Պուշկին . . 84
32. Ձմեռ, Խ. Աբովեան . 86
33.*Պարզրկայ գիշեր,
Ա. Իսահակեան . . . 87
34. Գիքորը 86
35.*Կոխ 93
36. Բարեկենդան,
Փ. Պռոշեան, կրճատ 96
37.*Ջիրիդ, Վ. Միրաքեան 101
38. Անմադը 101
39.*Արտաւազդ,
Յ. Յովհաննիս. կրճատ. 103

40. Հսկայ փեթակը . . . 105
41.*Քրտինք,
Ա. Ծատուրեան, փոխ. 106
42. Քրիստափոր Կոլումբոս . 107
43.*Գարուն, Գ. Մեսեան . 113
44. Շէկօն ու Մարալը,
Ա. Աճարոնեան, կրճատ. 113
45.*Վեր կաց, գեղջուկ,
Շ. Կուռղլինեան, կրճատ 118
46. Ամենաթանկագին բանը 118
47.*Ողջոյն քեզ,
Ա. Ծատուր. կրճատ . 119
48. Նախրապան Մանուկը,
Պ. Պռօշեան, կրճատ . 120
49.*Զատիկ, ըստ Յ. Յովհան. 122
50. Մեր պարտէզը,
Շ. Տէր-Նիկողոսեան 122
51.*Գետակն ու աղբիւրը,
Դ. Դեմիրճեան . . . 124
52. «Գրողի մեքենան» . . 124
53.*Համբարձում 128
54. Երասխի վրայով,
Վ. Փափազեան, կրճատ. 130
55.*Քոչ, Վ. Միրաքեան . 137
56. Արտը, Վ. Փափազեան 140
57.*Անձրև,
Կ. Մ.-Շահնազար, փոփ. 142
58. Ագռաւների յարձակումը,
Շ. Տէր-Նիկողոսեան . 143
59.*Համերգ 144
60. Յովհան Գուտենբերգ . 145
61.* Քուն, Ա. Խասհակեան . 148
62 Տպարանում 148
63.*Լուսեցի Սաքօն 156
64. Պայթիւնը հանքում,
Հ. Մելիք-Հայկազեան 159
65.*Գիշեր, Ս. Շահազիզ . 163
66. Թշնամիները 163
67.*Անիծած հարսը . . . 165
68. Անիի աւերակները.
Խ. Աբովեան 166
69.*Աւերակում 167
70. Ինքնուս մեքենագէտ . 168
71.*Հովիւ 172
72. Առաջինն ու վերջինը,
ըստ Սերմացանի . . 173
73.*Ամառ գիշերը գիւղում
74. Քինաքինա 177
75.*Կալ, ըստ Ց. Կոստանեանի 183
76. Վերելք 184

Մեր հեղինակութիւնները, մեր մշակած ժողովրդական նիւթերը, մեր թարգմանութիւններն ու փոխադրութիւնները ստորագրութիւն չեն կրում։

40. Հօկոյ փոխթակը . . . 105
41.*Գրաւիշը,
Ա. Ծառուքեան, փոխ. 106
42. Երիտասարդ Կոյումբոս . 107
43.*Դարուն, Դ. Մեծեան . 113
44. Ընկոյզ ու Տարայը,
Ա. Անդրանիկեան, երգառ. 113
45.*Կեր կոյ, գեղջուկ,
Շ. Նալբանդեան, երգառ. 118
46. Անկնաթանկագին բանը 118
47.*Ալգորին քեզ,
Ա. Ծառուկ, երգառ. . 119
48. Նախրապան Մանուկը,
Գ. Զոհրաբեան, երգառ. . 120
49.*Զատիկ, բառ Յ. Յովհաննէ. 122
50. Մեր պարտէզը,
Ե. Տէր-Մինասեան 122
51.*Փեսանը ու աղջիկը,
Գ. Գանձեցեան . 124
52. [illegible] . . 124
53.*Համբարձում . . . 128
54. [illegible],
Վ. Փափազեան, երգառ. 130
55. [illegible] . 137
56. Արոր, Վ. Փափազեան . 140
57. „Մանր...,
Վ. Մ-Շամանապար, փոխ. 142
58. Ոգատներքի յաղթանակումը,
Ե. Տէր-Մինասեան . 143
59.*Համերգ . . . 144
60. Յովհան Գուտենբերգ . 145
61.* Փառաւէ Խաչատրեան . 148
62. Տարբերում . . . [illegible]
63.*Լուսոյ Աղբոն . . 150
64. Գայլի հանրում,
Հ. Մելիք-Հայկազեան [illegible]
65.*Գեղեր, Մ. Շամարք . 163
66. Թէյամանեկը . . 163
67.*Արծաթ Հարոր . . 165
68. Անոր [illegible],
Ռ. [illegible] . . . 166
69.*[illegible] . . . 167
70. [illegible] . . 168
71.*Հովիւ 172
72. Առաջինն ու վերջինը,
բառ Սերմակամի . 173
73.*[illegible]
74. Պիտարիտա . . . 177
75.*Հայր, բառ Ե. [illegible] 183
76. Վերջը 184

[illegible]



ՄՄ Հայագիտական գրադարան
MAL007120